ՆԱԽԱԲԱՆ՝ ԲԻԼԼ ՋՈՆՍՈՆ



իրական կյանքի ուղեցույց՝
հիվանդներ բժշկելու,
դներ հանելու և
հավիտենապես կյանքեր փոխելու

ԱՐԱ ԱՅՆ, ՈՒՆՉ ՇԻՍՈՒՄՆ ԱՐԵԺ

// ՌՈԲԲԻ ԴՈՔԻՆՍ

«Ռոբբի Դոքինսը «գործն անելու» մասին շատ հետաքրքիր գիրք է գրել: Ինձ դուր եկավ ոգևորիչ պատմություններն ու այն գործնական խորհուրդները, որ նա տալիս է Աստծո ձայնը լսելու և մարդկանց Նրա խոսքը փոխանցելու մասին: Շատ հետաքրքիր, ոգեշնչող և քաջալերող գիրք է»:

Ռենդի Քլարք

«The Apostolic Network og Global Awakening» հիմնադիր տնօրեն

«Ռոբբին անմնացորդ սիրահարի օրինակ է, ով հասկացել է, որ Արքայության զորությունն Աստծո սիրո մեջ է արմատացած: Արա այն, ինչ Հիսուսն արեց գրքի մեջ նա ամեն բանից առավել առանձնացնում է Աստծո ներկայության անվիճելի արժեքը: Նրա վկայություններն անշուշտ պետք է յուրաքանչյուրիս մեջ անվախ սեր արթնացնեն:

Դոկ.Հայդի Բեիքեր

«Iris Global» հիմնադիր

«Այս գրքի ընթերցողների բախտը բերել է: Էջերը ողողված են հավատքն ամրացնող պատմություններով և դուք՝ ընթերցողներդ ձեզ հաճախ կհայտնաբերեք այս հարցերը տալիս «Իսկապե՞ս: Իսկապե՞ս այդպես է եղել: Իսկապե՞ս նա արել է դա»: Ռոբբիին շատ վաղուց եմ ճանաչում և տեսել եմ, թե ինչպես է գործնականում անում այն, ինչ այս գրքի էջերում բաժնեկցել է ձեզ հետ: Ընդունեք մարտահրավերն ու յուրաքանչյուրդ զորացեք, որ կարողանաք գնալ ու այդպես գործել»:

Ֆիլ Սթրաութ «Vineyard USA» ազգային տնօրեն

«Երբ ընթերցեցի *Արա այն, ինչ Հիսուսն արեց* գիրքը, Հոգու թարմ կանչ զգացի Արքայությունն ամուր բռնելու և թույլ տալու, որ Նրա կյանքն իմ միջոցով հորդի: Եթե արթնության ծարավ ունեք, բացեք այս գիրքն ու վայելեք»:

Սթիվ Սջոգրեն «Conspiracy of Kindness, Kindness.com» հեղինակ

«Ռոբբին Դոկինսը շատ առումներով ինձ Պետրոս առաքյալին է հիշեցնում: Նա այն եզակի անհատներից է, ով կամենում է դուրս գալ ապահով նավակից ու ջրերի վրայով քայլել դեպի Հիսուսը: Պետրոսի պատմության պես Ռոբբիի կյանքում էլ են եղել ժամանակներ, երբ նա համարյա սուզվել է, բայց իր մեջ համարձակություն գտնելով արել է այն, ինչ շատ քրիստոնյաներ անգամ չէին փորձ, նա ոչ միայն հռչակել է Աստծո արքայությունն, այլ գործնականում դրանով ապրել: *Արա այն, ինչ Հիսուսն արեց* գիրքը ձեզ կքաջալերի դուրս գալ ապահով նավակից ու ռիսկի դիմել հանուն Քրիստոսի Արքայության»:

Ռիչ Նաթան «Vineyard Columbus» ավագ հովիվ

Արա այն,
ինչ Հիսուն արեց

իրական կյանքի ուղեցույց

հիվանդներ բժշկելու, դևեր հանելու և

հավիտենապես կյանքեր փոխելու

Ռոբբի Դոքինս

Հեղինակի խոսք

Այս գիրքը նվիրվում է իմ սիրելի մոր՝ Ռոզ Մարի Դուգլաս Դոքինսի կյանքի ու ծառայության հիշատակին: Նրա Հիսուսի հանդեպ ունեցած սերն ու ինձ և ուրիշներին անմնացորդ նվիրվածությամբ հովվություն անելն ու առաջնորդելն իմ կյանքը

հավիտենապես փոխեցին: Բազմիցս տեսել եմ, թե ինչպես է հասնում ու ծառայում բոլորին, երբեմն տուն բերում թափառական և մտավոր խնդիրներով մարդկանց: Յոթանասունականների սկզբին շատ ու շատ տնից փախած, անտուն պատանիներ իրենց մայրական հոգատարություն էին գտնում նրա ջերմ գրկի մեջ: Բոլոր հյուրերին սիրով ընդունում, հյուրասիրում ու կիսվում էր Հիսուսի կյանք փոխող պատգամով: Նրա հավատքն ու Հիսուսի հետ ունեցած հարաբերություններն անսասան էին: Անգամ մահվան մահճում գլխուղեղի քաղցկեղի դեմ պայքարելիս, մի գիշեր իմ կողմը դառնալով ասաց. «Հիսուսի սիրող բարությունը ավելին արժե քան կյանքը»:

Իմ ծննդյան պատմությունը վկայում է մորս՝ Աստծո հանդեպ ունեցած հավատարմության մասին: Սատանան հայտնվել է նրան ու ասել, որ եթե թույլ տա, որ այդ երեխան ծնվի, ծննդաբերությունից հետո երկուսիս էլ կսպանի: Մայրս այսպես է պատասխանել. «Եթե ուզում ես խանգարել, ուրեմն Աստված այս երեխայի կյանքում ծրագիր ունի, եթե պետք լինի կյանքովս կվճարեմ, բայց Նրա կամքին չեմ ընդդիմանա»: Այդ օրվանից սկսած անընդհատ տարբեր մղձավանջներ է ունեցել և Սատանան նրան չարչարել է ստիպելով դադարեցնել հղիությունը: Սակայն մայրս անկոտրում էր և երբեք այդ քայլին չէր գնա: Ես ծնվեցի Զատկի տոնին, կիրակի առավոտյան: Հղիության ընթացքում որևէ լուրջ բարդություն չէր եղել, բայց ծննդաբերությունից հետո բժիշկը դուրս գալով հիվանդասենյակից հորս ասել է. «Հենց նոր պատերազմի դաշտից եկա: Թե մայրը և թե երեխան լավ են, բայց առանց պայքար չանցավ»: Կարծում եմ այս ամենը եղավ, որ կատարվի այս գրքի գալիք էջերում նկարագրվածը:

Հատուկ շնորհակալություն

Ես նաև ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտել կնոջս՝ Էնգիին և մեր վեց որդիներին՝ Ջուդային, Մայքային, Եսայային, Եղիային, Քանային ու Քասպիանին այս ընթացքում ցուցաբերած իրենց անսահման համբերատարության և աջակցության համար: Դուք՝ այդ յոթդ ինձ մեծապես ոգեշնչել եք:

Կցանկանայի նաև հատուկ շնորհակալություն հայտնել Նիկոլ Վոլկելին, առանց ում անհնար կլիներ կյանքի կոչել այս նախագիծը: Նրա ուսումնասիրություններն ու պատգամը գրի առնելու խանդավառությունն այս գրքի համար նշանակալի դեր են ունեցել: Հավիտյան երախտապարտ եմ Ձեր հավատարիմ նվիրվածության համար:

Բովանդակություն

Նախաբան՝ Բիլլ Ջոնսոն.....11

1.Գանգստերները դռան շեմին.....13

2. Առաջին հպումը.....29

3. Զորացած ոսկորներ.....39

4.Մարդկային պատկերացումներին հակառակ Արքայություն.....55

5.Նիկելներն Աստծո գրպանում.....75

6.Աստված խոսում է. Սովորենք ճանաչել Նրա ձայնը.....99

7.Քանդել Սատանայի գործերը.....123

8.Ազատություն գերիներին.....137

9.Քայլել իշխանությամբ (դու ավելին ունես քան

պատկերացնում ես).....149

10.Վիրավոր բժշկողնե՞ր: Հույս վշտացած աշխարհին.....171

11. Երկմտելը չի որակազրկում.....189

12. Հարություն տալ մեռելներին.....207

13. Հաստատակամություն. Թույլ չտաք,

որ վհատությունը հաղթի.....227

Ես՝ անում եմ, այն, ինչ Հիսուսն արեց.....245

Ծանոթագրություն.....249

Նախաբան

Աստվածաշնչյան իմ ամենասիրելի պատմություններից մեկը դեպի էմմաուս քայլող աշակերտների պատմությունն է: Հիսուսը նոր էր մահացել և ասել, որ նրանք հիասթափված էին չափազանց մեղմ կլինի: Հիսուսը կյանքի բոլոր ոլորտներում հույս էր սփեռել, իսկ այժմ այդ հույսը մահացած էր:

Ճանապարհին նրանց մի օտարական միացավ: Նա սկսեց իր մտքերով կիսվել Մեսսիայի և մարդկության փոխարեն Նրա կրած տառապանքի անհրաժեշտության մասին: Աշակերտներին այնքան դուր եկավ նրա հետ զրույցը, որ համոզեցին իրենց հետ գյուղ գնալ ու գիշերն այնտեղ անցկացնել, որովհետև արդեն տարաժամ էր: Երբ սեղան նստեցին օտարականը վերցրեց հացը, օրհնեց ու կտրելով բաժանեց նստածներին: Այդ պահին նրանց աչքերը բացվեցին: Օտարականը Հիսուսն էր: Նա հարություն էր առել: Եվ ինչպես արագ հայտնվել էր այնպես էլ հանկարծակի անհետացավ:

Ինձ շատ դուր է գալիս այն, ինչ նրանք ասացին Հիսուսի գնալուց հետո. «Մեր սրտերն էլ միթէ չէի՞ն ճմլւում մեր մէջ»:

Ռոբբի Դոքինսի «*Արա այն, ինչ Հիսուսն արեց*» գիրքն ընթերցելուց հետո իմ սիրտն էլ ասես ճմլվեց: Այլ խոսքեր չեմ գտնում զգաացածս բացատրելու: Սիրտս բռնկվեց խանդավառության ու հույսի կրակով և սկսեցի մտածել, թե ինչպիսին կլինի իմ կյանքը, եթե հետևեմ այս գրքի օրինակին:

11

Նրա հրաշալի պատմություններն իրենց մեջ հարությալ Քրիստոսի ԴՆԹ-ն են պարունակում: Ինձ համար շատ տպավորիչ է, որ Հիսուսը գերբնական գործեր է անում շատ բնական մարդկանց միջոցով:

Գիրքը կարդալիս հետաքրքիր փորձառություն ունեցա: Մի էջում սիրտս թրթռում էր, կարդալով հրաշքների մասին, հիանալով Հիսուսի փրկարար զորությամբ և հեղինակի համարձակությամբ: Մյուս էջում ցնծում էի տեսնելով Ռոբբիի իմաստությունը, տարբեր իրավիճակներում նրա վերաբերմունքն ու մեջբերած աստվածաշնչյան համարները: Այս գիրքը լի է իմաստությամ և վկայություններով, որոնք երկուսն էլ հավատացող հավատացյալների համար աներևակայելի գանձ են:

Այս մտորումների մեջ հիշեցի Սաղմ. 19:7. «Տիրոջ վկայությունը ճշմարիտ է , իմաստուն է անում պարզամիտներին»: Վկայությունների և իմաստության այդ զորավոր համակցությունը Հիսուսի յուրաքանչյուր հետևորդի կայուն է դարձնում: Շատերը հրաշքներով լի կյանք ապրելու հանդեպ անտարբեր, պատահական ու թերահավատ վերաբերմունք ունեն: Ինչևէ ըստ Աստվածաշնչի հրաշքների վկայությունը հաստատ է, որը կայուն և սատարող դեր է կատարում: Հրաշքների պատմությունները հավատացյալի կյանքում իմաստության կայություն են բերում: Եվ այս գրքում այդ իրականությունը շատ գեղեցիկ կերպով է ներկայացված:

Ես զգում եմ, որ հոգևոր հսկաները կխորասուզվեն *Արա այն, ինչ Հիսուսն արեց*, գրքի ընթերցանության մեջ, որովհետև հավատացյալների սրտերում արթնացնում է այն, ինչ վաղուց թաղվել էր հիասթափությունների ու ստերի հաստ քողի տակ: Ռոբբին հրաշալի կերպով ընթերցողին ներկայացչել է, որ եթե ինքը կարող է հրաշքներով լի կենսաձև ունենալ, ապա ցանկացած մարդ կարող է:

Նա ընդունում է այն իրականությունը, որ մեռելները միշտ չէ, որ հարություն են առնում, վճարները երբեմն դժվար է լինում փակել, իսկ հիվանդների բժշկությունը միշտ չէ, որ մեր

կամեցածի պես է լինում: Ամեն ինչ ներկայացված է անկեղծ է ու առանց չափազանցության:

Հետո խոսվում է այն մասին, որ երբեմն անկախ մեր անհավատ աղոթքների հրաշքներ լինում են: Նման մի փորձառություն էլ Ռոբբիին առաջնորդեց սուզվելու Ավետարանի անհատակ խորքերն ու անելու այն, ինչ այնտեղ գրված է: *Արա այն ինչ Հիսուսն արեց* գիրքն էլ այդ ամենի արգասիքն է: Մենք բոլորս պիտանի ենք այս գործին:

Բիլլ Ջոնսոն Բեթել եկեղեցու ավագ հովիվ, Ռեդդինգ, Կալիֆորնիա,

«When Heaven Invades Earth» և «Hosting the presence» գրքերի հեղինակ

1 //Գանգստերները

Դուան Շեմին

Հա՛յր, ինձ բեկումնային դարձրու: Թող ինձ հետ առնչվողները որոշման հանգեն: Թող ոչ թե միակողմանի ճանապարհին կանգնեցրած մղոնացույց սյուն լինեմ, այլ հենց ճամփաբաժան, որ մարդիկ իմ մեջ Քրիստոսին տեսնելով այդ երկու ճանապարհներից մեկն ընտրեն:

Ջիմ Էլլիոթ

Եկեղեցու դուռն ընդարձակ բացվեց և ճեմելով ներս մտան քաղաքում իշխող հանցավոր խմբավորման՝ Լատին Քինգսի երկու «արքայազները»: Եկեղեցին տեղակայված է Իլլինոյս նահանգի արևելյան Ավրորայի հանգույցում, որն էլ Լատին Քինգսի թեժ կետերից է համարվում: Բարևելիս ինձ թվաց մարտական տեսք ունեին՝ պատրաստ հարձակման: Դռանը հենվելով սկսեցին կառույցի պատերին նկատվող փամփուշտներից առաջացած անցքերն ու հետքերը ցույց տալ, որ իրենց երբեմնի մարտերի արդյունք էին: Իրենց բնորոշ ՛՛մեզնից ձեռք քաշեք՛՛ սպառնալիքի տեսակ էր: Այդ առավոտ, երբ նրանք մեր եկեղեցի եկան, քաղաքը գտնվում էր հանցավոր խմբավորումների միջև պատերազմ ճայթելու շեմին, ուստի դրանով ուզում էին հիշեցնել, որ ես հաստատ իրենց տարածքում էի:

13

Ավրորայի դաժանությունը երկար պատմություն ունի սկսած Ալ Կապոնեի ժամանակներից 1930 ական, 40 ական թվականներից մինչև 80, 90ականները, երբ բանդաների դաժանությունը հասավ իր գագաթնակետին, քանի որ Չիկագոյի ետնախորշերի ցածր եկամուտ ունեցող բնակիչներին սկսեցին վերաբնակեցնել արևմտյան արվարարձաններում: Որպես արդյունք տարածքների փոքրանալուն զուգընթաց բանդաների միջև կռիվներն ու ճնշումը գնալով մեծացավ և այդ տարածաշրջանը մարդասպանությունների թվով սկսեց գերազանցել Չիկագոյին: Ի շնորհիվ համայնքի առաջնորդների, եկեղեցիների և ոստիկանության բազմաչարչար ջանքերի իրավիճակը վերջապես սկսեց կարգավորվել: Այնուհետև տեղացին այս նոր սպառնալիքները: Մերժվածության զգացումից և ոստիկանության «անհարգալից» վերաբերմունքից վրդովված Լատին Քինգի ներկայացուցիչներն սպառնում էին, որ շուտով փողոցներով արյուն է հոսելու: Մեքենաներով մի քանի անգամ հրաձգություն եղավ և օդում պատմությունը կրկնվելու վերահաս վտանգ էր պտտվում:

Ոստիկանությունը տագնապով ինձ զանգահարեց: Որպես ոստիկանական կապելլան նախկինում արդեն մի քանի բարձր հնչեղություն ունեցող գործեր էի միջնորդել և տեսել, թե ինչպես է Աստված բեկումնային կերպով գործում գանգստերական համայնքներում: Այդ ժամանակ արդեն մի քանի բանդաների նախկին պարագլուխներ մեր եկեղեցի էին հաճախում և նրանք էլ հաստատեցին, որ հորիզոնում պատերազմի վտանգ է մոլեգնում: Բանդաների ներսից մի քանիսի հետ զրուցելուց հետո կապ հաստատեցի Ավրորայի մի բիզնեսգործարարի հետ, ով սատարում էր համայնք-բանդաներ հարաբերությունների բարելավմանը: Դպրոցում սովորել էր Լատին Քինգերի գլխավոր պարագլուխներից մեկի հետ, ուստի այդ կապերի օգնությամբ հաճախ որպես միջնորդ էր ծառայում: Նա համաձայնեց երկու հիմնական առաջնորդների և ինձ համար հանդիպում կազմակերպել: Նրանց փողոցում այլ անուններ ունեին ինչպես օրինակ Դիաբլո: Տարիներ շարունակ այդ դեմքերը տեսել եմ ոստիկանության պատին փակցրված նկարներում, իսկ այժմ նրանք եկեղեցու դռան մոտ էին և մեզ ընդամենը մի փոքր տարածություն էր բաժանում, միայն այդ մտքից ոտքերս սկսեցին մի պահ դողալ:

Առաջնորդներից մեկը՝ Շոթգանը, քառասունն անց դաժան դեմքով տղամարդ էր, ումից կարծես մահվան շունչ էր փչում: (Շոթգանն իմ հորինած կեղծանունն է, որոշ անուններ փոխված են մարդկանց անձնական կյանքը պաշտպանելու նպատակով): Երկրորդը՝ Դիաբլոն, հիմնականում լռում էր, սակայն ողջ ընթացքում աչքերն ինձնից չէր հեռացնում՝ հսկելով իմ յուրաքանչյուր շարժումը:

14

Նրանց հետ նաև մի կին կար՝ Դայանան: Երբ ներս եկավ կոպիտ և շատախոս թվաց: Անկաշկանդ պատմում էր իր ծրագրերի և իր մասին:

Ինձ հետ էին իմ երկու սիրելի ընկերները: Թոդ Ուայնը և Դարրեն Ուիլսոնը: Դարրենն այդ ժամանակ Աստծո զորության մասին փաստավավերագրական ֆիլմ էր նկարահանում:

Շոթգանին այնքան էլ հետաքրքիր չէր նախաբանը: Մեր հիմնական զրուցակիցը նա էր: Ամենայն մանրամասնությամբ պատմում էր, թե ինչպես են հրածգություն արել եկեղեցու կառույցի առջև և թե ինչ սպանություններ են եղել եկեղեցաշենքի անկյուններից մեկում: Նա պարզպես ուզում էր հիշեցնել, թե ում հետ ենք գործ բռնել: Առանց կոնկրետ նշելու նաև հասկացրեց, որ «նրանք» քաղաքին վնասներ հասցնելու նկրտումներ ունեն: Նա ինձ ասաց, որ «ոմանք» բանդաներում վշտացած են և եթե շարունակվի այդպես մնալ, ապա քաղաքի փողոցներով արյուն է հոսելու: Նաև նշեց, որ ոմանց մոտ ՝՝ իսկապես բանը բանից անցել է՝՝ և ավելացրեց, ՝՝ եթե մարդիկ չզգուշանան այստեղ խելագար բաներ կկատարվեն՝՝ :

Նախկինում մի անգամ Շոթգանին տեսել էի այգում: Մի օր նա ընկերոջ հետ մեքենայից դուրս եկավ և մտան բազմամարդ այգի: Ընդամենը մի քանի վայրկյան անց այգում գտնվող բոլոր տղամարդիկ եկան, սեղմեցին նրանց ձեռքերն ու հետո զգուշությամբ հեռացան: Անմիջապես վերծնելով իրենց ընտանիքներն այգուց անհետացան : Այնտեղ գտնվող կանայք մանկասայլակներն արագ հրելով դուրս եկան: Քսան րոպե անց ամենուր անգամ կյանքի նշույլ չկար: Ահա մեր համայնքում ահ ու սարսափ տարածողը:

Հետո նայեցի Շոթգանին և մտածեցի, թե որքան մեծ է Աստծո սերն իմ առջև կանգնած այդ մարդու հանդեպ: Ես նրան շեշտակի ասացի.

-Գիտեմ, որ պատերազմի վտանգ կա, սակայն չպետք է այն սկսվի:

15

Տղամարդիկ իրար նայեցին.

-Այո՛, միթե դա է մեզ այստեղ հրավիրելու պատճառը: Փորձել պատերազմը կանխե՞լ,- հարցրեց Դիաբլոն:

-Ո՛չ,- ասացի ես,- իրականում այստեղ եմ հրավիրել, որ կարողանամ ձեզ ներկայացնել Աստծուն:

Ակնհայտ էր, որ ամենաքիչն այդ խոսքերն էին ակնկալում լսել իմ շուրթերից: Դիաբլոն դեմքի տարօրինակ արտահայտությամբ ինձ նայեց, ապա ճանկեց իր խաչն ու ասաց.

-Ի՞նչ ի նկատի ունեք, մենք ճանաչում ենք Աստծուն:

Ես ուշադիր նրան նայեցի.

-Այո, թերևս ճիշտ եք, բայց երբևէ Նրա հետ այնպիսի հանդիպում չեք ունեցել, ինչպիսին շուտով կլինի: Եթե թույլ տաք, ձեզ համար կաղոթենք և կհանդիպեք Աստծուն,- նայեցի գործարարին և հարցրեցի,-կարո՞ղ ենք Ձեզնից սկսել:

Գործարարը գալիս էր մեր եկեղեցի, բայց այն ժամանակ նրան տակավին չէի ճանաչում: Բարձրահասակ, վայելչակազմ տղամարդ էր, ով այդ տարածաշրջանի լատինական բիզնեսների ցանց էր ղեկավարում: Գուցե արմատներով կաթոլիկ էր: Վստահ չէի: Մինևնույնն է, անկախ նրա կրոնական նախապատմության, այդ պահին աղոթելը վերջին բանն էր, որ ակնկալում էր մեզնից: Նա հատկապես զարմացած էր, որ հենց ինքն էլ հայտնվել աղոթքի կենտրոնում: Բարեբախտաբար համաձայնեց, բայց հասկանում էի, որ եթե ինչ որ բան այնպես չընթանա հավանաբար դա մեր վերջին հանդիպումը կլինի: Հատուկ էի ուզում նրանից սկսել, քանի որ մեր հանդիպման կազմակերպիչը լինելով վայելում էր բանդայի առաջնորդների հարգանքը: Երբ նա ճաշակեր Աստծո իրականությունը, մյուսների համար ամեն ինչ ավելի օրինական կիներ:

Սկսեցինք աղոթել.

-Տե՛ր, օրհնում ենք մեր ընկերոջը,- գիտեի, որ նախկինում վթարի էր ենթարկվել և տառապում էր մեջքի վնասվածքից: Առաջնորդություն զգացի նրա բժշկության համար աղոթել: Ամեն օր տառապում էր մեջքի ցավից և ցավը մեղմելու բոլոր միջոցները բացասական ազդեցություն էին թողել նրա կյանքում:

Հետո հարցրեցի արդյոք դեռ մեջքը ցավում է, իսկ նա հաստատեց, որ անգամ այդ պահին տառապում է մեջքի և ուսի ցավից:

Բոլորի ներկայությամբ ասացի.

-Աստված իրապես կհայտնվի քեզ և կատարելապես կբժշկի:

Մենք աղոթեցինք հրամայելով, որ նրա մեջքն ուղղվի և լիովին բժշկվի: Մի քանի րոպե անց նրան խնդրեցինք ստուգել: Սենյակի մեջ զգում էի Աստծո ներկայությունը:

Նա սկսեց շարժվել և պտտվել, աչքերը լայն բացած, ապշած նայում էր, որևէ ցավ կամ անհարմարության զգացողություն չկար: Սկսեց աղաղակել.

-Անհետացել է: Հավատս չի գալիս: Տարիներ շարունակ չեմ իմացել՝ ինչ է անցավ ապրելը,- շվարած նստել էր.-չեմ հասկանում ինչպես անհետացավ:

Նրա մանկության ընկեր Շոթգանը նայեց նրան.՛՛ Ախպերս, լրջո՞վ ես ասում՛: (Այո ոչ թե լուրջ, այլ լրջով: Այս արտահայտությունը բնորոշ է քաղաքի աղքատ թաղամասերին, ամեն շաբաթ մեր եկեղեցում նման արտահայտություններ եմ լսում):

Հանդիպման մնացած ամբողջ ընթացքում գործարարը լուռ էր, դեմքը կիսով չափ ձեռքերով փակել և խորասուզվել էր մտքերի մեջ՝ փորձելով հասկանալ քիչ առաջ կատարվածը: Ավելի ուշ նա ինձ ասաց, որ իր համար աղոթելիս ամբողջ մարմինն սկսել է այրվել և նրա միջով ասես էլեկտրական հոսանք է անցել: Հանդիպման մնացած ողջ ընթացքում նա չփորձեց որևէ բանում մեզ կանգնեցնել կամ ընդհատել, չնայած հետո ասաց, որ այնտեղ կատարվածը դուրս էր իր երևակայությունից:

Դիաբլոն այդ ողջ ընթացքում կիսակքած նստած սևեռուն հայացքով ինձ էր նայում և երբեմն աթոռը հետ ու առաջ ճոճում: Նախկինում ունեցած իմ փորձառություններից կարող էի ենթադրել, որ դիվահար է, սակայն նրա դեմքին նաև մեծ փափագ էի տեսնում: Թվում էր, թե գործարարի հետ քիչ առաջ կատարվածը Դիաբլոյի պաշտպանական դիմակից մի շերտ էր պոկել: Նա մի քիչ ավելի մեղմ էր և աչքերը հուսահատ էին կարծես ասելիս լիներ ՝՝Զգիտեմ, թե սա ինչ է, ինձ սարսափեցնում է, բայց ուզում եմ ես էլ ճաշակել՝՝:

17

Նրա հուսահատությունն անցնում էր իր կյանքը պատած խավարի, վախի, անորոշության բոլոր խոչընդոտները:

Հետո դառնալով Շոթգանին հարցրեցի.

-Կարող ենք հաջորդը Ձեզ համար աղոթել:

Ես նաև հետաքրքրվեցի, թե արդյոք նա դուստր ունի: Զգում էի, որ Աստված ուզում է իր դստեր հետ ունեցած նրա հարաբերությունները բժշկել:

Շոթգանն ասաց.

-Այո երկուսն ունեմ և նրանցից ոչ մեկն անգամ ինձ հետ խոսել չի ցանկանում:

Հետո հարցրեցի թե արդյոք ողնաշարի հետ կապված խնդիր ունի, որովհետև զգում էի, որ Աստված դա էլ է բժշկելու: Նա հաստատեց.

-Հա՛, տարիներ առաջ եմ փամփուշտից վիրավորվել, բայց մինչև հիմա ցավում է, դիսկերից մեկն ամբողջությամբ շարքից դուրս է եկել՝՝:

Ընկերս՝ Թոդ Ուայթը, ով կողքիս նստած էր Շոթգանին հարցրեց թե արդյոք իր ոտքերից մեկը մյուսից կարճ է:

-Հա, կարճ է,- գլխով դանդաղ համաձայնության նշան արեց և կարծես իր շուրջը կատարվածից նրան խորհրդավորություն էր պատել:

Թոդը Շոթգանից թույտվություն խնդրեց այդ կարճ ոտքը ձեռքերի մեջ առնելու և հռչակեց.

-Ո՛տք, երկարի՛ր, ոսկորներ, մկաններ, մաշկ հենց հիմա աճե՛ք՝՝:

Մեր աչքերի առջև ոտքը երկարեց: Դիաբլոյի աչքերը զարմանքից դուրս պրծան և կանգնեց, որ ստուգի: Բոլորը ցնցված էին:

-Հա, հիմա ուղիղ է,- հաստատեց Շոթգանը: Ողնաշարի ցավը նույնպես լիովին անհետացել էր:

Սիրով լի նայեցի նրան ու ասացի.

-Գիտես, այն ինչ Աստված հենց նոր արեց քո մեջքի հետ, ուզում է նույնն էլ քո ամբողջ կյանքի հետ անել:

Տղաներն իրար նայեցին, կարծես սենյակում մի բան էր կոտրվել: Հաջորդը Դիաբլոյի հերթն էր: Զգում էի, որ Աստված առաջնորդում է աղոթել նրա իրանի հատվածի բժշկության համար, և Թոդն ասաց, ինքն զգում է, որ Աստված հատկապես մատնանշում է Դիաբլոյի ստամոքսը: Դիաբլոն բարձրացրեց վերնաշապիկն ու ցույց տվեց ստամոքսի սպին, որն առաջացել էր հրազենային վնասվածքից: Վերքի տեղում մի մեծ սպի էր գոյացել:

Աղոթեցինք, որ ցավը հեռանա և նրա ստամոքսն ամբողջովին բժշկվի: Դիաբլոյի բիբերը լայնացան և ասաց, որ ստամոքսում ջերմություն և էլեկտրականություն է զգում և ավելացրեց, որ այդ զգացումն իրեն չի լքում սենյակ մտնելու պահից ի վեր:

Նրան բացատրեցինք, որ հաճախ Աստծո բժշկարար ներկայությունն այդպես է դրսևորում: Հետո Թոդն սկսեց աղոթել, որ Դիաբլոյի սպին անհետանա: Անկեղծ ասած աղոթքից հետո մենք էական տարբերություն չէինք նկատում, բայց բանդայի երկու առաջնորդները երդվում էին, որ այն գրեթե 50 տոկոս նվազել է: Լուռ ու ցնցված էին: Նրանց պահվածքը փոխվել էր, այլևս ամբարտավան, հայհոյող և սպառնացող կեցվածք չունեին:

Երբ նայեցի Դայանային Աստված ինձ ցույց տվեց նրա հոգեկան բեռը: Նրան ասացի.

-Գիշերները տառապում ես դիվական այցելություններից, ձայներ ես լսում և մղձավանջներ ունենում, այդպես չէ՞:

Դայանան, ով ամուր, անկաշկանդ կին էր գլուխն իջեցրեց կրծքին և դանդաղ տարուբերեց: Նաև զգացինք, որ Աստված ուզում է բժշկել նրա ստամոքսն ու մարսողական համակարգը: Նա հաստատեց, որ նման առողջական խնդիրներ ունի:

Ես նրան ասացի.

-Դայանա՛, Աստված սիրում է քեզ և ուզում է բժշկել: Կարող ենք քեզ համար աղոթել, որ բոլոր այդ խնդիրները հենց հիմա անհետանան :

Սկսեցինք աղոթել և հրամայել, որ նրա վրա հարձակվող դիվային ուժերը Հիսուսի անունով հեռանան: Մինչ Հիսուսի անունով կապում էինք այդ ուժերը, Դայանայի մոտ առատ քրտնարտադրություն սկսվեց: Հանկարծ աթոռին նստած կծկվեց ասես մի անտեսանելի ուժ նրան ետ շպրտեց և հառաչանքով բերանից մեծ օդ արձակեց: Դրանից հետո թեթևացավ և դեմքի արտահայտությունը փոխվեց:

Հարցրեցինք, թե արդյոք զգացել է, որ իրենից ինչ որ բան հեռացավ և նա գլխով հանձայնության նշան արեց: Հետո ասացի.

-Պետք է սա հաստատել, որպեսզի այլևս չվերադառնա: Միակ տարբերակը Քրիստոսին քո կյանք ընդունելն է:

Դայանան համաձայնեց:

Մեր շուրջը նայելով ասացինք.

-Խոսքը բոլորիդ է վերաբերվում: Եթե հիմա աղոթեք և ձեր կյանքը Քրիստոսին հանձնեք, Նա կշարունակի բժշկել և ազատագրել:

Բոլորը համաձայնվեցին: Ես նրանց խնդրեցի աղոթել, Հիսուսին հանձնվել և Նրան իրենց կյանքի Տեր ընդունել: Շոթգանը, ով այդ պահին կանգնած էր Դայանայի հետևում սկսեց գրեթե աղաղակելով աղոթել, մեծ փափագով Աստծուն աղաչել, որ ների իր *ամեն մի* կատարած մեղքը:

Նրանք չորսն էլ՝ գործարարը, Շոթգանը, Դիաբլոն և Դայանան կիրակի օրը եկան և միացան մեր եկեղեցուն: Նրանք նաև սկսեցին նոր հարաբերություններ կառուցել համայնքի անդամների հետ: Այսօր հատկապես Շոթգանը ամբողջովին փոխվել է: Երբ նախկինում հանդիպեցինք առաջնորդվում էր մահվան ոգուց: Մինչ նախկինում ցասումնալից և կատաղի հայացք ուներ, այժմ ուրախությունից ճառագում էր: Նա առաջինն է կատակելով նորեկներին եկեղեցի հրավիրում:

Դայանան այդ օրվանից ի վեր բաց չի թողնում ոչ մի կիրակնօրյա ծառայություն: Նա մարդկանց խանդավառված պատմում է Քրիստոսի մասին: Նրանք ամբողջ ընտանիքով եկեղեցի են գալիս: Շոթգանն ու Դիաբլոն էլ մի քանի այլ մարդկանց, որ հանդիպել էին փողոցում եկեղեցի բերեցին աղոթելու և նրանք էլ որոշեցին բանդաներից դուրս գալ և Քրիստոսին հետևել:

Մեր հանդիպմանը հաջորդող շաբաթներին ես շարունակ հեռախոսազանգեր էի ստանում Լատին Կինգսի նախկին այդ առաջնորդներից, ովքեր ասում էին, որ ամենուր շարունակում են ճաշակել Աստծո ներկայությունը, արթնանալիս, լողանալիս, ուտելիս: Մի օր նրանցից մեկն ինձ զանգահարեց ու արտասվելով ասաց.

-Ռոբբի՛, սա աշխարհի ամենալավ բանն է, և ավելացրեց,- չգիտեմ ինչու, բայց ամեն անգամ, երբ մտածում եմ, թե որքան է Հիսուսն ինձ փոխել չեմ կարողանում արցունքներս զսպել: Ուզում եմ, որ ամբողջ աշխարհն իմանա, որ Հիսուսը կարող է մարդկանց փոխել:

Կարիք չկա այլևս նշելու, որ մեր հանդիպումից հետո ոչ մի պատերազմ չեղավ, սակայն Շոթգանն ու Դիաբլոն դեռ հետապնդվում են իրենց վատ հեղինակության պատճառով: Ամեն կիրակի նրանց եկեղեցի գալուն պես, շրջապատում ոստիկանական մեքենաներ են պտտվում: Սակայն նրանք շարունակում են փառաբանել Աստծուն, աճել Քրիստոսով և

ավելի ու ավելի շատ մարդկանց պատմել Նրա մասին: Հետաքրքիր են Աստծո ճանապարհները:

Մեր հանդիպման վերջում, երբ բոլորը Քրիստոսին ընդունեցին, նայեցի նրանց ու ասացի.

-Քիչ առաջ այստեղ կատարվածը կփոխի մեր քաղաքը:

Այն ժամանակ այդքան էլ լավ չըմբռնեցի, բայց հիմա հասկանում եմ, որ դրանք մարգարեական խոսքեր են եղել: Մեր հանդիպումը կայացավ 2011 թվականի վերջերին և հետո լուրերով հայտնեցին, որ 2012 թվականին Ավրորայում սպանություններ չեն գրանցվել: 1946 թվականից ի վեր նման բան չէր եղել:

Մյուս պատմական շրջադարձն այն էր, որ տասնհինգ տարի առաջ մեր եկեղեցու ծառայությունն սկսել էինք Դայանայի քրոջ՝ Բոբբիի տան հյուրասենյակում և նա խնդրել էր մեզ աղոթել Դայանայի համար, որ ընդունի Քրիստոսին և ետ դառնա իր ընտրած ճանապարհներից: Տասնհինգ տարի անց ինձ բախտ վիճակվեց Դայանային առաջնորդելու դեպի Քրիստոս, երբ նա այդ դռնից ներս մտավ: Սակայն այդ ժամանակ ես ու Դայանան չգիտեինք պատմությունը, միայն հետո ամեն ինչ պարզ դարձավ:

Բանդայի առաջնորդների հետ ունեցած մեր հանդիպման արդյունքը հրաշալի վկայություն դարձավ համայնքի համար: Այն երկար ձգվող փոփոխությունների շղթայի միայն մի մասն էր, ինչ Ավրորա էինք տեղափոխվել եկեղեցի հիմնելու: Շատ անգամ դժվարին պայքար ենք մղել: Մի քանի անգամ եկեղեցին կողոպտել են և քանիցս հենց իմ մեքենան են գողացել՝ երկու անգամը եկեղեցու անդամների կողմից: Եղել են ժամանակներ, երբ ֆինանսական դժվարություններ ենք ունեցել, և դժվար է եղել մեծացնել մի համայնք, որտեղ մարդիկ քեզ նման նվիրված չեն տեսիլքին: Ցավալի և դժվարին ժամանակներ ենք ունեցել, սակայն այդ ամենի հորձանուտում նաև ականատես ենք եղել հրաշալի փոփոխությունների և բեկումնային շրջադարձերի:

Աստված գործում էր բժշկելով, ընտանիքները վերափոխելով, ամուսնությունները վերականգնելով, աշխատատեղեր ապահովելով և մեծապես փոխելով Ավրորա համայնքը: Այն հույսի վայր էր դարձել և մարդիկ երկրի տարբեր անկյուններից և անգամ ամբողջ աշխարհից գալիս էին սովորելու և վերապատրաստվելու:

Երբ Աստված է միջամտում

Գուցե դուք էլ եք հրաշալի բեկումնային փոփոխություններ տեսել, և ինչպես բոլորս, դուք էլ եք փափագել, որ այդպիսի պահերը հաճախ կրկնվեն: Գուցե խորհում եք, թե արդյոք հնարավոր է, որ մեր «սովորական» քրիստոնեական կյանքը Քրիստոսի կյանքին նմանվի:

Կամ գուցե դժվարանում եք քիչ առաջ իմ նկարագրած հանցավոր տարրերի հետ որևէ առնչություն գտնել: Իսկ գուցե հարց է առաջանում, թե ինչու Աստված *ձեր* բժշկության

համար արված աղոթքներին չարձագանքեց, իսկ այս հանցագործներին ակնթարթորեն բժշկեց: Կամ գուցե հարցնենք «Ինչպե՞ս կարող են նման բաներ կատարվել մեր բնակության վայրում: Գրասենյակի կամ դպրոցի մեր ծանոթների շրջանում»:

Հնարավոր է պատասխաններ և միջոցներ եք որոնում: Փափագում եք, որ երկնային Արքայությունը ձեր համայնքում էլ բեկում մտցնի: Ես հենց այդպիսին էի, երբ Աստված ինձ առաջին անգամ բժշկության համար գործածեց: Երիտասարդական ծառայության մի հուսալքված հովիվ էի, ով այդ ժամանակ աշխատում էր փոքրիկ, կիսագործող եկեղեցում: Տեսականորեն հավատում էի, որ Աստված կարող է հրաշքներ գործել և տարիների ընթացքում որոշ իրադարձություններ ինձ ստիպել էին մտածել, որ կարելի է ավելի ակնկալել: Սակայն իրականում որոշ ծառայություններում բախվելով կեղծավորության, մանիպուլացիայի և շահագործման երևույթների բացառապես անտարբեր էի դարձել: Գիտեի, որ ուզում եմ Աստծուն հետևել, բայց մի կետի էի հանգել, որ ուղղակի քրիստոնեական կյանքս ոչինչ չակնկալելով նույն տեղում էր դոփում: Երկային Արքայության գերագույն արժեքներից մեկը հավատարմությունն է, բայց ինչ կարող է անել հավատարմությունն առանց հավատքի: Կյանքս հագեցած էր եկեղեցական գործերով և ես հավատարմությամբ էի կատարում ինձ վստահված հանձնարարությունները առանց պատկերացում անգամ ունենալու այն իշխանության մասին, որով կարող ենք քայլել ոչ թե մեզ համար, այլ հոգևոր քաղցի և կոտրվածության մեջ տառապող այս աշխարհի:

Այն օրը, երբ Աստված որոշեց ինձ ընդհատել, ես բացառապես իմ մասին էի մտածում: Ինձ որպես երիտասարդական ծառայության հովիվ էին վարձել, սակայն ծառայության իմ տեսիլքն այնքան էր փոքրացել, որ ամբողջ օրս անցնում էր հեռախոսազանգեր պատասխանելով և մի քանի ծառայողական հանձնարարություններ կատարելով: Այդ օրը ահավոր տրամադրություն ունեի: Մեր ավագ հովվի և իր ընտանիքի կողմից խորապես անգնահատված էի զգում: Աստծուց և Նրա կանչից օտարված: Զայրացած և վիրավորված: Որպես Քրիստոսի հետևորդ ամենևին էլ իմ աստեղային ժամը չէր:

Հեռախոսը զանգեց և ես անտրամադիր վերցրեցի լսափողը: *Հավանաբար վաճառքի հետ կապված մեկ այլ զանգ է, կամ էլ ինչ որ մեկին մի բան պետք է փոխանցեմ:*

Զանգահարող կինը անվստահ ձայնով սկսեց ներկայանալ.

-Դե, անգամ չգիտեմ ինչ ասել,- նա սկսեց,- եկեղեցի չեմ գնում, ավելին՝ քրիստոնյա չեմ,- հետո անհարմար զգալով ավելացրեց,- պարզապես հեռախոսագրքից պատահական եկեղեցու հեռախոսահամար ընտրեցի, որովհետև այս պահին հայրս սրտի վիրահատություն է տանում: Նա ծայրահեղ վիճակում է և բժիշկները հույս չեն տալիս: Ստիպված եղանք նրանց համոզել, որ այս վիրահատությունն անեն:

Նրա ձայնը նվաղկոտ և ուժասպառ թվաց, երբ բացատրում էր, որ իր հոր նմանատիպ երրորդ վիրահատությունն է և չի բացառվում, որ վերջինը լինի: Նա չգիտեր՝ ում դիմեր և հանկարծ մտքով անցել էր որևէ եկեղեցի զանգահարել: Հույս ուներ, որ կգտնվի մեկն, ով հոր կյանքի վերջին պահերի համար մոմ կվառի, տերողորմյա կքաշի, ներբող կձոնի կամ էլ աղոթք կարտասանի:

Մինչ նա փորձում էր պատճառաբանել իր զանգը ես զգում էի, որ անհարմար է զգում:

23

Երևի զղջում էր, որ ընդհանրապես զանգահարել է: Ի՞նչ ասեի: Առաջարկեցի միասին աղոթել վիրահատության համար, չնայած այնքան էլ չէի ուզում: Որքան հասկացա նրա հայրը դժվար թե հաղթահարեր այդ վիրահատությունը:

-Դե...-դժկամորեն հապաղեցի.-կարող եմ աղոթել նրա համար...:

Անկեղծ ասած ուզում էի հնարավորինս շուտ այդ հեռախոսազանգն ավարտել: Չէի կարծում, որ իմ աղոթքից ինչ որ էական բան կփոխեր:

Աղոթքս ավելի շատ մահախոսականի էր նման.՛՛ Տե՛ր, պարզապես նրանց ընտանիքի հետ եղիր այս դժվարին պահին: Դու մոտ ես սրտով բեկյալներին: Օգնիր, մխիթարիր և մոտ եղիր իրենց վշտի մեջ:

Իմ աղոթքով ավելի շատ այս մարդուն թաղեցի: Մտածում էի. *Ինչու պետք է Աստված նրան բժշկի: Նույնիսկ հավատացյալ չէ: Աստված իր զավակներին անգամ հազվադեպ է բժշկում:*

Հետո Տերը մի բան ասաց, որ ես չհասկացա: Լսելի ձայն չլսեցի, բայց փոխարենը ուժեղ զգացում ունեի, որ ինձ առաջնորդում էր ինչ որ բան անել: Այդ ժամանակ մի քանի անգամ էի միայն Տիրոջից ինձ խոսք տալու նման փորձառություն ունեցել: Սա դրանցից մեկն էր: Այնուամենայնիվ այնքան տարված էի իմ հոգսերով, որ գրեթե վրդովվեցի այդ միջամտությունից: Ես լսում էի, որ Աստված ասում էր «համարձակ քայլ արա»:

Մտածում էի. *Տեսնես ինչ ի նկատի ունի*:

Հետո կրկին ինձ դրդեց. «Ռիսկի դիմիր»:

Մտածեցի.*իսկ ինչ պետք է անել: Այս մարդիկ նույնիսկ քրիստոնյա չեն: Ռիսկի դիմելու կարիք չկա:* Հետո անմիջապես աստվածաշնչյան մի համար եկավ մտքիս . «Լայն բաց արա քո բերանը և ես կլցնեմ դրան» (Սաղ. 81:10):

Առանց անգամ գաղափար ունենալու, թե որոնք կլինեն իմ հաջորդ խոսքերն ասացի.

-Աստծված ինձ ասում է, որ շուտով...-բառերը սառան շուրթերիս...-լիովին կբժշկի ձեր հորն ու նրան բոլորովին նոր սիրտ, ի դեպ նաև նոր թոք կտա:

24

Տարօրինակ էր: Նա ինձ ոչինչ չէր ասել հոր թոքերի մասին: Երևէ ձեզ հետ եղել է, երբ ինչ որ բան ասեք հետո երազեք, որ հնարավոր լիներ օդում սլանալ ետ ճանկել այդ բառերն ու բերան վերադարձնել՝ ոչնչացնելով որևէ հետք, որ նման հիմարություն եք դուրս տվել: Ամուսնացած տղամարդկանց մեծամասնությունն ինձ կհասկանա: Երբ հասկացա, թե ինչ եմ ասել խուճապի մատնվելով կանգնեցրի ինձ: Փորձեցի իրավիճակը շտկել և ասացի.

-Բայց, սպասեք մի րոպե: Դուք պետք է իմանաք, որ նախկինում, իմ աղոթքից հետո մարդիկ չեն բժշկվել: Պետք է իմանաք, որ հիմնականում իմ աղոթքից հետո մարդկանց վիճակն ավելի է վատթարացել, ոմանք անգամ մահացել են: Գիտեմ, որ Աստված *կարող է* նման բաներ անել, ինչպես որ աղոթեցի, բայց ինձ երբեք դրա համար չի գործածել: Իմ ասածը հավանաբար չի կատարվի:

Խուճապահար էի: Իսկ ինչ կլինի եթե այս կինն սկսի հույսեր կապել և ի վերջո սարսափելի հիասթափվի: Այդ ամենն իմ մեղքով կլինի:

Նա ընդհատեց ինձ

- Ասում եք Աստված հորս բոլորովին նոր սիրտ կտա՞:

Թուքս կուլ տալով ասացի.

-Այո, բայց...:

Նա ինձ կրկին ընդհատեց ասելով.

-Շնորհակալություն,- և լսափողը կախեց:

Սիրտս ոտքերիս տակ ընկավ: Գրողը տանի ինչ էի մտածում: Ամեն ինչ արեցի բացի այս կնոջ ցավը թեթևացնելուց: Իսկ եթե բողոքեն եկեղեցուն: Չէ որ ես ամենևին էլ բժշկող չեմ:

Ժամեր անց , երբ այդ կինը հեկեկալով կրկին զանգեց, սիրտս նվաղեց: Չէի կարողանում խոսքեր գտնել ասելու մտածելով *վա՜յ իմ աղոթքով սպանեցի նրա հորը: Ինչու աղոթեցի նրա համար: Ինչի մասին էի մտածում:* Ես սկսեցի դառնապես ներողություն հայցել.

-Անչափ ցավում եմ: Անչափ ցավում եմ ձեր կորստի համար...:

-Ի՞նչի մասին եք խոսում: Ի՞նչ կորուստ,- ասաց նա կակազելով:

Հեծկլտոցի միջից ուղղակի փորձում էի կռահել բառերը, վստահ չէի որ ճիշտ էի նրան հասկանում.

-Ձեր հայրը,-ասացի ես.-մահացա՞վ:

Նա ասաց.

-Ոչ, նա շատ լավ է:

Այդ լուրն ամենաշատն ինձ զարմացրեց:

-Այո, ճիշտ լսեցիք...,- նա սկսեց արցունքները խեղդելով պատմել.-Երբ բժիշկները պատրաստվեցին հորս վիրահատելու տեսան, որ բոլորովին նոր սիրտ ունի:- Նա բացատրեց, որ տարիներ առաջ հոր սրտի փականներից մեկը փոխարինել էին: Բժիշկները նրա կյանքը փրկելու համար սրտի փականներից մեկը խոզի սրտի փականով էին փոխարինել: Հիմա ոչինչ չէր երևում: Անգամ նախորդ վիրահատության սպին էր անհետացել: Բժիշկն ասել էր, որ եռեսուն տարեկան տղամարդու սրտի պես է:

Բացարձակ քարացել էի: *Միթե այս ամենն իրական է:*

Հետո նա շարունակեց.

-Ձեզ չէի ասել, բայց նրա մի թոքի կեսը ևս հեռացրել էին ժամանակին: Դուք նշեցիք, որ Աստված նրան նաև նոր թոք է տալու: Երբ բժիշկները հետազոտեցին տեսան, որ նա կիսատ թոքի փոխարեն լիովին ամբողջական թոք ունի:

Անընդհատ փորձում էի հասկանալ, թե արդյոք ամեն ինչ ճիշտ եմ լսում:

-Վստա՞հ եք,- հարցրեցի ես,-հիմա *վստահ* եք, որ այդ ամենը կատարվել է:

Ուղեղիս մեջ չէր տեղավորվում: Աստված բժշկել էր այդ մարդուն իսկ ես դժվարանում էի հավատալ: Նրան ասացի.

- Ուզում եմ փաստաթղթերը տեսնել:

Իմ անհավատության պատճառով նա հացրեց.

-Դուք իսկապե՞ս հովիվ էք:

Հաջորդ կիրակի ամբողջ ընտանիքով մեր եկեղեցի եկան: նա անգամ ինձ համար հոր վիրահատությունից առաջ և հետո արված հետազոտությունների պատասխաններն էր բերել: Ի շնորհիվ այս փորձառության նրա ողջ ընտանիքը հավատաց Աստծուն և որոշեց Քրիստոսին հետևել:

Այդ դեպքն ինձ համար բեկումնային դարձավ, քանի, որ մանկուց այդ մասին էի երազել: Տեսա Աստծո զորության իրականությունն ու մեր միջոցով գործելու Նրա փափագը, որին իմ կյանքում բացարձակ անուշադրության էի մատնել: Այդ ժամանակ ոչ քառասնօրյա ծոմապահության, ոչ էր Աստվածաշնչի խոր ուսումնասիրության մեջ չէի:

Մինչ այդ կնոջ զանգը ահավոր տրամադրություն ունեի, ինձ համար այդ օրը ոչ սուրբ էր եղել ոչ էլ գերբնական: Ավելին՝ ճիշտ հակառակը:

Երբ մտածում էի այդ փորձառության մասին շարունակ հարցնում էի. *Տեր ինչու ինձ գործածեցիր: Միթե պիտանի էի:*

Այդ օրն զգացի, որ Տերն ինձ ասում է. «Ռոբբի՛ , Ես պարզապես հասանելի մարդիկ եմ փնտրում»:

Նրա բաժինը/մեր բաժինը

Աստծո պարգևը մեզ կարողություն տալն է, մեր պարգևն Աստծուն հասանելի լինելը: Նա ասում է. «Առաջինը գնա: Հասանելի եղիր, քայլ արա և Ես քեզ կզորացնեմ»: Աստված իր բաժինն անում է, բայց մենք էլ մեր բաժինն ունենք անելու: Մենք բոլորս հրավիրված ենք մասնակցելու Աստծո Արքայությունն ընդարձակելու գործին: Այն մի բարձր

կանչվածություն է, երբեմն ոչ հեշտ մի ճանապարհ, հավատքի քայլ առ քայլ մի գործընթաց, որ հասանելի է բոլորին թե՛ նորահավատին և թե՛ մեգա եկեղեցու հովվին:

Արդյոք մենք իսկապես հավատում ենք, որ կենդանի Աստծո Հոգին մեր մեջ է ապրում: Եվ ի վերջո ինչ ի նկատի ունի, երբ Գաղատացիս 5:16 համարում ասում է «Հոգով ընթացեք»: Միանշանակ հնարավոր է Աստծուն հավատալ, բայց ապրել առանց Նրա Հոգով քայլելու: Հիսուսն ասաց. «Աստված հոգի է, և Նրան երկրպագողները պետք է Հոգով և ճշմարտությամբ երկրպագեն» (Հովհ. 4:24): Հոգու միջոցով մեզ շնորհ է տրվել իշխանությամբ և սիրով քայլելու, որն իսկապես կարող է այս աշխարհը փոխել: Ինձ հատկապես դուր է գալիս շնորհի մեկնաբանություններից հետևյալը. «Աստծո կամքն իրագործելու Աստծո զորություն»: Նման կենսակերպ ունեցողներն իրականում Հիսուսի աշակերտ են կոչվում: Այսօր մենք Նրան Հոգով ենք ճանաչում, քայլում Նրա հետ և անում այն, ինչ Նա արեց: Այս ամենն անհնար է չափել կամ համեմատել, բայց քաջալերական է այն, որ Աստված մեր միջոցով աներևակայելի բաներ կարող է անել: (տե՛ս Եփես.3:20)

27

Գուցե պատճառը ավանդապաշտությունն է, ուշադրությունը շեղող երևույթների բազմազանությունը, անձնական քաղաքական կամ տնտեսական հայացքները, ինչպիսին էլ որ այն լինի այսօր արևմտյան եկեղեցին քնած է մեր կյանքում Աստծո ուժի դրսևորման իրականության հանդեպ: Փոխանակ իշխանությամբ և անկեղծ սիրով շնորհ տարածելուն, որն իրական փոփոխության պատճառ կդառնա, խրվում ենք օրենքների ու քննադատությունների մեջ: Մինչդեռ մեր ազգը աղաղակով հույս է տենչում: Հուսահատված քաղաքներն Աստծո մարդկանց կարիքն ունեն, ովքեր ճանաչում են Քրիստոսին և ապրում ու արտացոլում Նրա սերը: Ոչ թե ավելի շատ «քրիստոնյաների» կարիք ունենք, այլ Քրիստոսի հետևորդների: Գոյություն ունի իրական իշխանություն, որ կջախջախի հիվանդությունը, տառապանքն ու անհնարին թվացող իրավիճակներում հուսահատությունը:

Ինչևէ մեր «կրոնը» դյուրին է դարձրել մոռանալ Աստվածաշնչի արմատապես ներգրավող, շրջադարձային, կարծրատիպեր քանդող Քրիստոսին, փոխարենը տեղի տալով այն ստերին, որ քրիստոնեությունը մի քիչ ձանձրալի է, մի քիչ հնաոճ, երբեմն էլ շինծու:

Սա բացարձակ սխալ մտածելակերպ է:

28

2//Առաջին հպումը

Մենք չենք կարող աշխարհը փոխել քննադատություններով ու դատապարտություններով,

այլ մարդկանց կյանքերում բռնկված Աստծո Հոգու կրակով:

Վենս Համֆրեր

Արքայության ապշեցուցիչ իրականությունն առաջին անգամ ինձ հպվեց ինը տարեկանում Ջորջիա նահանգի Ատլանտա քաղաքում: Ծնողներս մի փոքրիկ եկեղեցում հովվություն էին անում և ահա մի գիշեր հայրս հերոինից կախվածություն ունեցող երիտասարդ բերեց մեր տուն, որ օգնի նրան թունազերծվել: Հայրս կոպիտ և թափթփված, ինքնուս ձեռներեց ու եկեղեցի հիմնող էր, ով աղքատներին օգնելու հատուկ խանդավառություն ուներ: Նա հիմնել էր մի քանի եկեղեցի, քրիստոնեական համայնք, հասարակական կազմակերպություն, մի շարք տարբեր բիզնեսներ: Նրա երազանքներից մեկը տնից փախած պատանիների և թմրամոլների համար հատուկ կենտրոն կառուցելն էր: Բայց քանի որ այդքան գումար չունեինք առանձին տուն կառուցելու, նա մեր տունն այդ նպատակի համար էր ծառայեցնում էր և ամենաազատ սենյակն իմն էր և իմ կողքի մահճակալը: (Ամեն դեմքում խորհուրդ չէի տա նման բան անել):

29

Այս տասնյոթամյա երիտասարդը հոր ծեծից խուսափելու համար փախել և այժմ ապրում էր Ատլանտայում: Փորձելով մի կերպ գոյությունը քարշ տալ սկսել էր թմրանյութերի գործով զբաղվել և ի վերջո թմրամոլ էր դարձել, ով իր մարմինը վաճառում էր մի կտոր հացի դիմաց: Երբ հայրս այս տղային պատմել էր Աստծու մասին, նա արձագանքել էր, որ ուզում է փոխվել և ահա այդպես հայտնվել էր մեր տանը:

Հիշում եմ, երբ առավոտյան արթնանում էի տղան հերոյինի Սպիտակ տենդի (delirium tremens) մեջ զառանցում էր: Տանջալից տեսարան էր: Ողջ մարմնով ցնցվում էր, քրտնում, ճչում և հետո սենյակով մեկ սիրտ թափում: Հիշում եմ հայրս հետևից գրկում էր տղային, որպեսզի ցնցումների ժամանակ ինքն իրեն չվնասի: Երրորդ օրը, որը սովորաբար համարվում է վատթարագույնը մի աննկարագրելի բան կատարվեց:

Կիրակի էր առավոտյան ժամը 6-ը կլիներ, վաղորդյան լույսի առաջին շողերը դեռ նոր էին սկսել սենյակ թափանցել: Արթնացա և տեսա, որ տղան պատուհանագոգին կռթնած ուշադիր նայում է մեր տան ետնաբակին: Նախորդ մի քանի օրերին ես նրանից վախենում էի: Այդ ժամանակ ամենևին չէի հասկանում, թե ինչ է կատարվում նրա հետ, միայն գիտեի, որ ինչ կատարվում էր շատ վատ էր: Նրան ձայնեցի ասելով.

-Հե՛յ, լա՞վ ես:

Երբ դեպի ինձ շրջվեց, տեսա, որ դեմքն արցունքներով էր ողողված: Վերնարաշապիկը թաց էր և կարելի էր կռահել, որ երկար ժամանակ արտասվելիս է եղել:

-Ռոբբի՛ , ամեն ինչ անցավ...այս առավոտ Հիսուսը մեր սենյակ մտավ: Նա ուղղակի ամեն ինչ հեռացրեց ինձնից: Կախվածությունը, ցավը, հիվանդությունը...իմ զայրույթն ու ամոթը: Ամեն ինչ անցավ: Ամեն ինչ գնաց,- Նա գլուխը կախեց ու նորից արտասվեց:

Նրան նայելով հասկացա, որ փոխվել է: Ինձ ամենաշատ զարմացրեց նրա լիակատար խաղաղությունը: Թե նրա մոտ և թե ողջ սենյակում հանդարտ մթնոլորտ էր տիրում, որի մասին անգամ չէի կարող երազել դրա նախորդ օրը: Կարծես դեմքը ճառագում էր:

Հանկարծ վազեցի ծնողներիս սենյակ, դուռն ուժգին բացեցի ու պոռթկալով սկսեցի լաց լինել: Քիչ առաջ կատարվածն ուղղակի տակնուվրա էր արել իմ ներաշխարհը:

30

Ենթադրելով, որ ինչ որ վատ բան է կատարվել, հայրս սկսեց գոռալ.

-*Ի՞նչ է պատահել*: Քեզ ի՞նչ է արել:

Ես գոչեցի.

-Ոչ, ոչինչ,- Հետո սկսեցի պատմել կատարվածն ու հեկեկալ:

-Դա այն է, ինչ ուզում եմ կյանքում տեսնել: Ուզում եմ տեսնել, թե ինչպես է Աստված մարդկանց փոխում:

Այդ երիտասարը հոգևոր աճեց և սկսեց ծառայել մեր եկեղեցում, հետո էլ ընտանիք կազմեց: Այժմ առանձին ծառայություն ունի: Ամբողջովին ազատագրվել է անցյալի կապանքներից ու կոտրվածությունից և զորավոր կերպով ծառայում է ստերի թակարդում հայտնված բոլոր այն մարդկանց, ովքեր չգիտեն իրենց իրական արժեքն ու չեն ճանաչում Աստծո սերը:

Այդ առավոտ կատարվածն *իմ* կախվածությունը դարձավ, կյանքիս երկարատև ճամփորդության մեկնարկը: Այն հաճախ անվանում եմ «առաջին հպում», որովհետև հավատացած եմ, որ այդ օրն Աստված սերմեր ցանեց, որոնք աճելով վերածվեցին իմ կյանքի մեծագույն տարերքի:

Ինչպես գիտենք այդ գործընթացն ամենևին էլ ակնթարթային չէ: Շատերիս մոտ մեծանալուն զուգընթաց ավելանում են շեղող երևույթները, ըմբոստությունն ու անտարբերությունը: Եկեղեցում մի քանի անգամ բախվելով անհավանական չարաշահումների ու անառողջ հանգամանքների ամբողջովին երես էի թեքել Սուրբ Հոգու ներկայությունը շեշտադրող շարժումներից: Տարիներ շարունակ ստացած հոգեկան վերքերի պատճառով խուսափում և պաշտպանում ցինիզմի հաստ պատերի հետևում: Միևնույն ժամանակ պայքարում էի հիասթափության դեմ, քանի որ անձնական կյանքում և ծառայության մեջ բացակայող զորության պակաս էի զգում:

Գիտեի, որ Աստծո կարիքն ավելի շատ ունեմ և Նրա ներկայության լիությունը տեսնելու անհագ քաղց էի զգում: Զգում էի, որ ոչ միայն հնարավոր է ճաշակել այդ ուժն ու զորությունը, այլ Աստված Ինքն է կամենում մեր ամեն օրը լցնել Իր ներկայությամբ:

Բայց Հիսուսն իր ողորմածությամբ ու հավատարմությամբ ամեն ինչ ջախջախեց:

Նա վերցրեց իննամյա տղայի իմ երազանքն ու հիասթափությունները և ինձանից կերտեց մեկին, ով կարող է ուրիշների համար օրհնություն դառնալ:

31

Հաջորդ էջերում կպատմեմ իմ փորձառությունների մասին, երբ անհավանականից մուտք գործեցի անհնարինը: Նաև կբաժնեկցեմ մի քանի առանցքային մտքերով, թե ինչ է ինձ համար նշանակում Հիսուսին հետևել և Նրա գործերին հաղորդակից լինել անկախ

կասկածներից, վախերից ու փորձի պակասից: Մենք *չենք որակազրկվում կասկածների պատճառով*: Մեզ հաճախ խանգարում են մեր մարդկային թուլություններն ու սահմանափակ լինելու զգացումը, բայց իրականում ոչ թե խոսքը մեր, այլ Նրա մասին է: Սա սկզբից մինչև վերջ մի պատմություն է շնորհի, մեզ ու մեր միջոցով ուրիշներին սիրելու, հպվելու և բուժելու Աստծո կարողության մասին, որով արտացոլվում է Նրա բարի, կատարյալ ու սուրբ բնությունը:

Ինը տարեկանում իմ տեսածը հիմք հանդիսացավ, որ հասկանամ,թե ինչ է նշանակում ծառայել ինչպես Հիսուսը: Այդ հանդիպումն այնքան զորավոր էր, որ անգամ անդիմադրելիորեն հրապուրեց իննամյա տղային: Այդ պահին ինձ համար բացահայտվեց Քրիստոսի սերը մեզ նման կորուսյալ մարդկանց համար: Այդ տղան ոչ աշխատանք, ոչ իրեն սիրող ընտանիք, ոչ ինքնագնահատական, ոչինչ չուներ: Մեր ծանոթության առաջին պահից նա իմ սենյակում սիրտ էր թափում: Միթե հույս կար նրա համար: Աշխարհը կպատասխաներ ոչ: Մինչդեռ հենց այնտեղ, իմ սենյակում Հիսուսը հայտնվեց նրան:

Մեզանից քանիսն են ողջ կյանքը երկրպագելով և շաբաթը երեք անգամ եկեղեցի գնալով անց կացրել, բայց տակավին Հիսուսին չեն տեսել:

Բայց...ահա Հիսուսը...մեր սենյակում, եկել էր խոսելու մի տղայի հետ, ով ոչ հավատում էր և ոչ էլ մտածում Նրա գոյության մասին: Մանկուց լսել էի, որ Քրիստոսը մահացել է մեղավորների համար, բայց որ Հիսուսը երկու հազար տարի անց դեմ առ դեմ կհայտնվի փոքրիկ տղայի անփառունակ, թափթփված սենյակում խոսելու և սատարելու այդ աղքատ, տենդի մեջ դողացող հիվանդ պատանուն, ինձ պարզապես տակնուվրա արեց:

Ի վերջո ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ տղան: Ի՞նչ ենք մենք մեզանից ներկայացնում:

Այդ առավոտ սերն ինքն էր իմ սենյակ մտել: Մի հիպի մարմնավճառ տղա, ով իր ողջ կյանքում հորից միայն լսել էր «ատում եմ քեզ, երանի ծնված չլիներիր», այցելվել էր Երկնային Արքայի կողմից, ով այդ խոսքերը ջնջել ու փոխարենն Իր սիրով էր նրան համակել: Սերը տղային ազատ էր արձակել: Նրան ոչ միայն հերոյինից էր ազատագրել, այլև անասելի խաղաղություն էր տվել ու դեմքին ուրախության փայլ հաղորդել: Սերն էր, որ ինձ թույլ էր տվել այնտեղ գտնվել, իմ աչքերով տեսնել տղայի փոխվելն ու հանկարծ հասկանալ. *ահա թե ինչ է պետք:*

Մարգարեները մարգարեացել են այդ մասին: Իսրայելը դրան էր սպասում: Շատ եկեղեցիներում մարդիկ դրա մասին են խոր հառաչանքով երազում: Մենք գիտենք, որ ավելին կա: Փափագում ենք բարի լուր լսել, որն իրոք *բարի* կլինի: Առանց հասկանալու իմ ամբողջ իննամյա կյանքում ես այդ իրադարձությանն էի սպասել և մանկական արցունքներով աղաղակում էի, որ ուզում եմ կյանքիս մնացած մասն այդպես անցնի:

Ահա թե ինչի մասին են պատմում գրվածքներն ու Աստծո Արքայության զորությունը: Քրիստոսից ութ հարյուր տարի առաջ Եսայա մարգարեն աննշան, պայքարող, գրեթե անհետացող Իսրայելի ժողովրդին գրում է գալիք օրերի մասին, *Նրա* մասին, ով կգա և

ամեն ինչ կփոխի: Եսայա 61-րդ գլխում նա Քրիստոսի նկարագիրն է տալիս, ում վրա Տիրոջ Հոգին է և ով կգա հետևյալն անելու.

Աւետարանելու աղքատներին, բժշկելու սրտով բեկուածներին,

գերիներին ազատութիւն քարոզելու և կոյրերին՝ տեսողութիւն,

հռչակելու Տիրոջ ընդունելի տարին և մեր Աստծու վրէժխնդրութեան օրը, մխիթարելու բոլոր սգաւորներին,

փառաւորելու Սիոնի սգաւորներին, որ մոխրի փոխարէն ուրախութեան

օծման իւղի պիտի արժանանան, իսկ սգաւորները վհատ հոգու փոխարէն՝

փառքի զգեստի: Եւ նրանք պիտի կոչուեն ազգ արդարութեան, տունկ՝

ի փառս Տիրոջ:

(Ես 61:1-3)

33

Եսայան գրում է սրտով բեկված, հուսահատ, տխուր ու ողբացող մարդկանց մասին: Նա այդ տասնյոթամյա երիտասարդի մասին է գրում, ով անտեսված մարմնավաճառից Քրիստոսի հետ արքայազնի վերածվեց, իր համայնքում բացառիկ առաջնորդի, ով ուրիշներին սկսեց դարձի բերել: Աստծո վրեժխնդրության տեսակը կոտրված մարդկանց փրկելն ու նրանց փրկող դարձնելն է:

Իմ դեպքում Աստված ինձ ազատագրեց անզորության ու հիասթափության նախորդ փորձառություններից, լցրեց, որպեսզի ես էլ կարողանամ մարդկանց պատրաստել այս սերնդի մեջ Հոգու աներևակայելի մի շարժմանը: Սա միայն մի քանիսին չի վերաբերվում: Հովել մարգարեն գրել է վերջին օրերում Հոգու գործելու խոստման մասին:

Եւ կ՚իմանաք, որ Իսրայէլի մէջ եմ ես, որ ես եմ ձեր

Տէր Աստուածը, ու չկայ ոչ ոք ինձնից բացի, և իմ ժողովուրդը

չի ամաչի յաւիտեան:

Այն օրերին իմ Հոգուց կը հեղեմ իմ ծառաների վրայ, իմ

աղախինների վրայ, որոնք կը մարգարէանան:

Հրաշքներ ցոյց կը տամ երկնքում և երկրի վրայ՝

արիւն, հուր և ծխի մրրիկ. արեգակը կը խաւարի, և լուսինը

արիւն կը դառնայ, քանի դեռ չի եկել Տիրոջ մեծ ու երևելի օրը»:

(Հովել 2:28-30)

34

Աստծուն հետևելով ֆիլմի սուպերհերոսի կյանք եմ ունեցել, ուղղակի մի տարբերությամբ, որ իմ շուրջը կատարվող դեպքերն իրական են եղել: Մենք ստեղծագործ Աստծու ենք ծառայում, Ով ունակ է անհնարինը հնարավոր դարձնել: Մեր կյանքի մեծագույն արկածն Աստծո կամքին հնազանդվելն է: Կյանքը կարճ է, ուստի Աստված ուզում է մեր միջոցով շատ ավելի մեծ գործեր անել: Մեծապես քաջալերվում եմ տեսնելով հասարակական տարբեր դիրք ունեցող անհամար մարդկանց, ովքեր արկածային կյանք ապրելու այս

մարտահրավերն ընդունում ու Նրա համար ռիսկի են դիմում: Երիտասարդներ, ծերեր, հարուստներ, աղքատներ, անտուն թափառաշրջիկներ, մարմնավաճառներ, ուսուցիչներ, բժիշկներ, գանգստերներ, պրոֆեսիոնալ ֆուտբոլային աստղեր, գործարարներ, տնային տնտեսուհի մայրիկներ, գոյություն չունի որևէ չափանիշ, թե ում և ինչպես Աստված կգործածի, եթե մարդն ինքը կամենա: Երբ կանչում ես, որ Աստված քո կյանքում բեկում մտցնի, այն գեղեցիկ, ստեղծագործ Աստվածային զորությանն ես կանչում, որով ինչպես նկարագրված է Ծննդոց գրքում երկիրն արարվեց: Սակայն կանչում ես նաև մեր հզոր ռազմատենչ Թագավորի կործանարար զորությանը: Հենց այն զորությանը, որ Հայտնության գրքի մեջ ոչնչացրեց Սատանայի թագավորությունն ու հիմա էլ մտնելով մեր կյանք փոխում է ներկան:

Իրադարձություններն սկսում են ավելի արագ զարգանալ: Ողջ աշխարհով մեկ հրաշալի արթնության ականատես ենք լինում: Չինաստանում և Իրանում ստորգետնյա եկեղեցիներն օրեցեօր հարյուրավոր և հազարավոր Աստծո խոսքին ծարավ մարդկանցով է ողողվում, ովքեր անկախ հարատև հալածանքներին շարունակում են հավատալ ու փոխել իրենց քաղաքները: Աֆրիկայում, Միդվեսթի արվարձաններում և ամբողջ աշխարհում Աստծո զորությամբ մեռելները հարություն են առնում: Եգիպտոսի հինավուրց վայրերում հույսի նոր աղբուրներ են ցայտում: Ֆիլիպինների քաղաքամերձ ետնախորշերից մինչև արևելյան Եվրոպայի գնչուական ճամբարներն ու Լատինական Ամերիկա աղոթքի տարափ է տեղում և արթնություն է տարածվում՝ հռչակելով Աստծո Արքայությունը: Աստված գերբնական ձևով ազատագրում և բուժում է մարդկանց՝ հրավիրելով Իր սիրո իրականության մեջ: Երբ ավետում ենք Արքայության բարի լուրը, ինչ որ բան սկսվում է փոխվել: Կույրերը տեսնում են, քաղցկեղն անհետանում է, սրտերը նորոգվում են, ծուռ ոտքերն ուղղվում են, ընտանիքները հաշտվում են, բանդաների դաժանությունը կորչում է, հանցագործ առաջնորդներն ապաշխարում են, սատանիստներն սկսում են Հիսուս քարոզել և կորսված վայրերում կրկին հույսի նշույլ է առկայծում:

35

Ահա այսպիսին պետք է լինի եկեղեցին, այլ ոչ թե կատարյալ կամ իր հարևանից ավելի լավը: Այսինքն Աստծո սիրո ավետիսն իրականում մեր մեջ է բնակվում և պատրաստ է կառուցելու, վերականգնելու, բժշկելու և վերափոխելու մեզ և մեզ շրջապատող աշխարհը: Ահա այն գանձը, թաքցրած այն անգին մարգարիտը, որ պետք է ամեն բանից առաջ որոնել: Արքայության գեղեցկությունն ու Արքայի սքանչությունը մեզ առաջ է մղում: Մենք ստեղծագործ Աստծո ենք ծառայում: Նա երբեք միևնույն բանը երկրորդ անգամ չի անում:

Այս գիրքը ոչ թե նպատակ է հետապնդում նկարագրելու Ռոբբի Դոքինսի գործելաոճը, այլ հռչակելու, որ Աստված գործում է և մենք կարող ենք անել այն, ինչ Հիսուսն արեց: Այս գիրքը ոչ աստվածաբանական վերլուծություն է, ոչ ապոլոգետիկա, ոչ էլ անգամ թեմայի ընդարձակ ուսումնասիրություն: Այն եկեղեցու տեսիլքը, եռանդն ու քաջությունը վերականգնող ուսուցողական ձեռնարկ է՝ եկեղեցին Հիսուսի ձևով բարձրացնելու և կառուցելու:

Հիսուսը ոչ միայն փրկում է մարդկանց մեղքից այլ փառավոր հաղթանակ է տալիս խավարի իշխանության դեմ և վերագրավում Իր կորցրած քաղաքները:

Իմ կյանքի պատմությունը դրա վկայությունն է: Նաև Աստծո իրականության վկայությունն է, Նրա վիթխարի զորության և ցանկության, որ գործածի մեզ մարգարեանալու, բժշկելու և այս սերնդի մայրերին, հայրերին, որդիներին, դուստրերին ու համայնքները Հոր սիրուն վերադարձնելու: Իմ կյանքի պատմությունը պտուղ է, բազմաթիվ պտուղներից ընդամենը մեկը: Աստված ուզում է ամբողջ աշխարհի եկեղեցիների Իր բոլոր զավակները պտղաբեր վկայություններ ունենան:

Անգամ գիրքը կարդալիս հավատացած եմ, որ Աստված փոթորկում է ձեր հոգին և գործում ձեր յուրահատուկ շնորհների, անցյալի, դաստիարակության և անգամ ընտանիքի, ընկերների, սոցիալական շրջանների մեջ:

36

Ոչինչ պատահական չէ, Աստծո հետ ամեն ինչ իմաստավորված է: Իմ նպատակն է բոցավառել ձեր տեսիլքը, քաջալերել ու խրախուսել, որ համարձակությամբ քայլ անեք գնալով իսկզբանե ձեզ համար ստեղծվածին ընդառաջ, գնդակը ձեզ նետելով տեսնել, թե ինչպես եք յուրաքանչյուրդ այն խաղադաշտից դուրս նետում:

37

3//Զորացած ոսկորներ

Շարունակական և անկաշկանդ սիրո և մտքերի փոխանակումն Աստծո

և փրկված մարդու շնչի միջև նորկտակարանյան կրոնի բաբախող սիրտն է:

Ա.Վ. Թոզեր

Աստվածաշունչը տղամարկանց ու կանանց պատմություն է, ովքեր որոնեցին ու ճաշակեցին Աստծո ներկայությունը: Հովսեփը Նրան երազներով տեսավ: Եսթերը Նրան աղոթքով ու ծոմով որոնեց: Հակոբը գիշերով Նրա հետ մենամարտեց: Մովսեսը որոտացող լեռան վրա Նրան մեջքով անցնելիս տեսավ: Դավիթը երգեր ու բանաստեղծություններ ձոնեց: Մարիամը նստեց նրա հետ մի կողմ թողնելով տնային գործերը: Աբրահամը բանավիճեց: Եղիան այնքան թաքնվեց քարայրում մինչև չճանաչեց Աստծո մեղմ ու հանդարտ ձայնը: Մարիամ Մագթաղենացին Հիսուսի ոտքերն իր արցունքներով լվաց:

Մովսեսը որպես Աստծո ընտրյալ առաջնորդ ժողովրդին ստրկությունից խոստացյալ երկիր տանելու, գիտեր, որ «ներկայությունը կրող ժողովուրդ» լինելն առանցքային նշանակություն ունի: Կար մի պահ, որ Աստված պատրաստ էր Իսրայելի ժողովրդին առանց Իր ներկայության ուղարկելու:

39

Նա Մովսեսին ասաց, որ Խոստացյալ Երկիրն իր ողջ հարստությամբ, հարմարավետությամբ ու լիությամբ կժառանգեն, սակայն առանց Իր ներկայության: Տերը խոսեց Մովսեսի հետ. «Ելէ՛ք այստեղից դու և քո ժողովուրդը, որին դուրս բերեցիր Եգիպտացիների երկրից, և գնացէ՛ք այն երկիրը, որ երդուել եմ տալ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին...քեզ կը տանեմ այն երկիրը, ուր կաթ ու մեղր է հոսում»: Աստված ասաց, որ նրանց առջևից հրեշտակ կուղարկի և հետո ավելացրեց. «բայց քեզ հետ դուրս չպիտի ելնեմ...» (Ելք 33:1-3):

Ըստ էության Աստված ասում էր.«Դուք ինձ չեք ուզում, այլ իմ տվածի փայլը... կաթ ու մեղր հոսող երկիրը: Եթե այդպես է գնացեք ու ստացեք»: Խոստացյալ Երկիր նրանց տանելն Աստծո գաղափարն էր: Իսրայելի ժողովրդի համար Նրա նախատեսած ծրագիրը, սակայն Մովսեսը գիտեր, որ այն երբեք չի կարող փոխարինել Աստծո ներկայությանը: Քրիստոնեական կյանքում նույնպես հեշտ է տարվել Աստծո տվածի «փայլով» շեղվել ու շփոթել այն Աստծո ներկայության հետ: Նրա խոստումները մեր կյանքում բարի են, բայց չպետք է դառնան մեր միակ կիզակետը: Անկախ նրանից, թե ինչին են այդ խոստումները վերաբերվում ամուսնությանը, երեխաներին, աշխատանքին, ծառայությանը, անհատական զարգացմանն ու հաջողությանը, միևնույնն է այդ խոստումները կարող են հեշտությամբ վերածվել մեր միակ նպատակը դառնալ և աղոթքները սկսեն ողողվել հարստության, օրհնության և հարգանք վայելելու թախանձանքներով: Հոգևոր իրականության մեջ անգամ կարող ենք ավելի շատ փափագել հրաշքներ, աճող եկեղեցի և փայլուն ծառայություն ունենալ քան Աստծո ներկայությունը: Միթե որևէ բան կփոխվի, եթե Սուրբ Հոգին մեր տներից ու եկեղեցուց հեռանա: Միթե կնկատենք Նրա բացակայությունը: Երբեմն այնքան ենք տարվում մեր վերջնական տեսանելի նպատակին հասնելու ոգևորությամբ, որ մոռանում ենք Տիրոջը, Ով բոլոր բարիքների սկիզբն է:

Մովսեսին հայտնի էր այս ամենը: Նա գիտեր, որ Աստծո ժողովուրդն ավելին ստանալու կարիք ունի, միայն Նրա տվածի փայլը բավարար չէր: Մովսես սրտի խորքում գիտեր. *Մենք Աստծո կարիքն ունենք, այլապես կորած ժողովուրդ ենք*: Նա Աստծուն հիշեցրեց այդ մասին և Նա էլ պատասխանեց. «Ես ինքս պիտի գնամ քո առաջից ու պիտի տեղաւորեմ քեզ» (Ելք 33:14):

40

Ահա տեսնում ենք, Մովսեսի որպես առաջնորդ ունեցած ուժն ու Արքայության արժեքը: Նա կարող էր բավարարվել օրհնություններով և Աստծո ներկայության իր անհատական փորձառությամբ, բայց Աստծո ավելի մեծ տեսիլքից կառչեց, Իր ժողովրդի հետ լինելու Նրա նախնական ծրագիրից:

Աստծո ներկայությունը միայն մի քանի սուրբերի համար չէր, ովքեր բացառիկ հնարավորություն էին ունեցել Նրա հետ հաղորդակցվելու, այլ նախատեսված էր մի ողջ ժողովրդի բնութագրող որակ կոչվելու և խոստացյալ թագավորությունն արտացոլելու: Չնայած նրան, որ Մովսեսը գտնվում էր անապատում և առանց ուտելիք ու առանց ջուր տրտնջացող հազարավոր մարդկանց առաջնորդում, նա ասաց Աստծուն «Եթէ դու ինքդ մեզ հետ չգնաս, ուրեմն ինձ այստեղից մի՛ հանիր...եթէ դու մեզ հետ գնաս, ես ու քո ժողովուրդը կը փառաւորուենք շատ աւելի, քան երկրի վրայ եղած բոլոր ազգերը» (Ելք

33:15, 16)
Մովսեսի վերջնական նպատակը Աստծո ներկայությունն իր ժողովրդի հետ տեսնելն էր: Նա չէր կարծում, որ Աստծո ներկայությունը պետք է որոնեն այն ժամանակ, երբ հանգիստ հաստատված կլինեն իրենց տներում և կկարողանան ճգնել: Մովսեսը պատասխանատու էր ավելի քան երկու միլիոն փախստականների վերաբնակեցման ողջ ծրագրի համար: Մեզանից ոչ մեկ թերևս չի հանդիպել նման ճնշումների ու պահանջների ինչպիսին Մովսեսին էր բախտ վիճակվել այդ օրերին: Սակայն մի կողմ թողնելով ամեն ինչ նա քառասուն օր և քառասուն գիշեր մարտնչեց «ներկայությունը կրող ժողովուրդ» դառնալու համար: Մովսեսը խորապես Աստծո ներկայության կարիքն ուներ:

Ավելի խորը գնալ

Մովսեսը նաև Տիրոջն ասաց. «Ինձ իմացրու քո ճանապարհները» (Ելք 33:13): Աստծո ճանապարհներին հետևել նշանակում է ոչ թե քո սեփական կարողություններին այլ Տիրոջն ապավինել: Երբ Մովսեսն իր ձեռքով սպանեց Եգիպտացուն, նա ավելի շատ իր «ազատարար» լինելու նպատակով էր տարված:

Հետո նա աշխարհի ամենազորեղ երկրի արքայազն լինելով անապատ փախավ, որտեղ էլ աշխարհի ամենախոնարհ մարդը դարձավ: Անապատում նրա անց կացրած ժամանակը նրա մեջ որակներ ձևավորեց, որ հետագայում կարողանա մի ամբողջ ժողովուրդ առաջնորդել: Քառասուն տարում Մովսեսի վերջնական նպատակը հասունանալով անցավ իր անձնական նկրտումների շեմն ու սկսեց ավելի շատ հետապտնդել Աստծո նպատակն ու ծրագիրն Իր ժողովրդի համար: Աստված նրան անապատում հանդիպելով ասաց. «Արդ, արի՛ քեզ ուղարկեմ եգիպտացիների արքայ փարաւոնի մօտ, որ իմ ժողովրդին՝ իսրայէլացիներին հանես Եգիպտացիների երկրից» (Ելք 3:10):

Երբ Իսրայելի ժողովուրդն արդեն ճանապարհ էր ընկել, Տերը Մովսեսին Իր ընտրյալը կոչեց ասելով. «Այդ քո ասածն էլ կը կատարեմ, որովհետև դու իմ շնորհին ես արժանացել, և քեզ աւելի եմ ճանաչում, քան մնացած բոլորին» (Ելք 33:17):
Ինչպես Մովսեսի անապատի փորձառության ժամանակ այնպես էլ Իսրայելի ժողովրդի կյանքում անապատն ամենին էլ Խոստացյալ երկիր տանող ճանապահ չէր: Օրն ընդամենը մի քանի մղոն քայլելով նրանք կարող էին մի տարվա մեջ հասնել իրենց կամեցած վայրը: Անապատում անց կացրած նրանց ժամանակը նույնպես ուսուցողական էր: Անապատում նրանք սովորեցին Աստծո ճանապարհները: Այդ քառասուն տարվա ընթացքում Աստված իր ժողովրդին սովորեցնում էր Իրեն ճանաչել: Որքան շատ էին անապատում խորանում, այնքան Աստծո հետ հարաբերությունների մեջ ավելի հեռուն էին գնում: Մովսեսը պնդեց, որ Աստված իրենց հետ գնա մինչև Խոստացյալ Երկիր և իրենց Աստվածը լինի, սակայն միայն այսքանով նա չբավարարվեց: Իրականում նա ասաց Աստծուն. «Հիմա ինձ ավելի խոր տար»:

Եկեք նայենք Մովսեսի և Աստծո երկխոսությանը.
Տէրն ասաց Մովսէսին. «Այդ քո ասածն էլ կը կատարեմ, որովհետև դու իմ շնորհին ես արժանացել, և քեզ աւելի եմ ճանաչում, քան մնացած բոլորին»:

Մովսէսն ասաց. «Ցո՛յց տուր ինձ քո փառքը»:
Տէրն ասաց. «Ես իմ փառքով կ՚անցնեմ քո առաջից, քո առաջ կը կոչեմ իմ անունը՝ Տէր, կ՚ողորմեմ նրան, ում ողորմելու եմ, և կը գթամ նրան, ում գթալու եմ»:
Եւ Տէրն աւելացրեց. «Դու չես կարող տեսնել իմ երեսը, որովհետև մարդ չի կարող տեսնել իմ երեսն ու կենդանի մնալ»:

(Ելք 33:17-20)

42

Միշտ Աստված Ինքն էր Մովսեսի գերագույն նպատակը: Նա քչով չէր բավարարվում:

Հանդիպում Աստծո ներկայության հետ

Այն ինչ Աստված ասաց Մովսեսին այսօր էլ արդիական է: Երբ մտերմանում և Նրա երեսն ենք փնտրում մեր մեջ գործող շատ երևույթներ սկսում են մեռնել: Դրանք Աստծո ներկայության հետ անհամատեղելի են: Նրա փառքի շուքին նսեմանում են մեր հպարտությունը, ամբարտավանությունը, կամքը...

Ես անցել եմ դրա միջով: Նախկինում ունեցած որոշ չարաշահումների և վիրավորական իրավիճակների պատճառով երես էի թեքել ցանկացած խարիզմատ կամ «տարօրինակ» թվացող շարժումներից: Սակայն միևնույն ժամանակ Մովսեսի նման գիտեի, որ իմ կյանքում Աստծո փառքի ու ներկայության անասելի կարիք ունեմ: Դժգոհ ու խորապես տեղյակ էի իմ բացթողումների մասին: Չնայած ծանր ժամանակներով անցնելուն, կարծես ապահով հանգրվան էի գտել այդ հին, հասատված եկեղեցում՝ որպես երիտասարդների հովիվ ծառայելով: Մի կիրակի երեկոյան մեր եկեղեցու բանախոսը ինձ անծանոթ ֆինլանդացի տիկին էր: Փոքրամարմին կին էր, երևի մեկ ու կես մետր հասակով: Երբ սկսեց խոսել, լարված դիրք ընդունեցի, որ կարողանամ լսել: Գրեթե անհնար էր նրա անգլերենը հասկանալ, իսկ առոգանությունն ուղղակի անտանելի էր: Աչքերս պտտեցի: *Աստված իմ մտածեցի, տեսնես ինչու է հովիվս ժամանակ վատնել այս կնոջը որպես երեկոյի հիմնական բանախոս հրավիրելով:*

Նրա խոսքերից միայն այն հասկացա, որ բազմաթիվ ցավալի փորձություններով է անցել ու տառապել դեպրեսիաներից: Հետո նկարագրեց, որ ինչ որ հանդիպման է եղել, որտեղ «Վիբեր» անունով մի տղամարդ է քարոզել: (Այդ ժամանակ չգիտեի, որ ի նկատի ունի Ջոն Ուիմբերին, ով Վայնյարդ եկեղեցու շարժման հիմնադիրն է, այժմ որի մաս եմ կազմում նաև ես):

43

Նա խոսեց «Վիմբերի» ժողովի մասին, որտեղ իսկապես արբեցած են եղել: Դրա իմաստը չըմռնեցի (եթե ոչ միայն աշխարհիկ առումով), ուստի որքան խոսում էր այնքան ինձ տարօրինակ էր թվում: Այդպես էլ չէի կարողանում հասկանալ, թե ինչու է եկել խոսելու:

Կինն իր խոսքն ավարտելով ասաց.

-Հիմա ես մարդկանց համար աղոթում եմ, այո, այո:

Նա մարդկանց առաջ հրավիրեց և երբ սկսեց նրանց համար աղոթել նրանք ցած ընկան:

Եթե քիչ առաջ ինձ նյարդայնացնում էր նրա պատգամը, ապա հիմա բոլորովին կատաղած էի: Նման բաների նախկինում ականատես էինք եղել և ես ու կինս երբեք ցած չէին ընկել, ինչքան էլ փորձեին: Էնգիին ասացի.

-Արի դուրս գնանք այստեղից:

Էնգին ասաց.

-Դու չես կարող գնալ, դու երիտասարդների հովիվ ես:

Քիչ հետո Էնգին ավելացրեց.

-Առաջ եմ գնում, որ ինձ համար աղոթի:

-Գժվե՞լ ես,-ասացի ես:

Նա ասաց.

-Ռոբբի՛ , այստեղ մի արտասովոր բան կա: Ես դա զգում եմ:

Ես ասացի.

-Բոլորն էլ նույն աղբն են:

Նա ասաց.

-Ես առաջ եմ գնում:

Հետո ասացի.

-Երևի ճիշտ կանես գնաս ու ամեն ինչ ջրի երես հանես: Գնա ու ցույց տուր, որ ոչ մեկ չի կարող Էնգիին ցած տապալել:

Երբ Էնգին առաջ գնաց այդ կինը նրան թեթև հպվեց ու նա մեջքի վրա ցած ընկավ գետնին:

Բերանս բաց մնաց ու առաջին բանը, որ մտածեցի. *հետաքրքիր է այս կինն ինչ «հնարք» գործածեց Էնգիի վրա ազդելու:* Նախկինում տեսել էի, թե ինչպես են նման ծառայությունների ժամանակ մարդկանց գլխից հրում, կամ առաջ ու հետ թափահարում և հետո բաց թողնում:

Որոշ ժամանակ անց Էնգին ոտքի կանգնեց ու մոտեցավ ինձ: Նա ասաց.

-Ռոբբի՛ , ամեն ինչ իրական է: Գնա, թող քեզ համար էլ աղոթի:

Ես ասացի.

-Անհանար է: Դու խաբված ես:

Էնգին ասաց.

-Ոչ իրական է և դու էլ դրա կարիքն ունես:

Ես ոտքի կանգնեցի, բայց դեռ մտածում էի, որ պետք է ապացուցել, որ այդ կինը կեղծում է: Եվ ես այն միակ մարդն էի, ով պետք է արդարությունը վերականգներ...

Այդ կինն ինձ նայելով հարցրեց, թե արդյոք աղոթքի կարիք ունեմ: Ասացի.

-Հա՛ , բայց աչքերս չեմ փակելու:

Հետո այնպիսի ֆուտբոլային դիրք ընդունեցի, որ անհնար լինի ինձ ցած գցել: Ես հաղթանդամ տղամարդ եմ, ուստի եթե մեկը փորձի տեղից շարժել առաջին ոտքս դժվար թե երկրորդին հերթ հասնի:

Ֆինլանդացին սկսեց ինձ համար աղոթել: Նա ձեռքը երկարեց, որ գլխիս հպվի, հետո դեռ չկպած ետ քաշեց ու ասաց.

-Ո՛չ:

Մտքումս ասացի. *Այո փոքրիկ տիկին, դու հասկացար, որ ինձ հետ գործը գլուխ չես բերի:*

Հետո նա ձեռքը թափահարեց ու ասաց.

-Հա՛ յր, Դու արա:

Երբ այս ասաց զգացի, թե ինչպես եմ մեջքիս վրա ցած տապալվում: Ցնցվեցի: Առաստաղը գլխիս պտտվեց ու աղաղակեցի.

-Անհնար է:

Այս *անհնար է* խոսքն արտաբերելիս ընկած դիրքում քարացա, բերանս բաց, աչքերս անհավատ արտահայտությամբ չռած, ձեռքերս ճանկերի պես գլխիցս բռնած: Տղան, որ մարդկանց հետևից բռնում էր, չհասցրեց ինձ բռնել, քանի որ տասնութ դույմ գետնից բարձր էի և իմ ծանրության պատճառով նրա տաբատը պատռվեց ու ստիպված էր երեկոյի մնացած մասը մի տիկնոջից վերցրած սվիտերով ծածկվել: Այդպես քարացած գրեթե երեք ժամ գետնին պառկած մնացի ու աչքերիցս առատ արցունքներ էին հորդում: Գիտեի, որ ինչ որ բան է կատարվում, բայց չէի հասկանում, թե ինչ: Որևէ հատուկ զգացողություն չունեի, պարզապես տեղում քարացել էի: Հիշում եմ, որ այդ ամբողջ ընթացքում աչքերս բաց էին և ես մտածում էի. *Ի՞նչու եմ արտասվում: Ի՞նչու եմ արտասվում:*

Չորացած ոսկորների տեսիլքը

Այդ ընթացքում աստվածաշնչյան մի տեսիլք տեսա: Կանգնած էի Եզեկիել 37 գլխում նկարագրված չորացած ոսկորների դաշտում, բայց կարծես կյանքումս երբեք այդ հատվածը կարդացած չլինեի: Իմ շուրջն ամեն ինչ շատ իրական էր: Ամենուր ոսկորներ էին թափված և նրանք այնքան չորացած, այնքան խանձված ու փխրուն էին, որ երբ դրանցից մեկին պատահական դիպա ամբողջովին փոշի դարձավ: Ոսկորները սովորական կմախքներ չէին, դրանք անտանելի քայքայված էին: Տերն ինձ հետ խոսեց ինչպես Եզեկիելի հետ ու հարցրեց.

-Կարո՞ղ են այս ոսկորներն ապրել:

Ես պատասխանացեի.

-Ամենևին ոչ:

Հետո ինձ ասաց.

-Մարգարեացիր նրանց վրա:

Ես նրանց վրա մարգարեացա ու նրանք մկաններ և մաշկ ստանալով սկսեցին վերակենդանանալ: Ես ուս ուսի կանգնեցի կենդանի զորքի հետ: Գիտեի, որ դա Նրա Եկեղեցին է: Այս տեսիլքում իմ աջ և ձախ կողմերում մարդիկ կային: Երբ սկսեցի մարգարեանալ նրանք էլ նույն բանն արեցին գրեթե նույն ձևով: Բանակն արդեն ոտքի էր ելել: Որքան հիշում եմ նրանց ասացի.

-Առա՛ջ:

Զորցած ոսկորներով դաշտը լցվեց կենդանի ոչ թե մի քանի հարյուր այլ տասնյակ հազարավոր մարդկանցով:

Այդ ամենն ինձ ցնցեց: Ինձ հատկապես գրավեց այն միտքը, որ ես այդ չորացած ոսկերներով դաշտի մաս էի կազմում: Հասկացա, որ այդ դաշտի մարդկանց պես Աստված ինձ էլ է օրհնելու: Բայց ապշած էի, որ նրանցից մեկն էի: Եվ Աստված ինձ ասաց.

-Քո ոսկերներն ամենաչորացածն են:

Այդ ժամանակ դեռ լիովին չէի հասկանում, թե ինչ է կատարվում, բայց մի բան պարզ էր, որ չորացած էի:

Հետադարձ հայացք ձգելով հասկանում եմ, որ այդ պահին առանց հասկանալու վայելում էի Աստծո սերը: Սակայն անգամ այդ ժամանակ լավ չէի ընբռնում արժեքավոր լինելու գաղափարը: Աստծո և իմ հարաբերությունն ավելի շատ նմանեցնում էի Տեր-ծառա հարաբերության: Մինչ այդ Ֆինլանդացի կնոջ ինձ համար աղոթելը ես լրիվ մոռացության էի մատնել Աստծո հետ մտերմությունը: Անգամ այդ պահին իմ վերապրածը վստահ չէի, որ մտերմության դրսևորում էր: Ինձ թվում էր ուղակի Աստված հպվել է: Հրաշալի էի զգում, բայց տակավին շարունակում էի չընկալել կատարվածը: Այդ տարիներին Աստծո հետ ունեցած իմ մենիկ պահերն ամենևին էլ վերելք չէին ապրել: Մենիկ պահ ավելի շատ որպես պարտականություն էի անց կացնում, որպես ծառա և մտածում *պետք է անպայման օրակարգի մեջ մտցնել և հետևել, չէ որ եկեղեցին ինձ վճարում է:* Աստծուն գոհացնելու կարիք էի զգում, սակայն այդ խոր մտերմությունը չկար:

Երբ ոտքի կանգնեցի տարօրինակ զգացողություն ունեի: Մոտեցա կնոջս, ուզում էի խոսել, բայց չկարողացա: Խոսքերս կցկտուր էին: Շարունակում էի փորձել, բայց ավելի անհեթեթ էր ստացվում: Սկսեցի մտածել, որ Աստված Ֆինլանդացու առոգանությունը ծաղրելու պատճառով ինձ զրկել է խոսելու ունակությունից: Հետո մենք բռնեցինք տան ճանապարհը և որքան հեռու էինք գնում այնքան ավելի էի Հոգով արբենում: Հանկարծ հասկացա, թե ինչ ի նկատի ուներ բանախոսը, երբ նշեց, որ իրենք իրոք արբեցած էին ՛՛Վիմբերի՛՛ ժողովին: Հազիվ էի կարողանում ոտքերիս վրա կանգնել: Հիշում եմ հաջորդ օրն արթնացա ու խոտերն ավելի կանաչ ու երկինքն ավելի կապույտ թվացին, իսկ ես

վերջապես կարողացա կրկին խոսել: Հրաշալի էի զգում: Ինձ թվում էր տեսողությունս կտրուկ լավացել է:

Ուզում էի, բոլորն էլ նման փորձառություն ունենային: Սկսեցի անդադար ավետարանել: Գնում էի քաղաքի ամենավտագավոր թաղամասերն ու մարդկանց համար աղոթում և տեսնում էի, թե ինչպես են նրանք էլ ճաշակում Աստծո ներկայությունը: Իսկ հետո նկատեցի, որ երիտասարդական ծառայությունների ժամանակ, երբ աղոթում ենք երիտասարդների համար նրանք սկսում են ցնցվել և Աստծո զորավոր հպումն զգալ: Հասկանում էի, որ Ֆին կնոջ աղոթքից հետո ոչ միայն վայելել եմ Աստծո ներկայությունն, այլ ինչ որ բան եմ ստացել: Սկսեցի Աստծուն ավելի հստակ լսել:

Աղոթում էի ոչ քրիստոնյա մարդկանց համար և նրանք հանդիպում էին Աստծուն: Հանկարծ հասկանում էին, որ Աստված իրական է և արձագանքում էին Նրա կանչին: Նախկինում երբեք նման փորձառություն չէի ունեցել, բայց սկսում էի գիտակցել, թե ինչ է իրականում նշանակում Աստծո ներկայությունը կրել:

Ներկայության պատկերը

Մեծ տոնի վերջին, խաչելությունից ընդամենը մի քանի օր առաջ Հիսուսը Երուսաղեմի կենտրոնում կանգնած աղաղակում էր.«Եթէ մէկը ծարաւ է, թող ինձ մօտ գայ և խմի: Ով ինձ հաւատում է, — ինչպէս Գիրքն է ասում, — նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»: (Հովհ. 7: 38): Եզեկիել 47 գլխում մարգարեն Աստծո տաճարից հորդող գետի ակնառու նկարագրություն է տալիս, որի մասին գրված է նաև սաղմոսներում «բայց գետն իր առուներովը կուրախացնե Աստծո քաղաքը» և Հայտնության մեջ «և գետի այս կողմին և այն կողմին ծառ կար ...և այն ծառի տերևը բժշկում էր հեթանոսներին» (Սաղ.46:4, Հայտն. 22:2): Նկարագրվող գետը Աստծո ներկայության խորհրդանիշն է, որ Նրա գահից է հոսում:

Երբ Հիսուսը մեզ Աստծո տաճար է կոչում և ասում, որ Նրան մոտեցողներից կենդանի ջրեր կհոսեն (ինչպես ասաց ջրհորի մոտ կանգնած կնոջը) հավատացած եմ, որ խոսքը Եզկիելի մարգարեության և հայտնության գրքի մեջ նկարագրված գետի մասին է: Նաև հավատում եմ, որ այդ կենդանի ջրերը խորհրդանշում են Աստծո Հոգին և Հիսուս Քրիստոսին ընդունելուց հետո մեր մեջ են հորդում:

Եզեկիելի նկարագրության մեջ տեսնում ենք, որ այս գետը խորության տարբեր մակարդակներ ուներ և իր հետ առատ կյանք, պտուղ և ազգերին բժշկություն էր բերում: Երբ Հիսուսն աշակերտներին ասաց. «Աստծո արքայությունը հենց ձեր ներսումն է», կարծում եմ կրկին ի նկատի ուներ այդ կենդանի ջրերը, որոնք պետք է մեր կյանքերից բխեն (Ղուկ. 17:21):

Հիսուսը նրանց ասաց. «Մնացէ՛ք իմ մէջ, և ես՝ ձեր մէջ. ..Ով բնակւում է իմ մէջ, և ես՝ նրա մէջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետև առանց ինձ ոչինչ անել չէք կարող»: (Հովհ. 15:4-5):

Մենք նույնպես կանչված ենք «Ներկայություն կրող ժողովուրդ» կոչվել և Աստծո ներկայությունը կրելու հատկությունը հավանաբար քրիստոնեական կյանքի ամենակարևոր գործոնն է: Հիսուսից առաջ Դավիթն Աստծո մարդկանցից ամենազորավորն էր: Աստծո համար շռնդալից հաղթանակներ էր տարել և նկարագրվում էր որպես «Աստծո սրտին համեմատ մեկը»: Սակայն ինչո՞վ էր Դավիթը տարված: Ո՞րն էր նրա մեծագույն փափագը: Աստծո ներկայությունը (տե՛ս Սաղ. 16:11,27:8, 105:4): Դավիթն առավոտ կանուխ և ուշ գիշերով Աստծուն էր որոնում: Նա ժամերով երկրպագում և Տիրոջ ներկայությունն էր փնտրում: Պատահական չէ, որ թե զորավոր երկրպագու էր և թե զորավոր մարտիկ ռազմի դաշտում:Որպես Իսրայելի թագավոր Դավիթը քահանայության յուղով էր օծված, որպեսզի Իր մեջ Սուրբ Հոգուն կրի: Սակայն եթե նախկինում բարի լուրը հասանելի էր միայն թագավորներին ու քահանաներին, ապա Հիսուսի միջոցով այժմ հասանելի է բոլորիս:

Ընդունիր Սուրբ Հոգուն

Երբ վերստին ծնունդ ենք ստանում Սուրբ Հոգին իջնում է մեզ վրա, ապրում մեր մեջ, սովորեցնում և առաջնորդում (Հովհ. 14:16-17): Մենք Հոգով մտերմանում ենք Աստծո հետ: Նաև կան սուրբգրային համարներ, որ խոսում են Քրիստոսի միջոցով Հոգով լցվելու և մկրտվելու մասին (տե՛ս Հովհ.7:39): Հիսուսը հարություն առնելուց հետո հայտնվեց աշակերտներին ու ասաց. «Խաղաղությի՛ւն ձեզ. ինչպէս իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ»:
Երբ այս ասաց, նրանց վրայ փչեց և ասաց. «Առէ՛ք Սուրբ Հոգին>> (ՅՀ 20:21,22):
Երբ փրկվում ենք Աստված մեզ Սուրբ Հոգով է լցնում:

Հիսուսն աշակերտներին ասաց. «Եւ այս բաների վկաներ էք դուք:
Եւ ահա ես ուղարկում եմ Ձեզ իմ Հօր խոստումը, իսկ դուք նստեցէ՛ք Երուսաղէմ քաղաքում, մինչև որ երկնքից զօրութեամբ զգեստաւորուէք» (Ղկ 24:49,50): Իսկ Հովհաննես Մկրտիչը հենց այս խոստումն ի նկատի ուներ, երբ ասաց Հիսուսի մասին. «Ես ձեզ մկրտում եմ ջրով, բայց գալիս է ինձնից աւելի զօրաւորը, որի կօշիկները հանելու արժանի չեմ ես. նա ձեզ կը մկրտի Սուրբ Հոգով և հրով».(Ղկ 3:14):

Հիսուսն ասաց. «երբ Սուրբ Հոգին իջնի ձեր վրայ, զօրութիւն պիտի առնէք և ինձ վկաներ պիտի լինէք Երուսաղէմում, ամբողջ Հրէաստանում ու Սամարիայում և մինչև երկրի ծայրերը» (Գործ 1:8): Սա տարբերվում էր աշակերտների ունեցած նախորդ փորձառություններից, երբ Հիսուսն ասաց Սուրբ Հոգին «կփչեմ» ձեզ վրա: Որը նշանակում է Սուրբ Հոգու մկրտության մեջ ընկղմվել: Հունարեն *զորություն* բառը *dunamis* է թարգմանվում, այդ բառից են ծագել նաև *դինամիտ* և *դինամիկ* բառերը: *dunamis* նաև թարգմանվում է որպես ուժ, կարողություն, իշխանություն և զորություն: Դրա համար էլ երբեմն Սուրբ Հոգու հետ այդ հանդիպումները կոչում են նաև մկրտություն: Գործք Առաքելոց գլխում կարդում ենք, որ հավատացյալների կյանքում նման հանդիպումները

զորավոր փոփոխություններ էին բերում: Աշակերտներն սկզբում շփոթված ու երկյուղած էին, իսկ հետո համարձակ, զորավոր և ունակ Աստծուց հայտնություններ ստանալու և դրանք մարդկանց փոխանցելու:

Շարունակ Աստծո ներկայությունը ճաշակելով իմ ավետարանչության որակը փոխվեց, մարդիկ լսում էին Բարի Լուրն ու արձագանքում, ինչն էլ բազմապատկում էր իմ վստահությունն ու համարձակությունը:
Մկրտությանն ուղեկցում են Հոգու պարգևներն ու (տե՛ս 1 Կոր.12:4, 8-11) պտուղները (տե՛ս Մաթ. 7:16, Հովհ. 15:5, 16, Գաղ. 5:17-24): Եթե ավելի շատ ես Սուրբ Հոգուն ուզում, ապա խնդրիր այդ մասին Հորը: Հիսուսը մեզ քաջալերում է ասելով.

Եւ ձեզանիվ ո՞ր հօրիցն իր որդին հաց ուզէ, մի՞թէ քար կտայ նորան. Կամ եթէ ձուկ մի՞թէ ձկան տեղ օձ կտայ նորան:

Եվ կամ ձու ուզէ մի՞թէ կարիճ կտայ նորան: Արդ եթէ դուք որ չար էք՝ գիտէք բարի պարգևներ տալ ձեր որդկանցը, էլ ո՞րքան աւելի երկնաւոր Հայրը Սուրբ Հոգին կտայ նորանց, որ ուզում են նորանից:

Ղուկ.11:11-13

50

Պարզապես կարող եք այսպես աղոթել. «Հա՛յր, իմ զորությունը բավական չէ: Արի, լցրու և պարուրիր ինձ Քո Սուրբ Հոգով ու կրակով: Տուր ինձ Սուրբ Հոգու այն զորությունը, որի կարիքն ունեմ: Հիսուսի անունով, Ամեն»: Հետո սպասեք, որ Հոգին իջնի: Գուցե թվա, թե ինչ որ բան է շարժվում ձեր կրծքավանդակում կամ ստամոքսում: Հնարավոր է տաքություն և ցնցում զգաք (գրեթե էլեկտրական հոսանքի նման): Կամ գուցե սկսեք Աստծո հետ հաղորդակցվել ձեզ համար անծանոթ մի լեզվով: Դա լեզուների պարգևն է, որի մասին հիշատակվում է Նոր Կտակարանում: Շարունակեք այդպես աղոթել, որովհետև այն զորություն է բերում: Բազմաթիվ հրաշալի գրքեր կան, որոնք պատմում են Սուրբ Հոգով լցվելու և աղոթքի լեզվով խոսելու մասին, ուստի այստեղ ես ավելի քիչ կմանրամասնեմ: Սակայն եթե ուզում եք այդ թեման ավելի խորն ուսումնասիրել կարող եմ առաջարկել Մարիո Մուրիլիոյի *Թարմ կրակ*[1] և Ջեք Հայֆորդի *Հոգևոր լեզվի գեղեցկությունը*[2] գրքերը: Տերն ուզում է, որ որոնենք Իրեն: Նա անմնացորդ նվիրված սրտեր է փնտրում, որ կիսվի իր գաղտնիքներով, հրաշափառ ներկայությամբ և Իրեն հայտնի դարձնի:

Ոչինչ Աստծո ներկայության պես կարևոր չէ: Ոչ դիրքը, ոչ ծափահարությունները: Ոչ այս աշխարհի փառքը: Ոչինչ:

Լեռան վրա Աստված Մովսեսին հանդիպելով հաստատեց Հին Ուխտը՝ գալիք Նոր Ուխտից մի նշույլ պարգևելով: Եվ այս նշույլն այնքան զորավոր էր, որ Մովսեսը սարից քողով իջավ: Հին Ուխտը այն քողն է, որ Քրիստոսի խաչելությամբ պատռվեց և ժողովուրդն Աստծո ներկայությունը կրող հռչավեց: Իր ներկայությամբ Աստված խոստացավ.«Ահա ես քո ու ամբողջ ժողովրդի առաջ քեզ հետ ուխտ եմ դնում: Ես այնպիսի զարմանահրաշ գործեր պիտի անեմ, որ ամբողջ երկրի վրայ և բոլոր ազգերի մէջ չեն կատարուել: Ամբողջ ժողովուրդը, նրանց թւում նաև դու, ականատես պիտի լինէք Տիրոջ գործերին: Որովհետև ձեզ համար ես զարմանահրաշ գործեր պիտի անեմ» (Ելք

34:10):

51

Թագավորության կրողները

Ամեն բանից առավել մեզ պետք է ճանաչեն որպես Աստծո ներկայությունը կրողներ: Իմ կյանքին հետադարձ հայացք նետելով հասկանում եմ, որ Աստծո ներկայության մեջ անցկացրած ժամանակը կարևոր դեր է խաղացել արքայությունն իմ մեջ կրելու, իշխանությամբ քայլելու և Աստծո ներկայությամբ մյուսներին ծառայելու հարցում: Թե Փրինսթոն համալսարանի համառ աթեիստների, թե Պուերտո Ռիկոյի մարմնավաճառների, Շաստա լեռան կախարդների, ռուսական խմբավորումների առաջնորդի կամ մեր թաղամասի բենզալցակայանում աշխատող տղայի հետ խոսելիս սովորել եմ, որ բժշկությունից, ճշգրիտ մարգարեական խոսքից կամ Քրիստոնեական ապոլոգետիկայից առավել միայն Աստծո ներկայությունն է , որ մարդկանց սրտերին հպվելով կյանքեր է փոխում: Երբ աղոթում եմ մարդկանց համար նախ և առաջ խնդրում եմ. «Տեր, թող Քո ներկայությունը գա»: Ես սովորել եմ Նրա ներկայությանն սպասել և ակնկալել, որ մարդկանց կյանքում հուսահատության, հիասթափության, զայրույթի և անհավատության սարերը կշարժվեն: Այն իշխանությունը, որ կրում ենք մեր մեջ բնակվող ներկայության շնորհիվ է: Այս գրքում բաժնեկցած պատմությունների մեծ մասը այդ իրականության մեջ իմ կատարած ճանապարհորդության մասին են: Որպես հավատացյալ մեզանից յուրաքանչյուրն իր պատմությունն ունի, թե ինչպես է Աստված գտել, Իրեն հայտնի դարձրել և Արքայության կրող հռչակել: Յուրաքանչյուր հավատացյալ Հոգով վերստին ծնունդ ստանալուց հետո իր մեջ խաչի հարության զորությունն ունի: Միակ տեղը Աստվածաշնչում, որ Աստված մեզ ասում է ջանալ, Նրա հանգիստը մտնելու համար ջանալն է (տե՛ս Եբր 4:11):

52

Մենք կարող ենք հանգստանալ իմանալով, որ Աստծո Արքայությունը մեր մեջ է և երբ առաջ Աստծո Արքայությունն ու հանգստությունն ենք փնտրում և Նրան հետևում, ապա Տիրոջ ներկայությունն մեզ ավելի ու ավելի խոր հարթություններ է տանում:

Մենք Աստծո սիրո մեջ ենք իսկ Նրա սերը՝ մեր մեջ: Մեր ներսում բնակվող Նրա Արքայությունն ավելի զորավոր է քան որևէ մթնոլորտ, որի հետ երբևէ առնչվում ենք, և Նրա Արքայության մթնոլորտն ավելի զորավոր է քան որևէ հանգամանք, որին երբևէ բախվում ենք: Գուցե միշտ *չզգանք,* բայց պետք է գործենք այդ հոգևոր իրականության ներքո: Եթե բժշկության աղոթք եք բարձրացրել մի անհատի, քաղաքի կամ ազգության համար, ապա ձեր հռչակած այս խոսքերի մեջ զորություն կա. «Քո թագավորությունը գա, Քո կամքը լինի երկրի վրա և Երկնքում»:

53

4// Մարդկային պատկերացումներին հակառակ Արքայություն

Աստծո Արքայության մասին առանցքային հարցերին անդրադառնալիս Ջորջ Լեդդը արքայությունը նկարագրում է որպես «Աստծո գերիշխան կառավարում, որը դրսևորվեց մարդու մեջ և Քրիստոսի գործով, արարելով մի ժողովուրդ, ում վրա Նա տիրում է և

հոգևոր ոլորտում կամ ոլորտներում գործի դնում Իր իշխանության զորությունը»: Քանի որ մարդը հակված է չարաշահել իրեն ստանձնած իշխանությունն, ապա շատերն սկսել են խուսափել եկեղեցում Աստծո ներկայության դրսևորումներից: Նրանք թերահավատ վերաբերմունք ունեն Սուրբ Հոգու զորությամբ առաջնորդվող շարժումների հանդեպ, մինչդեռ Հիսուսն Ինքն էլ էր զորությամբ գործում: Աստծո Արքայության մասին փաստելն ու հռչակելը Քրիստոսի հաշտության ծառայության առանցքային բնագավառն էր: Այն սոսկ բառերից կազմված պատգամ չէր:

55

Ոչ էլ բարին գործելու ուղերձ: Պողոսն ասաց. «և իմ խօսքը և քարոզութիւնը իմաստութեան ճարտար խօսքերով չէին, այլ Սուրբ Հոգու համոզիչ զօրութեամբ»: (Ա.Կր 2:4)Աստված Իր սերը զորավոր գործերով է դրսևորում:

Կարևոր է հստակեցնել, որ զորություն ասելով ի նկատի չունենք «զորության շարժ, զորության բարձրացում, զորության կոստյում» արտահայտությունները, որոնք մի տեսակ բնորոշ են 80ականների քրիստոնեությանը: Նմանատիպ զորությունը խաբեությամբ է գալիս մարդուն եսակենտրոն դարձնելով և նրա մեջ հպարտություն սերմանելով: Զորություն կա, իրական զորություն, որը երբեք ու երբեք չի կարելի բաժանել Քրիստոս անձից ու Նրա ներկայությունից (տես Եփ. 1:18-20) :Ինչպես հաճախ Մարտին Լյութերն էր վիճաբանում կամ Դիթրիխ Բոնհոֆֆերը հաստատում «Պետք է նախ մարդուն ճանաչես հետո նրա գործերն ընդունես»: Սատանայի իշխանությունը ծագեց իրեն հպարտությամբ վեր դասելուց: Դրանից ի վեր նա սկսեց մարդկանց համոզել կասկածի տակ դնել Աստծո բարությունը, նսեմացնել զորությունն ու փոխարենն իրենց աստվածանել: Մենք իսկզբանե նման ենք Աստծուն, Նրա պատկերով ստեղված և իշխանությամբ օժտված, սակայն խայծը կուլ տալով ձգտում ենք ունենալ այն ինչ ժամանակին մեզ է պատկանել:

Բայց Աստված խոնարհ է: Հիսուսն Աստված լինելով մարդկության համար մեռավ իրեն նսեմացնելով, այլ ոչ թե բարձրացնելով: Իմ ընկեր Գրեգ Բոյդը *Կատաղի սեր* ֆիլմում ասում է. «Աստված իր մկանները խաչի վրա մեռնելով ճկեց»: Մարմնավորման մեջ տեսնում ենք, որ Աստված՝ հզոր Արքաների Արքան մարդկային կերպարանք հագավ և մեզ համար մեռավ: Հիսուսը երկիր գալով դարձավ տկար, խոցելի, մերժված և նվաստացած: Նրա խոնարհությունն անգամ Իր ընկերներին զայրացրեց. նրանք ուզում էին, որ Հիսուսն Իր զորությունը գործածի, ցույց տա, թե ով է իրականում, տիրի Իսրայելին ու ջախջախի իշխող կայսրությանը: Իսկ փոխարենը Նրան խաչեցին: Նա սերն ընտրել էր որպես զենք, իսկ խոնարհությունը զորության դրսևորում: Սրանով մենք ընդունվում ենք, զորանում ու քաջալերվում:

56

Այս սիրո ուժն ու զոհաբերությունը Նրա զենքն էր, որ կործանեց աշխարհի ու մեր շուրջը կառուցած Սատանայի պատնեշները: Սատանան Քրիստոսին փորձում էր գայթակղել աշխարհի տիրակալ դարձնելու փայլով, բայց մերժվեց: Իսկ փոխարենը Քրիստոս խոնարհաբար մեզ ընտրեց: Հնազանդությամբ մեռավ, բայց հաղթանակով հարություն առավ, որ Փառքով իշխի և Իր Հոգու զորությամբ մեզ ապրեցնի:

Ավետարանը մեր միաբանության վերականգման հռչակագիրն է խոնարհ Աստծո հետ, Ով ոչ միայն մեռավ մաքրելով մեզ մեղքերից, այլ զորությամբ հարություն առավ, որ բնակվի մեր մեջ ու երկրի վրա արդարություն վերականգնի: Հիսուսը որպես Իր աշակերտ մեզ ասում է. «Ահա ձեզ իշխանութիւն տուի կոխելու օձերի, կարիճների և թշնամու ամբողջ զօրութեան վրայ: Եւ ձեզ բոլորովին չեն վնասելու:
Բայց մի՛ ուրախացէք այն բանի համար, որ դևերը ձեզ հնազանդւում են, այլ ուրախացէ՛ք, որ ձեր անունները գրուած են երկնքում»: (Ղկ 10:19-20)

Այն ճշմարտությամբ ապրելու և զորություն կրելու ուղերձ էր, որ տրվեց խոսքի, նշանների ու գործերի միջոցով, սակայն որի հիմքում ընկած էր սիրո անեղծանելիությունը: Ահա հույսի ավետարանը, մի թագավորություն, որտեղ գեղեցկությունը, զորությունն ու արդարությունը ծառայող Արքայի սրտից են բխում: Ահա սիրո և խոնարհության պատգամը սկզբից մինչև վերջ, անգամ երբ կրում կամ ծառայում ենք Ամենակալ Աստծո ներկայության և զորության ներքո:

Ավելին քան պարզապես փրկության պատգամ

Մարգարեների կանխատեսած Ավետարանի ուղերձը պարզապես փրկության պատգամ չէ: Աստված հռչակում է, որ Նա չեկավ միայն բժշկելու, քաջալերելու կամ մխիթարելու,այլ եկավ, որ սրտով բեկված մարդիկ «կոչուեն ազգ արդարութեան, տունկ՝ ի փառս Տիրոջ»(Ես 61:3):

Եսայան հազարավոր տարիներ առաջ տեսավ մարդկանց, որ պիտի կոչվեն Աստծո *քահանաներ* և *սպասավորներ ու* նրանք «Պիտի վերաշինեն դարաւոր աւերակները, նախկինում աւերուածները պիտի վերականգնեն և նորոգեն դարերից ի վեր փլատակուած քաղաքները»:(Ես 61:4, տես նաև 6, Ես 58:12):

Արքայության Բարի Լուրը միայն անհատներով չի սահմանափակվում: Այն նաև

բժշկում է աշխարհի, երկրների ու ժողովուրդների հետ ունեցած մեր հարաբերությունները: Այն ընտանիքների վերականգման, համայնքների վերակառուցման, շրջակա միջավայրի մասին հոգատարության, քաղաքների փրկության, ազգերի փառքը վերադարձնելու Աստծո յուրահատուկ արտահայտչաձևն ու այս երկրի վրա Նրա ներկայության տոնն է:

Այն Ծննդոցից Հայտնություն տարածվող Աստծո *Շալոմի* խոստացյալ նպատակն է:

Շալոմ բառը խաղաղություն է նշանակում, որ ոչ միայն պատերազմի բացակայությունն է, այլ ժողովուրդների բարգավաճումը, բերքի ներդաշնակությունը, բարեկեցությունը, առողջությունն ու տոնախմբությունը: Գրեթե երեք հազար տարի առաջ Եսայա մարգարեի գրած խոսքերն ինձ ու քեզ են վերաբերվում: Նա նկարագրում է աշխարհի աղաղակը մարդկության պատմության հենց սկզբից: Սա է այն մարդկային պատկերացումներին հակառակ Արքայությունը, որի մասին Հիսուսը խոսում է Իր անդրանիկ պատգամի մեջ (տես Ղուկ. 4:16-30): Նա ոչ միայն ընդունում է մերժվածներին, այլ պատվում և յուրաքանչյուրին իր անունով է կանչում, մեզ էլ ըստ էության այս

աշխարհի համար հույսի Իր ծրագիրն է համարում: Նա եկավ մարդկության համար: Եվ երկրի վրա ամեն մարդ Քրիստոսի էության յուրահատուկ դրսևորումն է: Նա եկավ վերադարձնելու աշխարհի բոլոր ազգերն ու մշակույթները, վախից, կոտրվածությունից և ամոթից ինձ ու քեզ ազատելու, իր Հոգին մեզ տալու և կյանքերը նորոգելու: Նա եկավ մեզ «քահանաներ և սպասավորներ» կարգելու, որ վերականգնենք այս երկրի բոլոր ազգերի ավերված քաղաքները :

Հիսուսը սիրում է մարմնավաճառներին

Փողոցում ծառայելու նպատակով մի քանի երիտասարդների հետ Պուերտո Ռիկո էինք գնացել:

Մենք մոտեցանք հիվանդանոցի շտապօգնության բաժանմունքի դիմաց կանգնած երկու մարմնավաճառների և ասացին, որ մարդիկ ենք փնտրում , ում համար կարող ենք աղոթել:

-Իսկ դուք աղոթքի կարիք ունե՞ք,- հարցրեցինք նրանց:

-Ոչ, ոչ,- ասացին նրանք,-ամեն բան կարգին է, մենք ոչ մի խնդիր չունենք:

Հետո մի միտք ծագեց գլխումս և զգացի, որ այդ իրավիճակում Աստված է առաջնորդում, ուստի կանանցից մեկին հարցրեցի.

-Դուք որդի ունե՞ք: Զգում եմ, որ հենց հիմա նա աղոթքի կարիք ունի:

Նա ապշահարց նայեց ինձ ու գլխով համաձայնության նշան արեց.

-Դե հա, իրականում նրա համար ենք այստեղ: Նա ծանր այրվածք է ստացել և հիմա սպասում ենք բժշկի պատասխանին:

Մի պահ հապաղեց հետո մրմնջաց.

-Ես իրոք վախենում եմ, որ նրան կխլեն ինձանից, մենակ է եղել մինչ ես «աշխատում» էի:

Ընկճված էր և այդ մտքից ալեկոծված:

Ակնհայտ էր, որ մեղքի ու վախի ծանր բեռի տակ կքած էր: Մենք հարցրեցինք, թե արդյոք կարող ենք աղոթել և այս անգամ նա համաձայնեց: Աղոթքի ընթացքում Աստված իրավիճակի մասին ավելի խոր մանրամասներ հայտնեց: Դրանք հստակ մարգարեական խոսքեր էին, մինչդեռ չէինք զգում, որ նա հատուկ ազդված է: Գլխով շարունակ հաստատում էր, որ այդ խոսքերը բոլորն էլ ճշմարտացի էին, բայց կարծես լիովին թմրած ու անտարբեր լիներ:

Ես դադարեցրի ու հարցրեցի նրան.

-Հեյ, մի վայրկյան խնդրում եմ աչքերիս նայիր:

Ձեռքերս նրա ուսերին դնելով ասացի.

-Հիսուսը սիրում է քեզ: Նա իրոք սիրում է քեզ:

Կարծես օդում մի բան ճայթեց: Նայեց աչքերիս ու սկսեց արտասվել: Ասացի, որ զգում եմ, թե ինչպես է Սատանան կատաղի պայքարում, որ չթողնի նրան ըմբռնել Հիսուսի մեծ սերն ու նրա հետ հարաբերություն կառուցելու փափագը:

Այդ ժամանակ նրա ընկերուհին շշնջաց.

-Աստված իմ, հիմա ես էլ կսկսեմ արտասվել:

Շրջվեցի դեպի ընկերուհին ու ասացի.

-Հեյ, կնայե՞ք աչքերիս մեջ:

Մի քայլ ընկրկելով ասաց.

-Ոչ, ոչ չեմ կարող: Չեմ կարող: Ես էլ կարտասվեմ:

Բայց հետո նայեց: Նայեցի նրա աչքերին ու նույն բանն ասացի.

-Հիսուսը սիրում է քեզ:

Նա սկսեց սրտառուչ արտասվել: Երկու կանայք հետո վկայեցին, որ այդ պահին կարծես սիրո աչքերին նայելիս լինեին: Այժմ վստահ գիտեմ, որ դա ես չէի և իմ անձնական հույզերը, այլ Հայրն Ինքն էր իմ միջոցով գործում: Ահա այն սեր և ներկայություն կրող կապն, որ Քրիստոսի միջոցով մեզ է տրվել: Աշխարհը ծարավ է Քրիստոսի սիրո ուղերձը լսելուն:

Երբ գնում եք մարդկանց ծառայելու, անելով այն ինչ Հիսուսն արեց, միշտ հիշեք եթե զգում եք, որ չի ստացվում կամ ձեր իմացած միջոցները ձախողվում են, ապա նայեք մարդկանց աչքերի խորքն ու փոխանցեք Հիսուսի սիրո պատգամը:

Թեև պարզ է թվում, բայց չափազանց զորավոր է: Աստվածաշունչն ասում է, որ աչքերը հոգու ճրագն են (տե՛ս Մաթ. 6:22-23):

Քրիստոսի սերն ամեն անգամ մեր միջից նայելով ջախջախում է Սատանայի կառուցած պատնեշները: Այդ օրը հիվանդանոցի բակում հավաքված մեր թիմի անդամների աչքերն արցունքոտ էին: Բոլորս Հոր սիրով շրջապատված էինք զգում: Հենց այն շունչն էր, որի մասին երազում էինք: Պարտադիր չէ, որ մարգարեական խոսք, նշաններ ու հրաշքներ լինեն, որ շարժեն մարդու սիրտը, չնայած մեր աղոթքները հաճախ կարող են այդ ամենով ուղեկցվել և Ավետարանը քարոզելու ուղի հարթել: Սակայն միևնույնն է թշնամու հանդեպ ունեցած մեր ամենազորավոր զենքն Աստծո սերն է:

Սերը զենք է

Այս երկու կանանց նման մարդկանց մոտենալիս հեշտ է միայն կենտրոնանալ նրանց կենսաձևի տեսանելի մեղքի վրա:

Ես ամենուր նկատել եմ, որ թե քրիստոնյաները և թե անհավատները բռնված են մեղքի ու դատապարտության կապանքով: Սատանան դատապարտում է, բայց մեր գործը նրա հետ

չհամաձայնելն է: Նա երազում է աշխարհն իր հետ դժոխք քարշ տալ: Օրինակ Սատանան ուզում է, որ աշխարհը եկեղեցուց «Աստված ատում է արվամոլներին» պատգամն առնի: Սակայն Բարի Լուր չէ, երբ մի ցուցարար նմանատիպ ցուցանակով շրջում է՝ աշխարհին հաղորդելով, որ եկեղեցին ավելի շատ դատապարտում է կորսվածին քան ձգտում Աստծո հետ հաշտեցնել:

Աստված խանդաղատանքով որոնում է մեզ և կամենում, որ բոլորս փրկություն գտնենք (տե՛ս 1Տիմ. 2:1-4): Նա նոր և կենդանի ուղի է հարթել մեզ համար: Մեր ծառայությունը պետք է միշտ բխի կոտրված և խոցված մարդկանց փրկելու Աստծո փափագից: Շատերի հետ զրուցելիս պարզվում է, որ ծառայության ժամանակ Աստծուն լսելու հարցում անվստահության զգացում են ունենում: Սակայն ոչ թե պետք է կենտրոնանալ ձեր անկարողության, այլ Աստծո կարողության վրա: Նա ունակ է մեզ հետ խոսելու: Մենք Նրա զավակներն ենք և ստեղծված ենք Հոր հետ մտերմության և հաղորդակցության համար: Նա մեզ պարգևել է Իր Խոսքը: Հաճախ մարդկանց հիշեցնում եմ. «Լսեք, եթե ինչ որ մեկին ծառայելիս դոփում եք նույն տեղում, ապա պատգամով կիսվեք: Երբ աղոթում եք մարդկանց համար, նայեք նրանց աչքերի մեջ և ասեք. «Հիսուսը սիրում է քեզ»: Փորձեք: Եվ տեսեք, թե ինչ կկատարվի: Եկեղեցին անտարբեր է դարձել «Հիսուսը սիրում է քեզ» խոսքերի զորության հանդեպ: Մինչդեռ աշխարհ այն լսելու անասելի կարիքի ունի:

Երեք տարի շարունակ Հիսուսն Իր աշակերտներին սովորեցնում էր կարեկցանքով և ողորմածությամբ ծառայել: Պետք է նման մոտեցում ունենալ հատկապես երբ հանդիպում ենք Աստծո «թշնամի» թվացող մարդկանց: Մենք էլ կարող ենք աշակերտների նման արձագանքել, երբ ցանկանում էին Հիսուսի թշնամիների գլխին երկնքից կրակ իջեցնել: Այդպիսին էր նրանց արձագանքը:

«Եւ իրենից առաջ պատգամաւորներ ուղարկեց, որոնք, երբ գնացին, մտան սամարացիների մի գիւղ՝ նրա համար պատրաստութիւն տեսնելու: Բայց սրանք չընդունեցին նրան, որովհետև նա ուղևորւում էր դէպի Երուսաղէմ: Երբ նրա աշակերտները՝ Յակոբոսը և Յովհաննէսը, այդ տեսան, ասացին. «Տէ՛ր, կամենո՞ւմ ես, որ ասենք, և երկնքից կրակ իջնի ու բնաջինջ անի նրանց»: Նա դարձաւ սաստեց նրանց և ասաց. «Չգիտէք ի՛նչ հոգուց էք դուք».

Ղուկ

9:52-55

Այդպիսին չէր Հիսուսի մոտեցումը, ոչ էլ երկիր գալու Նրա նպատակը: Մեր կռիվը մարմնի ու արյան դեմ չէ, մարդկանց ապացուցելու իրենց վատ լինելն ու ամոթանք տալու: Մեր կռիվը երբեք մարդկանց դեմ չէ, այլ խավարի իշխանությունների: Սիրուց ավելի զորավոր ոչինչ չի կարող զինաթափել խավարի իշխանությանը :

Սիրո դեմ Սատանան անզոր է: Սերը մասսայական ոչնչացման լավագույն զենքն է: Սատանան ամոթ է շպրտում, մեղադրում, բայց մենք չպետք է երբեք մարդկանց հանդեպ ունեցած մեր վերաբերմունքը համաձայնեցնենք նրա ասածների հետ: Սատանան շշնջում է մարդկանց ականջներին. «Աստված քեզ չի ընդունում»: Իսկ Աստված ասում է. «Ես քեզ սիրում եմ, խենթանում եմ քեզ համար: Տուն եկ, ինձ մոտ»: Երբեմն եկեղեցին ճիշտ հակառակն է հաղորդում ամոթի և դատապարտության քողի տակ կածես վախենալով, որ սերն ու ընդունվածությունը կմեղմացնեն ճշմարտությունն ու կուժազրկեն այն:

Իհարկե գոյություն ունի նաև հարցի հակառակ կողմը: Ոմանք մտածում են, որ ամեն ինչ և ամեն մարդ նորմալ է և պետք է հանգամանքներն ընդունել այնպես ինչպես դրանք կան: Որպես վեց զավակների հայր, եթե տեսնեմ, որ նրանցից մեկը նստել է օձերի բնի վրա, որը լի է օձերով բնականաբար չեմ ասի. «Հեյ, ես քեզ սիրում եմ, ընդունում եմ այնտեղ որտեղ կաս»: Սիրել չի նշանակում ամեն ինչ բախտի քմահաճույքին թողնել:

Սերն ուժ ու եռանդ է, որ գործի դնելով ազատագրում է մարդկանց:

Սեփական փորձը ցույց է տվել, որ սերը փափկասուն մի բան չէ: Իրականում այն եկեղեցուն պարգևած հոգևոր պատերազմի Աստծո մեծագույն զենքն է: Պարզապես շրջապատի կարիքներին հաղորդակից լինելով սկսում ենք սիրել մյուսներին: Մենք այստեղ ենք ծառայելու, լսելու, սիրելու, բարեխոսելու, Հոր սրտի հաշտության պատգամը մարդկանց փոխանցելու: Երբ կամենում ենք ոիսկի դիմել և քայլ անելով հավատալ, որ Քրիստոսը կարող է գործել մեր միջոցով սկսում ենք ոչ միայն Հոր ներկայությունը ճաշակել, այլ Քրիստոսի Հոգով վերստին ծնվելու իրականությունը: Իրականություն, որ լի է անսահման հնարավորություններով, իրականություն, որտեղ մեզ Հայրն է ուզում առաջնորդել:

Աթեիստական ակումբի նախագահը

Վաշինգթոնում էի, Սիեթլում և փողոցով վեր ու վար էի անում հենց Վաշինգթոն համալսարանի մոտ: Այնտեղ մեծ սննդի կետ կա, տարատեսակ բաժիններով, որտեղի հավատարիմ հաճախորդները ուսանողները, դասախոսներն ու տեղի բնակչությունն են: Էվի մշտական այցելուներից են նաև բազմաթիվ զբոսաշրջիկներ ու անտուններ: Մի քանի ուսանողների հետ փողոցում զորության ավետարանչություն էինք անում : Արդեն մի քանիսի համար աղոթել էինք և ականատես եղել նրանց բժշկությանը: Նաև մի քանի այլ հրաշալի հանդիպումներ էինք ունեցել: Ես քայլեցի դեպի ավտոբուսի կանգառ, որտեղ մի զույգ և մի երիտասարդ էին սպասում: Նրանց հարցրեցի.

-Լսեք կարո՞ղ ենք ձեզ համար աղոթել: Բժշկության կամ այլ կարիքներ ունե՞ք:

Միայնակ երիտասարդն ասաց.

-Ես աթեիստ եմ և չեմ հավատում Աստծուն, բայց քեզ մի բան կասեմ: Եթե հարցիս պատասխանեք, թույլ կտամ ինձ համար աղոթել: Ենթադրենք ես մարդասպան եմ և փոքրիկ աղջիկների եմ բռնաբարում ու սպանում: Հետո մահանում եմ: Ի՞նչ կարող է ինձ ասել ձեր սիրող ու հոգատար Աստված:

Ես նրան ասացի.

-Աստված սիրում է քեզ և ամեն ինչ արել է քեզ դժոխքից փրկելու համար:

-Չէ, չէ, չէ,-երիտասարդն ընդհատեց ինձ.-եկեք ասենք ես սիրում եմ այդ փոքրիկ աղջիկներին տանջել, հետո սպանել: Հիմա ինչ կասի ձեր Աստված:

Քաջ գիտակցում էի, թե ուր է տանում այդ խոսակցությունը: Նա ուզում էր , որ ասեմ. «դու ուղիղ դժոխք կգնաս, որովհետև զազրելի մեղսագործ կլինես»: Կրկին նայեցի նրան ու ասացի.

-Աստված կասի, որ ճանապարհ է հարթել քեզ համար: Ամեն ինչ արել է, որ Իրեն դառնաս...:

Կարող էի կռահել, որ ամենևին էլ հարց չէր, այլ ուզում էր հակադարձել: Ուստի նրան ասացի.

-Հասկանում եմ, որ ուզում ես ասեմ. «Այո, դու դժոխք կգնաս»:

Նա ասաց.

-Հա, ճիշտ եք: Որովհետև ձեր Աստվածն ամենևին էլ սիրող չէ:

Հետո անցավ իր փաստարկներին, թե ինչպես է անհնար, որ Աստված սիրող լինի և արգումենտը հիմնավորելու համար գործածում էր իր իմացած բոլոր հնարավոր փիլիսոփայական մտքերն, ապացուցելու, որ Աստված երբեք չի կարող բարի լինել:

Անկեղծ ասած ես շատ եմ Ապոլոգետիկա սիրում: Բանավիճելն իմ սիրելի զբաղմունքներից է: Բանավիճողների մեծամասնության պես, ինձ թվում է այդ գործից այնքան էլ վատ չեմ, և կռահում էի, թե ուր է տանում երիտասարդի հիմնավորումը: Զգում էի, որ բանավեճում նրան կհաղթեմ և հենց դա էլ ուզում էի: Սակայն գիտակցում էի, որ հնարավոր ծուղակ է: Մեր խոսակցության էությունն իմ տեսանկյունն ապացուցելը չէր, այլ այդ տղային հասնելն ու հասկանալն էր, թե ինչն է նրան այպես բարկացրել Աստծո դեմ: Ես ընկրկեցի և անգամ ինձ ավելի ցածր դիրքի իջեցրի: Աթեիստների պաշտած աստվածն իրենց ինտելեկտն է, ուստի երբ դիպչում ես դրան սկսում են ավելի բացվել. Ես ասացի.

-Տեսնում եմ, որ խելացի երիտասարդ եք, ինձնից շատ ավելի խելացի: Հավանաբար չեմ կարողանա ձեր բոլոր հարցերին պատասխանել: Սակայն, պարո՛ն, ես մի հասարակ մարդ եմ և եթե բարի լինեք և թույլ տաք ձեզ համար կաղոթեմ ու կօրհնեմ:

Խելացի հայացքով ինձ նայեց կարծես մտածելիս լիներ *վայ խեղճ մարդ...տեղում դոփեցիր, ուղղակի ուզում ես աղոթել, դե ինչ արած աղոթիր*:

Խոր հառաչեց ու համաձայնվեց.

-Լավ, միայն թե արագ:

Այդ ընթացքում մի քանի անցորդ կանգ առան մեզ դիտելու: Սկսեցի աղոթել.

-Հա՛յր, այս երիտասարդը շատ խելացի է: Նա բազմաթիվ հարցեր ունի, որոնց ես չեմ կարող գոհացուցիչ պատասխաններ տալ, բացահայտիր նրան Քո իրական էությունը: Ցույց տուր թե որքան շատ ես նրան սիրում ու հոգ տանում, թե որքան ես ուզում նրա հետ մտերմանալ:

Երբ աղոթում էի աթեիստը քթի տակ մրմնջում էր.

-Հա, բա չէ:

Երեևի մտածում էր արագացրու, ինձ քո աղոթքը ոչինչ չի ասում: Հետո քրթմնջոցը դադարեցեց ու լռեց.

Զգացի, որ ինչ որ բան է կատարվում: Կրկին խնդրեցի.

-Հա՛յր, ողողիր նրան Քո սիրով: Ցույց տուր թե որքան իրական ես և թե որքան շատ ես սիրում նրան: Քո վիթխարի սիրո մասին մի անառարկելի ապացույց տուր նրան:

Երբ աղոթքս ավարտեցի երիտասարդն աչքերիս նայեց: Հետո ի զարմանս ինձ փարվեց կրծքիս ու սկսեց արտասվել: Իսկապես հեկեկում էր: Այդ ժամանակ տակավին չգիտեի, որ աթեիստների ուսանողական ակումբի կարկառուն ղեկավարներից է: Նա հայտնի էր Աստծուն հակառակելու իր ճարտար ելույթներով: Երբ մարդիկ տեսան, թե ում համար եմ աղոթում նրանց հետաքրքրությունը շարժվեց: Անգամ չէի նկատել, որ իմ աղոթքի ընթացքում գրեթե մի քսան մարդ էր հավաքվել: Երբ նրանք տեսան այս երիտասարդի փորձառությունը, շատերը ձեռք բարձրացրեցին ասելով. «Հաջորդը ես եմ»:

Մարդիկ մեր թիմին շրջապատել ու խնդրել, որ իրենց համար աղոթենք:, և մենք ևս մի քառասունհինգ րոպե անց կացրինք ուսանողների համար կանգառում աղոթելով և նրանց հետ զրուցելով: Աթեիստ երիտասարդն այդ ամբողջ ընթացքում այնտեղ կանգնած արտասվում էր:

Ետ նայելով հարրեցի.

-Լավ ե՞ք: Հիմա հասկացար, որ Աստված իրական է և քեզ սիրում է:

Նա գլխով համաձայնության նշան արեց, անգամ որոշ ժամանակ չէր կարողանում խոսել: Միայն կարողանում էր արտասվել ու գլուխը շարժել:

Գլուխը կախ՝ հավատքը բարձր

Երբ ինչ որ մեկը մեզ մարտահրավեր է նետում նրան հանդիմանելու գայթակղությունը մեծանում է: Աշխարհի գայթակղությանը տրվելով ուզում ենք մեր սեփական ուժերով մարդկանց համոզել, մեր աստվածատուր մտավոր ունակություններով, անհատականությամբ կամ խարիզմայով: Հիսուսն այս ամենն ուներ: Երբ ուսուցանում էր, մարդկանց ապշեցնում էր: Բայց երբ նրան կշտամբում էին գայթակղությունը հաղթահարելով իրավիճակը Հորն էր վստահում: Հաճախ էր լռում կամ տեղին հարցեր տալիս: Երբեմն կարող է Աստված մեզ գիտության խոսք և իմաստություն տալ կամ օգնել

մարդկանց հարցերին լավագույն պատասխանները գտնել: Աթեիստների ակումբի այս երիտասարդ նախագահի հարցում գիտեի, որ նրան ուղղակի պետք է Աստծո սիրո մասին հայտնել աղոթքի միջոցով:

Մենք պետք է մի կողմ դնենք պաշտպանվելու և ապացուցելու մեր կարիքն ու փոխարենը Հորից ցուցումներ խնդրենք: Հոգուց առաջնորդված ավետարանչությունը մեզ տանում է դեպի Աստծուց կախվածություն անհնարինն անելու, անգամ մեր միջոցով գործելու: Մեր համարձակությունը բխում է ոչ թե ինքնավստահությունից այլ Նրան հավատալուց և հռչակելուց, որ Նա կարող է ամեն բան անել:

Երբեմն իրավիճակներ են լինում, երբ աղոթքն ու սերը տկար լուծում են *թվում*: Մեզ համար այն նմանվում է զինադադարի դրոշի, երբ հասնում ենք վերջնագծին և հանձնվելով ասում. «Կաղոթենք ձեզ համար»: Հաճախ փորձություն է դառնում, երբ տկարության և խոցելի լինելու զգացումը ուզում ենք փոխարինել այլընտրանքային զգացումներով, սակայն նման դեպքերում դա այն է ինչ հարկավոր է, տկարության մեջ զորություն կա: Երբեմն ուզում ենք փայլել մեր ինտելեկտով և բանավեճերում հաղթել, սակայն պետք է ցածրանալ և հիշել, թե ինչ է գրված Սաղ.76:10ում. «Որովհետև մարդկանց բարկությունը քեզ համար փառք կդառնա. Ավելորդ բարկությունը գոտիի պես կկապես»: Ես սովորել եմ անկաշկանդ ասել. «Այո, տեսնում եմ իրոք խելացի ես: Հավանաբար ինձանից էլ խելացի ես»: Ամեն բան պարզ եմ ներկայացնում: Հաճախ Բարի Լուրի պատգամը ավելին չէ քան այն իրականությունը, որ «Աստված այստեղ է»: Ինչպես Ղուկաս 17:21 ում է ասվում. «և չեն ասի, թէ՝ ահաւասիկ այստեղ է կամ այնտեղ, որովհետև ահա Աստծու արքայութիւնը ներսում, ձեր մէջ է»:

Երբ մենք վերջացնում ենք Աստված է սկսում: Կարող ենք վստահ լինել այդ մասին: Կարող ենք անգամ այդ պահը ռիսկայի անվանել: Լինում են դեպքեր, երբ նման իրավիճակներում մերժված, շփոթված և անմիտ ենք զգում: Մի անհանգստացեք, բեկումները աննկարագրելի են լինում: Եթե Աստված Քրիստոսի կյանքը չխնայեց մարդկանց դրան արժանի համարելով, ապա մենք էլ պետք մերը չխնայենք: Մենք չպետք է մյուսներին ջախջախելով ինքնահաստատվենք: Պետք է սիրող և հավատարիմ քայլերով հետևենք մեր խոնարհ, բայց տակավին ամենակարող Աստծուն, ով առջևից քայլելով առաջնորդում է մեզ Իր սիրով:

Հիսուսը միշտ իր զորությունն օգտագործելով մարդկանց Աստծո ներկայության ավելի խոր հարթություն էր տանում: Որպես Քրիստոսի հետևորդներ մենք էլ մեր հանգիստը, ուժը, մխիթարությունն ու ամեն բան պետք է Նրա ներկայության մեջ գտնենք: Այդ Նա է, ում որոնում ենք: Մենք կանչված ենք ներկայությունը կրող ժողովուրդ լինելու, Նրա զորությամբ քայլելու, աշխարհում հաշտություն սփռելու և Նրա ծառայությանը հաղորդակից լինելու:

Քրիստոսին հետևելն իր հետ նաև մերժում և հալածանք է բերում: Խոսքն իմ օրհնության, իմ բժշկության, իմ մխիթարության մասին չէ, այլ Հիսուսին փառավորելու, ճիշտ ինչպես Նա փառավորեց Հորը և օրհնելու նրանց, ում համար Նա եկավ մեռնելու: Հավատացած եմ, որ այս երկրի վրա Աստծո գահը Քրիստոսի խաչն էր:

Խաչով Հիսուսը վերացրեց Եդեմական պարտեզից մինչև օրս բոլորիս վրա գործող Ադամի ու Եվայի բերած անեծքը: Խաչի վրա մեռնելով Հիսուսը բարձրացվեց և փառավորվեց՝ մեզ համար ուղի հարթելով, որ վերադառնանք Հոր հետ ճշմարիտ հարաբերության:

Մարկ.16:17 մեզ ասում է. «Սրանք են նշանները, որոնք պիտի ուղեկցեն նրանց, որոնք հաւատում են. իմ անունով դևեր պիտի հանեն, լեզուներ պիտի խօսեն»: Երբ գնում ենք որպես Նրա աշակերտներ և Աստծո Արքայության մասին հռչակում, ապա մեր խոսքերն ուղեկցվում են նշաններով և հրաշքներով: Բժշկությամբ, որ Հիսուսի գործն այս երկրի վրա շարունակելու մի մասն է, կործանում ենք չարի ծրագրերը (տե՛ս 1Հովհ. 3:8):

Աստծո Արքայությունը մեր անձնական բարգավաճման մասին չէ, սակայն Աստված օրհնություն օրհնության հետևից է տալիս, որովհետև այդպիսին է Նրա բնությունը, այլ ոչ մեր նպատակն ու ձգտումը: Մեզ այսպես է ասվում՝՝ Նախ խնդրեցէ՛ք Աստծու արքայութիւնը և նրա արդարութիւնը, և այդ բոլորը Աստուած ձեզ աւելիով կը տայ՝՝ (Մաթ. 6:33): Մեր նպատակն Աստծուն ճանաչելն ու Նրա հետ քայլելն է, Նրա գործերին հաղորդակից լինելը, Նրա սիրով Աստծո Արքայությունը դրսևորելն ու հռչակելը, մարդկանց Տիրոջ հետ հաշտեցնելն ու ճշմարիտ հարաբերության վերադարձնելը: Երբ Նրա հետ աշխատում ենք ճանաչում ենք Նրա սիրտն ու բնությունը:

Աստծո մեզ հետ մտերմության ձգումը սկիզբ է առել Եդեմական պարտեզում: Նա գիտեր, որ Ադամն ու Եվան կմեղանչեն: Նա ամենատես է: Բայց միևնույնն է եկավ մեզ հետ ունեցած Իր մտերմությունը վերականգնելու:

Բարությունը տանում է ապաշխարության

Պողոսը Հռոմեացիս 1:4 ում մեզ հիշեցնում է, որ Աստծո *բարությունն* է, որ տանում է ապաշխարության, նաև հիշեցնում է Նրա աներևակայելի «քաղցրության առատության, համբերության և երկայնամտության» մասին: Քրիստոսի ծառայության մեջ սիրո ճոխություն և առատություն կա: Բայց մենք երբեմն գործում ենք ասես սիրո աղքատություն է, հազիվ մեզ քրիստոնյաներիս է հերիքում ինչ մնաց մեղավորներին հերիքեր: Որինչ չի կարող աղավաղել ճշմարտությունը:

Երբ կյանքում դատապարտության էինք սպասում Հիսուսը շնորհով եկավ: Կրկին ուզում եմ նշել սա բոլորովին մարդկային պատկերացումներին հակառակ արքայություն է, որտեղ ամեն ինչ մեր ակնկալածի ճիշտ հակառակ ձևով է լինում: Մեր կյանքում եղած յուրաքանչյուր բարության նշույլ վկայում է մեր հանդեպ ունեցած Քրիստոսի առատ սիրո մասին: Աստված սիրով լի բարությամբ դեպի մեզ է ձգտում: Մենք սխալմամբ շնորհը հակադրում ենք Աստծո արդարությանը, մինչդեռ Աստծո արդարությունը նկարագրվում է որպես ջախջախված եղեգը չփշրող և պլպլացող պատրույգը չմարող (Ես. 42:3): Այսինքն Աստված մեզ մեծ հոգածությամբ ու հոգատարությամբ է վերաբերվում, այլ ոչ սաստիկ զայրացած դատապարտությամբ: Քրիստոսի մեջ ամփոփվում են Աստծո շնորհն ու արդարությունը: Աստծո արդարությունն Իր մեծագույն շնորհն է՝ կատարյալ և անասելի մեղմ: Աստված երկիր եկավ ոչ թե պատժելու այլ ներելու:

Մինչ ապաշխարելը կարծում ենք, որ պատժված ենք, բայց երբ շրջադարձ է լինում հասկանում ենք, որ Աստծուն դառնալով Նրա շռայլ սերն ենք վայելում: Երբ Նրան ընդունում ենք որպես Հայր, Աստված մեզ խրատում է սիրով, բայց ոչ երբեք բարկությամբ: Նա մեր կյանքը պաշտպանում է, որովհետև սիրում է: Կարգ ու կանոն է հաստատում, որպեսզի կարողանանք ազատության և խաղաղության մեջ ծաղկել: Նա մեր վերքներն իմանալով երկայնամիտ և ողորմած է: Միշտ կողմ է մեր առաջընթացին, սովորելուն և աճին: Երբ նայում ենք Հին կտակարանի համայնապատկերին, տեսնում ենք, որ ամեն անգամ դատելիս Աստված ողբում էր, հետո ում «մերժել» էր վերականգնում և օրհնում :

Աստված սիրում է հմայողներին

Ժամանակին մի հմայողի հանդիպելով հստակ հասկացա, որ Հիսուսը սիրում է հմայողներին: Ընկեներիս հետ էի Դերեն Ուիլսոնի և Քրիս Օվերստրիթի: Դերրենը աշխարհով մեկ Աստծո պատմությունների մասին հրաշալի վավերագրական ֆիլմեր էր նկարահանում:

Նա աշխատում էր իր երկրորդ *կատաղի սեր* ֆիլմի վրա և խնդրեց իրենց ընկերակցել և մարդկանց համար աղոթել էքստրասենսների/Նյու Էյջ փառատոնի ժամանակ, որն անց էր կացվում Կալիֆորնիայում, Շաստա լեռան մոտ: Համաձայնեցի, Աստծո գործն այնտեղ տեսնելու անթաքույց փափագով:

Փառատոնի ժամանակ հսկայական գիմնազիայի տարածքում երկու տաղվար էինք դրել և ծրագրել աղոթքի ծառայություն առաջարկել՝ մասնավորապես Աստծուց գիտության խոսք, բժշկություն և ազատագրություն խնդրելով: Օգտագործելով տվյալ համայնքին բնորոշ լեզուն ցուցանակ էինք փակցրել, որի վրա գրված էր. «Անվճար ընթերցանություն և մաքրագործում»: Մենք չէինք թաքցնում, որ քրիստոնյաներ ենք Նյու Էյջ տոնավաճառում և շուտով մեր տաղավարի մոտ մի երկար հերթ գոյացավ: Առաջինն, ով ինձ մոտեցավ կարծես կռվի էր սպասում: Նա անպարկեշտ հայացքով նայեց վերնաշապիկիս վրա պատկերված խաչին և հանկարծ ասաց.

-Ես հմայող եմ:

Ես հավատացի նրան: Նա մի քանի շերտ սև զգեստ էր հագել, երկար կախված թևքերով: Կրծքին մի մեծ հնգածայր աստղ էր կախված: Ես ժպտացի ու հարցրի.

-Կցանկանա՞ք աղոթեմ Ձեզ համար:

Նա մի տեսակ հոնքերը բարձրացնելով կրկնեց.

-Բայց ես հմայող եմ:

-Ես կուզենայի քեզ համար աղոթել,- ասացի ես:

Նա նայեց ինձ այս անգամ ավելի շփոթված.

-Դուք ինձնից չե՞ք վախենում:

Կրկին ժպտալով ասացի նրան.

-Ոչ:

Նորից հարցրեց.

-Չե՞ք վախենում, ընդհանրապե՞ս:

-Ոչ, Ոչ,- ասացի նրան,-Ես սիրում եմ հմայողների համար աղոթել: Ավելին խնդրում էի, որ Աստված ինձ հնարավորություն տա հմայողների հանդիպելու և նրանց համար աղոթելու:

Նա ինձ թույլ տվեց աղոթել: Ես մի պարզ աղոթք արեցի խնդրելով.

-Հա՛յր, սիրիր նրան, ողողիր Քո սիրով: Ցույց տուր, թե որքան շատ ես իրականում նրան սիրում և հոգ տանում:

Հենց այդ ժամանակ ուսերիս միջև եղած այդ կենտրոնական հատվածում թեթև ցավ զգացի: Սակայն այն ոչ թե բնական ցավ էր, այլ կարեկից, որ կարելի է կոչել նաև մարմնիս վրա նրա զգացածի մարգարական դրսևորում:(Նմանատիպ ցավի մասին ավելի մանրամասն կխոսեմ 6-րդ գլխում, որտեղ լուսաբանում եմ Աստծո մեզ հետ խոսելու մի քանի եղանակներ): Ես նրան հարցրեցի.

-Հետաքրքիր է տառապում ես մեջքի սուր ցավից:

-Այո,- ասաց նա:

Հոգուց մեկ այլ զգացում ունենալով հարցրեցի.

-Միթե դա երկու տարի առաջ կատարված ավտովթարի հետևանք չէ:

Եվ հարցրեցի նրան, թե արդյոք այդ վթարից ի վեր տառապում է մեջքի ցավից:

-Այո, երեք վիրահատություն եմ տարել, սակայն ապարդյուն:

Փորձից ելնելով գիտեի, որ եթե Աստված աղոթքի ժամանակ ինչ որ ցավ մատնանշում է, ուրեմն ուզում է հենց այդ պահին բժշկել, ուստի ասացի.

-Ես հիմա կաղոթեմ մեջքիդ ցավի համար և Աստված լիովին կբժշկի, որպեսզի ցույց տա թե որքան շատ է քեզ սիրում:

Սկսեցի նրա համար աղոթել հրամայելով, որ մեջքը իր ճիշտ դիրքին վերադառնա: Հրամայեցի, որ վնասված մեջքի մասերը վերականգնվեն և ցավն ամբողջովին անհետանա, որպեսզի նա հասկանա, թե որքան մեծ է Աստծո սերն ու նրա հետ մտերմանալու փափագը: Աղոթելու ընթացքում հանկարծ առաջ թեքվեց և սկսեց մարմիը շարժել: Այնպես էր խրթխրթում ասես մի պարկ կարտոֆիլի չիփս լիներ: Նրա այդ վիճակն ինձ ցավ պատճառեց:

Ես նրան հարցրեցի.

-Ներեցեք, լավ ե՞ք:

Այն ինչ այնտեղ կատարվում էր ինձ մի տարօրինակ պայքար էր հիշեցնում, սակայն համոզված չէի լավ թե վատ:

Հանկարծ նա ձիգ կեցվածքով ոտքի կանգնեց և ցնցված ասաց.

-Անհետացել է:

Ես կռահում էի, թե խոսքն ինչի մասին է, բայց ուզում էի, որ իր շուրթերով դավանի, ուստի հարցրեցի,

- Ի՞նչն է անհետացել:

Նա ասաց.

-Ամբողջ ցավը, այն *անհետացել է*:

Շեշտակի նայեց ինձ ու աչքերից արտասուք գլորվեց:

-Ինչու պիտի Աստված կամենար հմայողին բժշկել,- հարցրեց նա:

-Նա քեզ որպես Իր սիրելին է ընդունում,- ասացի ես,-քեզ ճանաչում ու սիրում է:

-Բայց ես հմայող եմ...հմայող,- շարունակ կրկնում էր: Կարծես չէր կարողանում ընդունել, որ Աստված կարող է իրեն սիրել:

Այդ պահին մի տեսակ նրան փորձելով ասացի.

-Գիտես հիմա սկսում ես քեզ այն քրիստոնյաների պես պահել, ովքեր չեն հասկանում Աստծո սերը,-ասացի ես:

-Ճշմարտությունն այն է, որ բժշկությունն Աստծուց էր, Ով դրսևորեց քո հանդեպ Իր ունեցած սերը: Նա քեզ որպես հմայող չի ընդունում, այլ որպես մեկն, ում հետ ուզում է մտերմանալ:

Հանկարծ թվաց, թե նա սկսեց շրջապատին այլ աչքերով նայել.

-Ես պետք է դուրս գամ այստեղից:

Նա բացականչեց.

-Պետք է հենց հիմա լքեմ այս վայրը: Սա վատ տեղ է :

(Նա ի նկատի ուներ էքստրասենսների տոնավաճառը): Հրեց համաժողովի դահլիճի հսկայական դռներն ու դուրս վազեց: Նա այնտեղ մի մեծ տաղավար ուներ վաճառքի հանված պենտագրամներով և բյուրեղներով լի, սակայն թողնելով հեռացավ և այլևս չվերադարձավ: Մարդիկ նրա տաղավարի մոտ կանգ էին առնում, նայում ապրանքներին, բայց քանի որ սպասարկող չկար պարզապես հեռանում էին:

Նա եկավ փրկելու

Հիսուսին ամենուր հավատացյալներ ու անհավաներ էին շրջապատում: Ոմանք հավատում էին, իսկ ոմանք՝ ոչ: Շատերը դատապարտում էին Նրան և շատերն էլ վիրավորվում Նրա գործերից կամ նախընտրած շրջապատից:

Մենք նույնպես կյանքում տարաբնույթ մարդկանց ենք հանդիպում: Եվ արձագանքելու երկու տարբերակ ենք ունենում՝ քննադատություն կամ շնորհ: Ցուրաքանչյուր մարդու հանդիպելիս մեծ գայթակղություն կա նրան կամ քննադատել կամ աշխարհիկ տեսանկյունից նայել: Լավ կլինի միշտ այս հարցը տանք. «Հա՛յր, Դու ինչպես ես նայում այս մարդուն: Հիսուս Դու մեզ հետ կանգնած ես այս պահին: Ի՞նչ կասես Քո այս սիրելիի մասին»:

Քրիստոսը մեզ հնարավորություն է տալիս ազատ գործելու և Նրա սերը մարդկանց տալու: Մեր միջոցով գործելով Նա մարդկանց հաշտեցնում է Հոր հետ: Հնարավոր է բժշկության, գիտության խոսքի կամ Նրա ներկայության այցելությամբ: Քրիստոսը երկիր եկավ հռչակելու Հոր սերն ու բոլոր ազգերին Նրա հետ հաշտեցնելու: «Եւ եթէ մէկը լսի իմ խօսքերը և չպահի դրանք, ես նրան չեմ դատապարտի, քանի որ չեկայ, որ աշխարհը դատապարտեմ, այլ՝ որպէսզի փրկեմ աշխարհը» (Հովհ. 12:47):

5//Նիկելներն Աստծո գրպանում

Քանզի Տիրոջ աչքերը նայում են ամբողջ երկրին, որպէսզի նա զորացնի բոլոր նրանց, որոնց սրտերը ուղիղ են: Արդ, քանի որ դու այդ բանն անտեսեցիր, սրանից յետոյ քո երկիրը պատերազմներ է ունենալու:

Բ.Մն 16:9

Եւ լսեցի Տիրոջ ձայնը, որն ասում էր. «Ո՞ւմ ուղարկեմ, և կամ ո՞վ կը գնայ այդ ժողովրդի մօտ»: Ու ես ասացի. «Ահաւասիկ ես, ի՛նձ ուղարկիր»:

Ես. 6:8

Մի կին Ատլանտայում, Ջորջիա համաժողովից հետո այսպես է աղոթում.

-Տե՛ր, Քեզ համար ամեն ինչ կանեմ: *Ամեն ինչ* կանեմ: Պարզապես ասա և ես կանեմ:

Այդ պահին ինչ որ բան զգալով հասկանում է, *ես պետք է ձախ թեքվեմ*: Ասես ինչ որ մեկն ականջին շշնջա և քանի Տիրոջ ձայնը լսելու անասելի ցանկություն ուներ որոշեց ձախ թեքվել: Մի փոքր գնալուց հետո զգաց, որ պետք է աջ թեքվի, ուստի թեքվեց: Սրտի թրթիռով մտածում էր. *Միթե Աստված ինձ ինչ որ տեղ է այս պահին ուղղորդում: Ինչ հուզիչ է:*

Մինչ մտածում էր այդ մասին մի փոքրիկ հայտնվեց կրպակի դիմաց և զգաց, որ հենց այն վայրն է, ուր Տերն իրեն առաջնորդում է: Անհամբերությամբ սպասում էր Տիրոջ հետագա ցուցումներին, սակայն միակ բանը, որ գալիս էր նրա միտքը հեռյալն էր. *մտիր ներս և վաճառողի դիմաց ձեռքերիդ վրա կանգնիր*:

Տարօրինակ է, չէ՞: Մեզանից շատերը կասեին. «Դե լավ, ուրեմն Աստծուց չէր» և մեքենան նստելով կվերադառնար տուն: Այն ինչ զգում էր այս կինն իրոք տարօրինակ էր, սակայն

հակաաստվածաշնչյան կամ անբարոյական ոչինչ չկար: Նա աղոթեց.՛՛ Տեր, վստա՞հ եմ՛՛ : Հետո որևէ հաստատում կամ այլ բան չզգաց:

Սուրբ Հոգին նրբանկատ է: Նա մեզ ոչինչ չի ստիպում: Չի անհանգստացնում կամ մեր կամքին հակառակ որևէ գործի դրդում: Այդ պահին նա իսկապես լուրջ ընտրության առջև էր կանգնած: Նա ասաց.

-Լավ:

Մի քիչ ժամանակ պահանջվեց, որ համարձակություն հավաքի և մի փոքր էլ սպասեց ձևացնելով, թե չիփսի բաղադրությունն է կարդում, որպեսզի բոլոր հաճախորդները դուրս գային խանութից: Հետո վազեց վաճառողի մոտ և ասաց,

-Հեյ, նայիր, ինչ կարող եմ անել:

Վաճառողի հենց դիմացը մի հենարան կար, ուստի դրան հենվելով ձեռքերի վրա կանգնեց : Իր գլխիվայր դիրքից տեսավ, որ վաճառողը գլուխը կախեց ու սկսեց թափահարել: Ոտքերն իջացրեց ու մտածեց. *Վայ հիմա կմտածի գիժ եմ, իսկական աննորմալ:* Սակայն դրամարկղին մոտենալով տեսավ, որ իրականում վաճառողն արտասվում էր, ուստի հարցրեց,

-Ձեզ ի՞նչ պատահեց:

Նա պատասխանեց.

-Մի կես ժամ առաջ այստեղ նստած աշխատում ու աղոթում էի. «Եթե իրական ես Աստված թող ինչ որ մեկը գա այստեղ ու ձեռքերի վրա կանգնի»:

Այս կնոջ Աստծո ձայնին հնազանդվելու արդյունքում վաճառողն իր կյանքն Աստծուն հանձնեց և այդ օրվանից ի վեր հճախում է հենց այդ կնոջ եկեղեցին:

Արտասովոր պատմություն է, բայց ինձ դուր է գալիս, որովհետև հնազանդության լավ օրինակ է: Մենք թերևս նմանատիպ շատ պատմություններ չունենանք համենայն դեպս, երբ ետ ենք նայում մեր կյանքին տեսնում ենք, որ քայլ անելու և ռիսկի դիմելու բազմաթիվ պահեր ենք ունեցել: Հեշտ է գլխից այդ միտքը հեռացնել ասելով. *Չէ, սա չի կարող Աստծուց լինել:* Հետո շարունակել մեր օրակարգին հետևելով ևս տաս գործողություն կատարել, այդպիսով ձեռքից բաց թողնելով Աստծուց տրված հնարավորությունները:
Եկեք մի պահ պատկերացնենք, թե ինչ կլիներ, եթե այս կինը սխալված լիներ իր զգացածի մեջ: Ի՞նչ կկորցներ: Բացարձակ ոչինչ: Դե իհարկե նման իրավիճակներում մի քիչ մեր արժանապատվությունը կվտանգվեր, մի քիչ էլ՝ հպարտությունը: Եթե մենք նման ենք իրար, ուրեմն մեծ բան չենք կորցնի երկուսն էլ շատ արագ վերականգնվում են:

Սակայն մտածեք, թե ինչ կկորցներ այս կինը պարզապես թողնելով ու հեռանալով: Հիսուսն ասում է. «Որովհետև ով կամենում է ազատել իր անձը, այն պիտի կորցնի. իսկ ով կորցնի իր անձը Աւետարանի համար, պիտի ազատի այն» (Մր 8:35):

Գանձը ռիսկի տակ է դրվում: Մենք կամենում ենք մեռնել Հիսուսի համար, բայց արդյոք կամենում ենք Նրա համար հիմար դրության մեջ հայտնվել:

Ընդհատել և հասանելի դառնալ

Որպեսզի Աստված քեզ գործածի պետք է պատրաստ լինես ընդհատել քո գործն ու հասանելի դառնալ: Հիշեք առաջին գլխում իմ այն պատմությունը, երբ մի կին եկեղեցի գանգեց և խնդրեց իր հիվանդ հոր համար աղոթել: Տարիներ առաջ պատահած այդ իրավիճակից ես սովորեցի, որ Աստված ոչ թե հմուտ, այլ տվյալ պահին *հասանելի* մարդկանց է փնտրում, որ կարողանա գործածել: Օրինակ մի անգամ Հիսուսն Իր հետևերդների հետ Երքովից մեկնում էր, երբ Բարտիմեոս անունով մի կույր սկսեց աղաղակել. «Դավթի որդի, Հիսուս, ողորմիր ինձ»: Աստվածաշունչն ասում է , որ Հիսուսը կանգ առավ, դարձավ դեպի նա ու հետո բժշկեց նրան (տե՛ս Մարկ 10:46-52):

Սա վկայում է այն մասին, որ Հիսուսը դեմ չէր, որ Իրեն այդ մարդը կանգնեցնի: Արքայության համար ծառայելով պետք է առաջնորդվենք «ընթացքի մեջ» մոդելով: Այո, մենք պետք է նպատակադրված ավետարանչություն անենք, սակայն պետք է նաև «բնականորեն գերբնական» մարդիկ լինենք: Այսինքն պատրաստ լինել ցանկացած պահի կանգ առնելու:

Միշտ չէ, որ Աստված մեր օձիքից բռնած մեկի համար աղոթել կտա, մյուսի համար Իր անունից խոսք փոխանցել: Նա ուզում է մենք ինքներս *կամենանք* Արքայության գործն ստանձնել: Երբեմն Արքայության համար ծառայելը դառնում է կյանքի պարտադիր մաս, մինչդեռ այն պետք է մեր փափագը լինի: Եթե այդպես էլ փափագով չլծվենք այդ գործին, ապա երբեք չենք կարողանա այս երկրի վրա Քրիստոսին ճիշտ ներկայացնել: Մեր ցանկությունները նույնպես պետք է համընկնեն Նրա ցանկությունների հետ: Երբ Աստծո հետ ժամանակ ենք անց կացնում սկսում ենք ճանաչել մեր շրջապատում Քրիստոսի գործերն ու կարողանում դրանց մաս կազմել: Տերը գիտեր, որ Ատլանտացի այդ կինն իր սրտում կամենում էր Իրեն ծառայել: Նա բախվեց վախի մեծ պատնեշի, սակայն կարողանալով հաղթահարել այն Աստծո համար հասանելի դառնալով: Նա երբեք իր կյանքում չէր արել այն, ինչ այդ օրն արեց, նախ աղոթեց, որ Աստծո համար ամեն ինչ կանի, իսկ հետո վաճառողի առջև գլխիվայր կանգնեց, այդ հրաշալի աղոթքն անելով նա թույլ տվեց, որ Աստված կանգնեցնի իր ընթաքն ու իրագործի Իր նպատակները:

Ամեն առավոտ ատամներս խոզանակելիս փորձում եմ այսպես աղոթել.

-Օգնիր ինձ Տեր ուշադրություն դարձնել իմ շուրջը կատավող Քո գործերին և մասնակից դառնալ դրանց:

Ջանասիրաբար աղոթելով վստահությունս մեծանում է և կարողանում եմ ընձեռնված հնարավորություններին ճիշտ արձագանքել :

Ավելի հեշտ է վերջին պահին վախենալ, երկրորդ անգամ ստուգել քան համարձակությամբ քայլ անել և թողնել, որ Աստված գործի: 3 Թագ. 19:12 ում Սուրբ Հոգու ձայնը նկարագրվում է որպես «մեղմ օդի ձայն»: Նրա հուշումները հաճախ ձեռքի վրա ընկած փետուրի պես թեթև են, որ հեշտությամբ կարող ենք թոթափել և մոռանալ:

Երբեմն որևէ իրավիճակում առաջին քայլն անելով պարտադիր չէ անիջապես ամեն ինչ հասկանանք կամ Աստված ակնհայտ գործի: Վստահ եմ, երբ ջրհորի մոտ Հիսուսը խոսում էր Սամարացի կնոջ հետ կային պահեր, որ նրան տարօրինակ էին թվում: Այդ կնոջից մի քանի րոպե պահանջվեց այդ պահին իր վերապրածը հասկանալու և մի քանի անգամ խոսակցությունը կարող էր վերածվել կրոնական վիճաբանության, սակայն Հիսուսը կանխեց:

Հայրն օգնում է մեզ մարդկանց Իր սրտով սիրենք և աշխարհն Իր աչքերով տեսնենք: Նա մեզ կսովորեցնի Իր ձայնին արձագանքել և մեր լսողությունը զարգացնել: Եթե ռիսկի դիմենք և փորձենք 100% մի բան ստանալ, ապա հավանաբար մոտ 80 % մեզ կհաջողվի, սակայն պետք է Աստծո հետ հանդիպումներին այնպես հետամուտ լինենք, ինչպես որսորդն իր որսին: Աստծո իրական ներկայության շուքին ժամանակին նշակալի թվացող երևույթներն ուղղակի խամրում են:

Առաջին գլխում նշեցի, որ Աստծո պարգևը քեզ կարողությունն է, քո պարգևն Աստծուն հասանելիությունը և որ Նա մեզ ասում է. «Առաջինը դու սկսիր»: Ջոն Ուիմբերն, ում Աստծված մեծապես գործածել է բժշկության և մարգարեական ծառայությունների մեջ նույն միտքն այլ կերպ է արտահայտել. «Աստված ասում է. «դու գնա Ես ցույց կտամ»»: Երբեմն մոռանում ենք այդ մասին: Դժվարանում ենք հասկանալ, որ ամեն օր հնարավորություն ունենք ռիսկի դիմելու, քայլ անելով վստահելու, որ Աստված մեզ հետ է և կարող է ավելին քան պարզապես շրջապատող մարդկանց կարիքները մեր միջոցով հոգալը:

Երբ Հիսուսի առջև քաղցած ամբոխ էր կանգնած Նա աշակերտներին դառնալով ասաց. «*Դուք* կերակրեք նրանց»: Դրանով աշակերնտներին սովորեցնում էր ռիսկի դիմելով հնազանդության քայլ անել: Եվ երբ քայլ արեցին Աստված ապահովեց:

Տարիներ առաջ, երբ առաջին անգամ սկսեցի մարգարեությամբ ավետարանչություն անել գնացի երաժշտական գործիքների խանութ, որ եկեղեցու թմբուկների համար փայտիկներ գնեմ: Ահավոր շտապում էի, ուստի պետք է գնեի և արագ ետ վերադառնայի: Ինչևէ նկատեցի, որ խանութի մի անկյունում մեկը ստեղնաշարային գործիքի վրա նվագում է : Նա լրիվ ռոքնռոլ ոճով էր հագնված տպավորիչ սանրվածքով և արևային ակնոցներով: Ես քայլ արեցի դեպի նա, բայց հետո տարակուսեցի և ցանկացա խանութից դուրս գալ:

Սակայն զգում էի, որ նրան ասելու բան ունեմ, և չնայած արդեն գնել էի փայտիկները ու պատրաստ էի դուրս գալու, միևնույնն է վերադարձա դեպի այդ մարդն ու սկսեցի նրա նվագած երաժշտությունը լսել: Հասկանում էի, որ Աստված ասելու բան ունի, սակայն գաղափար անգամ չունեի թե ինչ: Նա աներևակայելի լավ էր տիրապետում այդ գործիքին և ուստի ասացի.

-Ընտիր եք նվագում:

Նա բարձրացրեց գլուխն ու ոչինչ չպատասխանեց, իր պահվածքով կարծես ասում էր.»գիտեմ, ես իրոք շատ լավ եմ նվագում»:

Հետո ասացի նրան,

-Հեյ, կարող եք ինձ տրամադրել մի րոպե : Երբեմն Տերն ինձ հետ խոսում է մարդկանց մասին և զգում եմ, որ Աստված ձեզ ինչ որ բան է ուզում ասել:

Անգամ այդ ասելով գաղափար չունեի, թե ինչ է Աստված ուզում նրան ասել: Ինձ մոտ հաճախ է այդպես լինում, զգում եմ, որ Աստված բան ունի ասելու, սակայն մինչև վերջ չգիտեմ, միայն պարզ է դառնում, երբ սկսում եմ խոսել: Ո՞վ գիտի: Գուցե Աստված այսպես ինձ շարունակ ռիսկային քայլերի է տանում, անգամ երբ ինքս մյուսներին եմ քաջալերում: Ոմանք ինձ հետ կատարվածը բնութագրում են որպես մարգարեական ոճ, որ կոչվում է «ավտոմատ խոսք» կամ «ավտոմատ բերան»: Իհարկե դա չի նշանակում, որ ես կորցնում եմ վերահսկողությունս կամ պատասխանատվություն չեմ կրում իմ ասածների համար:

Այս մարդը շարունակեց նվագել բայց հարցրեց.

-Ի՞նչ:

Առանց իմանալու, թե ինչ ասացի.

-Տերն ուզում է, որ իմանաս...,-և հետո զգացի որ հետևյաալը պետք է ասեմ. -...Նա չի արել դա քո հանդեպ: Պատճառը աշխարհում տիրող մեղքն է: Աստվածաշունչն ասում է, որ մեղքի վարձքը մահն է, բայց Աստծո պարգևը հավիտենական կյանքը և Նա ուզում է, որ իմանաս, որ դա Ինքը չի արել քո հանդեպ:

Նա մի պահ գլուխն ինձանից թեքեց և երբ շրջվեց ակնոցների տակից սկսեցին արտասուքներ գլորվել: Նա դանդաղ ինձ հարցրեց.

-Դուք ինձ ճանաչո՞ւմ եք: Ինչ որ մեկը պատմե՞լ է ձեզ իմ մասին :

Նա հապաղեց.

-Բայց այստեղ ինձ ոչ ոք չգիտի:

Ես գլուխս թափահարեցի.

-Ոչ, ես չգիտեմ, թե դուք ով եք:

Ակնոցների ստվերում կարող էի նշմարել, որ անթարթ հայացքով ինձ է նայում:

-*Ոչ ոք* ձեզ իմ մասին ոչինչ չի՞ ասել,- կրկին հարցրեց:

Նրա կզակն սկսեց դողդողալ և ևս մի քանի արցունք գլորվեցին ակնոցների տակից: Նա ինձ ասաց.

-Վեց ամիս առաջ հայրս քնեց ու չարթնացավ: Բժիշկները հետազոտեցին և որևէ պատճառ չգտան: Դրանից երկու ամիս անց, մեր հարսանիքի նախորդ գիշերն իմ նշանածը քնեց ու չարթնացավ: Հարսանիքիս օրը, գիշերը ժամը երեքին զանգեցին ու ասացին, որ իմ նշանածը մահացել է: Եվ ինչ եք ինձ հիմա ասում, ինչ ի նկատի ունեք, միթե Աստված չի արել: Ես կարծում էի, որ Աստված ինձ ատում է դրա համար էլ վերցրեց իմ հորն ու հարսանիքիս նախօրեին իմ նշանածին:

Ես ասացի.

-Ո՛չ, Տերը քեզ սիրում է: Կյանքը Նրա շնորհն է և չի ուզում, որ մեկը մեռնի: Պատճառն այս աշխարհում տիրող մեղքն է:

Նա լուռ նայեց ինձ ու հետո հարցրեց.

-Անհնար է, որ ինչ որ մեկը ձեզ բան ասած լիներ: Ո՞վ եք դուք:

Ես ասացի.

-Այստեղի եկեղեցում երիտասարդական ծառայության հովիվ եմ:

Այդ նույն օրը, գիշերը նա ինձ հրավիրեց գնալ և ծանոթանալ իր նվագախմբի անդամների և ընկերների հետ:

Մեծագույն Ավետարանիչը

Անգամ երբ ես և դու տարակուսած ենք Սուրբ Հոգին ավետարանելիս վստահ է գործում: Երբեմն եթե պարզապես զգում ես, որ Աստված մեկին ինչ որ բան է ուզում ասել, քաջալերում եմ հավատքով քայլ անել: Անկախ նրանից դու քեզ ավետարանիչ կամ մարգարե համարում ես, թե ոչ, միևնույնն է Աստված կարող է քեզ գործածել մարդկանց հասնելու նպատակով:

2Մնաց. 16:9 այսպես է նկարագրում ՝՝ Քանզի Տիրոջ աչքերը նայում են ամբողջ երկրին, որպէսզի նա զօրացնի բոլոր նրանց, որոնց սրտերը ուղիղ են: Արդ, քանի որ դու այդ բանն անտեսեցիր, սրանից յետոյ քո երկիրը պատերազմներ է ունենալու»: Սեփական կարողությունների վրա վստահ լինելու կարիք չկա: Աստված խոնարհին շնորհ է տալիս: Շնորհի սահմանումներից մեկը հետևյալն է. «Շնորհն Աստծո կամքը կատարելու Նրա զորությունն է» (տե՛ս Փիլ. 2:13): Երաժշտական խանութի իրավիճակում ես բացարձակ կուրորեն քայլ արեցի, հատուկ ոչինչ չունեի այդ մարդուն ասելու, սակայն երբ վստահեցի Աստված Ինքն իմ շուրթերով խոսեց: Գործում էի հավատքով, երբ ասացի. «Տերն ուզում է, որ դու իմանաս...»: Մեկ այլ մոտեցման տարբերակ ևս կա, երբ նայում ես ինչ որ մեկի աչքերին և ասում. «Երբ նայում եմ քեզ տեսնում եմ...» և հետո վստահեք, որ Աստված ձեր շուրթերով կասի այն, ինչ տեսնում է այդ մարդու մասին:

Մեզանից շատերին թվում է, որ նման իրավիճակում Սուրբ Հոգին մեր փոխարեն ամեն ինչ կանի, հավանաբար մեր գլխում բարձր խոսքեր կհնչեցնի կամ մեր մարմնին այդ պահին Նրա իշխանության տակ կլինի և մեր ձեռքերն ու ոտքերը գիտաֆանտաստիկ ֆիլմերի հերոսների պես անկախ մեր կամքից կսկեն շարժվել: Աստծո մեզ գործածելու մասին ունեցած նման պատկերացումները չեն համապատասխանում իրականությանը:Ծառայության ժամանակ մարդկանց մոտենալիս Աստված ուզում է, որ չձևացնեք լինենք այնպիսին, ինչպիսին կաք: Հնարավոր է այնքան էլ վստահ չլինեք ձեր հոգևոր պարգևների և ինչպես դուք եք մտածում «գերբնական» ծառայության բարձր հարթություններում գործելու հարցում: Չի բացառվում, որ անգամ ավետարանչության մտքից անհարմար եք զգում, բայց Սուրն Հոգին առաջ է մղում: Սուրբ Հոգին մարդկանց դեպի Հիսուս առաջնորդող մեծագույն ավետարանիչն է: Երբ Նրան վստահելով քայլ ենք

անում, հետևում փոքր հուշումներին Նա մեզ սովորեցնում է մարդկանց հասնելու ճիշտ ճանապարհը:

Միևնույն ժամանակ մարդկանց ավետարանելիս Աստծո մասին ավելին ենք բացահայտում և Սուրբ Հոգին մեր կյանքում սկսում է ավելի զորավոր կերպով գործել:

Աստծո Արքայությունը տարածելիս հաճախ Բարի Լուրը հռչակելիս պետք է համարձակությամբ ասել . «Աստված հիմա այստեղ է և ուզում է խոսել»:

82

Այս խոսքերն իրենց հետ մարդկանց կյանքում Աստծո սիրո, բժշկության, ազատության և ներկայության դրսևորման սպասելիքներ են բերում:

Ցանկացած պահի, ցանկացած տեղ

Մենք որպես քրիստոնյա հաճախ վտանգի տակ ենք Արքայությունը միայն տեսականորեն, բայց ոչ գործնականում կրելու: Աստված մեզ չի կանչել սոսկ տեսական գիտելիքներ ունենալու, Նա ուզում է, որ մենք թե հասկանանք Արքայության տեսությունը և թե գործնականում այն կիրառենք: «Յովհաննէս Մկրտչի օրերից մինչև այժմ երկնքի արքայութիւնը բռնադատւում է. և հզօրներն են յափշտակում այն» (Մտ 11:12):

Պողոսն ընդգծելով դա ասում է. «և իմ խօսքը և քարոզութիւնը իմաստութեան ճարտար խօսքերով չէին, այլ Սուրբ Հոգու համոզիչ զօրութեամբ» (Ա.Կր 2:4):

Ահա այստեղ պետք է թղթից գործի անցնել ու Արքայությունն ընդլայնել: Երբ Չիկագոյի աղքատ արվարձաններից մեկում եկեղեցի էի հիմնում կամ երբ Սիեթլում, Վաշինգթոնի համալսարանի շրջակայքում ծառայում, գիտեի, որ չեմ կարող իմ համոզիչ խոսքերով իրականությունը ճեղքել: Պարզապես ինչ որ բան մարդկանց ներկայացնելով, ոչինչ չես փոխի: Մենք Աստծո զորության դրսևորման կարիքն ունենք, որ մարդիկ տեսնեն, որ Նա իրական է և իրենց հետ ուզում է մտերմանալ:

Հրաշալի է տեսնել, թե ինչպես է Աստծո զորությունը Նրան մարդկանց համար շոշափելի դարձնում: Հրաշալի է տեսնել այն պահը, երբ հանկարծ մարդիկ հասկանում են. «Ամեն ինչ իրական է»: Խոսքը ոչ հրաշքների մասին է և ոչ էլ բժշկության: Արքայության մեծությունն ու գեղեցկությունն Արքան է: Աստծո Արքայությունն Արքայի մասին հայտնությունն ու իր ժողովրդի հետ հաշտեցումն է:

Բոխսիում էի, Իդահո, իմ ընկերոջ Թրի Ռոբինսոնի հետ, ով հովվություն է անում այդ տարածաշրջանում մի հրաշալի Վայնյարդ եկեղեցու: Լանչի գնալիս մի անտուն թափառաշրջիկ կնոջ կողքով էինք անցնում, ով մեծ ցուցանակ ուներ ձեռքին, որի վրա գրված էր. «Շաքարախտով հիվանդ: Դեղորայքի կարիք կա»:

83

Նա փող էր մուրում: Ես կանգ առա և մեղմորեն հարցրեցի.

-Դուք իսկապե՞ս տառապում եք շաքարախտով:

Նա խեթ նայելով ասաց.

-Այո՛ :

Ես հարցրեցի.

-Դեմ չեք լինի, եթե ձեր բժշկության համար աղոթենք:

Իրականում Բոիսի էի գնացել մարդկանց բժշկության համար աղոթել սովորեցնելու, և Թրին կողքի տղաներին նայում էր կարծես ասելով. *Ռոբբին հենց հիմա գործնական դաս կտա:*

Մինչ աղոթում էինք ես անմիջապես զգացի, որ պետք է աղոթենք այդ կնոջ ոտքերում և ոտնաթաթերում արյան շրջանառության խնդրի համար: (Հետագայում իմացա, որ դա շաքարախտով տառապողներին բնորոշ ախտանշան է): Նա ասաց, որ այո անգամ այդ պահին իր ոտքերն ու ոտնաթաթերը սուր ցավերի մեջ են: Երբ աղոթեցինք ողջ ցավն անհետացավ: Ձեռքի տակ որևէ միջոց չկար նրա շաքարն ստուգելու, բայց զգում էի, որ Աստված ինձ առաջնորդում է աղոթել նրա «միգրենային գլխացավերի» համար: Նրան հարցրի.

-Կարող է պատահաբար տառապում եք միգրենից:

Տարօրինակ հայացքով նայեց ինձ ու ասաց.

-Ոչ...ոչ:

Մի քանի րոպե ակնդետ նայում էր, կարծես ներսում ինչ որ բան էր կատարվում: Ես տարօրինակ զգացողություն ունեցա և հետո նա ասաց.

-Ամուսինս սարսափելի միգրեն ունի: Իրականում հենց հիմա նա տառապում է գլխացավից և գնաց մի ստվերոտ դեղ գտնի, գլուխը վայր դնի, մի քիչ քնի:

Սիրտս ճմլվեց, երբ մտածեցի, որ այդ մարդն ապրելով փողոցում ոչ մի տեղ չունի գլխացավի ժամանակ գլուխը վայր դնելու, աղմուկից ու լույսից պատսպարվելու:

Աղոթեցի.

-Հա՛յր, Հիսուսի անունով աղոթում ենք, որ նրա ամուսինը վերադառնա այստեղ, որ կարողանանք աղոթել նրա համար և նրա մարմնի վրա գլխացավի ազդեցությունը քանդել:

Մեկ երկու րոպե անց մեզ մի տղամարդ մոտեցավ: Այդ կնոջ ամուսինն էր: Կինը նրան պատմեց, որ մենք կանգ էինք առել նրա շաքարախտի համար աղոթելու:

Տղամարդը մեզ նայելով ասաց.

-Փողոցով ներքև էի քայլում, տեղ էի որոնում, որ պառկեմ և քնեմ այս միգրենի ցավերը թեթևացնելու ու հանկարծ մի կին ինձ ասաց. «Դու պետք է հենց հիմա կանգ առնես: Կնոջդ հետ մի հրեշտակ կա, ով կազատի քեզ այդ միգրենի ցավերից»: Հետո այստեղ գալով ձեզ հանդիպեցի տղեք:

Տղամարդու աչքերն արցունքոտվեցին և նա ասաց.

-Միթե այս ամենն իրական է:

Երբ Թրիի և մյուս եղբայրների հետ աղոթեցինք այդ մարդն անմիջապես ազատվեց միգրենի կուրացնող ազդեցությունից և ճնշումներից: Նա և իր կինն ապշած էին: Տարիներ շարունակ նա բարկացած էր Աստծո վրա կյանքում իրեն բաժին հասած դժվարությունների պատճառով, բայց հիմա զգաց, որ Աստված տեսնում ու լսում է իրեն:

Թրիի եկեղեցին իրենց համայնքում անտունների հսկայական ծառայություն է իրականացնում, ուստի նա ասաց, որ կարող են գնալ իրենց կլինիկան ստուգեն շաքարախտն ու համապատասխան անդորրագրով անհրաժեշտ դեղամիջոցներն ստանան: Հետո նրանց հարցրեց.

-Իսկ դուք քաղցա՞ծ եք: Մենք էլ պատրաստվում էինք մի բան ուտել և կցանկանայինք ձեզ համար ռեստորանում լանչ գնել և կարող եք միասին վայելել այն:

Նրանք համաձայնեցին և մի քանի օր անց էլ կլինիկա այցելեցին: Կնոջ արյան մեջ շաքարի պարունակությունը գրեթե նորմայի մեջ էր, չնայած նրան, որ տառապել էր ծանր շաքարախտով և օրեր շարունակ առանց ինսուլին էր ապրել: Ես հավատացած եմ, որ Աստված այդ օրը նրանց կյանքում մեծապես գործեց: Երբ մենք քայլ ենք անում Աստված սկսում է գործել:

Սահմաններից դուրս եկեք

Մենք բոլորս ավելի շատ իշխանություն ունենք, քան կարծում ենք և շատ ավելին, քան ներկայումս կիրառում ենք: Որքան հեռուն եմ գնացել այս ճամփորդության մեջ, այնքան շատ եմ տեսել Աստծո հրաշալի գործերը: Ամեն ինչ իր ընթացքն ունի, շատ անգամ մարդկանց համար ութ կամ տաս անգամ աղոթելուց հետո եմ միայն որևէ փոփոխություն տեսել: Գործն առաջ եմ տարել, բայց միևնույնն է որոշակի սահմանների եմ բախվել:

Ուզում եմ սակայն ձեզ քաջալերել դուրս գալ սահմաններից: Բոլորս էլ գիտենք, որ պետք է գտնվենք այն առաքելության մեջ, որտեղ Աստված կարգել է, սակայն ավելի դյուրին է մեզ հայտնաբերել ստատուս քվոն պաշտպանելիս, քան գիտակցելիս, որ այս աշխարհի ստատուս քվոն չի համընկնում Աստծո Արքայության և այն փոփոխության հետ, որ Նա ուզում է բերել:

Մենք Ադամի ժառանգներն ենք, իսկ նա մինչ մեղքի պատճառով անկումը ներկայացրել է մարդկության համար նորմալի և հնարավորի ստատուս քվոն: Հետո Անկումը եղավ իր բոլոր հետևանքներով, սակայն Աստված մեզ համար ավելին էր ուզում: Հիսուսը երկիր գալով քանդեց մեղքի շղթաներն ու մեր ազատության գինը վճարեց: Նրա հարությունը վկայակոչում է, որ այդ նույն զորությամբ կարող ենք նոր կյանք ապրել, նոր չափանիշներով: Հիսուսը որպես նոր նորմալը եկավ (տես 1Կոր. 15:45-49):

Արքայության մեջ ապրել նշանակում է ապրել «այստեղի» և «դեռ ոչի» միջև ընկած կիրճում: Անկախ հավատքի մեծությունից, ռիսկային կենսաձև է: Ռիսկի դիմելն այդ նույն հավատքով ապրելու սահմանումն է, մենք ոչ թե ապրում ենք մեր անցյալի փորձառություններով կամ աչքի տեսածով, այլ հավատքով և Աստծո Խոսքի ճշմարտությամբ, անելով այն ինչ Հիսուսն արեց:

Հիսուսի վերափոխող ծառայության մեջ ձախողելու մեծագույն պատճառներից մեկն այն է, որ սխալմամբ մեզ թվում է Աստծո հրաշքների սկզբնաղբյուրը պետք է մենք լինենք: Այս մտածելակերպի պատճառով շատերս վախենում ենք մարդկանց համար ավատքով և ըստ էության այն իրենից սխալ տեսություն և սխալ աստվածաբանություն է ներկայացնում: Բժշկությունը և մնացած ամեն բան Աստված է անում: Իսկ ինձնից պահանջվում է միայն գնալ: Ես պարզապես պետք է գնամ և անեմ այն, ինչ Նա կասի: Իմ հաջողության գրավականն իմ հնազանդությունն է եղել:

Երբեմն մեզ թվում է, որ ամեն ինչն անելու իր ձևն ունի և Աստծո մարդկանց գործածելու մասին ունեցած մեր կանխակալ պատկերացումները կարող են ճանապարհին որոշակի խոչընդոտներ առաջացնել:

Մեր եկեղեցի հաճախող մի աղջկա տարբեր առիթներով մարդիկ ասել էին, որ մարգարեության հզոր պարգև ունի: Նա հավատացել էր, բայց տարիներ շարունակ սպասել էր, մտածելով, որ մի օր Աստված իր շուրթերին հատուկ խոսքեր կդնի: Նրա համար մեծ հայտնություն դարձավ, երբ իմացավ, որ Աստված հաճախ ամենաբնական ճանապարհներով մեզ գործածում է մյուսների հետ խոսելու ճիշտ այնպես, ինչպես Ինքն է մեզ հետ խոսում:

Օրինակ աղոթելու ժամանակ կարող են պատկերներ, դրվագներ կամ տպավորություններ գալ մեր մտքին: Կարող է դրսևորվել մեր մարմնի միջոցով, որը հնարավոր է ներառի կարեկից ցավ կամ անկանխատեսելի հույզեր (արցունքներ, ուրախություն, խաղաղություն) կամ դժվարին իրավիճակում խաղաղության զգացում: Անգամ կարող է լինել մեր դիտած ֆիլմերի միջոցով: Մենք անհանգստանում ենք մտածելով, որ մեր զգացածը լոկ մեր երևակայության արդյունք է, սակայն ո՞վ ասաց, որ Աստված չի կարող մեր երևակայությունը գործածել: Նա է արարել երևակայությունը: Նա ստեղծագործ և մեծ երևակայության տեր Աստված է: Ահա թե ինչով ենք Նրան նման և ինչպես ենք կարողանում Նրա հետ կապ հաստատել:

Մենք չպետք է սպասենք, որ Աստված մեզ գործածելուց առաջ անպայման փոխի և այլ մարդ դարձնի: Հաճախ հակված ենք ասելու. «Աստված իմ, եթե օձես կգնամ»: Իսկ Աստված ասում է. «Եթե գնաս, կօձեմ»: Նրա ծրագիրն է գործածել մեզ այնպիսին, ինչպիսի արդեն կանք, մեր անհատականություններով, պարգևներով և տկարություններով: Պարզապես ձեզ նման եղեք : Աստված ուզում է ձեր և իմ միջոցով գործել: Գլխավոր դերում ոչ թե մենք. այլ Աստված է: Սակայն Նա մեզ դարձրել է Իր Արքայության տարածման առանցքը:

Արժե հետամուտ լինել

Որպես Հիսուսի հետևորդներ մենք կարող ենք հիմնվել մի քանի բավականին պարզ արտահայտությունների և գործողությունների վրա: Աստված ներկա է և ինչ որ բան է ուզում անել: Տեսեք, թե որքան պարզ է: Իսկ ինչպես գիտեմ, որ Աստված ներկա է: Որովհետև ես այստեղ եմ և Նա իմ մեջ է: Ինչպես արդեն ասել եմ Ասված փնտրում է

մարդկանց, ովքեր կամենում են ցանկացած պահի ընդհատել ձեռքի գործն ու Նրա համար հասանելի դառնալ: Ես կամենում եմ և այդ իրավիճակում գործում եմ Տիրոջ անունով: Ոչ իմ զորությամբ եմ գալիս, ոչ էլ իմ անունով, այլ վստահելով, որ իմ գալով Աստված էլ է եկել:

Հիսուսն ասաց. «ինչպէս իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ» (Ցհ 20:21): Ամեն ինչ շատ պարզ է: Ղուկաս 10 րդ գլխում խոսվում է այն մասին, թե ինչպես Հիսուսն իր 72 հետևորդներին կարճաժամկետ առաքելության ուղարկեց,

իսկ նրանք ուրախությամբ ետ վերադարձան ասելով. «Տէ՛ր, դևերն էլ են մեզ հնազանդւում քո անունով» (17-րդ համարը): Հիսուսը նրանց պատվիրել էր դևեր հանել, նրանք արել էին, բայց երբ խոստումն իրականացել էր զարմացած էին մնացել: 72ի միջոցով Աստծո գերբնական զորությունը դրսևորվեց, քանի որ նրաք *գնացին*: Բժշկություն և ազատագրում եղավ այն ժամանակ, երբ նրանք հնազանդությամբ գործեցին և Սուրբ Հոգին միջամտեց:

Իմ եկեղեցին լի է Քրիստոսին դարձած անձանցով, ովքեր հաղորդակից են եղել Աստծո իրականությանը իմ և քո նման մարդկանց միջոցով: Տարիներ առաջ մեր երիտասարդական ծառայության ժամանակ մի քանի տղասեր, սեթևեթող դպրոցական աղջիկներ փրկություն գտան: Նրանք գնում էին Վոլմարթի դեղատան բաժանմունք և աղոթում հիվանդների բժշկության համար:

Մեկ այլ երիտասարդ իր ընկերոջը՝ Ջիմին բերեց մեր երիտասարդական ծառայության: Ջիմն ու իր ծնողները հրեա աթեիստներ էին: Նա վերջին շարքում նստել ու ծիծաղում էր փառաբանության խմբում երգող իմ տղաների և մյուս երիտասարդների վրա: Աղոթքի ժամանակ ավագ որդիս Ջուդան և իր եղբայր Մայքան (այն ժամանակ 15 և 13 տարեկան էին) մոտեցան և հարցրեց այս երիտասարդ աթեիստին, թե արդյոք կարող են նրա համար աղոթել:

Ջիմը պատասխանեց.

-Ես աթեիստ եմ: Իզուր ժամանակ եք վատնելու:

Տղաներս պատասխանեցին.

-Դե եթե աթեիստ ես ուրեմն մեր աղոթքից ոչինչ չես կորցնում, չէ՞:

Ջիմն ասաց.

-Ենթադրում եմ, որ ճիշտ եք: Աղոթեք, եթե այդքան շատ եք ուզում ձեր ժամանակը վատնել :

Տղաներս սկսեցին նրա համար աղոթել: Նրաք խնդրում էին Աստծուն, որ իր սիրով և օրհնությամբ լցնի նրան: Աղոթքի ընթացքում Ջիմը ցնցված նայեց նրանց ու ասաց.

-Ես ձեզ լսում եմ:

Տղաներս կարծեցին, թե փոխաբերական իմաստով է ասում և պատասխանեցին.

-Հա, ախպերս, մենք էլ քեզ ենք լսում:

Ջիմն ասաց.

-Ինձ ճիշտ չհասկացաք, ես ամբողջ կյանքում այս ականջից խուլ եմ եղել: Հինգ վիրահատություն եմ տարել և ասել են, որ լսողությունս երբեք չի վերականգնվի: Բայց երբ աղոթեցիք, կարծես ինչ որ բան ճայթեց և մի ակնթարթում ականջս բացվեց:

Ջիմն սկսեց եկեղեցու կարգ ու կանոնում ծառայել: Նրան և մորը միևնույն օրը ջրով մկրտեցի: Տարիներ շարունակ ամեն կիրակի եկեղեցի գալու համար ոտքով երեք մղոն ճանապարհ էր անցնում, անգամ Չիկագոյի ձմեռներին: Կարող էիր ժամացույցդ Ջիմի ճշտապահությամբ ստուգել: Արևմտյան Ավրորայի ավագ դպրոցի ամենակարկառուն աթեիստը մեծն ավետարանիչ դարձավ: Իմ տղաներն ինչ էլ որ ասեին որևէ բան չէր փոխվի, սակայն երբ Աստված Ջիմի ականջը բժշկեց, նրա բոլոր կասկածները վարկենապես փարատվեցին: Գոյություն չունի Սուրբ Հոգու գործելաոճի հատուկ կաղապար: Նա կարող է անակնկալներ մատուցել:

Հռոմեացիս 6:13 ում Պողոս առաքյալը հորդորում է. «Եւ ձեր մարմնի անդամները, որպէս անիրաւութեան գործիք, ի ծառայութիւն մեղքի մի՛ պատրաստէք, այլ յանձնեցէ՛ք ձեզ՝ ի ծառայութիւն Աստծու, որպէս մեռելներից կենդանի դարձածներ, իսկ ձեր մարմնի անդամները՝ արդարութեան գործիքներ՝ ի ծառայութիւն Աստծու»: Պետք է մեր կյանքը լիովին Աստծուն նվիրենք, և Աստծո կամքին համեմատ գործենք: Երբեմն տեղի ենք տալիս հպարտությանն ու անկախ լինելու ձգտմանը: Մի անգամ աղոթում էի մարդկանց համար, մարգարեանում և տեսնում էի, թե ինչպես են նրանք բժշկվում, հանկարծ զգացի, որ Աստված հարցնում է ինձ. « Եթե մարդկանց համար երկար ժամանակ աղոթես և երբեք ոչ մեկ չբժշկվի, արդյոք կշարունակես նույն կերպ աղոթել, միայն որովհետև դա Ինձ գոհացնում է»:
Հիշում եմ, որ շփոթվեցի մտածելով. *Այ քեզ բարդ հարց*: Ըստ էության նա ինձ հարցնում էր. «Անգամ, եթե մարդիկ չբժշկվեին, միթե կշարունակերին աղոթել: Արդյոք նույն խանդավառությամբ կծառայեիր»:

Այդ պահին սկսեցի մտածել, որ բոլոր արդյունները ոչ թե իմ այլ Նրա համար են և մարդկանց հանդեպ Նրա շնորհի դրսևորումն են: Այս ամենը հասկանալով սկսեցի աղոթել. «Տեր, եթե քեզ գոհացնում է կշարունակեմ աղոթել»: Եվ կարողացա սրտիս մեջ որոշում կայացնել, որ անկախ հանգամանքերից կշարունակեմ Աստծո համար անել: Հաջորդ ծառայության ժամանակ առաջին հինգ հոգու համար աղոթեցի և նրանցից ոչ մեկը չբժշկվեց: Առաջին բանը, որ միտքս եկավ . *Օհ, ոչ ուրեմն սկսվեց : Ոչ միայն Աստված ինձ նման հարց տվեց, այլև պատրաստվում է գործնականում կիրառել* : Այդ ծառայությանը գրեթե չորս հարյուր մարդ էր եկել և մի քիչ անհարմար ինձ զգացի:

Քանի որ արդեն սրտումս այդ հարցը լուծել էի, որ անկախ ամեն ինչից պետք է հնազանդվեմ, պարզապես շարունակեցի աղոթել մտածելով, որ գուցե սրանից հետո այսպես լինի:

Նկատել եք, որ Աստվածաշնչում Հիսուսը երբեք որևէ հուշում չէր տալիս աշակերտներին, թե հետո ինչ կլինի: Նա մի պարզ հրավերով է սկսում. «Հետևիր ինձ»: Նրանց գուցե հետաքրքիր էր «Հետևիր ինձ ինչ անելու», «հետևիր ինձ որքան ժամանակով»: Սակայն Հիսուսը ոչինչ չասաց այդ մասին: Նրանք պարզապես գիտեին, որ ուզում են լինել այնտեղ, որտեղ Հիսուսն էր:

Հիսուսին հետևել դեռ չի նշանակում սենյակում սպասել, գիշեր ցերեկ ծոմ պահել և Աստծուց հատուկ ցուցումներ խնդրել հետագա քայլերի համար: Ես հավատացած եմ, որ առօրյա կյանքում իրավիճակներին պետք է շնորհով, սիրով և Քրիստոսի մեզ տված իշխանությամբ արձագանքել: Պարզապես իմանալը, որ Աստված մեզ հետ է և այդ հիմքի վրա գործելը բավական է հսկայական փոփոխություններ բերելու, որն այլ կերպ անհնար է անել:

Հավատքն ու հաստատակությունը միշտ միախառնված են, և իրոք արժե տոկուն լինել: Այդ ծառայության ժամանակ Աստված շարունակում էր ինձ հետ լինել, սակայն սիրտս փորձելու լավ առիթ էր ընձեռնել: Այդ պահին սրտումս շրջադարձ եղավ: *Լավ, եթե գերբնական ոչինչ լինի միևնույնն է ամեն ինչ հրաշալի է: Սակայն գիտեմ, որ Աստված կամենում է մարդկանց բժշկել: Թող Աստծո անունը փառավորվի և թող Նրա կամքը լինի իմ բոլոր գործերում:*

Մենք ոչ թե մեր սեփական հաջողության տեսլականը պետք է որոնենք, այլ աղոթենք ասելով. «Կամենում եմ, որ այս պահին Աստված ինձ գործածի և արդյունքները Նրա համար լինեն, ոչ թե իմ»:

Մենք կարող ենք մտածել, որ Աստծո գրպանի նիկելների պես ենք, Նա կարող է դրանք ծախսել ինչի վրա կամենա: Նա կարող է գործածել կամ մեծ կամ փոքր գործերի համար:

Բայց դա իհարկե չի նշանակում նստել ու ոչինչ չանել:

Մենք պետք է նպատակադրված անենք այն, ինչ Հիսուսն արեց:

Մենք պետք է Արքայությունը որպես Նրա ժառանգներ ընդունենք: Մի անգամ հովիվ ընկերներիցս մեկի մոտ ծառայելուց հետո, նա իր մտահոգությունը հայտնեց երիտասարդներին ուղղված իմ կոչի վերաբերյալ, որ ասացի գնալ *փնտրել* մարդկանց և նրանց համար աղոթել.

-Եթե Աստծուց կոնկրետ խոսք չունես որևէ մեկի բժշկության համար աղոթելու ավելի լավ է չաղոթես,-ասաց նա,- ես չէի ցանկանա, որ մեր երիտասարդները կամայական աղոթքներ բարձրացնեն:

-Ուրեմն քո երիտասարդներին ինձ մոտ ուղարկիր,-ասացի ես,- որովհետև ես այդպես եմ անում:

Ամբողջ Նոր կտակարանում Հիսուսը մեզ պատվիրում է գնալ և հիվանդներին բժշկել առանց կոնկրետ որակավորում տալու: Կարծում եմ ստրկամիտ մտածելակերպ է երբ հատուկ ցուցումների ենք սպասում ասելով *դե ինձ խոսք կամ հրահանգ է անհրաժեշտ գործելու համար:*

Հիսուսը մեզ Իր հետ ժառանգներ դարձրեց. Ջարդեք ձեզ պատած ստրկամիտ շղթաներն ու պարզապես արեք այն ինչ Հիսուսն արեց:

Ռիսկային ավետարանչության գործնական քայլեր

Չնայած ավետարանչությունը երբեմն կարող է ռիսկային թվալ, միևնույնն է ուզում եմ մի քանի դյուրին, գործնական քայլերով կիսվել, որոնք ձեզ համարձակություն կտան անելու այն, ինչ Հիսուսն արեց: Հիշում եք, ավելի վաղ ինչ եմ ասել: Կարող եք վստահ լինել, որ Աստված ներկա է տվյալ իրավիճակում, որովհետև դուք այնտեղ եք, իսկ Նա ձեր մեջ: Եվ Աստծո Արքայությունը կարող է ցանկացած իրավիճակ ճեղքել: Աստված ձեր միջոցով գործում է, երբ կամենում և հասանելի եք դառնում: Ահա նախնական մի քանի քայլ, որով կարող եք սկսել ռիսկային, բայց արդյունավետ ավետարանչության կենսաձև վարել:

Աղոթքի մոտեցում

Ավետարանչության տարբերակներն իսկապես անսահման են: Մի քանիսը կդիտարկենք սակայն սկսենց աղոթք առաջարկելուց, որը հզոր մոտեցում է: Որտեղ էլ լինեք և ում էլ հանդիպեք ձեզ շրջապատող գրեթե բոլոր մարդիկ ինչ որ բանի համար աղոթքի կարիք ունեն:

Աղոթքը ընդհանրական է և մարդկանց մեծամասնությունը կամենում է, որ իր համար աղոթեն, ինչն էլ իր հերթին լավ առիթ է Աստծուն ձեր խոսակցություն հրավիրելու և առաջնորդություն խնդրելու: Երբ քայլ եք անում և մարդկանց առաջարկում աղոթել, նրանք ամենաքիչն իրենց սիրված և հոգածության ներքո են զգում:

Ինձ համար լավագույն միջոցը քայլելն ու ինչ որ մեկին կամ բոլորին մոտենալն ու հարցնել է. «Մենք ուղղակի զբոսնում ենք քաղաքում և մարդիկ ենք որոնում, որ աղոթենք: Ի՞նչ կարող ենք ձեզ համար աղոթել: Որևէ ցավ կամ հիվանդություն ունե՞ք: Իսկ ընտանիքի հետ կապված հոգսեր կամ խաթարված հարաբերություններ: Ֆինանսական կամ աշխատանքի հետ կապված հարցեր: Մենք կարող ենք ցանկացած հոգսի համար աղոթել»:

Շատերը անհարմար զգալով կասեն. «Ոչ, ամեն բան կարգին է»: Քանի որ արդեն նման պատասխան ակնկալում էի, հաջորդ հարցս հետևյալն է. «Դե ինչ, իսկ կարող եմ ձեզ համար օրհնության աղոթք անել»: Քչերն են հրաժարվում, անգամ եթե որևէ կոնկրետ կարիք չեն ասում: Փորձից ելնելով կարող եմ ասել, որ ավետարանչության ամենաուղիղ ձևը աղոթք առաջարկելն է առանց դես ու դեն ընկնելու կամ խոսակցությունը երկարացնելու:

Առևտրի կենտրոններում կամ առևտուր անելիս

Մի օր երիտասարդներից ոմանց հետ առևտրի կենտրոն գնացինք և տեսանք, որ ասիական եղունգների սալոնը մարդկանցով լի է: Ինձ հետ դեռահաս աղջիկներ կային, նրանց խնդրեցի խանութի տիրուհուն մոտենալ, ով ակնհայտ բուդդիստ էր և «անվճար խաղաղեցնող» աղոթք առաջարկել: Նրան առաջարկը բավականին հաճելի թվաց և աղջիկներին ներս հրավիրեց: Հետո բոլորին հայտարարեց, որ բոլոր աղոթք ցանկացողները մոտենան և աղջիկներին խնդրեն իրենց համար աղոթել:Սալոնից օգտվող ավելի քան տաս կանացից ու տղամարդկանցից միայն մեկը հրաժարվեց: Աղջիկները մարգարեական խոսքեր էին փոխանցում կամ աղոթում այդ մարդկանց բժշկության համար: Խանութի տիրուհին նրանց հրավիրեց կրկին գալու և «խաղաղեցնող աղոթք» անելու:

92

Մեր եկեղեցուց մի քանի կանայք գնացել էին Թարգեթում կամ առևտրի կենտրոնում ավետարանչության: Նրանք մարդկանց ասում էին. «Հեյ, մենք եկեղեցում նման միջոցառում ունենք մարդկանց Աստծո կողմից քաջալերանքի խոսքեր ենք ասում, կարող ենք ձեզ հետ փորձել»: Բավականին արդյունավետ մոտեցում է, քանի որ եթե որոշ հանգամանքներում մարդիկ ինքնապաշտպանական բնազդով խուսափում են աղոթք ստանալուց, ապա «օգնել» հաստատ կամենում են, թույլ տալով, որ իրենց հետ փորձես: Հետո, ովքեր համաձայնում էին այս երկու կանայք աղոթում էին, որ Աստված նրանց քաջալերանքի խոսքեր տա կամ նրանց կյանքի և շրջապատող հանգամանքների մասին ինչ որ պատկերացում: Կենտրոնի հաճախորդներից ոմանք ուղղակի ցնցված էին այդ երկու ավետարանիչ կանանց տված որոշ «քաջալերանքի խոսքերից»:

Հասարակական տրանսպորտ

Գնացքները, ինքնաթիռներն ու ավտոբուսները հիանալի ավետարանչության վայրեր են, որովհետև լսարանը փախչելու տեղ չունի, ոչ էլ որևէ հատուկ զբաղմունք մինչև իրենց կանգառ հասնելը: Ահա հասարակական տրանսպորտում ավետարանելու մի մոտեցման օրինակ: Խնդրեք, որ Աստված ձեզ շրջապատող մարդկանցից որևէ մեկի մասին խոսք տա:

Մեր եկեղեցուց մի աղջիկ՝ Նիկոլը, Չիկագոյում ավտոբուս նստեց ու աղոթեց. «Տեր ինչ կասեիր դիմացս նստած այն աղջկան, եթե ցանկանայիր իմ միջոցով խոսք փոխանցել»:

Նիկոլը աչքերը գոցեց և մի քանի տարբեր պատկեր նրա միտքով անցան: Չնայած այդ պատկերները խառն ու մեկը մյուսի հետ կապ չունեցող էին, միևնույնն է քաջությունն հավաքելով այդ աղջկան ասաց .

-Դուք թեևս ինձ հիշեք ասելով «ավտոբուսի այն խենթ աղջիկը» կամ նման մի բան, բայց կարծում եմ Աստված ձեր մասին մի քանի պատկեր է տվել և ուզում եմ ձեզ հետ բաժնեկցել իմ լսածը:

Ավտոբուսի աղջիկը գլուխը դանդաղ տարուբերեց: Նիկոլն այնքան հուզվեց աղջկա արձագանքից, որ կիսվելու ողջ ընթացքում միայն գետնին էր նայում:

93

Երբ կրկին վերև նայեց տեսավ, որ աղջկա աչքերից առատ արցունքներ են հոսում և առաջ թեքված կլանված իրեն է լսում: Աստծո Նիկոլին ցույց տված պատկերները փաստորեն մեծ նշանակություն ունեին այդ աղջկա կյանքում:

Հարցազրույցներ և հոբբիներ

Մեր եկեղեցուց մի տղա՝ Ջեյը, ֆիլմերի հանդեպ մեծ հետաքրքրություն ուներ և իր հոբբին օգտագործում էր ավետարանչության համար: Մի անգամ ընկերների հետ քաղաքի կենտրոն, Նապերվիլ գնաց և անցորդներին խնդրեց իր վավերագրական ֆիլմի համար հարցազրույց տալ: Մարկդկանց հարցնում էր թե արդյոք ունեցել են Աստծո հետ կապված որևէ փորձառություն և հավատում են աղոթքին թե ոչ: Հրաշալի էր տեսնել, թե ինչպես են շատերը անգամ նրանք, ովքեր եկեղեցի չեն գնում և իրենց քրիստոնյա չեն համարում կիսվում մեկ-երկու տպավորիչ պատմություններով, երբ ինչ որ բանի համար աղոթել են և Աստված սկսել է գործել իրենց կյանքում:

Ջեյի հոբբի հանդիսացող ֆիլմի համար վերցրված հարցազրույցները մարդկանց հետ բազմաթիվ հոգևոր խոսակցություններ ծավալեցին: Վերջում Ջեյն ու իր ընկերները նրանց հարցնում էին. «Կարող ենք հիմա աղոթել, որ Աստված գա և տեսնենք, թե ինչ կլինի»: Ուստի Ջեյի մոտեցման պատճառով բազմաթիվ հետաքրքիր վկայություններ եղան: Դուք ևս կարող եք նման փարձառություն ունենալ, եթե ստեղծագործ կերպով գործածեք ձեր հոբբիներից մեկն ու մարդկանց հետ կապ հաստատեք:

Ավետարանել ծառայելով

Մի անգամ Զորավոր Ավետարանչության Կոնֆերանս էինք անց կացնում Ֆորթ Քոլինսում, Կոլորադո, մենք ծառայելով և զորությամբ ավետարանչության համադրություն էինք արել քաղաքի կենտրոնական հատվածում: Մեզ հետ եղող դեռահասներից շատերը վախենում էին մարդկանց աղոթք առաջարկել, սակայն չէին վախենում առաջարկել նրանց զուգարանները մաքրել: Իմ ընկեր Սթիվ Սջոգրենը նման ավետարանչությունը կոչում է «ավետարանչություն ճուտիկների համար»: Ես մոտեցա քաղաքի ամենամեծ Նյու էյջ խանութի մենեջերին և հարցրեցի, թե արդյոք կարող ենք նրանց օրհնել և աղոթել, որ բարգավաճի:

94

Սկսեցինք անել այն ինչ կոչում եմ «վերափաթեթավորում» այսինքն վերցնում եմ տվյալ մարդու տվածը և վերափոխում այն առողջ աղոթք բարձրացնելով: Սկսեցինք աղոթել .

-Տեր, օրհնիր այս խանութի մենեջերին: Հայտնի դարձրու Քո ամենալավ ցանկությունները, որ փայփայում ես նրա և մնացած աշխատակիցների համար: Աղոթում ենք, որ Քո սերն ու ներկայությունն այս վայրը ողողեն:

Մինչ մենք աղոթում էինք դեռահասները մաքրում էին նրանց զուգարանները: Հետո շարունակեցի.

-Տեր, արի և այս մենեջերին Քո ներկայության և սիրո մեջ առ, այնպես, ինչպես երբեք նախկինում:

Մինչ աղոթում էի, իսկ երեխաները մաքրություն անում մենեջերն սկսեց ողջ մարմնով դողալ: Նա հարցրեց.

-Ի՞նչ է ինձ հետ կատարվում:

Ես ասացի.

-Հայրը սիրում է քեզ և հիմա դու Նրա ներկայությունն ես զգում:

Նա ասաց.

-Բայց կարծես ներսումս կռիվ է գնում:

Ես նրան ասացի.

-Աստված ուզում է քեզ սիրել, բայց մի բան, որ Աստծուց չէ փորձում է խանգարել: Հետո հարցրեցի.

-Իսկ դու ուզո՞ւմ ես, որ Աստծո սերը հաղթի:

-Այո, խնդրեմ,- պատասխանեց նա:

Ես սկսեցի կապել և քանդել այն դիվային ազդեցությունը, որ փորձում էր նրան ետ պահել Աստծո սիրուց և խաղաղությունից: Նա դադարեց դողալուց և սկսեց քրտնել, որն արդեն ազատագրման նշան էր: Հետո ժպտաց և ասաց, որ այդ պահին զորավոր խաղաղություն է զգում: Ես բացատրեցի,որ կարող է այդ խաղաղությունը մշտապես վայելել, եթե Քրիստոսին ընդունի: Նա կամեցավ և միասին աղոթեցինք:

Մի քանի ամիս անց կրկին Ֆորթ Քոլլինսում էի և այցելեցի այդ խանութը, այնտեղ ինձ ասացին, որ մենեջերը թողել էր աշխատանքն ու հեռացել: Նա հանգել էր այն կետին, որ այլևս այդ գործն իր համար չէ:

Եթե դժվարանում եք մարդկանց հետ աղոթել, ապա ծառայող ավետարանչության մոտեցումն ընտրեք:

Մարդկանց ծառայելը հոգևոր խոսակցության համար ուղի է հարթում, որն էլ կարող է ինչ որ մեկի կյանքում Արքայություն բերել:

Գանձփնտրտուք

Ոմանք գործածում են այսպես կոչված «գանձփնտրտուք» մոդելը: Քեվին Դեդմոնը Վայնյարդ եկեղեցու նախկին հովիվներից, ով այժմ ծառայում է Բեթել Եկեղեցում Ռեդդինգ, Կալիֆորնիա, այս թեմայով մի հրաշալի գիրք է գրել *Մեծագույն գանձփնտրտուքը* վերնագրով: Մարդիկ, ովքեր ավելի ազատ են զգում կոնկրետ, քայլ առ քայլ ցուցումների հետևելով ծառայելուն, ապա այս մոտեցումն իրենց կգոհացնի:

Մինչ երկու երեք հոգով ավետարանչության դուրս գալը, միասին աղոթեք Աստծուց մարդկանց հատուկ նկարագրություններ, անուններ, տեղանքներ և այլ ցուցումներ խնդրելով: Մենք այսպես արեցինք Պուերտո Ռիկկոյում և ներկա փառաբանության առաջնորդներից մեկը հիվանդանոցի պատկեր ստացավ, հիվանդասենյակ համար 231, մի կին և սրտի խնդիր: Մի խումբ մեկնեց հիվանդանոց և հարցրեց 231 սենյակը: Փառաբանության առաջնորդը սենյակ մտնելով այնտեղ կանգնած երկու կանաց հարցրեց, թե նրանցից ով սրտի հետ կապված խնդիր ունի: Նրանցից մեկը ձեռք բարձրացրեց և նրանք մոտեցան ու աղոթեցին նրա համար: Նա անմիջապես իր սրտում ֆիզիկական փոփոխություն զգաց: Սկզբից սիրտն սկսեց արագ բաբախել, հետո հանդարտվեց և զգաց, որ սրտի ռիթմը փոխվել է:

Մարզադահլիճում

Նախկինում ամեն օր մարզադահլիճ էի գնում և միշտ աղոթում էի տարաբնույթ վնասվածքներ ստացած մարդկանց համար: Խնդրում էի, որ Աստված այնտեղ մարզվողների համար քաջալերանքի կամ գիտության խոսք տար : Անկախ նրանից, թե այդ պահին քո ստացած խոսքը ճգրիտ ու կյանք փոխող կլինի, թե ոչ միևնույնն է մարդիկ տակավին հիշում են, որ Աստված իրենց համար խոսք ուներ:

Այն բանից հետո, երբ քաղցկեղի վերջին փուլում գտնվող մի կին, ում երեք ամիս էր մնացել ապրելու բժշկվեց, համբավս տարածվեց, և ինձ սկսեցին կոչել «Աստծո մարդը» կամ «քարոզիչը»:

Որոշ հավատացյալների նման պիտակները նյարդայնացնում են, սակայն ես հավատացած եմ, որ մեր կանչվածությունը նաև կայանում է Նրա հետ մեզ ասոցացնելով:

Իրականում անգամ մարդիկ, ովքեր այս պիտակներով քեզ դիմում են փոքր ինչ ծաղրող կամ հեգնական տոնով, ամեն դեպքում գիտեն քո համոզմունքներն ու դժվարության հանդիպելիս գալիս են խնդրում, որ աղոթես:

Ի վերջո մարզադահլիճում տղաներից մի քանիսի հետ սկսեցինք ամեն առավոտ աղոթել: Միանգամայն նրանց նախաձեռնությունն էր, և նրանք շարունակ ավելի ու ավելի շատ մարդիկ էին հրավիրում մեզ միանալու:

Արդյունքում ամեն օր 5:30 տասնյակ տղաներ հավաքվում էին, Աստվածաշունչ էինք կարդում ու աղոթում: Սպորտդահլիճը հրաշալի վայր է, ուր մարդիկ կարող են քո միջոցով քո պաշտած Աստծուն ճանաչել:

Հագեցնեցնել ծարավը

Որպես Քրիստոսի հետևորդ մեր դերերից մեկն աղ և լույս լինելն է: Մերօրյա հասարակությունը գնալով ավելի աշխարիկ է դառնում, իսկ հոգևոր ծարավը գնալով ահագնանում: Մեզ հայտնի է այդ ծարավը հագեցնելու պատասխանը և որպես գրպանի նիկելներ Աստված կարող է Իր նախընտրած ձևով մեզ գործածել, որպեսզի մարդկանց պատմենք Նրա ծարավ հագեցնող Կենդանի Ջրերի մասին:

Աստված մեզնից յուրաքանչյուրի մեջ Իր Հոգին է դրել, որպեսզի կարողանանք Նրա քահանաները և հովիվները լինենք մեր աշխատավայրում, մարզադահլիճում, սիրելի առևտրի կենտրոնում, հասարակական տրանսպորտում կամ դպրոցում: Երբ մենք ոտք ենք դնում ռիսկային ավետարանչության կենսաձև, կարող ենք զանազան ստեղծագործ մոտեցումներ դրսևորել որոնք կարող են արդյունավետ լինել տարբեր վայրերում և տարբեր մարդկանց հետ:Մենք պարզապես հասանելի ենք դառնում գնալով և անելով այն, ինչ Հիսուսն արեց և երբ թույլ ենք տալիս Սուրբ Հոգին Մեծագույն Ավետարանիչը լինելով սկսում է միջոցով գործել:

97

6// Աստված խոսում է

Սովորում ենք Նրա ձայնը ճանաչել

Որովհետև Աստուած է, որ ասաց. «Խաւարից թող լոյս ծագի».

և նա ծագեցրեց մեր սրտերում Աստծու փառքի գիտութեան լոյսը,

որը ճառագայթում է Յիսուս Քրիստոսի դէմքից:
Այսուհետև այս գանձերն ունենք կաւէ ամանների մէջ, որպէսզի

զօրութեան գերազանցութիւնը Աստծուց լինի և ոչ մեզնից:
2 Կորնթացիս 4:6-7

Տարիներ առաջ Սիբիր ծառայության էի մեկնել մի քանի այլ հովիվների հետ, որոնցից մեկը իմ ընկեր Քրիս Սայմոնսն էր Անգլիայից: Մենք ընթրում էինք հանդիսությունների մի սրահում, որտեղ սրճարան, բար և ռեստորան կար: Քրիսը թեթև հրեց ինձ ու գլխով անկյունը ցույց տվեց ասելով.

- Տեսնո՞ւմ ես այն մարդուն: Սիբիրի նախկին կոմունիստ առաջնորդն է:

99

Ես տպավորված էի:Երբ Քրիսն ինձ առաջարկեց նրա հետ ծանոթանալ միանշանակ համաձայնեցի: Քրիսի հետ առաջ գնացինք և նա ինձ ներկայացնելով ասաց.

-Ռոբբի, սա Վիկտորն է:

Մի փոքր հաղորդակցվելուց հետո Քրիսն ասաց .

-Ռոբբին մարգարե է, Չիկագոյից, նա Ձեր կյանքի մասին կարող է բաներ ասել, որ ոչ ոք չգիտի:

Հետո թեքվելով ինձ նայեց (երկուսն էլ ակնդետ ինձ էին նայում), և ասաց.

-Դե ինչ Ռոբբի կարող ես գործել:

Այս դեպքում խոսքը համպատրաստից գործելու մասին էր: Նայելով այդ մարդուն ասացի,

-Շատ բարի, թույլ տվեք ասել , ինչ տեսնում եմ :

Իրականում բացարձակ ոչինչ չունեի ասելու: Սկսեցի խոսել պարզապես վստահելով, որ Աստված իմ շուրթերով կարտահայտվի: Անկեղծ ասած իմ պարագայում սա ամենալավ տարբերակն է:

Նայեցի Վիկտորին և ասացի.

-Երբ փոքր տղա էիք մի տարեց կին զեզ Հիսուսի մասին պատմեց և դուք հավատացիք: Բայց երբ դպրոց գնացիք աթեիզմի մասին պատմեցին և դուք սկսեցիք դրան հավատալ: Հեռացաք Հիսուսին հավատալուց: Եվ տեսնում եմ, որ Աստված երկու անգամ փրկել է ձեր կյանքը: Տերն անձամբ է միջամտել: Մի անգամ նավակում բռնկված հրդեհից, որից գրեթե մեռնում էիք, և մյուսը ավտովթարից: Ինչ որ բան ձեզ այս ամենն ասո՞ւմ է :

Վիկտորը ցած նայեց և գլուխը շարժեց: Ես մտածեցի *Օ ոչ սա վատ նշան է:*

Նա խոժոռված դեմքով մեզ նայեց և ասաց.

- Երբ փոքր էի, տատիկս ինձ Հիսուսի մասին պատմեց , և ես հավատացի: Բայց դպրոցում ինձ աթեիզմի մասին սովորեցրեցին: Հետո ես դրան հավատացի: Հեռացա: Տարիներ առաջ մի սովետական նավի մեջ էի, որտեղ հրդեհ բռնկվեց: Կրակն իմ նավախուց հասավ, փորձեցի մի քանի նավաստիների իմ խցում առկա պատուհանով դուրս հանել, սակայն թիկունքիս չափազնց լայն լինելու պատճառով չկարողացա ինքս դուրս գալ, միայն կարողացա գլուխս հանելով փոքր ինչ օդ շնչել: Սև ծուխը տարածվեց, աչքերս արցունքոտվեցին և տեսադաշտս փակվեց:

Աչքերս այրվում էին, թոքերս լցված էին ծխով: Բոլոր նավընկերներս ներքևում, ջրի մեջ էին արդեն: Ես ասացի. «Հիսուս, եթե իրական ես փրկիր ինձ հիմա» ասելուն պես զգացի, որ մեկն ուսերիցս բռնելով նավախցի պատուհանից դուրս քաշեց : Հանկարծ զգացի, որ արդեն ջրի մեջ եմ, և տեսա, որ ներքևում կանգնելու տեղ չկար, որ ինձ կարողանային քաշել: Ո՞վ ինձ դուրս քաշեց: Երբ ջուրն ընկա ընկերներս էլ նույն հարցն ինձ տվեցին: Սև ծուխն այնքան խիտ էր, որ նրանք ոչինչ չէին տեսնում և բացի այդ էլ կանգնելու տեղ չկար: Չէի կարողանում հավատալ, չէի կարողանում հասկանալ, թե ինչ կատարվեց: Այդ հրդեհի ժամանակ մի քանիսը մահացան, բայց ես ոչ: Անհնար էր բացատրել, թե ով ինձ այնտեղից հանեց:

Հետո Վիկտորն ինձ երկրորդ պատահարի մասին պատմեց:

-Երկու շաբաթ առաջ կնոջս հետ մեքենայով տեղ էինք գնում Սիբիրի մայրուղով, հանկարծ մի բեռնատար սահելով սկսեց մեր ուղղությամբ գալ: Սիբիրում ճամփեզրի ձյունաշերտը երբեմն կարող է մինչև 10 ոտնաչափ բարձրության հասնել և սառչելով վերածվել սառցե կարծր պատի: Բեռնատարը բախվելով այդ սառցե պատին շարունակում էր մեր ուղղությամբ ընթանալ: Ճիշտ բախման պահին գրկեցի պտտվող ղեկն ու ասացի, «Հիսուս, օգնիր մեզ» հանկարծ չգիտեմ, թե ինչ կատարվեց, բայց մենք կանգնած էինք

բեռնատարից մեկ մատնաչափ հեռավորության վրա առանց որևէ քերծվածքի: Երբ աչքերս փակում և կրկին քննում եմ այդ իրավիճակի բոլոր մանրամասները, միևնույնն է կատարվածին չեմ կարողանում որևէ տրամաբանական բացատրություն տալ:

Վիկտորը լռեց ու խորազնին հայացքով նայեց ինձ.

- Դուք հիմա ասում եք, որ Հիսուսն է դա արել: Նա՞ է մեզ փրկել:

-Այո,- ասացի ես: -Նա ուզում է ձեզ հետ մտերմանալ և հենց հիմա ձեզ հրավիրում է Իր հետ լիովին նոր հարաբերություն կառուցել:

Հետո Վիկտորը մի հետաքրքիր բան ասեց.

-Դե, բոլորս էլ Աստծո զավակներ ենք: Դա պայմանավորված չէ մեր ընտրությամբ: Մենք արդեն Նրանն ենք: Աստված է բոլորիս արարել, ուստի մենք Նրա զավակներն ենք: Մենք չպետք է Հիսուսի փոխարեն ընտրություն կատարենք:

Եվ հետո Սուրբ Հոգին պարզապես միջմտեց: Նայեցի նրան և ասացի .

-Թույլ տվեք մի հարց տալ:

Կինը այնտեղ նստած էր. ուստի նրան հարցրեցի

-Դուք և ձեր կինը ընտրել եք միմյանց: Թե մեկ ուրիշն է ձեր փոխարեն ընտրություն կատարել:

Նա տարօրինակ հայացքով նայեց ինձ .

- Ոչ, մեզ մոտ նման ամուսնություններ չեն լինում: Ինքներս ենք ընտրություն արել: Ես եմ նրան ընտրել:

Նա նայեց կնոջը .

-Նա շատ հպարտ է , որ իրեն եմ ընտրել:

Ես ասացի .

-Այո, ճիշտ այդպես էլ Հիսուսն է ուզում , որ Իրեն ընտրենք: Նա ուզում է, որ Իրեն ընտրենք:

Վիկտորը հայացքը գետին գցեց և սկսեց խորհել այդ մասին, հետո հանկարծ ձեռքը սեղանին զարկելով ասաց .

-Ուրեմն ես ընտրում եմ Հիսուսին:

Դժվարանում եմ բացատրել , բայց կարծես այդ պահին օդում ինչ-որ բան ճայթեց, երբ նա ձեռքը զարկեց սեղանին մթնոլորտում մի բան փոխվեց: Ինչ-որ մի բան շրջապատում քանդվեց: Վիկտոն սկսեց արտասվել: Մի քանի րոպե անց աղոթեց և իր կյանքը Քրիստոսին հանձնեց: Իմ ունեցած ամենազորավոր փորձառություններից մեկն էր: Երբ նոր էինք ներս մտել անգամ չէի կարող պատկերացնել, որ նման բան կպատահի: Ոչ այդ մարդու տեսքից, ոչ էլ նրան շրջապատող հանգամանքներից չէինք կարող կռահել, որ նա Աստծուն ջերմագին որոնողներց մեկն է, պատրաստ իր կյանքը Հիուսին հանձնելու: Իրականում Աստված էլ ամբողջ կյանքում նրան էր որոնել:

Երբ մենք քայլ ենք անում ակնկալելով , որ Աստված ուզում է մի բան փոխել, ապա մենք համաձայնության ենք գալիս այն հոգևոր իրականության հետ, երբ Հիսուսն ասեց դաշտերն արդեն սպիտակել են (տես Հովհաննես 4/35): Նա մեզ խոստանում է, որ կհնձենք այնտեղ, որտեղ չենք ցանել: Աստված որոնում է իր ժողովրդին և մենք պարզապես քայլում ենք այն ակնկալիքով, որ Նա ներկա է և գործում է: Այդ պահին երբ մենք ակնկալում ենք , որ Աստված կգործի, գաղափար անգամ չունենք, թե ինչպիսին կլինեն արդյունքները: Մենք սպասում ենք, որ Աստված կմիջամտի, որովհետև Նա Ինքն է այդպես կամենում: Նա մեր միջոցով ցանկանում է մարդկանց հետ կապ ստեղծել:

Ի հակադրություն համր կուռքերի

Մենք հետևում ենք մի Աստծո, Ով խոսում է: Աստվածաշնչի ներկայացրած Աստվածը գիտի ինչպես հաղորդակցվել: Քրիստոնեությունը հարաբերություն է: Աստվածաշունչն սկզբից մինչև վերջ Աստծո Իր ժողովրդի հետ խոսելու մասին է: Աստված համր կուռքերի նման չէ (Կոր.12:2):

Տարիներ առաջ Աստծո «խոսելը» պատկերացնում էի, երկնքից հնչող ձայն, որ սենյակը կցնցի կամ էլ ականջիս ճշգրիտ բառեր կհնչեն: Հիշում եմ առաջին անգամը, երբ հասկացա, որ Աստված մեզ հետ անհատապես և յուրահատուկ ձևերով է խոսում: Այդ ժամանակ մոտ քսան տարեկան կլինեի: Մի անգամ մեր քրիստոնեական համայնքի կանանցից մեկը սիրալիր մոտեցավ ինձ: Նրա անունը Թերեզա Սքոթ էր: Եվ պատվիրեց.

-Ռոբբի, զգում եմ, որ Աստված քեզ ասում է ընկերուհուդ հետ իսկապես զգույշ լինել: Արժեքավոր լինելու զգացումդ գալիս է նրա հետ ունեցած քո հարաբերություններից, մինչդեռ չպետք է այդպես լինի: Աստված քեզ համար շատ ավելին ունի պատրաստած:

Գուցե պարզ թվա, բայց այդ ժամանակ ինձ ուղղակի ցնցեց, որ խոսքն Աստծուց էր և Նա գիտեր, թե ինչ էր կատարվում իմ մտքում և սրտում: Ես անչափ շատ էի հարգում այդ բարի ու ողորմած կնոջը: Հիշում եմ, թե ինչպես ապշած նայեցի նրան ու հարցրեցի.

-Որտեղից իմացա՞ք:

Նա ասաց.

-Ես իմ մենիկ պահն էի անց կացնում և լեզուներով աղոթում: Լռության մեջ Տիրոջն էի սպասում և հետո դա տեսա, հետո ասաց,-գիտես ինչ, եթե աղոթես և խնդրես Աստված կօգնի մտքերդ հանդարտեցնել և քեզ որոշ բաներ ցույց կտա...:

Ցնցված էի մտածելով, որ *Ահա, ես դրա մասին գաղափար չունեի: Կարծում էի Նա միայն Աստվածաշնչի և աղոթքի միջոցով է խոսում:* Դժվարանում էի հավատալ, որ նման կերպ Աստծուն լսելը հասանելի է ցանկացած մարդու և ոչ մեկ ինձ այդ մասին չէր ասել: Մորս կատարվածը պատմեցի և պարզվեց, նրա համար շատ սովորական բան էր: Տարիներ շարունակ նա ճաշակել է այդ փորձառությունը:

Ինձ մոտ մի շրջան սկսվեց, որ դեռ տարիներ էին հարկավոր մարսելու համար: Այսօր ես այն համոզմանն եմ, որ Աստված մեզ հետ տարբեր ձևերով խոսում և հաղորդակցվում է: Այն մշտական բնույթ է կրում: Մենք Նրա հետ մտերմանալով սովորում ենք այն եղանակը, որով մեզ հետ հաղորդակցվում է: Ավելին՝ զորավոր միջոց է Աստծո ձայնը մյուսների համար լսելու մեջ հմտանալը, քանի որ այն մարդկան և Տիրոջ սիրո մեջ սերտ կապ է ստեղծում: Դասական քրիստոնյա գրող Բրոդեր Լորենսը հայտնի էր իր խոնարհությամբ և Աստծո հետ մտերմությամբ: Մի անգամ ընկերներից մեկին այսպես է գրել,

Անգամ ամենադժվար իրավիճակներում հնարավոր է ապրել Տիրոջ ներկայության զգացողության տակ: Եթե ես և դու պատրաստվում ենք այս կյանքում դրախտային խաղաղություն վայելել,ապա պետք է վարժվենք Տեր Հիսուսի հետ մտերիմ, խոնարհ և չափազանց քնքուշ խոսակցություններին:

Աստված խոսում է Աստվածաշնչի միջոցով

Այն հիմնական և հավիտենական ձևը,որով Աստված խոսում է՝ Գիրքն է՝ *logos*-ը: Հիսուսը Գիրքը ամենից վեր դասեց, հաստատելով Նրա Աստվածանից լինելը,անբեկանելությունը, գերագույն իշխանությունը և համապարփակ բովանդակությունը: *Rhema*- հատուկ բառ է , հատուկ իրավիճակի համար: *Նոր Կտակարանի Աստվածաբանության Նոր Միջազգային Բառարանը* հետևյալ կերպ է բացատրում . «Եթե Logos-ը Նոր Կտակարանում կարող է հաճախ վերաբերվել մի ամբողջ քրիստոնեական հոչակման, ապա rhema-ն սովորաբար վերաբերվում է առանձին բառերի կամ արտահայտությունների»: Նոր Կտակարանյան Բառերի Բացատրական Բառարանը, Վ.Ի. Վայն, հետևյալ կերպ է մեկնաբանում.

Rehma բառի կարևորությունը (որը տարբերվում է logos-ից) ներկայացվում է այն հրամանի մեջ, երբ ասվում է.՝՝ Եւ առէ՛ք փրկութեան սաղաւարտն ու Հոգու սուսերը, որ է Աստծու խօսքը՝՝ Եփ. 6:17, այստեղ Խոսքը ոչ թե ամբողջական Աստվածաշնչի մասին է, այլ առանձին համարների, որ Հոգին կարող է մեր միտքը բերել հարկ եղած ժամանակ, նախադրյալ, որ միտքը կանոնավոր կերպով համալրվում է Խոսքով:

Աստծո Խոսքի կանոնավոր ընթերցանությամբ սովորում ենք Նրա ձայնը ճանաչել: Ամենից հաճախ Նա մեզ հետ այս անփոփոխ աղբյուրից է խոսում: Շատ անգամ Աստվածաշունչ կարդալիս առանձին հատվածներ կարող են ընդգծված ձևով աչքի զարնել: Սովորական վերաբերվելու փոխարեն նշումներ կատարեք, քանի որ այն կարող է հրաշալի միջոց հանդիսանալ Աստծո ձեզ հետ խոսելու եղանակը պարզելու հարցում: Երբ զգում եք, որ տվյալ հատվածի միջոցով Աստված խոսում է ձեզ հետ, ապա գրի առեք: Ժամանակ անց կացրեք աղոթելով և այդ խոսքի շուրջ խորհելով: Գրեք նաև այն ինչ զգում եք, որ Աստված է հորդորում և հարցրեք թե արդյոք էլի ինչ որ բան կա, որ Աստված կկամենա հայտնել: Անգամ, եթե վստահ չեք, որ լսում եք Նրան, միևնույնն է գրեք ձեր մտքին եկած առաջին իսկ տպավորությունները: Վստահ եղեք, որ Նա կամենում է խոսել: Եվ եթե խոսքն Աստծուց լինի, ձեր կյանքում պտուղ կբերի:

Երկրորդ հավաստիացումն այլ հավատացյալներից է գալիս: Եթե զգում եք, որ Աստված կոնկրետ խոսքի միջոցով խոսում է ձեր կյանքում, ապա կիսվեք այդ մասին մտերիմ հավատացյալների հետ: Մենք ապրում ենք համայնքում և ուստի Աստված հաճախ Իր խոսքերը հաստատում է այլ հավատացյալների միջոցով, հատկապես նրանց, ում հետ հաշվետու հարաբերություն ունենք:

Աստվածաշունչն ապահով հաղորդակցման միջոց է, որովհետև գիտենք, որ «Աստծու շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու և արդարութեան մէջ խրատելու համար» (Բ.Տմ 3:16, տես նաև Ես. 55:11): Երբ որոշ ժամանակ շարունակ գրառումներ կատարեք, ապա կտեսնեք, թե որտեղ է Աստված խոսել, որտեղ է Իր ասածը վերահաստատել և որտեղ է կատարել:

Այլ մարդկանց համար Աստծո ձայնը լսելու մեջ աճելու մեկ այլ եղանակ է նրանց համար աղոթելն ու լսելուն ժամանակ տրամադրելը:

105

Սաղմոսներ կարդացեք և խնդրեք, որ Աստված ընդգծի այն ինչ ուզում է ձեր միջոցով ուրիշներին փոխանցել: Ահա համապատասխան հարց, որ կարող եք տալ Սուրբ Գիրք կարդալիս կամ ինչ որ մեկի համար աղոթելիս. «Տեր, ինչպես ես ցանկանում քաջալերել այս մարդուն: Ինչն է ամենաշատը Քեզ դուր գալիս նրա մեջ»: Աստվածաշնչից մեզ հայտնի է, որ Աստված ուզում է մեր միջոցով խոսել մարդկանց հետ, քաջալերել ու մխիթարել նրանց (տե՛ս 1 Կոր. 14:3): Տվյալ մարդու հետ կիսվեք ձեր լսածն ու հարցրեք նրա տպավորությունները: Նա գուցե պատրաստակամորեն հաստատի, որ հենց այն է, ինչ զգում էր, որ Տերն է իրեն ասում:

Այս բնագավառում առաջ ընթանալով կսկսենք ավելի լավ ճանաչել Աստծո ձայնն ու ականատես լինել Նրա գործերին: Տիրոջը հաճեցնում է, երբ Նրա ցուցումներն ու առաջնորդությունն ենք որոնում: Նա կամենում է մեզ հետ մտերիմ լինել և ասում է. «Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են» (Հովհ. 10:27):

Համընդհանուր թյուր կարծիք

Շատ քրիստոնյաներ չեն հավատում, որ կարող են մարգարեական խոսք փոխանցել ուրիշներին: «Իսկ ինչ կլինի, եթե ես մարգարեության պարգև չունեմ» հարցնում են նրանք, այս հարցն ինքնին ծագում է մարգարեության մասին մարդկանց ունեցած ընդհանրական թյուր կարծիքից: Նրանք մտածում են, որ մարգարեն անպայման պետք է գործի ըստ իր մարգարեական ծառայության, ինչպես նշված է Եփ. 4:11 ում և շփոթության են մատնվում, երբ խոսքը վերաբերվում է մարգարեանալու ավելի ընդհանուր կարողությանը, որի մասին գրված է 1 Կոր. 14-ում: Նոր Կտակարանի ժամանակներից մինչ օրս շատերը ընդհանուր մարգարեական պարգևը գործածում են մարդկանց քաջալերելու, հոգևոր աճը խթանելու, մխիթարելու և շինություն տալու համար:

Որոշ քրիստոնեական շրջաններում մարգարեության պարգը անտեսվում է իր ահավոր հետևանքների պատճառով, Հին Կտակաանում օրինակ կեղծ մարգարեանալու պատճառով քարկոծվում էին: Իսկ Նոր Կտակարանում, երբ մարդիկ ինչ որ մեկին պարզապես դատապարտության խոսք ասելիս էին տեսնում, հավատային, թե ոչ մտածում էին, որ Աստծուց մարգարեություն է:

106

Նաև մտահոգության տեղիք է տալիս ժամանակին մարգարեությունները շահարկելն ու մարդկանց հոգևոր բռնության ենթարկելը:

Ի հակադրություն այս ամենի գոյություն ունի մեկ այլ ծայրահեղություն, երբ որոշ քրիստոնեական համայնքներում մարգարեությունը գրեթե «օրենքից վեր է դասվում» և պատվանդանին կանգնեցնեցվում, որը սակայն հակաաստվածաշնչյան է: Բայց մեզ պատվիրված է ցանկացած խոսք ստուգել և համապատասխանաբար քննել:

Ես հավատացած եմ, որ ընդհանուր առմամբ մարգարեության, ինչպես ցանկացած այլ պարգևի հանդեպ ունեցած ամենաողջախոհ մոտեցումը եկեղեցու կողմից այն ուրախությամբ ընդունելը, ուղղորդելը, ուսուցանելն ու զարգացնելն է, որը կհամապատասխանի միմյանց հաշվետու լինելու սահմանված չափանիշներին: Օգտակար օրինակ է հյուրընկալության պարգևի հետ համեմատությունը, որը քրիստոնեական շրջանակներում ճնշող կամ վախեցնող չի համարվում: Նույն կերպ բոլորին հորդորվում է հյուրընկալ լինել, սակայն ոմանք առանձնանում են հյուրընկալության յուրահատուկ պարգևով, ճիշտ այդպես էլ մարգարեությունն է: 1Կոր. 14:1 ում Պողոս առաքյալն ասում է, որ բոլորս պետք է նախանձախնդրությամբ այս պարգևը փափագենք, հաշվի առնելով, որ այդ աղոթքի խնդրանքին Աստված սիրով է պատասխանում «Սիրոյ հետամո՛ւտ եղէք և առաւել ևս նախանձախնդի՛ր եղէք հոգևոր շնորհներին, մանաւանդ մարգարէութիւն անելու»:

Հին Կտակարանում Աստված մարգարեների միջոցով նոր վարդապետությունն էր հայտնում . «Աստուած բազմապիսի ձևերով և այլազան օրինակներով նախապէս խօսեց մեր հայրերի հետ մարգարէների միջոցով» (Եբր 1:1): Նոր Կտակրանում տեսնում ենք մարգարեության երեք գերագույն նպատակ: Նախ մարգարեական խոսք տրվում էր հավատացյալներին մխիթարելու, զորացնելու և հորդորելու, երկրորդ որպես անհավատներին նշան և երրորդ ուղղորդելու (տես 1Կոր. 1:2-5,24-25,1Տիմ.1:18,4:14):

Այլ ձևեր, որով հայրը խոսում է

Եկեք չմոռանանք, որ այստեղ ես ոչ թե խոսում եմ կոնկրետ մարգարե լինելու ծառայության մասին, այլ որպես քրիստոնյա Աստծո ձայնը ճանաչելու և արձագանքելու, որը Նրա հետ մտերիմ հարաբերություն ունենալու բնական բաղադրիչներից մեկն է:

Մենք պետք է խանդավառությամբ հետամուտ լինենք այս պարգևի մեջ աճելուն: Իմ նպատակն է ցանկացած հավատացյալի ուղղորդել և քաջալերել Հոր հետ հաղորդակցման զանազան ուղները բացահայտելու: Նաև ցանկանում եմ յուրաքանչյուր հավատացյալի սպառազինել, որպեսզի ավելի ինքնավստահ և հստակ մարգարեանա նամանավանդ այս վշտացած աշխարհում լույս և հույս սփռելու նպատակով:

Հաճախ, երբ մտածում ենք Աստծո մեզ հետ խոսելու մասին, պատկերացնում ենք հուզիչ պահեր, ինչպիսիք են հստակ տեսիլքներ կամ հրեշտակային այցելություններ, սակայն Աստված մեզ հետ տարբեր եղանակներով է խոսում, և երբեմն դրանցից որոշներն ուղղակի անտեսում ենք: Ես ցանկանում եմ ձեզ հետ կիսվել մի քանի օրինակով, որոնցով Աստված ինձ հետ խոսել է: Կարող եք ինքներդ պարզել, թե երբևէ դրանցից որևէ մեկով ձեզ հետ խոսել է, թե ոչ: Եթե դեռ ոչ, ապա հիշեք, որ չի բացառվում հետո խոսի:

Բառեր կամ աստվածաշնչյան համարներ, որ հանկարծակի «կհայտնվեն» ձեր մտքում

Մի տարի մեր եկեղեցուց աղոթքախումբ էի տարել Լոս Անջելոս: Երկու հարյուր մարդկանց հետ միասին երեք իրանական հարանվանությունների համար համաժողով էիք անց կացնում: Մեր թիմից մի փոքրամարմին կին ամբոխի միջից մի երիտասարդի կանչեց: Նա առաջին անգամ էր նման աղոթքի ծառայության մասնակցում նման պայմաններում և այդ երիտասարդին ասաց .

-Մտքիս *Բիթլզ* բառն է շարունակ գալիս:

Բի՞թլզ: Հետաքրքրվեցինք մենք: Նայեցինք կնոջը, նայեցինք երիտասարդին: Միթե դա մարգարեական խոսք է: Սակայն երիտասարդը գլուխը կախեց և նրա աչքերից սկսեցին արտասուքներ գլորվել: Պարզվում է դպրոցում բոլորը նրան ծաղրում էին, քանի որ եկեղեցու փառաբանության խմբի մեջ բաս կիթառ է նվագում: Երբ նրանց հետ ինչ որ բանի չէր կարողանում մասնակցել եկեղեցու նվագախմբի հետ ունեցած փորձերի պատճառով նրան ծաղրում և ասում էին.

-Հա բա, Բիթլզի հետ փորձի ես:

Նրա համար այնքան կարևոր էր իմանալ, որ Աստված տեսնում է, թե նա ինչի միջով է անցնում: Կարծես լոկ մի բառով նա մի ամբողջ ուղերձ ստացավ Աստծուց. «Ես տեսնում եմ քո տառապանքն ու հանուն ինձ արած զոհաբերությունը»:

Մեր մտքում հանկարծակի հայտնված բառերը կարող են հաճախ շատ պարզ բաներ լինել: Երբ խնդրում ենք, որ Աստված խոսի, վստահում ենք, որ մեր գլխում ծագած առաջին իսկ միտքը նրանից կլինի: Երբեմն այն մեր մտածածից շատ ավելի հատկանշական կարող է լինել:

Մյուս կողմից այդ բառով ձկնորսության մի գնացեք, «ես Ֆրեդ անունն են տեսնում: Ֆրեդ անունով եղբայր ունեք: Ո՞չ: Իսկ զարմիկ: Իսկ երբևէ Ֆրեդ անունով *ինչ որ մեկին* հանդիպե՞լ եք»: Ճիշտ է հիմա կատակում եմ, բայց բանն այն է, որ եթե խոսքն Աստծուց լինի, Նա անպայման կհստակեցնի: Եթե բառ եք ստացել, սակայն նպատակն անհասկանալի է թվում, պարզպես առաջ անցեք: Գուցե աղոթելու ընթացքում կամ մի քանի րոպե անց դրա նշանակությունն ակնհայտ կդառնա:

Պատկերներ, որ հակարծակի «կհայտնվեն» մեր մտքում

Հաճախ Աստծո հուշումները կարող են մեր մտքում արագ առկայծող պատկերի պես հայտնվել, որի մասին անգամ չէինք ակնկալում մտածել: Երբ մարդկանց ուսուցանում եմ այս մասին, հորդորում եմ աղոթել մտքի մաքրության համար, խնդրել, որ Աստված խոսի և վստահել առաջին իսկ եկած գաղափարին: Հաճախ այն կարող է երևակայությանդ մեջ ծագած արագ պատկերի կամ գաղափարի նմանել: Մեզ համար հեշտ է այդ պատկերներն անտեսելը, սակայն հիշեք, որ Աստված անսահման ստեղծագործ է և մարդկանց հետ հաղորդակցվելու Իր ուրույն եղանակներն ունի:

Տարիներ առաջ Ավրորայում մեր եկեղեցի երեք քույրեր եկան: Նրանցից մեկը ստամոքի քաղծկեղ ուներ: Նա ոչ կանոնավոր եկեղեցի հաճախող քրիստոնյա էր, ով լսել էր Ավրորայի Վայնյարդ եկեղեցում մարդկանց բժշկությունների մասին և եկել էր իր հետ բերելով նաև իր քույրերին: Նրանցից մեկը Քրիստոսի հետևորդ էր, մյուսը՝ ոչ: Նրա քրիստոնյա քույրը բավականին կասկածամտորեն էր վերաբերվում Սուրբ Հոգու գործունեությանն ու բժշկություններին և մտահոգված էր, որ իր հիվանդ քույրը մեր եկեղեցի գալով մեծ սխալ էր գործում:

Սակայն քաղծկեղով հիվանդ քույրը նրանց աղաչել էր իր հետ գալ և եկել էին քրոջը զորավիգ լինելու, ինչպես նաև հավաստիանալու, որ չափազանց տարօրինակ ոչինչ չի պատահի նրան:

Երբ աղոթեցինք հիվանդ քրոջ համար, նա ստամոքսում ուժեղ էլեկտրականություն զգաց և ի վերջո քաղցկեղից լիովին բժշկվեց: Մինչ Աստված ակնհայտ կերպով հպվել էր նրան, մենք անհավատ քրոջն առաջարկեցինք աղոթել: Նա ասաց.

-Խնդրեմ, բայց ես քրիստոնյա չեմ:

Երբ սկսեցինք նրա համար աղոթել մեջքով սկսեց ավելի ու ավելի ետ գնալ: Նրա աչքերն այդ ողջ ընթացքում բաց էին և հետո ողջ մարմնով սկսեց ցնցվել: Նա շարունակում էր մեջքի վրա ետ գնալ, մինչև այն պահը, որ մեզ թվաց, շուտով երկու մասի կբաժանվի: Հետո վկայեց, որ ամբողջ մարմնով էլեկտրական հոսանք էր անցնում:

Նրան նայելով անհանգստացա և հարցրեցի.

- Ինչ որ տեղ ցա՞վ եք զգում:

-Ոչ, հիանալի եմ զգում,-ասաց նա:

-Իսկապե՞ս: Վստա՞հ եք,-հարցրեցի ես:

-Օհ, այո,- ասաց նա, -հիասքանչ եմ զգում:

Նրա դիրքն այնքան տարօրինակ էր, որ հարցրեցի.

- Կցանկանք նստել կամ գուցե պառկել:

-Ոչ, ոչ խնդրում եմ ինձ ցած չհրեք,- պատասխանեց նա:

-Ձեզ ցած չեմ հրի,- ասացի ես,-պարզապես ուզում եմ հավաստիանալ, որ ամեն բան կարգին է:

-Օհ, շատ հարմար է այսպես, ուղղակի հիասքանչ,-ասաց նա,-միայն մի խնդիր կա, որ ես այս ամենին չեմ հավատում:

Ես նրան ասացի.

-Սակայն ակնհայտ է, որ այս իրավիճակում դա ամենևին էլ խնդիր չէ:

Ծառայության վերջում այդ անհավատ քույրն իր կյանքը հանձնեց Քրիստոսին որպես արդյունք: Երկրորդ քույրը՝ քրիստոնյան, ով բացարձակ կասկածամտորեն էր վերաբերվում բժշկությանը, նախկինում լսել էր Վայնյարդի և նրա շուրջ ծավալված տարօրինակ ասեկոսեների մասին, ուստի եկել էր հավաստիանալու, որ իր քույրը որևէ անառողջ ուղղության մեջ չի խորանա: Մենք նրա համար ևս աղոթեցինք և մի քանի մարգարեական խոսք փոխանցեցինք: Նա հաստատեց այդ խոսքերի ճշմարտացիությունը, բայց որևէ կերպ չփոխեց իր վերաբերմունքը: Նրա դեմքին խիստ սառը արտահայտություն էր դրոշմված:

Մեր աղոթքախմբից մի կին Դեբբի անունով նրան ասաց.

-Բուխարու վերին ելուստ եմ տեսնում, որի վրա «Jack-in-the-box» խաղալիք է դրված: Դուք գնում վերցնում եք խաղալիքն ու անդադար դրանով խաղում:

Այդ պահին նայեցի Դեբբիին հուսալով, որ ավելի խորիմաստ ու հոգևոր բան կունենա շարունակելու: Բայց նա ասաց, որ միայն այդ պատկերն է ստացել, ուստի ես սկսեցի եռանդուն աղոթել, որ Աստված մեկնաբանություն կամ խոսք տա, որ մեզ արդարացնի այդ կնոջ առջև, ով առանց այդ էլ մեր մասին տարօրինակ կարծիք ուներ:

Այս մտորումների մեջ մի հայացք նետեցի նրան ու տեսա, որ աչքերից արցունքներ են հորդում: Ցնցված հարցրեցի.

- Ձեզ Ի՞նչ որ բան են ասում այդ խոսքերը:

Նա կիսվեց ասելով.

-Երբ փոքր աղջիկ էի ծնողներս ահավոր կռվում էին: Նրանք տարբեր բաներ էին իրար վրա շպրտում երբեմն անգամ դանակներ: Փորձում էին մեկը մյուսին վնասել, հարվածել: Այնքան էր սրվում վիճակը, որ միակ խաղաղություն գնելու ճանապարհը դրկից հարևանի տուն գնալն էր: Նրանց բուխարու վերին ելուստին «Jack-in-the-box» խաղալիքն էր դրված: Վերցնում էի և կրկին ու կրին խաղում, որպեսզի ինձ ապահով զգամ:- Հայացքը գետնին գցելով ասաց,-կարծում եմ Աստված ինձ ասում է, որ սա ապահով վայր է: Այո, այստեղ ապահով է:

Տվյալ պահին ոչ որևէ խոսք և ոչ էլ որևէ համար չէր կարող նրա վրա ավելի մեծ ազդեցություն ունենալ, քան այդ պատկերը: Հրաշալի խոսքեր էին և այս պատմությունը տարիներով պատմել եմ: Երբեմն Աստծո տված պատկերը մեզ համար իմաստ չի արտահայտում: Տիրոջից լուսաբանում և հստակեցում խնդրելու և ինքնուրույն բացատրություն փնտրելու միջև թեթև նշմարվող գայթակղություն կա: Մենք Աստծուն մոտենում ենք վստահելով, որ կխոսի: Երբ որևէ խոսք կամ պատկեր ենք ստանում աղոթում ենք, որ մեկնաբանություն ստանանք կամ հարցնում, թե արդյոք էլի բան կա, որ Աստված ուզում է հայտնել, սակայն երբեմն մեր ստացածը վերջնական է և Նա այլևս ոչինչ չի ասում:

Մենք պետք է խոսենք միայն այն, ինչ կարծում ենք, որ Աստված է ցույց տալիս, ստացածին իմաստ հաղորդելը կամ խոսքն ավարտին հասցնելը մեր գործը չէ: Մենք չպետք է փորձենք հոգևորացնել կամ դրա շուրջը ճոխ աղոթքներ արտասանել: Այն իրականում կարող է անհատի համար պատգամի ուժը թուլացնել, որովհետև այն, ինչպես որ կա, Աստծո անմիջական հաղորդակցությունն է նրա հետ: Մենք պարզապես պետք է պատմենք մեր տեսածը:

Երազներ
Երբ մարդիկ ինձ ասում են, «Իմ սիրելի անձնավորություններից մեկը Տիրոջը չի ճանաչում» իմ աղոթքներից մեկը հետևյալն է. «Աստված իմ, գրավիր այդ մարդու երազների տիրույթը: Քեզ հայտնի դարձրու, խոսիր նրա հետ և հստակություն սփռիր: Գիշերները հրեշտակային այցելություն պարգևիր»: Բազմիցս Աստված ինձ հետ երազների և հրեշտակային այցելությունների միջոցով է խոսել:

Շատ մարդկանց, ում կողակիցը քրիստոնյա չէ խորհուրդ եմ տվել նրանց բարձերի վրա աղոթել: Եվ պատմություն պատմության հետևից լսել եմ, թե ինչպես է Աստված գործել և նրանց կողակիցներին այնպիսի երազներ տվել, որոնք անհնար էր անուշադրության մատնել:

Հոգին կրող վկայություն

Հոգին հաճախ վկայում է, որ տվյալ մարդու ասածն Աստծուց է: Այն մեր սրտում տեղ գտած մտքի կամ գաղափարի նման է: Նման բան կարող է պատահել, երբ լուռ նստած ենք, կամ էլ մեր շուրջը կատարվող իրադարձությունների միջոցով: Երեմիա 18 –րդ գլխում մարգարեն խոսում է մի բրուտի մասին, ով կավին ամանի ձև էր տալիս: Հանկարծ Տիրոջ խոսքը եկավ նրա վրա և Աստված ուղիղ նրա հետ Իսրայելի ապագայի մասին խոսեց:

Հոգու այս վկայությունը կարող ենք ստանալ անգամ ֆիլմ դիտելիս, գիրք կարդալիս կամ ինչ որ խոսակցություն լսելիս: Հաճախ նման դեպքերում մեզ թվում է, որ ինչ որ բան ընդգծվեց կամ խոշորացավ մեր աչքերի առջև: Այն կարող է պատահել նաև ֆիզիկական իրավիճակներում՝ բնության գրկում կամ խցանման մեջ կանգնած:

Աստված միշտ խոսում է: Երբեմն ինչ որ բան լսում ես և սրտումդ գիտես *այո, սա Աստծուց է:* Այն ինչ Հիսուսն ասաց կնոջը ջրհորի մոտ ուղղակի պարզ հայտնություն էր: Ասվածը նրա համար նորություն չէր: Նրան ճանաչող ցանկացած մարդ կարող էր այդ նույնն ասել: Ոչ թե նրա մասին տեղեկությունն էր կարևոր, այլ Աստծո խոսքը, որ սիրտի մեջ թափանցելով նրա կյանքում պտուղներ բերեց: Այդ կինը Հիսուսին որպես մարգարե ճանաչեց և հասկացավ, որ Աստված խորապես իրեն ճանաչում և հետևում է: Հետագայում բոլորին ասում էր. « ...ինձ ասաց այն բոլորը, ինչ ես արել էի»

(ՅՀ 4:39):

Հավատացած եմ, որ այդ պահին Հիսուսը մեզ ցույց տվեց Սուրբ Հոգու հետ համագործակցության մի լավ օրինակ: Հնարավոր է մի բախտագուշակ ասի, թե որն է

վարորդական իրավունքիդ համարը կամ թե ինչ ես կերել ընթրիքին, բայց միևնույնն է այդ տեղեկատվությունը քո կյանքը չի փոխի: Թշնամին գալիս է գողանալու կողոպտելու և ավերելու, իսկ Հոգին գալիս է կյանք տալու: Աստծուց ստացած խոսքը կարող է այնքան պարզ լինել ինչպես. «Աստված սիրում է քեզ»: Եթե այն Հոգուց է, ապա պտուղ կբերի: Մենք քայլ ենք անում Աստված հաստատում է, իսկ Հոգին վկայում:

Ֆիզիկական զգացողություն կամ «կարեկից ցավեր»

Ռենդի Քլարքն ու իր ծառայությունն ինձ վրա հսկայական ազդեցություն են թողել: Ռենդին միշտ ասում է. «ուշադրություն դարձրեք ձեր մարմնին»: Շատ անգամ երբ մարդկանց համար աղոթում ենք հնարավոր է այսպես կոչված «կարեկից ցավեր» զգանք: Այն կարելի է բնորոշել, որպես ժամանակավոր ցավի կամ անհարմարության զգացման մարգարեական դրսևորում, որի միջով տվյալ պահին անցնում է այն մարդն ում համար աղոթում եք և որը բժշկության կարիք ունի:

Ամեն անգամ երբ «կարեկից ցավ» եմ զգում, հավատացած եմ, որ Աստված այն դրսևորելով ցանկանում է բժշկել: Մի պահ կանգ եմ առնում և հարցնում այդ մարդուն, թե արդյոք կարող եմ աղոթել իմ զգացածի համար: Երբեմն երբ կանգնած եմ մեծ լսարանի առջև տարաբնույթ ցավեր եմ զգում և կիսվում բոլորի հետ և առաջ հրավիրում նրանց, ովքեր այդ պահին տառապում են նման ցավերից:

Մարդկանց համար աղոթելու խորհուրդներ

Երբ աղոթում եք անծանոթների համար, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մարդիկ դրանից զարմանում կամ բացարձակ խառնվում են իրար: Հիմնականում ես նման կերպ եմ մոտենում ասելով. «Աստված այստեղ է, և ուզում է քեզ օրհնել: Ես պատրաստվում եմ աղոթել և դու կզգաս նրա ներկայությունն ու փորձառաբար կճաշակես: Նա նաև խոսքեր կտա քեզ համար կամ կքաջալերի»:

Եթե անգամ մարդիկ Աստծուն չեն հավատում, ամեն դեպքում կիմանան թե ինչ եք պատրաստվում անել: Ճշտեք նրանց կարգավիճակն այդ պահին և օգնեք այդ իրավիճակում հնարավորինս անկաշկանդ և բնական զգալ: Եթե ինչ որ բան տարօրինակ թվա, ընդունեք այն ասելով.»Մի փոքր տարօրինակ է թվում, չէ՞»: Հարցրեք, թե ինչ են զգում: Սիրալիր եղեք և մատչելի: Մնացեք ինչպիսին կաք, զգայուն եղեք, սակայն խոսեք համարձակությամբ :

Մարդկանց կյանքում հռչակեք Աստծո լավագույն ցանկությունները

Կապ չունի, թե որքան կոտրված և խոցված է թվում մարդը: Աստված այս երկրի վրա բնակվող ցանկացած մարդու Իր պատկերի նմանությամբ է ստեղծել, ուստի ցանկացած մարդու, որ կհանդիպեք յուրահատուկ կերպով ինչ որ բան կարտահայտի Նրա մասին: Նրաց մեջ թաքնված գանձեր կան:

Եթե փողոցում հարբեցողների կամ մարմնավաճառների հետ եմ խոսում, Հորը հարցնում եմ. «Ի՞նչ կա Քո սրտում այս մարդկանց համար»: Հաճախ ծառայության գնացողներին

ասում եմ. «Ոսկի փնտրեք, ոչ թե կեղտ»: Մի փորձեք մեղքերն ու ձախողումները ջրի երես հանող բառեր ասել:

Ես կարող եմ մարգարեական շնորհով նրանց մեջ եղած կեղտը բացահայտել, սակայն դրանով անհատի կյանքը դեպի լավը չեմ տանի, ընդհամենն իրեն բացահայտված կզգա: Ոչ մի ոսկու հանքատեր չի ասի. «Նայեք, թե որքան կեղտ եմ գտել»: Այլ ցույց կտա գրպանում հավաքած ոսկու բնակտորները: Միշտ պաշտպանեք մարդկային արժանապատվությունը:

Պատասխանատվությունը ոչ թե Աստծո, այլ ձեզ վրա վերցրեք

Անկախ նրանից, թե որքան հստակ եմ Աստծո ձայնը լսում, կամ թե որքան ուժեղ եմ զգում, որ իմ ստացածը Նրանից է, միևնույնն է միշտ ողջ պատասխանատվությունն ինձ վրա եմ վերցնում: Նման արտահայտություններ եմ գործածում ինչպիսիք են. «Կարծում եմ Աստված ասում է...Զգում եմ, որ Աստված ինձ ցույց է տալիս...Զգում եմ, որ Աստված քեզ ասում է... Տեսնում եմ...Լսում եմ...»:

Մենք ուզում ենք ամեն ինչ սուբյեկտիվ լինի, քանի որ այդպիսի վերաբերմունքը մարդկանց համար ապահով միջավայր է ստեղծում: Ցանկացած մարգարեական խոսք կարող է քննադատության առարկա դառնալ: Անկախ նրանից, թե տվյալ անձը հավատացյալ է, թե ոչ, նա ինքը պետք է դատի ստացած մարգարեական Խոսքի Աստծուց լինել կամ չլինելը:

Որոշ քրիստոնեական շրջանակներ որդեգրել են մարգարեանալու Հին Կտակարանյան ոճը.՛՛ Արդ այսպես է ասում Տերը...՛՛ : Եթե մի բան Աստծուց է, անկախ մեր ձևակերպման եղանակից այն զորություն է ունենում և Նրա Հոգին հաստատում է:

Հստակեցումը երբեմն գործընթաց է

Մենք ցանկանում ենք, որ մարգարեությունը բաց գործընթաց լինի մատչելի հետադարձ կապով, մինչդեռ պետք է տեղյակ լինենք, որ երբեմն ժամանակ է անհրաժեշտ ստացած խոսքը հստակեցվի: Երբ զգում եք, որ Աստծուց առաջնորդություն ունեք ինչ որ խոսքի շուրջ, փոքր ինչ առաջ ընթացեք անգամ եթե այն սխալ կամ անորոշ է թվում: Այստեղ պետք է հավասարակշռությունը պաշտպանել: Պատրաստ եղեք ընդունելու, որ գուցե լիովին սխալված լինեք, սակայն միևնույն ժամանակ վստահ եղեք, որ Աստված է խոսում և այն ինչ զգում եք կարող է Նրանից լինել:

Մի անգամ Ֆրանսիայից մի կնոջ համար աղոթում էի, և հարցրեցի, թե արդյոք քույր ունի: Նա ասաց այո և ես ասացի, որ զգում եմ, որ նրա քույրը տառապում է դեպրեսիայից և նրան անգամ ինքնասպանության մտքեր են տանջում:

Այդ կինն ասաց.

-Ոչ, ամենևին բնորոշ չի իմ քրոջը:

Նրանից թույլատվություն հարցնելով ասացի.

-Թույլ տուր ասեմ, թե ինչ եմ տեսնում: Եվ արձագանքեք եթե որևէ կապ գտնեք: Սկսեցի ավելի մանրամասն նկարագրել իրավիճակն ու դրա ետևում թաքնված հանգամանքները: Հանկարծ նա հասկացավ, որ իմ ամբողջ ասածը ճշգրտությամբ նրա եղբորն էր վերաբերվում: Այն բռնությունները, որոնց մասին ստացել էի կարծել էի, որ բնորոշ են կնոջը: Երբ այդ կինն ըմբռնեց Աստծո խոսքի իմաստը, նրանց ողջ ընտանիքը հույզերի ոլորտում մեծ բժշկություն ստացավ:

Հանդարտվե՛ք

Խրախուսում եմ շփոթության չմատնվել: Եթե ձեր ասածն իմաստ չի արտահայտում ինչ որ մեկի համար, պարզապես հենվեք այդ խոսքի վրա և լսեք: Հանդարտվեք, վստահ եղեք, որ Աստված ներկա է և խոսում է, փորձեք ավելի ամբողջական պատկեր ստանալ: Եթե այլևս ոչինչ չեք ստանում, հանգիստ եղեք և շարունակեք: Հնարավոր է, երբ շարունակեք աղոթել հանկարծ նախնական ձեր ստացած պատկերի համար հստակ մեկնաբանություն ստանաք: Կամ գուցե Աստված մեկ այլ պատկերի կամ թիմից մեկ այլ մարդու օգնությամբ մեկնաբանություն տա:

Նաև պետք է գիտակցել, որ մենք կատարյալ չենք: Խնդիր չկա դրա մեջ: Աստված միևնույնն է կամենում է մեզ գործածել: Կարողացեք վայելել արկածը: Մենք պարզապես կանչված ենք մարդկանց սիրելու: Անկախ նրանից թե մարգարեական խոսքով ենք կիսվում, թե ուղղակի ինչ որ մեկին բարի օր ենք մաղթում, բոլորս կանչված ենք Աստծո սիրո մեջ մնալու և թույլ տալու, որ Նրա սերը մնա մեր մեջ: Շարունակեք կարևորը կարևորել:

Մարդկանց հանդեպ շնորհ ցուցաբերեք

Հնարավոր է ինչ որ մեկի համար աղոթելիս Աստված ձեզ մի խնդիր ցույց տա, որից ցանկանում է այդ մարդուն ազատագրել: Նա մարդիկ է փնտրում, ովքեր ի վիճակի կլինեն նման բառերը կարեկցանքով և սիրով փոխանցելու:

Երբ Հիսուսը հանդիպեց շնության մեջ բռնված կնոջը, Նա իր գործողություններով նրան ամոթանք կամ խայտառակություն չբերեց:

Երբ Աստված ինձ տարբեր կախվածությունների պատկերներ է տալիս ինչպիսիք են արբեցողություն, պոռնոգրաֆիա, շնություն և այլ նմանատիպ բաներ, երբեք դրանից չեմ սկսում: Երբ լսում եմ Աստծո քաջալերանքն ու ճշմարիտ ինքնություն վերագտնելու կանչը հնարավոր է այդ մարդուն ասեմ. «Տեսնում եմ, որ մեծ պայքարի մեջ ես: Հիսուսն ուզում է օգնել և խրախուսել քեզ հաղթելու այս մարտում»: Լինում են դեպքեր երբ անգամ բացահայտ չեմ հիշատակում խնդրի մասին: Ես միայն *մեղք* բառն արտաբերում եմ այն ժամանակ, երբ մարդուն առաջնորդում եմ մեղավորի աղոթք անելու: Երբ Սուրբ Հոգին ցույց է տալիս այդ խնդիրը, գիտեմ, որ Նա արդեն այդ մարդուն հանդիմանել է դրա մեջ: Սուրբ Հոգին նրան զգայուն է դարձրել տվյալ հարցի շուրջ և թերևս այդ անձն արդեն թշնամու մեղադրանքների և դատապարտության հետ պայքարի մեջ է:

Միակ մարդիկ, ում հետ Հիսուսը երբևէ խոսեց դժոխքի մասին, կրոնական առաջնորդներն էին: Նա որպես բարեխոս եկավ բոլոր նրանց համար, ովքեր անպիտան և ամոթահար էին զգում, և այդ իրականությունը ճեղքելու զորություն բերեց: Մենք նրա խոսքը մեկնաբանելով ասում ենք. «Գնա

և այլևս մեղք մի գործիր», որը կարծես նշանակում է. «Այլևս երբեք դա չանես»: Սակայն հավատացած եմ, որ Նրա ասածն ավելի շատ ազատագրության հոչակման էր նման: Կարծում եմ ավելի շատ այսպես էր հնչում. «Դու այլևս այդ մեղքի զորության տակ չես, ազատ ես այստեղից գնալու և երբեք այդ մեղքի կապանքով չբռնվելու»: Արքայության Բարի Լուրն այն է, որ մենք մեղքի գերությունից և նրա զորությունից ազատագրված ենք:

Զորավոր սեր

Կարևոր է հասկանալ, որ անկախ նրանից թե ինչ եք անում կամ ինչ եք ասում, թե որքան ճշգրիտ մարգարեական խոսքեր եք ստանում, կամ տեսնում, թե ինչպես են կարճ ոտքերը աճում և կույրերը տեսնում, ամենազորավոր ծառայությունը, որ կարող եք անել Աստծո սերը մարդկանց մատուցելն է:

Եղել են դեպքեր, որ մարդկանց բյուրեղյա ճշգրտության խոսքեր եմ ասել և նրանց սրտերը տակավին չեն շարժվել: Դրա օրինակ է, երբ պատմեցի Պուերտո Ռիկկոյում մարմնավաճառների համար աղոթելու դիպվածը: Իմ ասած բառերի ճշգրտությունը նրանց ամենևին չէր շարժում, սակայն երբ խնդրեցի աչքերիս մեջ նայել և ասացի. «Հիսուսն իրոք սիրում է քեզ, հենց այդտեղ էլ եղավ իրական ճեղքումը: Այդ ժամանակ եկեղեցուց բոլոր ինձ հետ եղողներն էլ սկսեցին արտասվել: Այդ պահին Աստծո սիրո այցելությունն զգացինք:

Աստված սեր է և ուստի ուզում ենք մեր կատարած ամեն մի գործով դրսևորենք և փառաբանենք Նրա սերը: Աշխարհը անհագ ծարավով սպասում է լսել, որ Հիսուսը սիրում է և մարդիկ, մինչև քո ասելը, անգամ չգիտեն էլ, թե որքան մեծ է այդ խոսքերը լսելու նրանց փափագը:

Աստված հայտնի է դարձնում, որ բժշկի

Շատ հաճախ որևէ դեպքի, խնդրի կամ հիվանդության մասին հայտնություն ստանալու նպատակը օրհնել կամ բժշկելն է: Խնդրի մասին սոսկ մի հիշատակեք, այլ միշտ Աստծուն հարցրեք.»Տե՛ր, ո՞րն է Քո ցանկությունը: Ի՞նչ ես կամենում անել այս իրավիճակում»: Եթե բազմաթիվ ընտանեկան խնդիրներ եք տեսնում, ուրեմն Աստված պատրաստվում է այդ ընտանիքում հաշտեցում, մխիթարություն և վերականգնում բերել:

Լսեք, թե Աստված որտեղ է այդ մարդուն կանչում, այլ ոչ թե որտեղ է այդ պահին մարդը գտնվում: Խոսքերը զորավոր են և գուցե ձեր դերը Աստծո կամքի համեմատ օրհնություն հռչակելը լինի: Հակոբոս 4 :7-ն այսպես է ասում՝՝ ...դիմադրեցէ՛ք Սատանային, ու նա կը փախչի ձեզանից՝՝ :
Կյանքի դժվարին բնագավառների համար աղոթելիս մենք հաճախ մարդկանց համար որպես բարեխոս ենք կանգնում հակառակելով թշնամու մտադրություններին և նրանց վրա հռչակելով Աստծո սերն ու բարությունը :

Հայտնություն, մեկնություն, կիրառություն

Երբ պատկեր կամ խոսք ենք ստանում միշտ հարցնում ենք. «Աստված իմ, ի՞նչ է սա նշանակում: Ի՞նչ ես կամենում սրա միջոցով մեզ փոխանցել»: Մեր բոլոր գործերի մեջ հայտնություն և մեկնություն ենք խնդրում և երբեմն անգամ դրանց կիրառությունն ենք ստանում:

Կամ գուցե մենք այս երեք բաղադրիչներից միայն մեկն ստանանք իսկ մյուսը մասը ստանա նա ում համար աղոթում ենք: Երեք բաղադրիչներն էլ միասին են գործում, սակայն նրանց համադրությունը պարզելը ժամանակ է պահանջում: Օրինակ մի անգամ, երբ դեռ երիտասարդական ծառայության հովիվ էի, երազումս հաստ մորթե վերարկուով ծածկված հսկայական արջ տեսա: Եկեղեցում կիսվեցի և ասացի, որ հավատացած եմ շատ ցուրտ ձմեռ է սպասվում, ուստի պետք է նախապատրաստվենք: Սակայն այդ ձմեռը սովորականից տաք դուրս եկավ, մինչդեռ Ուոլլ Սթրիթում «Արջի շուկա» եղավ: Հայտնությունը ճիշտ էր, բայց մեկնությունն ու կիրառությունը բացակայում էին:

Երբեմն անգամ կարող ենք շատ ուժեղ զգացողություն ունենալ կիրառության մասին: Իհարկե չենք ցանկանում, որ մեր աղոթքները վերածվեն խորհրդատվական ծառայության, այլ ծառայենք մարդկանց փոխարեն Աստծո ձայնը լսելով: Բայց երբեմն, եթե ուժգին կերպով զգում ենք, որ կիրառության մասին խոսք ունենք պարզապես կարող ենք առաջարկել:

Ավելի շատ շնորհ քան հասկանում ես

Հիմնվեք աղոթքի պարզության վրա: Հնարավոր է շփոթության մեջ հայտնվեք, մտածելով. *հիմա սա հայտնություն է թե մեկնություն:*

Հիշեք, որ ուղղակի աղոթք է և մի բարդացրեք: Եթե ոչինչ էլ չստանաք, դուք պարզապես սիրում եք մարդկանց նրանց համար աղոթելով և սիրում եք Աստծուն Նրան հնազանդվելով: Ահա կարևոր մասը, որ երբեք չի փոխվում:

Բանն այն է, որ աշխարհում մարդկանց համար աղոթելով ավելի մեծ շնորհի ես հանդիպում, քան եկեղեցում: Փողոցում գուցե ջանք չխնայես աղոթելով, որ Աստծո ձայնը լսես կամ ակնթարթային բժշկությունների ականատես լինես, սակայն մարդիկ ուրախ են միայն նրա համար, որ դու փորձեցիր: Եկեղեցու ներսում շատ ավելի մեծ է մեկը մյուսին դատելու և վեճի բռնելու հավանականությունը: Երբ եկեղեցում աղոթում ես մարդկանց բժշկության համար և ոչինչ տեղի չի ունենում, նրանք կարող են հուսալքվել և Աստծո վրա բարկանալ: Սակայն երբեք չեմ տեսել ոչ քրիստոնյա մեկին, որ ասի. «Վերջ, այժմ ես գիտեմ, որ Աստված չկա»:

Աշխարհում մարդկանց սրտերը շարժվում է միայն այն բանից, որ կանգ առար, լսեցիր նրանց, ուշադրության արժանացիրի և փորձեցիր քաջալերական խոսք փոխանցել: Մարդկանց համար սովորաբար խրախուսական է քո հոգատարությունը, որի միջոցով կարողանում ես Աստծո սերը դրսևորել:

Քննեք ձեր լսածը

Մարգարեական ծառայությունը ձուկ ուտելու պես բան է, կարող եք համտեսել միսն ու դեն նետել ոսկորները: 1Թես.5:19-22-ը մեզ ասում է. «Մի՛ հանգցրէք Հոգին, մի՛ արհամարհէք մարգարէութիւնները, փորձեցէ՛ք ամէն ինչ, բարին ամո՛ւր պահեցէք, հեռո՛ւ մնացէք բոլոր չար բաներից»: Եթե մի բան Աստծուց է, ապա Նրա Հոգին հաստատում և

կատարում է: Եկեղեցու շրջանակներում իրականացվող ծառայության ժամանակ, որտեղ պարբերաբար մարգարեական խոսք են ստանում կարելի է որոշ պարամետրեր կարգել առողջ սահմանները պահպանելու համար: Երբ փողոցում ծառայելիս մարգարեական խոսք ենք ստանում, ուզում ենք վստահ լինել, որ մարդկանց հնարավորություն ենք տվել կա՛մ հաստատելու կա՛մ ժխտելու այն: Նրանք երբեք չպետք է ինչ որ կերպ մանիպուլացիա կամ ճնշում զգան մեր կողմից:

Մարդիկ, ովքեր նախկինում Աստծուց խոսք ստանալու փորձառություն չեն ունեցել, հնարավոր է չիմանան ինչպես միանգամից արձագանքել: Փորձից կարող եմ ասել, որ լինում են մարդիկ, ովքեր վստահ չեն թե արդյոք այդ խոսքն իրենց որևէ կերպ առնչվում է թե ոչ, սակայն կողքից ընկերը կամ ընկերուհին ժպտալով հուշում են «Հենց այն է, ինչի միջով անցնում ես հիմա»: Ամեն դեպքում ես խոսքը ներկայացնում եմ նրան, ում համար աղոթում եմ և եթե նախնական բառերը հստակ չեն, թերևս լավ առիթ է ստեղծվում աղոթքը շարունակելու և ավելի ամբողջական պատկեր ստանալու: Եվ երբ ավելի շատ մանրամասներ ենք ստանում հանկարծ խոսքն սկսում է իմաստ ստանալ:

Մենք ցանկանում ենք, որ մարդկանց համար աղոթելն ու Աստծուց խոսք ստանալու փորձառությունը հնարավորինս մատչելի լինի: Եթե հանկարծ զգում ենք, որ նրանք տարօրինակ են նայում, կարելի է ուղղակի դադարեցնել և հարցնել. «Արդյոք իմ աղոթքով ձեզ որևէ անհարմարություն եմ պատճառում»:

Ենթադրություններ անելու փոխարեն հարցեր տվեք և մարդկանց հնարավորություն ընձեռնեք այդ գործընթացի մաս կազմելու և իրենց հունով ընթանալու: Սա սիրո դրսևորման ձև է և օգնում է թեթևացնել նրանց այդ պահին ունեցած որոշ վախերը:

Մարգարեության պտուղները ինքնահաստատվող են: Անհրաժեշտ է խոսքի հետ զգուշությամբ վարվել և եթե այն Աստծուց է, ապա զուր տեղը չի վերադառնա: Այն միշտ պետք է համապատասխանի Աստվածաշնչին և իր մեջ կրի Հիսուս Քրիստոսի միջոցով Աստծո մեր հանդեպ ունեցած սիրո ուղղերձը:

Սակայն ի նկատի չունեմ, որ բոլոր «սուրբգրային» թվացող խոսքերն ինքնաբերաբար ճիշտ են: Անգամ Սատանան Աստվածաշնչից մեջբերում արեց Հիսուսի համար, սակայն հակառակ ոգու մեջ: Ինքներդ ձեզ հարցրեք, *Արդյո՞ք այս խոսքը համապատասխանում է Աստծո բարի բնավորությանը, սիրուն: Արդյոք այն ինձ/տվյալ անհատին ավելի է մոտեցնում Հիսուսին:* Աստված երբեք նսեմացնող, նվաստացնող, բիրտ կամ դաժան չի: Սատանան մեր ուղղությամբ դատապարտության, նախանձի, համեմատության և հպարտության կրակոտ նետեր է արձակում: Շարունակեք Աստծուց զանազանելու կարողություն խնդրել:

Աստծո Հոգին միշտ կհամաձայնի Իր անփոփոխ Խոսքի անփոփոխ ճշմարտության հետ: Սակայն ամեն ստացած խոսք չէ, որ կարող եք գտնել Աստվածաշնչում, Աստված յուրահատուկ ձևերով է խոսում մարդկանց կյանքի տարբեր իրավիճակների մասին: Բայց միշտ խոսքը համահունչ է Աստվածաշնչյան գրվածքին: Երբ սովորում ենք Սուրբ Գրքի միջոցով Աստծո ձայնը լսելուն, ապա ողջ օրվա ընթացքում Նրա ձայնի հանդեպ ունեցած մեր ընկալունակությունն ավելի է բարելավվում: Սատանայի խաբեություններից ու կեղծ

ուղերձներից պաշտպանվելու լավագույն միջոցը մեր սրտերը Աստվածաշնչի ամենօրյա ուսումնասիրությամբ մեջ հաստատելն է: Մենք չպետք է գործենք խաբեության վախից դրդված, մենք բարի Աստված ունենք, Ով իր զավակների հետ խոսում է: Աստվածաշնչի մեջ ամենուր տեսնում ենք, որ Աստծուն հաճեցնում էր Իր զավակների Իրենից ցուցումներ և առաջնորդություն խնդրելն ու հատկապես պատրաստակամ հնազանդություն ցուցաբերելը: Երբ Նրան խնդրում ենք խոսել, ապա պետք չէ վախենալ, որ փոխարենը կեղծ պատգամներ կստանանք:

Երբեմն Աստծուց ստացած բարի խոսքը սերմնացանի առակում նկարագրված սերմի պես է (տե՛ս Մաթ. 13:1-23):

121

Թշնամին անմիջապես կարող է թռչնի պես գալ այն գողանալու: Կամ երբեմն էլ մարդու սրտում եղած անցյալի վերքերը կարող են աճել ու փշերի նման խեղդել այն: Եթե վախեցած կամ վհատված եք, մեկ այլ հավատացյալի խնդրեք ձեզ օգնել պարզաբանելու կամ գուցե աղոթելու, որ զանազանեք այն, ինչ անհրաժեշտ է այդ խոսքի մասին իմանալ: Աստծո ցանկացած խոսք մեր կյանքում բարի պտուղ է տալիս (տե՛ս Ղուկ.6:43-45,1Պետ. 4:11):

Որոշ խոսքեր հետագա հաստատման կամ պարզաբանման կարիք են ունենում: Եթե տվյալ խոսքի մասին անվստահություն ունեք, մի կողմ դրեք և հավատացեք, որ եթե Տիրոջից է, Նա կհաստատի:

Երբ հավաստիանում եք, որ խոսքը Սուրբ Հոգուց է, կարող եք հավատքով այն ընդունել: Սուրբ Գրքում ասվում է, որ Մարիամն օրհնվեց, քանի որ հավատաց իր կյանքում Աստծո խոստմանն ու վստահեց Նրա բարությանը: Մենք ցանկանում ենք Աստծո խոսքն ընդունող և հավատարիմ ծառաներ լինել, և երբեք չերկնչել: Աստծուց ստացած խոսքերը երբեք չեն պարտադրում կամ իշխում, այլ սիրով դեպի Նրան են ուղղորդում:

122

7//Քանդել Սատանայի գործերը

Կյանքի փորձից գիտեմ, որ ինչքան շատ բան եմ անում Աստծո համար, այնքան հասկանում եմ, որ դրանից ավելին կարող էի անել:

Ջորջ Ուայթֆիլդ

Աստծո Որդու երկիր գալու պատճառը Աստծո շնորհը հռչակելն ու չարի գործերը քանդելն էր (տե՛ս 1 Հովհ.3): Ցանկանում եմ Հակիրճ խոսել Հիսուսի ծառայության երկու բնագավառների մասին, որոնցից մեկը այս գլխում է՝ բժշկությունը, մյուսը՝ ազատություն ճնշող ոգիներից, հաջորդ գլխում: Գիրքը սկսեցի մի մարդու մասին պատմությամբ, ում Աստված բաց սրտի վիրահատությունից առաջ հանկարծակի բժշկեց և ընթացքում նաև նոր թոք պարգևեց: Այդ ժամանակ ես բժշկության համար հավատք չունեի: Տեսականորեն հավատում էի, որ Աստված կարող է բժշկել, սակայն չէի հավատում որ

հենց այդ պահին Նա պատրաստվում էր բժշկել, առավել ևս իմ միջոցով: Երբ լսեցի, թե ինչ է պատահել այդ մարդուն իմ աղոթքից հետո, ես ամենշատը զարմացա: Այդ դեպքը երկու տասնամյակ առաջ է պատահել: Դրանից հետո տեսել եմ, թե ինչպես է կաղ ոտքը աճում, մարդիկ անվասայլակից կանգնում, ժամերի ընթացքում քաղցկեղը հեռանում, ուռուցքներն անհետանում և կույր տղամարդն առաջին անգամ տեսնում:

123

Տեսել եմ, թե ինչպես է Աստված երեխաներին գործածում նորահավատներին, թերահավատներին, հիվանդներին, անգամ նրանց, ովքեր վստահ չեն, որ հավատում են Աստծուն բժշկելու:

Աստված կամենում է բժշկել: Գիտեմ, որ շատերս ենք պայքարել այս հարցի շուրջ. «ես մարդկանց համար աղոթել եմ, սակայն նրանք չեն բժշկվել: Ուրեմն չպե՞տք է աղոթեմ բժշկության համար»: Ինքս հասկանում եմ, որովհետև հազարավոր և հազարավոր մարդկանց համար աղոթել եմ և տեսել, որ հազարավորներ չբժշկված հեռանում են: Այս հարցին ավելի մանրամասն կանդրադառնամ, քիչ ավելի ուշ այս գլխում և 11-րդ գլխում «Երկմտելը չի որակազրկում», սակայն թույլ տվեք այստեղ նշել, որ մենք արդյունքների վրա որևէ վերահսկողություն չունենք: Ինչպես ավելի վաղ նշել եմ, արդյունքները մեզ համար չեն: Շատ անգամ մարդկանց համար աղոթել եմ, որովհետև Աստված կամենում է բժշկել, բայց քանի որ անմիջապես ոչինչ չի կատարվել հեռացել եմ առանց արդյունքների մասին գաղափար ունենալու: Սակայն որոշ ժամանակ անց բժշկությունների և փոփոխությունների մասին հրաշալի վկայություններ եմ լսել, որոնք իմ աղոթքից ժամեր կամ օրեր ամց են պատահել:

Հիսուսն Իր աշակերտներին սովորեցրեց այսպես աղոթել. «քո թագաւորութի՛ւնը թող գայ. քո կա՛մքը թող լինի երկրի վրայ, ինչպէս որ երկնքում է» (Մաթ.6:10): Երկնքում ոչ հիվանդություն, ոչ կոտրվածություն և ոչ էլ ամոթ կա: Որտեղ Հիսուսը գնում և հռչակում էր երկնքի Արքայությունը, այնտեղ մարդիկ բժշկվում էին: Երբ հիվանդների համար աղոթում ենք, որ բժշկվեն, դրանով Երկնքի հետ համաձայնության ենք գալիս: Հիսուսը Հորից կախյալ կյանք ունեցողի կատարյալ օրինակ է, մինչդեռ երբեք չենք տեսնում, որ ինչ որ մեկին բժշկելիս Աստծո կամքը հարցնի: Նա միայն Աստծուն մի անգամ հարց ուղղեց, երբ խաչի վրա գամված էր: Այդ պահին հարցրեց, թե ինչու է Հայրն Իրեն թողել: Բայց եկեք նկատենք, որ Նա Հորը հարց ուղղեց միայն այն ժամանակ, երբ ամբողջովին Իր վրա էր վերցրել մեղքն ու դարձել մեզ նման: Ինչևէ երբ խոսքը վերաբերվում էր բժշկություններին հստակ երևում է, որ Հիսուսը գիտեր Հոր կամքը, և բուժում էր բոլոր խնդրողներին: Նա մեզ որպես մարդ իշխանությամբ քայլելու և Հոր կամքն իրագործելու օրինակը ցույց տվեց: Հիսուսն Իր աշակերտներին նույնպես սովորեցրեց այդ իշխանությամբ քայլել և որը նաև մեզ տվեց (տե՛ս Մաթ.28:18):

124

Եկեղեցում բժշկությունը հասանելի է որպես Աստծո օրհնության մի մաս բոլոր նրանց համար, ովքեր իրենց հույսը Հիսուսի վրա են դրել: Պետք չէ այդ ոլորտում հմտացած լինես, բժշկելը հոգևոր վերնախավի համար չէ: Պողոսն ասում է, որ Աստված «...օրհնեց մեզ ի Քրիստոս ամենայն հոգևոր օրհնութեամբ, երկնային աշխարհում»

(Եփ 1:3): Բայց ամենևին չի նշանակում, որ միշտ բժշկություն է լինում: Այստեղ հոգևոր պատերազմ կա: Մինչդեռ անգամ Նազարեթում, որ ընդամենը մի քանի հիվանդ բժշկվեց, չի ենթադրվում, որ դա այն էր ինչ Աստված կամեցավ (տե՛ս Մարկ.6:4-5): Հիսուսը մեզ սովորեցրեց աղոթել, որ Արքայությունն այստեղ երկրի վրա գա, ինչը նշանակում է դեռ ճեղքվածք կա Արքայության մտնելու և գալիք Արքայության ամբողջականության միջև: Աստծո Արքայության ամբողջականությունը և Նրա կամքը կատարվելն այս երկրի վրա տեսնելու մեր ցանկությունը հանընկնում է Աստծո ցանկության հետ: Բժշկությունը Արքայության ուղերձի հիմունքներից է, այն ուղղակի որպես հավատացյալ մեր կենսաձևի անբաժանելի մասն է: Մեզանից ոչ բոլորն են տիրապետում 1Կոր. 12:30-ում հիշատակված բացառիկ բժշկության պարգևին կամ լիաժամ բժշկության ծառայություն ունեն: Եթե բժշկության պարգև եք ուզում խնդրեցեք, սակայն անկախ նրանից ունեք այն, թե ոչ, թույլ մի տվեք, որ որևէ բան կանգնեցնի ձեզ: Մենք բոլորս Աստծո զորությունն ու ներկայությունն ենք կրում հիվանդներին բժշկելու և դա Քրիստոսով մեր ԴՆԹ-ի մաս է կազմում, և հասանելի է յուրաքանչյուրիս: Ես քաջալերում եմ, որ բոլոր հավատացյալներն այս ոլորտում նախաձեռնող լինեն: Այնքան փորձեք, մինչև չտեսնեք առաջին բժշկված մարդուն:

Չվհատվեք, եթե աղոթեք ինչ որ մեկի համար և նա չբժշկվի, կամ անհրաժեշտ լինի մի քանի անգամ աղոթել: Աստված չի հիասթափվում ձեզանից: Պարզապես ինքներդ ձեզ հարցրեք, *Արդյոք ուզում եմ տեսնել, թե ինչպես է Աստված բժշկում հիվանդներին:* Ոչ ոք պատերազմը միայն մեկ փամփուշտ կրակելով չի հաղթում, սովորաբար շատ կրակոցներ են պահանջվում: Հետամուտ եղեք հիվանդների համար աղոթելուն և երաշխավորում եմ, որ բժշկություն կտեսնեք: Եթե ուզում եք, այդ ամենն արագ կատարվի, ապա եկեղեցուց դուրս եկեք փողոց և աղոթեք մարդկանց համար:

Բժշկության համար աղոթելու պարզ հավատքի քայլով, աշխարհում տիրող խավարի իշխանության դեմ մասսայական ոչնչացման զենք ենք գործածում: Չնայած երբեմն հայտնվում ենք հոգևոր պատերազմի խրամատում: Երբ որոշ ժամանակ պարբերաբար սկսեցինք քաղաքի տարբեր հատվածներ թիմեր ուղարկել, նկատեցինք, որ բժշկությունների թիվն ակնհայտ աճեց: Հատուկ գոտիներ կային, որ կարող էինք անվանել բժշկության «թեժ կետեր», դրանք ի սկզբանե քաղաքի ամենախավար, ամենասարսափազդու վայրերից էին: Թշնամու քիթը քարին է գալիս, երբ կոնկրետ մի տարածքում «պատահարներն» սկսում են շատանալ, և մեզ տեսնելով տպավորություն է ստեղծվում, որ նա գլխապատառ փախչում է:

Բժշկության միջոցով տարածվում է Աստծո Արքայությունը, դրա համար էլ առանց դիմադրության չի անցնում: Հակ. 4:7-ում ասվում է. «... դիմադրեցէ՛ք Սատանային, ու նա կը փախչի ձեզանից»: Շատ անգամ, երբ բժշկություն չի լինում մեղքը բարդում ենք մի կողմից մեր հավատքի սակավության, մյուս կողմից նրա վրա, ում համար աղոթում էինք: Ինչևէ թե առաջին և թե երկրորդ դեպքում էլ բժշկության ականատես եմ եղել: Տեսել եմ նաև, որ մարդիկ բժշկվում են անգամ *երկկողմանի* անհավատության դեպքում:

Անկախ հանգամանքներից, ուղղակի աղոթե՛ք:

«Ես բժշկող եմ»

-Նայե՛ք, նայե՛ք, քարոզիչն է գալիս:

Աֆրոամերիկացի կինը աղաղակեց հիմնականում տղամարդկանցից բաղկացած մի փոքրիկ խմբի, ովքեր աղբամանի ստվերում նստած, պատսպարվում էին ամառվա տապից: Հավաքվածներն աշխուժացան և նրանցից մեկն անգամ ոտքի կանգնեց: Այդ ժամանակ ինձ հետ էին Ատլանտայից մեր եկեղեցի ժամանած մի խումբ երիտասարդներ: Նրանք մեկ շաբաթով էին եկել համայնքում ծառայելու և իմ մարդկանց համար փողոցում աղոթելու վերաբերյալ դասընթացն անցնելու: Մեր եկեղեցու կողքին արևելյան Ավրորայի հատվածում մի եռահարկ խարխլված հյուրատուն կար, որ բազմաթիվ թափառաշրջիկների վարձով սենյակներ էր տրամադրում: Ցերեկները սովորաբար կարող էիր այնտեղ աղբամանների մոտ հավաքված մի քանի խմբեր հանդիպել, ովքեր երբեմն թմրանյութեր էին օգտագործում, երբեմն էլ հարբեցողությամբ զբաղվում: Այդ կինը տեղացի էր և հաճախ որպես մարմնավաճառ էր աշխատում: Նա դեռ հայտնի էր իր գեղեցկությամբ, չնայած դեմքին ծանր կյանքն իր հետքն էր դրոշմել:

Ես ժպտալով կատակեցի,

-Դե, Վիոլեթ, ինչո՞ւ ես այդպես ասում: Քեզ այնպես ես պահում, ասես մարդկանց զգուշացնում ես, որ ոստիկան է մոտենում:

Նա քաղցր ու լայն ժպտաց և հեգնեց.

-Ես պարզապես ուզում էի բոլորին ասել, որ քարոզիչն այստեղ է: Չէի զգուշացնում:

Հավաքվածներին գլխով բարևեցի.

-Հեյ, անունս Ռոբբի է, մի քանի ընկերների հետ այստեղ մարդիկ ենք փնտրում, ովքեր աղոթքի կարիք ունեն:

Տարիներ շարունակ խմբեր էի տարել այդ շրջանի համար աղոթելու և կարծես աղոթքի թեժ կետ էր դարձել:

Բացի Վիոլեթին մնացածին երբեք նախկինում չէի հանդիպել, սակայն հենց այդ խմբից էլ կարող էինք սկսել: Գլխումս սկսեց մի միտք պտտվել, որ նրանցից մեկը ձախ ծնկի վրա վնասվածք ունի, ուստ հարցրեցի.

-Ձեզանից ով ձախ ծնկի հետ խնդիր ունի:

Նայեցի հավաքվածներին, նրանց մեծամասնությունը աֆրոամերիկացի էին կամ լատինամերիկացի: Նրանց մեջ մի սպիտակամորթ երիտասարդ կար, մոտ տասնինը-քսան տարեկան կլիներ: Հարցրեցի նրան.

-Դա դո՞ւ ես:

Նա սկսեց կաղալով հեռանալ և ասել.

-Չէ, չէ, իմ ծունկը լավ է:

Նրա կողքին կանգնած տղամարդը հարվածեց ուսին.

-Դու ստախոս ես,- ասաց նա,-մի ստիր քարոզչին, Աստված քեզ մահով կզարկի:

Ես ասացի.

-Աստված չի պատրաստվում քեզ մահով զարկել, բայց եթե ծունկդ ցավում է, թույլ տուր քեզ համար աղոթել: Աստված հենց հիմա քեզ ամբողջովին կբժշկի:

-Ի՞նչ,- նա շփոթված իմ կողմը թեքվեք խուսափելով աչքերիս մեջ նայել:

-Հա,- ասացի ես, -Նա կբժշկի, որովհետև սիրում է քեզ և հոգ է տանում քեզ համար:

-Դե,-նա հապաղեց,-ամեն դեպքում ես փող չունեմ:

Ես նրան ասացի.

-Ինձ փող պետք չէ: Ես փողով չեմ դա անում:

Հետո ասացի.

-Թույլ տուր հարցնել, թե որքան կգնահատես այս պահին ծնկիդ ցավն ու լարվածությունը 1-10 բալանոց սանդղակով, 10 ահավոր ցավում է, 0 ընդհանրապես ցավ չկա:

Նա ցած նայեց իր ծնկանը.

-Այս պահին անգամ չեմ կարող ծալել այն, իրոք շատ է ցավում:

Ես ասացի.

-Շատ բարի, ուրեմն կարող ենք ասել 10 ես գնահատում:

Կռացա և հպվելով նրա ծնկանն ասացի.

-Հա՛յր, շնորհակալ եմ Քո բժշկարար զորության և իմ այս նոր ընկերոջ համար: Հիսուսի անունով հրամայում եմ, որ այս ծունկը հենց հիմա բժշկվի: Հրամայում եմ, որ ամբողջ ցավը հեռանա, և այս ծունկը լիովին բժշկվի, որ նա իմանա, թե որքան շատ ես նրան սիրում և ուզում անհատական հարաբերություն ունենալ:

Հետո դադարեցրեցի աղոթքս ու նրան նայեցի: Բոլորն ուիշիուշով հետևում էին:

-Ծունկդ ծալիր և ասա, թե 1-10 բալերով որքան կգնահատես ցավը,- ասացի ես:

Նա դանդաղ ծունկը ծալեց: Նա շարունակեց ծալել ու ծալել մինչև ամբողջովին կռացավ: Շատ տարօրինակ հայացքով ինձ նայեց, հետո մի ոտքը բարձրացրեց և իր ողջ ծանրությունը գցեց այդ ծնկան վրա, իսկ հետո ծունկը ծալած սկսեց ցատկոտել: Նայեց ինձ և մի տեսակ քրքջաց: Հետո կրկին ցատկոտեց այս անգամ կանգնելով միայն վնասված ծնկան ոտքի վրա և հետ եկավ:

-Հո՛ւհ,- ասաց նա, և սկսեց ճանապարհն ի վար վազել:

-Վերադարձի՛ ր,-գոռացի նրա հետևից,- դեռ չենք ավարտել:

Նստածները նայում էին նրա ետևից և ծիծաղում ստեղծված իրավիճակի վրա:

Նա գոչեց ինձ ասելով.

-Դու վախենալու ես, ախպերս,- և շարունակեց վազելով անհետանալ շենքերի հետևում:

Մնացածս նաև Ատլանտայից եկած երիտասարդներն ուղղակի կանգնած էինք աղբամանների շարքի մոտ, որը գտնվում էր երթևեկելի ճանապարհի ետնամասում: Ողջ կառույցի երկայնքով հարակից նրբանցքից բաժանող ցանկապատ կար և հանկարծ վազորդի ոտնաձայներ լսեցինք: Նա վազելով անցել էր ողջ թաղամասն ու կայծակնային արագությամբ դեպի մեզ էր գալիս: Հասավ ցանկապատին ու վրայով ցատկեց:

Կողքիս նստած տարեց աֆրոամերիկացին ասաց.

-Հիմա *գիտեմ*, որ նա բժշկված է:

Նայելով երիտասարդին ժպտացի: Մի տեսակ վայրի հայացք ուներ: Հարցրեցի նրան.

-Դե, ո՞նց էր: Ցավդ որքան կգնահատես 1-10 բալերով համակարգում: Քաղաքավարություն չանես, ճիշտն ասա:

Նա նայեց ինձ և դեռ շունչը կտրելով ասաց.

-Զրո:

-Ընդհանրապես ցավ կամ լարվածություն չունե՞ս:

Նա ասաց,

- Ընդհանրապես ոչինչ:

Այս ամբողջ իրավիճակն ինձ զարմացրեց, որովհետև դեռ չէի տեսել, որ ինչ որ մեկն այդպես փախչեր: Նայեցի մյուսներին և ասացի,

-Ձեզանից ում մի ոտքն է մյուսից կարճ:

Մեր շուրջը մոտ կես տասնյակ մարդ էր հավաքված և այն մարդն, ով հարվածեց երիտասարդի ուսին, ուրախությամբ մոտեցավ ինձ:

-Ահա, նայեք,- ասաց նա ձեռքերն իմ առջև պարզելով: Նրանցից մեկը տաներկու մատնաչափ մյուսից կարճ էր:

-Երբևէ տեսե՞լ եք, որ ձեռքն աճի:

Ես տեսել եմ, թե ինչպես է մեջքն ուղղվում և մատներն աճում, բայց ոչ երբեք այդպես: Ամենաշատ որ աճել է մեկ մատնաչափ է եղել: Ամեն դեպքում սկսեցի նրա ձեռքի համար աղոթել: Գրեթե չորս անգամ աղոթեցինք, սակայն ոչինչ չփոխվեց:

Տղամարդն ասաց, որ իրեն թվում է ձեռքը մի մատնաչափ երկարել է, բայց գլուխս շարժեցի ու ասացի.

-Ախպերս մի ստիր: Ինձ օգնելու կարիք չկա:

Մի քանի անգամ աղոթելուց և որևէ արդյունք չտեսնելուց հետո ես նրան կրկին հարրեցի, թե արդյոք մի ոտքը մյուսից կարճ է: Դա իմ սկզբնական զգացածն էր:

Նա ասաց.

-Այո, ոտքերիցս մեկը կարճ է:

Հետո նայեցի այն երիտասարդին, ում ոտքը քիչ առաջ էր բժշկվել և ասացի.

- Կուզենաս տեսնել, թե ինչպես է Աստված քեզ գործածում այս մարդու ոտքը բժշկելու գործում:

Նա գլուխը կողքի թեքեց.

-Ես չգիտեմ, ինչպես անել:

Ժպտալով ասացի.

-Քեզ կօգնեմ:

Գետնի վրա գիծ գծեցին և այդ մարդը նստեց ու ոտքերն առաջ պարզեց, որպեսզի կարողանանք հստակ տեսնել ոտքերի երկարության տարբերությունը: Երկու ոտքերն էլ ուղիղ գծի դիմաց առաջ մեկնեց: Ես ասացի.

-Տեսնու՞մ ես: Բռնիր նրա ոտքերը: Հիմա կտեսնես, թե ինչպես է կարճ ոտքը երկարում: Իմ հետևից կրկնիր. «Հայր, շնորհակալ եմ Հիսուս Քրիստոսի համար: Շնորհակալ եմ, որ Նա մեր մեղքերի համար խաչի վրա մահացավ...»:

Ես մի տեսակ փորձում էի Ավետարանի ուղերձն այդ աղոթքի մեջ տեղավորել և տղան իմ հետևից կրկնում էր:

-Հենց հիմա այն իշխանությամբ, որ Հիսուսը մեզ է տվել խաչի վրա մեռնելով, ոտք հրամայում եմ աճի՛ր:

Ոտքն սկսեց շարժվել: Բոլորիս աչքերի առջև գրեթե երեք քարորդ դույմ աճեց:

Տղան ոտքը թողեց ու սկսեց աղաղակել.

-Աստված իմ ես բժշկող եմ և դրա մասին չեմ իմացել,-նա ողջ մարմնով ցնցվում էր:

Ես գլուխս տարուբերեցի.

-Այնքան էլ չէ, բայց թույլ տուր ավարտենք: Կրկին բռնիր նրա ոտքերը:

Մենք շարունակեցինք աղոթել՝

-Հայր, շնորհակալ եմ այս ոտքի համար, որ կիսով չափ աճեց, և ոտք հրամայում եմ, որ մնացած մասն էլ աճես հենց հիմա Հիսուսի անունով:

Ոտքն աճեց ու կատարելապես հավասարվեց մյուսին:

-Հիմա կանգնիր ու ստուգիր,-ասացի այդ մարդուն:

Նա կանգնեց ու սկսեց քայլել.

-Նորմալ է: Երբեք նորմալ չի եղել:

Հետո ասացի նրան.

-Այն ինչ Աստված արեց քո ոտքի հետ, ուզում է նաև քո կյանքում անել: Նա ցանկանում է քո կյանքի խոցված, վնասված և անհավասար բնագավառներում խաղաղություն, բժշկություն և վերականգնում բերել:

Նաև նայեցի կողքիս կանգնած տղային, ով տակավին հուզված էր և ասացի.

-Դու տեսար, թե ինչպես Աստված հենց նոր քո միջոցով բժշկեց: Այժմ նա առաջարկում է կյանքիդ մնացած մասը քո միջոցով այս փոփոխությունն ուրիշների կյանքում հաստատել:

Ես նայեցի ամբողջ խմբին:

-Իսկ դուք ցանկանում եք անհատապես Հիսուսին ձեր կյանք ընդունել և հետևել Նրան,- հարցրեցի ես:

Վիոլեթը, նաև երկու տղամարդ և նրանցից մեկի ընկերուհին դրական արձագանքեցին: Զորս հոգի այդ օրն իրենց կյանքը Հիսուսին հանձնեցին և սկսեցին հաճախել մեր եկեղեցու կողմից անց կացվող Ալֆա դասընթացին, որտեղ բացահայտեցին հավատքով ապրելու հիմունքներն ու սովորեցին համայնքի հետ հարաբերություն կառուցելու սկզբմունքները:

Իսկ ինչ է լինում, երբ բժշկություն չկա

Արդեն նշել եմ, որ հավատացյալների բժշկության համար չաղոթելու հիմնական պատճառը նախկինում աղոթելն ու արդյունք չտեսնելն է: Մինչդեռ տեսել եմ նորահավատների, ովքեր տեսել են, թե ինչպես է Աստված իրենց միջոցով կես տասնյակ մարդկանց հենց փողոցում բժշկում: Բժշկությունը կարող է այդպես պարզ, ակնթարթային և առերևույթ լինել: Բոլորս էլ ուզում ենք, որ հեշտ բժշկություններ լինեն, բայց շատերս վհատվում և հիասթափվում ենք, որբ ամեն բան այլ ընթացք է ստանում: Սակայն անկախ նրանից, թե որքան երկար եք աղոթել մարդկանց բժշկության համար և ինչ արդյունք եք տեսել, ուզում եմ մի օգտակար խորհուրդ տալ *կենտրոնացեք Աստծո ոչ թե չարածների, այլ արածների վրա:*

Ինչպես արդեն նշեցի բժշկությունն իր մեջ նաև հոգևոր պատերազմ է ներառում, ուստի մի հանձնվեք: Կասկածները, վախերը, անորոշությունն ու առեղծվածները քրիստոնեական կյանքի անբաժան մասն են կազմում: Այն Արքայության մաս է կազմում, որն «այստեղ է, բայց դեռ ոչ լիովին»:

Մենք չենք կարող թույլ տալ, որ չիմացած կամ անհասկանալի երևույթները մեզ ետ պահեն կամ խոչընդոտել Աստծո սքանչելի գործերը տեսնելուց:

Մենք հատկապես խոցելի ենք դառնում և վհատվում, երբ հիվանդությամբ տառապողը մեր մտերիմներից մեկն է: Բացատրել բոլոր հանգամանքներն անհնար է, սակայն հնազանդվել բոլոր հանգամանքներում հնարավոր է:

131

Մենք գիտենք, որ ասվում է բժշկեք հիվանդներին, անգամ եթե դեռ երբեք արդյունք չենք տեսել: Սա մասամբ նշանակում է որ պետք է ապրել ոչ միայն տեսածով, այլ հավատքով: Ինչպես Ալան Հիրշն է իմաստուն բնորոշում տալիս այն «ցատկի հավատք» է: Տառապանքն ու հաղթանակն այս երկրի վրա մեր մաքառման անբաժանելի մաս են կազմում, ուստի շարունակեք աղոթել մարդկանց համար (տես Հովհ. 16:33, Հռոմ. 8:17, 2Կոր.1:5, 4:8-10,Փիլ.1:29, Հակ.5:10): Եթե մեր սիրելիներն անմիջապես չեն բժշկվում, մենք չենք դադարում նրանց համար աղոթել: Ղուկ. 18:1-ում Հիսուսն Իր աշակերտներին հորդորեց միշտ աղոթել և չհանձնվել:

Եթե տվյալ պահին մարդը չի բժշկվում, շփոթության մի մատնվեք: Պարզապես առաջ անցեք և մյուսների համար աղոթեք: Ես հաճախ տեսել եմ, թե ինչպես են մասնակի բժշկված մարդիկ աղոթում մյուսների համար և հենց այդ աղոթքի ժամանակ էլ լիովին բժշկվում: Քրիստոսը խաչը նվաճելով մեզ իշխանություն տվեց: Մենք որոնում ենք Նրա ներկայությունը, Նրա Արքայությունն ու Նրա փառքը: Բժշկությունը հաջողության գրավական չէ, ոչ էլ ինքնին ինչ որ բանի ավարտ, այլ պարզապես Նրա բարության և թագավորության մի մաս: Երբ շարունակում ենք Արքայությունը որոնել և Աստծո սիրո ու շնորհի Բարի Լուրը հռչակել, ավելի ու ավելի մեծ բեկումների ենք տեսնում: Երբ Եկեղեցու դեմ հսկայական հոգևոր հակառակություն է բարձրանում, այն ժամանակ Աստծո Արքայությունն ընդարձակելու մեր երբևէ ճաշակած ամենաուժգին հոգևոր զորություն է իջնում:

Բանաձևի կարիք չկա

Զորությամբ ավետարանչությունը որևէ հատուկ բանաձևի կամ մեթոդի հետևելը չէ, չնայած այդ թեմայի շուրջ հարյուրավոր գրքեր են գրվել: Ջոն Ուիմբերի *Զորությամբ բժշկություն* գիրքը հրաշալի ապոլոգետիկա է առաջարկում, որը հասցեագրված է զորությամբ բժշկելու շուրջ ունեցած Եկեղեցու բազմաթիվ վախերին ու կասկածներին: Այն նաև աստվածաշնչյան բժշկության հիմունքների մասին համապարփակ պատկերացում և գործնական ուսուցման գաղափարներ է տալիս:

132

Բեթել եկեղեցուց իմ ընկեր Քրիս Օվերսթրիթը նույնպես մեծ գործ է կատարել պարզ, քայլ առ քայլ ձեռնարկ գրելով, թե ինչպես կարող ենք ծառայել գերբնական ավետարանչությամբ: Այն համապատասխանաբար կոչվում է *Գերբնական ավետարանչության գործնական ուղեցույց*: Այս թեմայի շուրջ Ռենդի Քլարքն ու Բիլ Ջոնսոնը նույնպես հզոր գործեր ունեն: Բժշկության մասին իմ ամենասիրելի գիրքը ընկերոջս՝ Ջեք Մորայնի *Բժշկության ծառայություն* գիրքն է:

Սկսած ամենահայտնի ծառայողներից ինչպիսիք են Սմիթ Ուիգլեսվորթը զորությամբ օժտված բժշկող, ով անսովոր մեթոդներ էր կիրառում, մինչև ժամանակակից Հայդի Բեյքեր, ով բժշկում էր խուլերին և Մոզամբիկում մեռելներին հարություն տալիս, բժշկության ծառայությունը միշտ

Եկեղեցու պատմության անբաժան մասն է եղել: Այն առաջին դարի հավատացյալներից հասել է մինչև մերօրյա հրդեհի պես արագ տարածվող ընդհատակյա եկեղեցիները Չինաստանում, Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում, որտեղ քրիստոնեությունը նախկինում անհայտ է եղել: Իմ տեսած ամենաարագ և տպավորիչ բժշկությունները հիմնականում փողոցում են եղել և հաճախ ամենաթանձր հոգևոր խավարով ծածկված շրջաններում: Վայնյարդի հովիվներից Ջեքի Փուլլինգերը մի անգամ հարցրեց. «Ուզո՞ւմ եք արթնություն տեսնել: Ձեր եկեղեցին ետնախորշում հիմնեք»:

Քրիստոսն ասաց. «դաշտերն սպիտակել և հասել են հնձի համար» (Հով4:35):

Աշակերտներին այս խոսքերը շփոթեցրեց, բայց Հիսուսը ներկա հոգևոր իրականության մասին էր խոսում: Խնդիրը Երկնքում զորության պաշարների պակասի մեջ չէ, այլ հավատարիմ մշակների պակասության, ովքեր պատրաստ են գնալ և համարձակությամբ խոսել: Միշտ չէ, որ հեշտ է: Հաճախ հաստատակամություն է պահանջվում, բայց Աստված այդ ընթացքը ձեզ հետ է անցնում: Մեզ է տրված Մեծ Հանձնարարականը և երբ գնում ենք Հիսուս Քրիստոսի Բարի Լուրը կրելով, Աստված ուղեկցում է բժշկություններով, նշաններով ու հրաշքներով:

Հիմական գաղափարը, որ միշտ սովորեցնում եմ այն է, որ եթե ուզում եք հիվանդներին բժշկված տեսնել շարունակեք նրանց համար աղոթել: Մենք ամեն օր նման հնարավորություն ունենք: Աշխատանքի վայրում, դպրոցում, կարելի է ասել ամենուր մարդիկ տարբեր ախտանշաններից ու հիվանդություններից են բողոքում:

Սովորություն դարձրեք կանգ առնել և նրանց համար աղոթել: Պարզապես հետևյալ խոսքերն ասեք.»Կարո՞ղ եմ հենց հիմա ձեզ համար աղոթել»: Հետո հետևեք այս քայլերին, որոնց մասին պատրաստվում եմ խոսել, ոչ թե որպես բանաձև, այլ որպես մոտեցում, որ կօգնի ձեզ գերբնական ավետարանչությամբ ծառայել:

Թույլատվություն խնդրեք և հստակ խոսեք

Մարդկանց բացարտեք, որ պատրաստվում եք հենց այդ պահն աղոթել, որ Աստված բժշկի: Եթե պատշաճ է, թույլատվություն հարցրեք ձեր ձեռքը նրանց վրա դնելու: Եթե կնոջ համար եմ աղոթում, իմ ձեռքը դնելու փոխարեն նրա ամուսնուն կամ ընկերուհուն եմ խնդրում ձեռքը դնել: Այս միտքը նաև կարելի է կիրառել երեխաների և ծնողների համար աղոթելիս: Խնդիր չկա, եթե մարդիկ հրաժարվում են իրենց դիպչելուց, բայց արժե հարցնել, որովհետև հաճախ զորությունը հենց հպման միջոցով է փոխանցվում: Մարդկանց բացատրեք, թե ինչ եք պատրաստվում անել, որպեսզի նրանք անհարմար դրության մեջ չհայտնվեն: Հաճախ նրանք քո ակնկալածից ավելի բաց և շնորհակալ են լինում:

Տեղեկատվություն հավաքեք

Հարցրեք, թե արդյոք այն մարդն, ում համար պատրաստվում եք աղոթել տվյալ պահին որևէ ախտանիշ կամ ցավ ունի: Երբ իրենց խնդիրն ինձ բացատրում են, խնդրում եմ 1-10 բալանոց սանդղակով գնահատել ցավի ուժգնությունը, 10 բնորոշում է մեր աղոթելու պահին առկա ցավի և տհաճության առկայությունը: Երբեմն խնդրում եմ մի բան ասել, որ այդ պահին անելն իրենց կարողությունից վեր է, որպեսզի հետո դա որպես բժշկության

նշան գործածեմ: (Գուցե վնասված ծունկը ծալել, կամ առանց ցավի ինչ որ շարժում անել): Բժշկությունը հաճախ գործընթաց է, ուստի խնդիրն ու մարդու վրա թողած նրա ազդեցությունը հասկանալն օգնում է մեզ իմանալ ինչպես աղոթել և ուշադիր հետևել Աստծո գործին:

Մարմնին ասացեք, թե ինչ եք ուզում իրենից

Առաջին գլխում մի պատմությամբ կիսվեցի, երբ աղոթում էինք գանգստերներից մեկի կարճ ոտքի համար և իմ ընկեր Թոդ Ուայթն ասաց. «Ոտք աճի՛ ր:Ոսկորներ, մկաններ, մաշկ հենց հիմա աճե՛ ք»:

Մենք բժշկելու իշխանություն ունենք և սա է ճշմարտությունը, ինչքան էլ որոշ հավատացյալների զվարճալի թվա, ովքեր սովորույթուն ունեն ասելու «ես ոչ ոքի չեմ կարող բժշկել, միայն Հիսուսն է կարող»: Նա մեր մեջ է և երբ աղոթում ենք բժշկության համար իշխանությամբ հրամայում ենք, որ հիվանդությունը լքի այդ մարմինը: Մենք Հիսուսի անունով վերադարձնում ենք այդ իշխանությունը: Եկեք մի պահ մտածենք, թե ինչ կլինի եթե մի ոստիկանության սպա հանցագործ բռնի և ոստիկանական բաժանմունք զանգահարելով հրամանատարին խնդրի, որ գա և կալանավորի այդ մարդուն: Հավանաբար հրամանատարը սպայի վրա կգոռա իզուր ժամանակ վատնելու համար և կասի. «Ինքդ արա՛ : Ես *քեզ* նրան կալանավորելու իշխանություն եմ տվել»:

Այդ նույն կերպ Քրիստոսը մեզ բժշկելու իշխանություն է տվել (տե՛ ս Մաթ.10:8, Ղուկ. 9:1-2,10:9): Մենք չենք պայքարում, որ Աստված բժշկի, այլ պայքարում ենք այս աշխարհի իշխանի կոտրվածության, հիվանդության և մահվան թագավորության դեմ (տես Եփես. 6:12):

Բժշկության համար աղոթելիս այս ու այն կողմ չեմ ընկնում: Մենք կարող ենք ուղիղ և շիտակ լինել, ինչպես Թոդը, երբ աղոթում էր ոտքի համար, և կարող ենք մարմնին ասել, թե ինչ անի:

Հարցրեք, թե ինչ է կատարվում/կրկին աղոթեք

Մարկոս 8:11-16 –ում տեսնում ենք, որ Հիսուսը կույրի համար երկու անագամ աղոթեց: Եթե Հիսուսից երկու աղոթք պահանջվեց կարծում եմ ինձանից տասներկուսը կպահանջվի կամ գուցե եռեսունը: Կարիք չկա շտապելու կամ խառնվելու: Պարզապես հարցրեք այդ մարդուն, թե ինչ է կատարվում և եթե կարիք լինի կրկին աղոթեք: Ձեր աղոթքի ժամանակ հաճախ մարդիկ ֆիզիկական զգացողություններ կունենան՝ խաղաղության, տաքության, դողի կամ էլեկտրականության տեսքով:

Այս ամենը կարող է դրսևորվել Սուրբ Հոգու գործելու և Աստծո իրեն հայտնի դարձնելու ժամանակ:

Երբ աղոթքից հետո տվյալ մարդու ցավն ամբողջովին անհետանում է, խնդրում եմ նրան փորձել մի բան անել, որ նախկինում չէր կարող: Երբեմն մարդիկ առաջին օրը մասամբ են բժշկվում, իսկ հաջորդ օրը՝ լիովին: Լինում են նաև դեպքեր, երբ ընդհանրապես ոչինչ չեն

զգում և միայն բժշկի հերթական այցից հետո են պարզում, որ կատարելապես բժշկվել են: Ես փորձում եմ արդյունքների մասին չափից դուրս չանհանգստանալ: Անգամ մասնակի բժշկության դեպքում, գոհանում եմ Աստծուց Նրա կատարածի համար: Իմ գործն իշխանությամբ բժշկության համար աղոթելն է, իսկ արդյունքներն Աստծուն են պատկանում:

Գոհացեք Աստծուց և մարդկանց առաջնորդեք դեպի Հիսուսը

Այս ամենի մեջ ամենակարևորը Հայրն է: Ես միշտ նախապես գոհանում եմ Աստծուց բժշկության համար և բացատրում, որ այն ինչ անում եմ Աստծո իրականության, սիրո և մտերմության դրսևորումն է: Երբ մարդիկ բժշկվում են, նրանց հաճախ ինձ հետ տանում եմ իրենց ընկերների, հարևանների կամ փողոցի անծանոթ մարդկանց համար աղոթելու, որպեսզի կարողանան տեսնել, որ ստանալով այժմ ինչ որ բան ունեն տալու: Այդպես մարդիկ հասկանում են, թե ինչպես է Արքայությունն այս երկրի վրա տարածվում: Ջոն Ուիմբերն ասում էր. «Մենք ստանում ենք տալու, ստանում, որ տանք, ստանում, որ տանք»: Մենք ստացել ենք և որպեսզի այն սկսի բազմապատկել կարիք ունենք տալու:

Մեր ծառայության առանցքը ոչ թե բժշկությունն է, այլ Աստծո սերը: Հիվանդության դեմ իշխանություն ենք բանեցնում, բայց մարդկանց Աստծո ներկայությամբ ենք ծառայում : Աստծո ներկայության մեջ զորություն կա բժշկելու և ազատագրելու, սակայն ամեն ինչի մեջ մեր հիմնական նպատակն այն է, որ մարդիկ հանդիպեն Նրա ներկայության իրականությանն ու ճաշակեն Նրա սերը:

8 //Ազատություն գերիներին

Խավարը չի կարող վանել խավարը. Միայն լույսը կարող է դա անել: Ատելությունը չի կարող վանել ատելությունը. միայն սերը կարող է դա անել:

Մարտին Լյութեր Քինգ

Իսկ եթէ Աստծու մատով եմ հանում դևերին, ապա Աստծու արքայութիւնը հասել է ձեր վրայ:

Հիսուս (Ղուկ.11:20)

Երբ ես ու Էնգին Վայնյարդ եկեղեցի հիմնելու նպատակով Ավրորա տեղափոխվեցինք, հենց այդ նույն շաբաթ մեր ամբողջ ընտանիքը անտանելի հիվանդացավ: Նոր տուն տեղափոխման հաջորդ օրը բոլորս սրտխառնոց ունեինք և փսխում էին: Ահավոր էր: Մոտակայքում ապրող որևէ բարեկամ չունեինք: Ոչ առողջական ապահովագրություն ունեինք և ոչ էլ դեղորայքով ապահովելու հնարավորություն: Անելանելի վիճակում էինք:

Գնացել էինք այնտեղ եկեղեցի հիմնելու և միայն մի քանի ծանոթ ունեինք, որոնցից ոչ մեկն այդ պահին ազատ չէր մեզ օգնելու:

137

Ես, Էնգին նաև մեր այդ ժամանակ մեկ և երեք տարեկան երեխաներն ահավոր էինք զգում: Հավաքելով էներգիայի մեր վերջին պաշարը մի կերպ երեխաներին մեքենա նստեցրինք և Ուոլգրին գնացինք, մեզանից մի քանի մղոն հեռու, հուսալով խանութից մի բան գնել, որ օգնի: Մենք իրոք շատ վատ էինք:

Երբ Ուոլգրինի ճանապարհին էինք, հանկարծ Էնգին ձեռքով հարվածեց ղեկավարման վահանակին և բղավեց. «Սատանա, հենց հիմա մեքենա նստիր»:

Ցնցված նայեցի նրան և մտածեցի *Տեսնես ինչու է այդպես ասում*, կյանքումս որևէ մեկից նման բան չէի լսել:

Կես սարսափով և կես հիացմունքով հետևում էի, թե ինչպես է իմ կապուտաչյա գեղեցկուհի կինը հոնքերը կիտած ասում. «ինձ լսիր Սատանա, մենք այստեղ պատրաստվում ենք եկեղեցի հիմնել: Հիմնելու ենք այն աղքատների համար, քաղաքի ամենավատ շրջանում: Եվ տեսնելու ենք, թե ինչպես է Արքայությունը տարածվում: Որքան կուզես պայքարիր մենք նահանջի մտադրություն չունենք: Չենք խոնարհվի ու չենք կոտրվի: Հիմա, դու՛րս իմ մեքենայից»:

Գիտեմ դժվար է հավատալ, բայց հենց մեքենայի մեջ ակնթարթորեն բոլորս բժշկվեցինք: Ինչ էլ որ լիներ, թե ընտանիքը պաշտպանող հուսահատ մոր աղաղակ, թե Աստծո դստեր զորություն միևնույնն է այն գործեց: Հիվանդությունը բոլորիցս հեռացավ: Ես ամուսնացած եմ Աստծո կատաղի դստեր հետ: Այդ օրն Էնգին ինձ ինչ որ բան սովորեցրեց Քրիստոսով ունեցած մեր իշխանության մասին, մի բան, որ նախկինում ինձ անհայտ էր: Մենք հսկայական իշխանություն ունենք, որի մասին շատերս անգամ տեղյակ չենք:

Պատերազմելու համար ծնված

Անկախ նրանից ես ու դու հավատում ենք դրան, թե ոչ մեր կյանքը որպես քրիստոնյա հոգևոր պատերազմ է ներառում: 1Հովհ. 3:8-ն այսպես է ասում.

«Աստծու Որդին հէնց նրա համար յայտնուեց, որ քանդի Սատանայի գործերը»:

138

Իսկ ինչպես ենք քանդում Սատանայի գործերը: Ամեն անգամ ավետարանելով, կորսված մարդկանց դեպի Քրիստոս առաջնորդելով, բժշկելով, ներելով, ազատագրելով, մարդկանց Աստծո սիրո ճշմարտության և ազատության խոսքերով քաջալերելով քանդում ենք թշնամու գործերն ու ստերը: Արքայության համար քայլ անելով վերահռչակում ենք Անկման հետևանքով մարդկությունից գողացվածն ու ընդարձակում Երկնային Արքայությունը:

Պետք է ընդունենք, որ բոլորս էլ հոգևոր կոնֆլիկտի մեջ ենք: Իմ դեպքում ես ստիպված հոգևոր պատերազմից փախչում և չարի հետ վեճի էի բռնվում: Մանկուց պարզապես

սարսափել եմ հոգևոր աշխարհի հետ առնչվելուց, և վիճակն ավելի սրվեց, երբ քսան կամ ավելի տարեկանում Հոգեգալստական շրջանակներում մի քանի բացասական փորձառություն ունեցա: Ուրախ էի, որ վերջապես այդ ամենը կթողնեմ անցյալում և Իլլինոյս նահանգի Մեննոնիթ եկեղեցում որպես երիտասարդական ծառայության հովիվ կծառայեմ: Ինձ դուր էր գալիս այդ ծառայությունն ու երիտասարդների հետ աշխատանքը: Ես կարող էի զարկ տալ իմ ստեղծագործ մտքի կարողությանն ու զարգացնել ավետարանչության հանդեպ ունեցած իմ բնատուր ձիրքը: Շուտով երիտասարդական ծառայությունն սկսեց արագ աճել և զգում էի, որ գործերս շատ լավ է գնում:

Ամիսներ անց երիտասարդական մեր խումբ սկսեց մի աղջիկ հաճախել, ով նախկինում բավականին տարօրինակ բաների մեջ էր ներգրավված եղել:

Նա և իր չորս ընկերուհիները շփվելիս են եղել վամպիրիզմով տարված մի տղայի ու աղջկա հետ: Այդ զզույգը երբեմն աղջիկների վրա փոքր կտրվածքներ էր անում և խմում նրանց արյունը: Տղան աղջիկներին մի անգամ ասում է, որ պատրաստվում է նրանց հմայել: Նրանց հիպնոզացնում է և երբ ամբողջովին իր վերահսկողության տակ են լինում դեպի մի սենյակ է առաջնորդում և հրամայում մտնել: Երբ հնազանդվում են, նրանց հետևից դուռը կողպում է: Տարօրինակն այն էր, որ անգամ այդ ամենից հետո ամեն անգամ, երբ աղջիկներն իրենց աչքերը փակում էին նորից մտովի այդ սենյակում էին հայտնվում և խավար ոգիները գալիս ու չարչարում էին նրանց: Երբ քնում էին, իրենց թվում էր այդ սենյակում են քնած և իրենց թակարդի մեջ հայտնված ու անհանգիստ էին զգում: Ինչ էլ անեին, չէին կարողանում այդ ամենից ազատվել:

Աղջիկներից մեկի հայրը պնդում էր, որ երիտասարդական ծառայության հաճախի: Չնայած սկզբում չէր ուզում գալ, բայց երբ եկավ նրա հետաքրքրությունը շարժվեց: Նա սկսեց մյուս աղջիկներին պատմել այդ մասին և ավելացնել, որ իրեն թվում է ես բավականաչափ զորություն ունեմ իրենց օգնելու կատարվածից ազատվել: Հիշում եմ, որ այս աղջիկներին նկատել էի պատի մոտ լուռ նստած: Ժողովից հետո նրանք ինձ հարցրեցին, թե արդյոք կարող ենք զրուցել: Իմ աշխատասենյակ հրավիրեցի և նրանք սկսեցին կատարվածի մասին պատմել ու արտասվել, որ անելանելի իրավիճակում են հայտնվել: Նրանք ասացին, որ երբ «կողպված» են զգում այդ սենյակում նրանց մոտ դևեր են գալիս:

Առաջին անգամ չփորձեցի փախչել, երբ բախվեցի նման իրավիճակի: Զգում էի, որ աղջիկներին անպայման օգնել է պետք: Նրանց ասացի.

-Տերը կարող է ձեզ դրանից ազատագրել և հենց այսօր: Բայց եթե այդպես լինի դուք պետք է Քրիստոսին ընդունեք, այլապես վիճակն ավելի կբարդանա:

Նրանք բոլորն ասացին, որ ուզում են Քրիստոսին ընդունել և սկսեցինք աղոթել: Այդ պահին նրանք զգում են,որ իրենցից ինչ որ ծանրություն է բարձրանում: Ես էլ առաջին անգամ զգում էի, որ դիվային ուժերի վրա իշխանություն ունեմ: Ողջ կյանքում խուսափել էի նման առերեսումից: Ուղղակի սարսափում էի: Բայց ահա կանգնած պաշտպանում էի

այդ աղջիկներին: Բարկացած էի, որ նրանց հետ այդպիսի բան է կատարվել և գիտեի, որ Աստված կարող է դադարեցնել այն:

Աղոթքի ժամանակ նրանցից մեկն սկսեց աղաղակել.

-Ոոոոչ: Ի՞նչու արեցիր:Ի՞նչու:

Նա շփոթահար արձագանքում էր իմ աղոթքներին և աչքերի մեջ բացահայտ սարսափ կար:

Ես նրան ասացի.

-Տերը կարող է հենց հիմա քեզ ազատագրել, եթե կամենաս: Մենք կարող ենք քանդել և հեռացնել այս ամենը:

Տակավին սարսափած նա գոչեց.

-Չդիպչեք ինձ, չդիպչեք ինձ:

Երբ խոսեցինք, նա սկսեց տարբերել իրեն պատած անհաղթահարելի զգացողության և դիվային ուժերի տարբերությունը, բայց չհամաձայնեց շարունակել ավելի հեռուն գնալ կամ, հրամայել, որ ոգին հեռանա իրենից:

Ի վերջո խնդրեցի, որ եկեղեցուց մեկը նրան տուն տանի, որ մյուս աղջիկների հետ առանձին շարունակեմ: Հետո նրա հետ կաշխատեի, բայց զգում էի, որ այդ պահին նրանց պետք է առանձնացնել:

Մնացած չորս աղջիկներն ամբողջովին ազատագրվեցին և Քրիստոսին խնդրեցին իրենց Հիսուսի Հոգով լցնել: Նրանք ընդգրկվեցի ծառայության մեջ և սկսեցի հոգևոր հասակ առնել: Այն աղջիկը, որ նրանց բերել էր, հետագայում Ավրորայում մեզ միացավ եկեղեցի հիմնելիս և իր ամուսնու հետ որպես տնային խմբակի առաջնորդ էին ծառայում:

Երկարատև հովվական ծառայության մեջ եղողներս հաճախ ենք դիվային ազդեցություններից տառապող քրիստոնյաների հանդիպում: Եփեսացիներին 4:26 ում Պողոս առաքյալն Սատանային տեղի չտալու մասին է զգուշացնում: Սա բոլորիս է վերաբերվում: Մեզ ասվում է թշնամուն հակառակեք և նա կփախչի: Երբ հանդիպում ենք որևէ պիղծ ոգու դեմ պայքարող քրիստոնյայի, անկախ դրա ետևում կանգնած մեղքի կամ խնդրի, չպետք է դատենք նրան:Մենք պետք է սիրով և շնորհով ծառայենք ինչպես Հիսուսն արեց և հիմա էլ շարունակում է: Ճնշված մարդիկ չգիտեն արդյունավետ պայքարելու ձևը, ուստի մենք նրանց փոխարեն պայքարում ենք և կարիք չկա վախենալու, որովհետև մեր առջև ծառացած խնդիրների վրա Քրիստոսով կատարյալ իշխանություն ունենք:

Հասկանալով մեր իշխանության էությունը

Երբ Հիսուսը 72 աշակերտներին ուղարկեց, Աստվածաշունչն ասում է, որ նրանք հիվանդների համար աղոթեցին և հիվանդները բժշկվեցին: Սակայն աշակերտներին ավելի շատ զարմացրեց, երբ դևերը Հիսուսի անունով նրանց հնազանդվեցին: Հիսուսն ասաց, որ

նրանց «թշնամու ամբողջ զորութեան վրայ» իշխանություն է տվել (Ղուկ. 10:19, տես նաև 17-20):

Իշխանություն թշնամու ամբողջ զորության և բոլոր դևերի վրա: Ես նախկինում հակված էի ավելի մեծ համարձակությամբ հիվանդների համար աղոթել, քան դիվահարների: Եթե տեսնում էի, ինչ որ մեկը մրսել, հիվանդացել է աղոթում էի:

141

Բայց եթե մեկը ճչում և տարօրինակ ձայներով խոսում էր, նախընտրում էի ուրիշին խնդրել նրա համար հոգ տանել: Միանշանակ վախենում էի:

Հնարավոր է յուրաքանչյուրս էլ վախի զգացողություն ունենաք, սակայն Հիսուսը խոստացել է, որ մեզ իշխանություն է տրված *բոլոր* դևերի վրա: Նա իշխանություն չխոստացավ բոլոր հիվնդությունների վրա, բայց բոլոր դևերի վրա խոստացավ: Ամեն անգամ, երբ որևէ դիվային ոգու դեմ դուրս գաք, իրավիճակն ընդունեք գլուխներդ բարձր, ուսերը ձիգ, իմանալով, որ այդ դևն ստիպված է ենթարկվել Հիսուսի անվանն ու իշխանությանն ու հեռանալ: Վախով մի արձագանքեք և մի երկյուղեք: Որքան էլ թշնամին փորձի վախի կրակե նետերով եկեղեցուն ետ պահել, հիշեք, որ մենք Քրիստոսի իշխանության և արդարության հանդերձները կրողներն ենք:

Հիսուսն ասաց, որ այս աշխարհի իշխանը «իմ վրայ ոչ մի իշխանութիւն չունի» (Հովհ. 14:30): Մենք պետք է հասկանանք, որ եթե Քրիստոսը մեր մեջ է, ապա թշնամին մեզ հետ գործ չունի: Դևերը մտնում են այնտեղ, որտեղ նրանց թույլ ենք տալիս: Որտեղ արգելում ենք մտնել, նրանք պետք է հնազանդվեն: Դրա համար էլ դևերին «ճանապարհելու» մասը մտնում է այս գրքի ենթավերնագրի մեջ: Մի քանի տարի առաջ ազատագրության ծառայություն ունեցանք մեր եկեղեցում և արգելեցինք, որ այլևս որևէ դև եկեղեցու դռնից ներս մտնի: Ամիսներ անց խնդրի առջև կանգնեցինք, որովհետև մարդիկ պնդում էին, որ ֆիզիկապես չեն կարողանում եկեղեցաշենք մտնել: Նրանց բառացիորեն ինչ որ բան ետ էր պահում, երբ ցանկանում էին եկեղեցու դռնից ներս մտնել: Մենք փոխեցինք մեր աղոթքը, թույլատվություն տալով, որ դիվային ազդեցությունների տակ մարդիկ, ովքեր ցանկանում են ազատագրվել կարողանան մտնել եկեղեցի: Մենք հասկացանք, որ մեր աղոթքը չափազանց ընդհանրական էր ստացվել և մեծ թվով մարդիկ, ովքեր անկեղծ ցանկանում էին ազատագրվել չէին կարողանում եկեղեցի գալ: Այս իրավիճակից դաս քաղեցի, որ աղոթելիս ավելի կոնկրետ պետք է լինել:

Երբ փողոցում ծառայում եք անհավատների շրջանում և ոմանց կողմից հասարակայնորեն դիվային դրսևորումներ եք նկատում, իշխանություն վերցրեք դևի վրա, կապեք այն և լռեցրեք: Այդ պահին սովորաբար դևեր չենք հանում, եթե համապատասխան միջավայր չկա, որ մարդու հետ զրուցենք և իմանանք, որ նա ուզում է ազատագրվել և արդյունքում Քրիստոսին դառնալ:

142

Աստվածաշունչն զգուշացնում է, որ առանց Քրիստոսին ճանաչելու մարդուց դևեր հանելը կարող է նրան ավելի սարսափելի դիվահարության տանել (տես Մաթ 12:43-45):

Եթե դևն սկսում է հանդուգն դրսևորվել տվյալ մարդու մոտ և թվում է նա տեղյակ է այդ մասին, կապում եմ և հրամայում, որ հեռանա, հետո խաղաղություն եմ արձակում այդ մարդու վրա: Երբ ամեն բան հանդարտվում է հարցնում եմ. «Դու ուզո՞ւմ ես ազատագրվել»: Այսպիսի դեպքերը մեկը մյուսից խիստ տարբեր են լինում: Գուցե տարօրինակ թվա, բայց շատերը տեղյալ են պիղծ ոգու առկայության մասին, բայց վստահ չեն, որ ուզում են դրանից ազատվել: Ոմանց դուր է գալիս հաճույքի զգացումը, զորությունը կամ հենց այն փորձառությունը, որ այդ դևից են ստանում: Որոշ մարդիկ ոգուց ազատագրվելուց հետո դատարկ են զգում և կարոտում այդ զգացողությանը: Սովորաբար նրանց ասում եմ. «Այդ ամենը հենց հիմա կանցնի, եթե ցանկանաս Քրիստոսին ընդունել»: Քրիստոսին ընդունելը նրանց վերափոխման գործընթացն ավարտուն է դարձնում և պաշտպանում ցանկացած տիպի դիվային վերադարձներից:

Ուժային պայքարներ չի թույլատրվում

Երբեք դևի հետ ուժային պայքարի հետ մի մտեք, նրանց այդպիսի հնարավորություն մի ընձեռնեք: Հետևյալ պատմությունն ինձ համար հետաքրքիր մեկնաբանություն է այն մասին, թե որքան մեծ է մեր ունեցած իշխանությունն ու թե ինչպես է թշնամին անընդհատ փորձում պայքարել, որ վախեցնի, վերահսկի ու ամեն գնով մեզ ետ պահի մեր իշխանությունը կիրառելուց: Ավրորայում մեր եկեղեցին հիմնելուց գրեթե հինգ տարի անց, մեր տարածաշրջանից մի ընկեր Մկրտական հովիվ Դեյվը զանգահարել և մի քանի հաղորդագրություն էր թողել հեռախոսիս (անունը փոխված է անհատի անձնական կյանքի գաղտնիության իրավունքն ապահովելու համար): Նոր էի վերադարձել Լիտվա կատարած իմ ուղևորությունից, երբ հեռախոսազանգերս ստուգելիս լսեցի նրա առաջին հաղորդագրությունը, որը ինձ անհանգստացած թվաց: Նա ասում էր, որ այդ պահին մի իրավիճակի մեջ են, որ իմ այցելության և աղոթքի օգնության կարիքն ունեն: 48 ժամվա մեջ երեք հաղորդագրություն էր թողել և վերջին հաղորդագրության մեջ նրա ձայնը խռպոտ ու հոգնած էր:

Նա ասում էր, որ իրենց եկեղեցուց մի կնոջ հետ գործ ունեն, որ հաստատ դիվահար է և ինձ խնդրում էր հաղորդագրությունն ստանալուն պես անմիջապես հետ զանգել:

Դեյվի հաղորդագրություններից մի փոքր զարմացած էի, որովհետև այդ ժամանակ փաստացի գիտեի, որ նա այնքան էլ չէր ընդունում մեր օրերում հոգևոր իրականության շատ ակտիվ լինելու հանգամանքը: Հաղորդագրության մեջ հետևի պլանում լսվում էին այդ կնոջ աղաղակները: Ուստի հետ զանգահարեցի և պայմանավորվեցի նրանց միանալ: Երբ ներս մտանք այն բնակարանի մուտքի դռնից, որտեղ այդ կինն էր տեսանք, որ ամբողջ կահույքը ցաքուցրիվ էր և տունն ավերակի էր նման: Երեք տղամարդ և երկու կին ամուր բռնել էին այս պուերտոռիկկացի փոքրամարմին կնոջը: Նրան պառկեցրել էին հատակին և շարունակ կծկվում ու ճչում էր: Նրանք բոլորը դաժան ծեծի ենթարկվածի տեսք ունեին: Մեկի քթից արյուն էր հոսում: Ոմանց շորերը պատառոտված էին: Բազմոցին նստած բարեխոսի բերանից արյուն էր գալիս: Ամենուր անկարգություն ու խառնաշփոթ էր տիրում:

Դեյվը նայեց ինձ ու ասաց.

-Ռոբբի, խնդրում եմ օգնիր: Միևնույնն է, թե ինչ կանես, միայն թե օգնիր: Մենք չենք կարողանում սրանից ազատվել:

Հետո նրան խնդրեցի, որ ինձ իշխանություն տա ազատագրելու: Դա շատ կարևոր է: Որովհետև այդ կինը նրա հովվության և ուղիղ հոգևոր իշխանության ներքո էր: Ազատագրությունն ուժային պայքար է: Ազատագրության ծառայության ժամանակ անհրաժեշտ է իշխանության սահմանները հստակ դնել, մեկը առաջնորդում է, մյուսները միայն սատարում: Իշխանությունն Աստծուց է գալիս: Երբ ճանաչում և պատվում ենք Աստծո լիազորյալ իշխանությունը, այն ժամանակ ինքներս Նրա Արքայության կարգ ու կանոնին համապատասխան ենք շարժվում: Թշնամին, ով քաոսից ու խառնաշփոթից օգտվող է, գիտի այդ մասին և ստիպված ենթարկվում է: Մեր դերը տվյալ իրավիճակում կարգ ու կանոն և խաղաղություն հաստատելն է:

Երբ սենյակ մտա տարբեր մարդիկ միևնույն ժամանակ նման բաներ էին ասում. «Հիսուսի անունով...», «Հիսուսի արյան միջոցով...», «Կրակ, այրիր այս դևին...»:

Օրեր շարունակ այդ իրավիճակում մնալով բոլորը հոգնել էին: Կնոջ միջի դևը դեռ ճչում էր և թվում էր սնունդ է ստանում այդ ստեղծված իրավիճակից ու քաոսից: Կինն ինքն էլ էներգիայով լի ու կայտառ էր երևում:

Հովիվը միայն մի խնդրանք ուներ, որ լեզուներով չաղոթենք: Նրան ասացի.

-Այդ դեպքում գուցե ավելի երկար տևի, բայց խնդիր չկա:

Նա մյուսներին ներկայացրեց ասելով.

-Սա հովիվ Ռոբբին է: Իմ հովիվ ընկերներից: Նա կստանձնի պատասխանատվությունը: Արեք այն, ինչ կասի:

Նայեցի նրան գետնին պահող տղամարդկանց և ասացի.

-Բոլորդ դադարեցրեք աղոթել և դևի հետ խոսել: Բաց թողեք այդ կնոջը:

Նրանք սարսափահար ինձ նայեցին և ասացին.

-Ի՞նչ: Նա մեզ նորից կծեծի: Չեք տեսնում ինչ է այստեղ արել:

Ես ասացի.

-Բաց թողե՛ք: Խոստանում եմ, ոչ մեկիդ վրա ձեռք չի բարձրացնի:

Ես կրկին հորդորեցի և վերջապես նրանք բաց թողեցին կնոջը: Հենց բաց թողեցին գետնին պառկած կինն առանց ծնկները ծալելու կամ ձեռքերն օգտագործելու, ուղիղ դիրքով ոտքի կանգնեց: Կարծես մեկը փոցխի ծայրին կանգներ: Նա այդ ամենն աչքերը փակած արեց:

Այդ տեսարանից մազերս բիզ բիզ կանգնեցին: Ես ասացի.

-Լավ, այլևս նման բան չանես: Ես արգելում եմ քեզ: Հիմա Հիսուս Քրիստոսի իշխանությամբ կանես միայն այն, ինչ ես կասեմ: Այլընտրանք չունես: Դու ինձ

կհնազանդվես, որովհետև Քրիստոսն Իր խաչով ինձ իշխանություն տվեց: Հենց հիմա Հիսուսի անունով հրամայում եմ, որ գնաս և նստես այն բազմոցին:

Կինն սկսեց քայլել ու գնաց ուղիղ նստեց բազմոցին: Հավաքվածների բերանները զարմանքից բաց մնացին:

Բազկաթոռի վրա գալարվելով ու բորբոքվելով կինն աղաղակեց.

-Ես ավելի շատ զորություն ունեմ, քան այդ հովիվը: Ես ավելի շատ զորություն ունեմ, քան այդ մեկը...:

Նա սկսեց սենյակում եղող մարդկանց անունները տալ:

Ես ասացի.

-Դու ավելի շատ զորություն չունես քան այն զորությունը, որ Քրիստոսի խաչով ինձ է տրված: Հիմա լռի՛ր:

Նա փակեց իր բերանը, բայց այտերը շարունակվում էին տատանվել, կարծես ուզում էր բան ասել, բայց չէր կարողանում: Սենյակը, որտեղ հավաքված էինք լրիվ քարուքանդ արած էր և այդ ժամանակ չգիտեմ ինչու խելքիս փչեց նրան ասել.

- Այս կնոջ տունը լրիվ խառնել ես, հենց հիմա սկսիր մաքրել:

Նա անչափ արագ, ամբողջ կյանքումս չէի տեսել, որ ինչ որ մեկն այդքան արագ շարժվի, վեր կացավ և փակ աչքերով սկսեց սենյակը հավաքել:

Ես ասացի.

-Հիմա, նստի՛ր:

Նա նստեց և կրկին բոլորն ապշած էին: Ես նույնպես ապշած էի: Հովիվն ինձ հարցրեց.

-Որտեղից իմացար, որ կարող ես այդպես անել:

Ես ասացի.

-Չգիտեմ, ուղղակի մտածեցի փորձել:

Երբ այնտեղ նստած էին կինը երեք անգամ հազաց և նկատեցի, որ սենյակում բոլորն սկսեցին միաձայն նրա նման հազալ: Մի քանի րոպե անց նա կրկին հազաց և սենյակում բոլորը հանկարծ միաձայն սկսեցին նորից հազալ:

Ես հովվին հարցրեցի.

-Նկատե՞լ եք ինչ է կատարվում:

Նա ասաց.

-Դե հա, էս վերջին օրերին բոլորիս տարօրինակ հազ է կպել:

Ես ասացի.

-Ոչ, նայիր:

Ես դարձա կնոջն ու ասացի.

-Նորիս արա՛ :

Հետո նա սկսեց անընդհատ հազալ *հազ, հազ, հազ*: Բացի ինձանից ու Դեյվից մնացած բոլորն սկսեցին միաձայն նույն կերպ կրկնել *հազ, հազ, հազ*: Ես ու հովիվը զարմացած իրար նայեցինք:

Ես բարձրաձայն սկսեցի մտածել.

-Հետաքրքիր է ինչ բան է սա:

Կնոջ միջից դևը գոռաց.

-Ես ավելի շատ զորություն ունեմ քան Ֆրեդը: Եվ ավելի շատ զորություն ունեն քան Մեթը:

Կինը սենյակում գտնվողների անունները հերթով տվեց:

Նայեցի բոլորին ու հարցրեցի.

-Տեսնո՞ւմ եք ինչ է անում ձեզ հետ այս հազի միջոցով : Դևը ձեզ կառավարում է:

Երբ անցանք աղոթքի սկսեցի այս իրավիճակում իշխանությունն իմ ձեռքը վերցնել: Ես հարցրեցի. «Տեր, ի՞նչ է կատարվում»: (Ես երբեք իմ տեղեկատվությունը դևից չեմ ստանում, այլ միայն Սուրբ Հոգուց):

Ես հոգով զգացի, որ այդ կինը կախարդությունների հետ առնչվող ընտանիք է ունեցել: Երբ այդ մասին նրա հովվի հետ կիսվեցի, հաստատեց:

-Օհ, այո, նա Սատանայի եկեղեցում է մկրտվել և որպես երեխա նրան Սատանային են նվիրել:

Կինը Քրիստոսին ընդունել էր, բայց թվում էր նրա մի մասը դեռ թակարդված էր մնում ցավի և ծիսական բռնությունների մեջ, որից պետք է ազատագրվեր: Ես սկսեցի անեծքները քանդել, դևին կապել ու հրամայել, որ հեռանա: Նա կրծքավանդակով առաջ էր գալիս և մի պահ գիտակցությունը վերադառնում էր, բայց միայն մի քանի վայրկյան և հետո հանկարծ կրկին դևը հայտնվում էր գոմռում, ցույց տալիս ատամներն ու ֆշշացնում: Վերջապես հեռացավ և մենք խնդրեցինք, որ Սուրբ Հոգին լցնի նրան ու նրա միջի դատարկությունը:

Գրեթե մի քառասուն հինգ րոպե պահանջվեց, որ կինը կարողանա բազմոցին հանգիստ նստել և մեզ հետ նորմալ զրուցել: Մենք հարցրեցինք, թե արդյոք կատարվածից որևէ բան հիշում է, և նա ասաց, որ միայն կցկտուր պատառիկներ: Երբեմն մարմնից դուրս դիտելիս է զգացել, երբեմն ինչ որ ուրիշ խավար մի տեղում է եղել: Մենք նրան կարողացանք ուղղորդել մեր ընկերների մոտ, ովքեր հմուտ ներքին բժշկության խորհրդատուներ էին: Նրանք սկսեցին աշխատել այդ կնոջ հետ և հիմա քաղաքում ես հաճախ եմ նրան

հանդիպում: Նրա մոտ ամեն բան կարգին է և կարող եմ ասել իմ տեսած ամենահաճելի կանանցից մեկն է:

Ես այս պատմությունը չեմ պատմում մարդկանց վախեցնելու համար, այլ ցույց տալու թե իրականում որքան մեծ է մեր ունեցած իշխանությունն անգամ ամենասաստիկ իրավիճակներում: Այս ազատագրման ծառայությունն իմ տեսած ամենահստակ օրինակներից է, երբ ճնշումը, վերահսկողությունն ու վախ տարածելը անկառավարելի է դառնում: Հովիվ Դեյվն այժմ մեր եկեղեցում է և Ավրորայում զորավոր ազատագրման ծառայություն է անում: Թշնամին նրանց ծաղրում էր, բայց Տերը զորավոր կերպով այդ փորձառությունը գործածեց, որպեսզի նրանց որպես Արքայության գործի առաջնորդներ և աղոթքի ծառայողներ բարձրացնի:

Ազատագրումն առանձին մաս չէ

Ազատագրումն Աստծո սրտում ծնված ծառայություն է: Բժշկության նման այն Արքայության մաս է կազմում: Այն անբաժանելի է Նրա Արքայության պատգամից: Երբ մարդկանց սիրում ենք Հիսուսի անունով և վստահում, որ Իր իշխանությամբ կազատագրվեն, Նրան հաճեցնում ու փառք ենք բերում:

Աստված Եսայա մարգարեի միջոցով ասում է. «Քանդի՛ր անիրաւութեան հանգոյցը, խորտակի՛ր քո վաճառականական խարդախութիւնն ու բռնութիւնը, ների՛ր ու արձակի՛ր նեղեալներին և պատռի՛ր բոլոր անիրաւ մուրհակները» (Ես 58:6):
Սա թե սոցիալական և թե հոգևոր կիրառություն ունի, որ Հիսուսն Ինքն օրինակ հանդիսացավ: Սոցիալական տեսանկյունից նա հասավ աղքատներին և սրտով կոտրվածներին «անիրավության հանգույցը քանդելով», հոգևոր տեսանկյունից հեռացրեցնելո թշնամու խաբեությունը և մեծ միաբանություն Հոր հետ բերեց: «Գիտէք Յիսուսին, որ Նազարէթից էր, որին Աստուած օծեց Սուրբ Հոգով և զօրութեամբ, և որը շրջեց բարիք անելով և սատանայից բոլոր բռնուածներին բժշկելով, որովհետև Աստուած նրա հետ էր» (Գործ 10:38): Ինչպես փիլիսոփա և աստվածաբան Ժակ Էլուլն է ասում. «Հիսուս Քրիստոսը նվաճել է աշխարհը: Նա նսեմացրել է հավակնոտ գահերը, զորություններն ու իշխանություններն ու նրանց ինքնիշխանությունը: Եվ իրականում հիմա Նա է այս աշխարհի ու պատմության Տերը»:

Ազատագրման ծառայության լիարժեք ուսուցման համար այլ գրքի կարիք կլինի, սակայն այստեղ ուղղակի ներկայացնում եմ, որ մարդկանց դիվային ազդեցություններից ազատելը Մեծ Հանձնարարականն իրագործելու բնական բաղադրիչ է: Բարի Լուրը մարդկանց քարոզելով նրանց հրավիրում ենք Քրիստոսին դառնալ, Նրա միջոցով նոր կյանք և կատարյալ փրկություն ստանալ, ազատագրվել վախի, հիվանդության և չար ոգիների ազդեցություններից:

9//Քայլել իշխանությամբ

(Դուք ավելին ունեք, քան պատկերացնում եք)

Եթե մեր հավատացած աստվածաբանության մեջ Հիսուսի գործերն անելու մասին խոսք չկա, ուրեմն պետք չէ իզուր հրաշքների ու նշանների սպասել...

Ջոն Ուիմբեր

Այն ինչ մեր ուժերի շրջանակում է անել, նաև մեր ուժերի շրջանակում է չանել:

Արիստոտել

Այս էջերում փորձել եմ ընդգծել Աստծո մեր հանդեպ ունեցած սիրո մեջ խորապես արմատացած զորությունը հասկանալու կարևորությունը: Անհրաժեշտ է գիտակցել մեր կյանքերում վախի ոգուն հակառակելու հսկայան նշանակալիությունը, որը շարունակ մեզ մղում է դատապարտության, անհանգստության և անպիտան զգալու: Նրա սիրո մեջ առկա այդ ուժն օգնում է մեզ հակառակել վախին և վստահություն է տալիս անել, այն ինչ Հիսուսն արեց: Հուսով եմ մինչև այստեղ կարդալով քաջալերված եք, այլ ոչ ճնշված և մեղավորության զգացումով համակված:

149

Իմ ուսուցման նպատակն այն է, որ յուրաքանչյուր բնագավառ ոչ թե ճնշի կամ համեմատության տանի, այլ համակի մեր ունեցած այն անհերևակայելի ազատությամբ, որը Պողոս առաքյալն այսպես է նկարագրում.

Եւ ի՜նչ է նրա զօրութեան գերազանց մեծութիւնը:
Նա իր ամենակարող զօրութիւնը ցոյց տուեց Քրիստոսով, երբ նրան յարութիւն տուեց մեռելներից և նստեցրեց իր աջ կողմում, երկնքի մէջ՝
ամէն իշխանութեան, պետութեան, զօրութեան ու տէրութեան վրայ, այլև ամէն անուան վրայ, որ տրւում է ոչ միայն այս աշխարհում, այլ նաև հանդերձեալում:
Նա ամէն ինչ հնազանդեցրեց Յիսուսի ոտքերի տակ և նրան հաստատեց, իբրև գլուխ եկեղեցու, բոլոր բաների վրայ,
եկեղեցի, որ նրա մարմինն է, լրումը նրա, ով ամէն ինչ լցնում է ամէն բանի մէջ:

Եփեսացիս 1:23

Կրկին ու կրկին մարգարեություններում, առակներում և առաքյալների քարոզներում տեսնում ենք, որ Աստված ուզում է իմանանք, որ Նրա որդիներն ու դուստրերն ենք, ովքեր Քրիստոսի հարուստ և առատ ժառանգության մեջ ազատ մուտք ունենք: Հավատացած եմ, որ Սատանայի ամենահիմնական պայքարներից մեկն այդ մասին լիարժեք հայտնությունն ստանալուց մեզ ետ պահելու փորձերն են:

Նրան *Մեղադրող* են կոչում, ով ջանք չի խնայում մեզ աղքատության մեջ պահել, երբ խոսքը վերաբերվում է Աստծո սերն իմանալուն և Նրա տված իշխանությամբ քայլելուն: Սատանան ցանկանում է, որ մենք գոյատևման աղոթքներ անենք կենտրոնանալով միայն Աստծուց խնդրելով ապահովել մեր կեցության հիմնական կարիքները: Նա չի ուզում մենք իմանանք, որ մի ամբողջ Արքայություն է մեզ վստահված:

Որդեգրելով Անառակ որդու առակի ավագ եղբոր աղքատի մտածելակերպը օտարված ենք մնում այն ամենից, ինչ Աստված պատրաստել է մեզ համար (տե՛ս Ղուկ. 15:11-32): Կրտսեր եղբայրը մեղքի ու ամոթի կապանքի մեջ էր, իսկ ավագը՝ ծառայի մտածելակերպի: Մենք այդ երկու որդիների նման չենք կարողանում ըմբռնել Հոր սիրո մեծությունը:

Իրականում մեր Հոր ողջ ունեցվածքը նաև մեզ է պատկանում: Մենք Նրա զավակներ ենք, ովքեր Քրիստոսով ժառանգություն են ստացել: Ինչպես ցանկացած միլիարդատեր հայր, մեր Հայրն էլ է ուրախանում, երբ տեսնում է թե ինչպես ենք աշխատում ներդնելով ընտանեկան բանկային հաշիվներում, զարգացնելով և ընդլայնելով ընտանեկան Արքայությունը: Վերջին տարիներին իմ պատկերացումները հիմնովին փոխվել են, թե ինչ է հնարավոր անել, այս ամենն իմանալով: Մենք իսկապես շատ ավելի մեծ իշխանություն ունենք, քան հասկանում ենք: Եվ շատ ավելի մեծ իշխանություն քան ներկայումս կիրառում ենք:

Կանխասացություն «Թայմզ Սքուեր» հրապարակում

Ամառային տաք երեկո էր, օրը շաբաթ, Թայմզ Սքուեր հրապարակում պիկ ժամ էր: Փողոցները նման էին մարդկային սարդոստայնի, որտեղ քրտնած մարմիններով գրեթե ուս ուսի քայլում էին մարդիկ աշխարհի բոլոր մայրցամաքներից: Մենք ընտանիքով այնտեղ մեր արձակուրդ էինք անցկացնում: Քլինթ Մորգանը՝ Վայնյարդի հովիվ ընկերներիցս մեկն, ով Նյու Յորքում էր ապրում, այդ օրը մեզ հետ եկել էր քաղաքում շրջելու: Մոտավորապես կեսօրվա ժամը հինգն էր: Փողոցներն ու մայթերը մարդաշատ էին, և մենք կանգնած էինք «M & M» համաշխարային խանութի դիմաց:

Խանութի մուտքի մոտ կանգնած ակնապիշ նայում էի գետնանուշի հսկայական կապույտ «M & M» էլվիսին, պարզապես ապշելով դրա չափսերի վրա: Հանկարծ Էնգին՝ կինս, ձեռքս բռնեց ու ասաց.

-Շտապ թելադրիր ինձ այն հեռախոսահամարը, որ հիմա հեռախոսիդ էկրանին կհայտնվի:

Հեռախոսազանգն ստանալով թելադրեցի նրան համարը: Հետո նկատեցի, որ այնտեղ մի տարեց կին էր կանգնած երկու ռադիոկապով անվտանգության աշխատակիցների հետ: Երբ Էնգին թելադրում էր հեռախոսահամարն անվտանգության աշխատակիցներին նա իսկապես անհանգստացած էր:

-Ի՞նչ է կատարվում,-հարցրեցի ես:

-Այս կինը հենց նոր կորցրել է իր տասնամյա թոռնուհուն,- ասաց Էնգին։-Նա գաղափար չունի, թե որտեղ կլինի երեխան և չեր կարողանում իր հեռախոսահամարը հիշել, որ փոխանցի անվտանգության աշխատակիցներին։

Ես նույնպես անհանգստացա, երբ նայեցի փողոցով անցնող հազարավոր մարդկանց։

Այդ կինն ասաց.

-Կարծում եմ չորս խանութ առաջ եմ նրան կորցրել, բայց արդեն ամենուր եղել եմ և նա չկա։ Նրան կորցնելուց արդեն բավական երկար ժամանակ է անցել։

«Թայմս Սքուեր» հրապարակում խանութները քաղաքի սովորական շենքերի մեծության են և օրվա այդ ժամին դրանցից յուրաքանչյուրում մոտավորապես Միդվեսթի մի փոքր քաղաքի չափ մարդ է լինում։ Կինը հասականալով իրավիճակի լրջությունն սկսեց արտասվել։ Հետո ասաց.

-Մեր տուրիստական ավտոբուսը հինգ րոպեից շարժվում է դեպի օդանավակայան, որպեսզի կարողանանք հասցնել մեր ինքնաթիռին և տուն գնալ։ Չգիտեմ ինչ անեմ։

Եվ այո, տեսնում էինք, թե ինչպես են փողոցում ավտոբուսները մարդկանցով լցվում։ Իսկապես անելանելի իրավիճակ էր ստեղծվել։

Բռնելով այդ կնոջ ձեռքը հարցրեցի.

-Տիկին, հավատու՞մ եք աղոթքի զորությանը։

Նա զարմացած ինձ նայեց հետո գլուխը դրական շարժեց.

-Դե, կարծում եմ այո, նախկինում աղոթել եմ։

Ես նրան հարցրեցի.

-Իսկ հավատո՞ւմ եք, որ երբ աղոթում ենք Աստված լսում է մեր աղոթքները։

Նա պատասխանեց.

-Այո։

Ես նրան ասացի.

-Հիմա կաղոթեմ, որ ձեր թոռնուհին լսի, որ իրեն կանչում են և նրան ասեն, որ իր տատիկն իրեն է սպասում «M &M» խանութի ներսում, կապույտ էլվիս M&M –ի դիմաց կանգնած, և նա հինգ րոպեից այստեղ կլինի, և դուք կիմանաք, որ Հիսուս Քրիստոսը սիրում և ուզում է ձեզ հետ մտերիմ հարաբերություն ունենալ։

Հետո աղոթեցի.

-Հա՛յր, Հիսուսի անունով, շնորհակալ եմ, որ միշտ մեզ լսում ես։ Խնդրում եմ, որ հենց հիմա ինչ որ մեկին կամ գուցե հրեշտակ ուղարկես նրա մոտ և անունը կանչես։ Նրան ասես, որ անմիջապես գա կանգնի հսկայական կապույտ էլվիս «M&M» ի մոտ իր տատիկի դիմաց, երեք րոպեից։ Որպեսզի այս կինն իմանա, որ նրան փնտրում ես,

ցանկանում ես մտերմանալ և նրա կյանքի բոլոր բնագավառներում Նրա հետ լինել: Հիսուսի անունով, Ամեն:

Ետ քաշվեցի ու սկսեցի հաշվել .

-Մեկ, երկու, երեք...:

Հովիվ ընկերս ինձ նայելով հարցրեց.

-Լեզուներո՞վ ես աղոթում:

Որովհետև միայն տեսնում էին, որ շուրթերս շարժվում էին:

Ես ասացի,

-Ոչ, բոպեներն եմ հաշվում:

Երբ հաշվեցի մինչև ութսուներեքը (համարյա մեկ ու կես բոպե) փոքրիկ աղջիկը վազելով մտավ խանութ ու կանչեց.

-Տատի՛կ:

Դեռ արցունքներն աչքերին կինը թեքվեց, բռնեց թոռնուհուն ու գրկեց նրան: Հետո հետ հրելով հարցրեց.

-Որտեղ է՞իր,- հարցրեց նա,-որտեղի՞ց իմ տեղն իմացար:

Փոքրիկ աղջիկն ասաց.

-Ես չորս խանութ ներքև էի, երբ լսեցի, որ մեկն անունս կանչեց և ասաց. «վազիր «M & M» կոնֆետների խանութը: Տատիկդ այնտեղ կապույտ էլվիս «M&M» ի դիմաց կանգնած քեզ է սպասում: Մի կանգնի՛ր: Հենց հիմա վազի՛ր»: Եվ ես որքան ուժ ունեի արագ այստեղ վազեցի:

Տատիկը հետ շրջվեց և ձեռքս բռնեց:

-Երդվում եմ ամեն օր կաղոթեմ,- ասաց նա,-ամեն օր կաղոթեմ:

Երբ նրանք վազում էին իրենց ավտոբուսին հասցնելու նրա հետևից գոչեցի.

-Երբեք չմոռանաք, թե ինչ արեց Հիսուսը ձեզ համար և որ նա ուզում է ձեզ հետ մտերիմ հարաբերություն ունենալ:

Նա դառնալով ինձ ասաց.

-Ինչպես կարող եմ երբևէ մոռանալ այօրվա պատահածը:

Հովիվ ընկերս շրջվեց դեպի ինձ և հետաքրքրվեց.

-Քեզ Աստվա՞ծ ասաց այդպես աղոթել:

-Ոչ,- պատասխանեցի ես:

Զարմանքից նրա բերանը բաց մնաց.

-Այդ դեպքում ինչո՞ւ այդպես աղոթեցիր:

-Որովհետև եթե չաղոթեի ոչինչ այդպես էլ չէր փոխվի,- ասացի ես:

153

Համաձայն Աստվածաշնչի ես հավատում եմ, որ մենք Քրիստոսով այդպիսի իշխանությունն ունենք, չնայած կան բաներ, որ դեռ ինձ համար էլ առեղծվածային են մնում: Սակայն տվյալ իրավիճակում համարձակ քայլ արեցի հիմնվելով ավելի շատ իմ հավատացածի քան անցյալում տեսածի վրա: Որքան շատ եմ հավատքով այդպիսի համարձակ քայլ արել, այնքան հասկացել եմ, թե որքան ընդարձակ են մեզ տրված իշխանության սահմանները:

Արքայությունը ձեր մեջ

Ջոն Ուիմբերը մեր ունեցած իշխանության մասին այսպես է ասել.

Չնայած տասներկուսին Արքայության իշխանություն ու զորություն տրվեց, միևնույնն է անհրաժեշտ էր սովորել այն կիրառել: Նրանց համար այդ իշխանությունն ու զորությունը քիչ կարևորություն ունեին, մինչ այն պահը երբ իսկապես հիվանդներ բժշկեցին և դևեր հանեցին: Ձեր ունեցածի նշանակությունը լիովին հասկանալու համար, անհրաժեշտ է օգտագործել այն: Եվ եթե ավելին եք ուզում, պետք է տաք այն, ինչ արդեն ձեզ է տվել:

Նյու Յորքում այդ օրը կատարվածը վկայում է մեր խոսքերում և գործողություններում առկա այն իշխանության մասին, որ ունակ է իրականություն փոխել: Ես նման մարգարեական ծառայությունը «Կանխասացություն» եմ անվանում և տեսել եմ, թե ինչպես է աշխատում բեկում մտցնելու, բժշկելու, ապահովելու և անգամ կորած իրեր կամ մարդիկ գտնելու հարցում: Կանխասացությունը հռչակելն է, որ ինչ որ բան կատարվի և մարդիկ դրա միջոցով հանդիպեն Աստծուն ու տեսնեն Նրա իրական լինելը:

Ես հավատացած եմ, որ կանխասացությունն այն է, երբ մեր խոսքերի միջոցով զորությամբ ու իշխանությամբ սկսում են ինչ որ բաներ կատարվել: Դա այնքան էլ հուզված սպասելը չէ, թե Աստված ինչ է պատրաստվում անել, քանի որ Աստված մեր մեջ է և մենք էլ Նրա մեջ: Այլ տվյալ դեպքում մենք գործում ենք այն իշխանությամբ, որ Նա դրել է մեր մեջ և ասել.

«Քանի որ նրա մէջ է բնակւում Աստուածութեան ամբողջ լիութիւնը մարմնապէս: Դուք էլ էք լցուած նրանով, որ գլուխն է ամէն իշխանութեան և պետութեան» (Կող 2:9,10):

154

Ես հասկացել եմ, որ որոշ բարգավաճման ուսուցիչներ այս իշխանությունը չարաշահել ու սխալ են գործածել: Դրա համար էլ շատերը խուսափում են այդ ուսմունքից ու կիրառությունից: Տարբերությունն այն է, որ նրանք իշխանությունը փորձել են գործածել իրենց սեփական շահերի ու նպատակների համար: Այս իշխանությունը պատշաճ ձևով գործում է միայն այն դեպքում, երբ գործածում ենք մյուսների օգուտի համար և իրականացնում Հոր կամքը՝ մարդկանց Նրա հետ ավելի մտերիմ հարաբերության տանելով: Հիսուսն ասաց, որ Նա «չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ՝ ծառայելու» (Մարկ. 10:45): Սա պետք է մշտապես մեր գործողությունների առանցքը լինի,

երբ Նրա անունով ինչ որ բան անելիս ուզում ենք, որ մեզ տրված զորությունն ու իշխանությունը գործի:

Մենք Քրիստոսի միջոցով նոր ուխտ ունենք, որով մեզ իշխանություն տրվեց Նրա հետ ժառանգակիցներ լինելու և գործելու ու խոսելու այնպես, ինչպես այլ կերպ անհնար կլիներ (տե՛ս Մաթ. 18:18): Մենք կարող ենք իշխանություն ունենալ հանգամանքների, բեկումների, բժշկությունների և անգամ եղանակի վրա: Սա ցնցող հակադրություն է Սատանայի ստերի դեմ, Չարախոսի, ով ամեն օր առիթ է որոնում մեզ նվաստացնելու և որակազրկելու: Հիսուսի ծառայությունն ամբողջովին մեզ է փոխանցված և այս սկզբունքը հաստատուն և հետևողական կերպով սատարվում է Քրիստոսի ուսուցման ողջ ընթացքում և աշակերտների Եկեղեցուն ուղղված նամակներում (տես Ղուկ 6:40,Հռ. 8:29,2Կոր 3:18, Գաղ.2:20Կող. 3:9-10): Մեզ հանձնարարված է Նրա քայլերին հետևելով ընդարձակել Աստծո Արքայությունը: Եվ երբ քայլում ենք մեր աստվածատուր իշխանությամբ, ակնհայտ տեսնում ենք, թե ինչպես է Արքայության իրականությունը տարածվում:

Սա կախարդանք չէ: Մեր ստացած ժառանգության մի մասն է, որով քայլելու ունակության մեջ դեռ անկատար ենք: Ինչպես 1Կոր. 13:12 –ի մեջ Պողոսն է ասում այժմ աղոտ ենք տեսնում և աղոտ մարգարեանում: Ամեն ինչ չէ, որ ճիշտ մեր կամեցածի պես է լինում, որովհետև Աստծո Արքայությունն այստեղ է, բայց դեռ ոչ լիովին: Հիսուսը հնազանդությամբ ընդունեց այս աշխարհի տառապանքները: Սարսափելի հալածվեց, անարդարացի դատապարտվեց Իր չգործած մեղքերի համար և մինչև իսկ խաչի վրա մեռավ:

Բայց Նա ամենուր Աստծո Արքայությունը տարածեց: Լարվածության ու տառապանքի մեջ, առօրյա կյանքում հարկերը վճարելիս, քաղցած ու կիզիչ արևի տակ անապատով անցնելիս: Ցանկացած իրավիճակում Նա հավատարմորեն Արքայությունն էր հռչակում:

Լինելով Արքայության զավակներ մենք էլ Նրա նման մեր կյանքը Երկնքի հետ համաձայնության մեջ ենք ապրում, որ այս երկրի վրա խոսքերով ու գործերով իրականացնենք Աստծո կամքը: (տե՛ս Կող. 3:1-2): Այսպիսի ծառայության կյանքը զորավոր կերպով հաստատում է Քրիստոսով մեր ճշմարիտ ինքնությունն ու տհաճություն պատճառում «կրոնի» և խավարի թագավորությանը:

Լինելու հարց

Երբ քայլ ենք անում և սկսում ծառայել Քրիստոսով ունեցած մեր իշխանությամբ, կարևոր է հասկանալ, որ ինչպես Նա էր մեկ Հոր հետ, այնպես էլ մենք պետք է մեկ լինենք Նրա հետ: Ահա, թե ինչ ասաց Հիսուսը.

«Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, Փիլիպպո՛ս, և ինձ չճանաչեցի՞ր. ով ինձ տեսաւ, տեսաւ Հօրը. իսկ դու ինչպէ՞ս ես ասում, թէ՝ Հօրը մեզ ցո՛յց տուր: Չե՞ս հաւատում, որ ես Հօր մէջ եմ, և Հայրը՝ իմ մէջ: Այն խօսքերը, որ ես ասում եմ ձեզ, ինքս ինձնից չեմ խօսում, այլ Հայրը, որ բնակւում է իմ մէջ, նա՛ է անում գործերը» (Հովհ. 14:9-10):

Վախի պատճառով մենք չենք հասկանում մեր ունեցած իշխանությունը: Աշխարհային իշխանությունը հիմնված է վախի վրա: Աստվածային իշխանությունը՝ սիրո: Առաջին Հովհաննես 4:18- ն այսպես է ասում. «Սիրոյ մէջ երկիւղ չկայ. և կատարեալ սէրը հեռու է վանում երկիւղը»: Քրիստոս Ինքըն այս երկրի վրա որպես ամենակարող Աստված չէր գործում, այլ ավելի շատ գործում էր մի իշխանությամբ, որ Աստծուց էր գալիս: Աստվածային իշխանությամբ քայլել նշանակում է քայլել աստվածային իշխանության հովանու ներքո:

156

Այս երկուսն անքակտելի են: Իշխանությունը ոչ թե անելու, այլ լինելու հարց է: Այն ինքնությանն է վերաբերվում: Հիսուսն ասում է. «Որպէսզի ամէնքը մի լինեն. ինչպէս դու, Հա՛յր, իմ մէջ, և ես՝ քո մէջ, որպէսզի նրանք էլ մեր մէջ լինեն, և որպէսզի աշխարհն էլ հաւատայ, թէ դո՛ւ ուղարկեցիր ինձ» (Հովհ. 17:21):

Իշխանության սահմանումներից մեկն ասում է. «իշխանությունը լիազորված և արտոնված ազդեցությունն է»: Ըստ Աստվածաշնչի երկնքի ու երկրի վրա ամեն իշխանություն Հիսուսին տրվեց և մենք էլ որպես Նրա ծառայության շարունակողներ բաժնեկից եղանք այդ զորությանը (տե՛ս Հովհ.20:21-23): Այլ կերպ ասած մենք *մոտ* ենք Աստծուն, քանի որ Հիսուսն Իր ունեցած *հարաբերությունը* մեզ փոխանցեց: Հայր-Որդի հարաբերությունը հենց Աստծո էությունն է: Դա այն հարաբերությունն է, որով, «Ամէն ինչ եղաւ...և առանց նրան չեղաւ ոչինչ, որ եղել է» (Հովհ. 1:3):

Հոր և Որդու սիրո միջոցով տեսնում ենք, որ Աստծո մեկությունը Աստծո *հարաբերությունն* է, որից էլ բխում է ամբողջ կյանքը: Հիսուսի միջոցով Աստված այնքան մոտեցավ մարդուն և մարդն այնքան մոտեցավ Աստծուն, որ նրանք կատարելապես մեկը դարձան: Ահա թե ինչ է նշանակում մարմնավորումը:

Կիրակնօրյա դպրոցի առաջին դասարանի աշակերտը կարող է ձեզ ասել «Հիսուսն իմ մեջ է ապրում»: Սակայն արդյոք երբևէ խորապես մտածել ենք այդ խոսքերի նշանակության մասին: Այսինքն ոչ միայն Աստված մեզ կգործածի, այլև կապրի մեր մեջ ու մեր միջոցով: Անհավատալիորեն Հիսուսը կատարյալ մարդ և կատարյալ Աստված էր: Հիսուսն իր գոյությամբ մեկ է Հոր և Սուրբ Հոգու հետ: Նրա մեկությունն Աստծո հետ այն նույն մեկությունն է, որ Նա հավատքի միջոցով և Սուրբ Հոգու զորությամբ *մեզ* վրա է տարածել: Վերստին ծնվելով, ծնվում ենք Աստծո մեջ: Հիսուսն ասաց.

«Եւ ես տուեցի նրանց այն փառքը, որ դու ինձ տուեցիր, որպէսզի մի լինեն, ինչպէս և մենք մի ենք: Ես՝ նրանց մէջ, և դու՝ իմ մէջ, որպէսզի կատարեալ լինեն միութեան մէջ: Եւ աշխարհը գիտենայ, որ դո՛ւ ուղարկեցիր ինձ. և ես սիրեցի նրանց, ինչպէս դու ինձ սիրեցիր» :

(Հովհ. 17:22-23)

157

Ըստ Էդինբուրգի համալսարանի քրիստոնեական դավանաբանությունների նախկին պատվավոր պրոֆեսոր Թոմաս Թորենսի.

Լինել «Քրիստոսի մեջ» արտահայտությունը քրիստոնեական քաղցր փոխաբերություն չէ, այն ցնցող հոգևոր իրականություն է, որ պետք է մեր ողնաշարով հուժկու հոսանքներ փոխանցի, այնպես ինչպես աղաղակելով դուրս է շպրտում դևերին: Քրիստոսի մեջ լինել իրականում նշանակում է կիսել Աստծո

ներքին հարաբերություններն ու սերը: Նշանակում է Աստծո հավիտենական սիրո հաղորդությունը Հիսուս Քրիստոսի միջոցով փոխանցել Քրիստոսի հետ ունեցած մեր միության մեջ և պատրաստել մեզ, որ ապրենք Աստծո հետ և Աստծո մեջ:

Քրիստոսի մեջ մեր ինքնությունը ճանաչելու հարցում սա առանցքային դեր է խաղում: Հին և Նոր Կտակարանները լի են Աստծո մարդկանց վիթխարի իշխանությամբ քայլելու նկարագրություններով: Քրիստոսն արձակում և հանձնարարում է բոլոր իրեն հավատացողներին գնալ և իրենց միջի եղածն անել: Որքան շատ եմ Հիսուսի անունով համարձակության քայլ արել ուրիշների համար, անքան աճել է Նրա իշխանությամբ քայլելու իմ կարողությունը:
Որպես քրիստոնյաներ մենք հավատում ենք Հիսուսի հրաշքներին, բայց արդյոք իրականում հավատում ենք, որ այդ նույն կերպ Աստված մեր մեջ է: Հիսուսն ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, թէ ով հաւատում է ինձ, ինքն էլ կ՚անի այն գործերը, որ ես եմ անում. և դրանցից աւելի մեծերը կ՚անի, որովհետև ես գնում եմ Հօր մօտ» (ՅՀ 14:12):
Երբեմն այնպես ենք գործում, կարծես Քրիստոսը մի անթույլատրելի պատնեշ է դրել, որը հեզությամբ կարող ենք անցնել միայն միլլիոնավոր մղոններ հետո:

«Բայց Նա *Հիսուսն* է», առաջարկում ենք կաղալով:

«Բայց *Հիսուսը* քո մեջ է» պատասխանում է Աստվածաշունչը: Քրիստոսի ծառայությունը մեր ծառայության հետ համեմատելով կեղծ անջրպետ ենք ստեղծում: Այդ ամենը Նրա ծառայությունն է մեր մեջ: Չկա ապակե առաստաղ, որի վրա կարողանայինք տեսնել: Մենք բարին ենք գործում, ուրեմն Նա է մեր մեջ: Նա բարին է գործում, ուրեմն մենք ենք Նրա մեջ: Դա այն բնությունն է, որ Նա մեր մեջ է դրել և որը պատրաստ սպասում է գործելու:

Հիսուսը եկավ չափանիշ սահմանելու, թե ինչ է կարող անել մարմնավոր մարդ արարածն՝ ապրելով Աստծուց կախյալ հարաբերության մեջ:

Հետո մեզ Իր Հոգին տվեց, որ կարողանանք հասնել այդ չափանիշին: Նա մեզ պարազապես օրինակ չտվեց և ոչ էլ տարբերակ 1.0: Նա *Իրեն* մեզ տվեց: Արդյոք իսկապես հավատում ես, որ հարությալ Քրիստոսի Հոգին քո մեջ է բնակվում:

Այն գիտաֆանտաստիկայից իրոք ավելի լավ է: Անգամ միջին հավատացյալը լիարժեք իշխանություն ունի գնալու և անելու, այն ինչ Հիսուսն արեց: (Անկերեղծ ա ասած ես ուղղակի սպասում եմ այն օրվան, երբ կսկսենք *Մատրիցա* ոճով փամփուշտներից խուսափել): Ինչու՞ պետք է դրանից պակաս անհավատալի բաներ ակնկալենք:

Հիսուսը որպես մեխանիկ և դրամապանակ գտնող

Չիկագոյան ձմռան ցեխոտ մի օր, կանգ առա մի զույգի օգնելու, ովքեր մեքենան ճանապարհի մի կողմն էին քաշել: Ես շտապում էի և նրանց հարցրեցի.

-Եթե հիմա աղոթեմ և ձեր մեքենան աշխատի, կհավատա՞ք, որ Հիսուսը ձեզ ճանաչում ու սիրում է:

Նրանք իրար նայեցին ասես մտածելով *մի քիչ տարօրինակ է*: Երկուսն էլ դողում էին և պարզ էր, որ տղամարդը երկար ժամանակ փորձել էր շարժիչը գործի գցել: Նա ինձ նայեց ու ասաց.

-Եթե հենց հիմա այս մեքենան աշխատի, ուրեմն հաստատ Աստված արեց:

Ձեռքս շարժիչին դնելով ասացի.

-Հիսուսի անունով, գործի՛ ր:-Հետո նրան ու ասացի,-բանալին պտտի՛ ր:

Շարժիչն անմիջապես սկսեց գործել:

Բազմիցս երբ մարդիկ կորցրել են իրենց դրամապանակը կամ բանալիները նման հարց եմ տվել և աղոթել: Մի քանի րոպե կամ ժամ անց իրերը հայտնվել են այնպիսի վայրերում, որ անհնար է նախկինում լինեին: Այս պատմություններն ամբողջ երկրով մեկ պատմել եմ և մարդիկ նման բաներ փորձելով ինձ էլեկտրոնային նամակներ են գրել պատմելով այն զարմանահրաշ պատմությունները, որ Աստված գործել է իրենց միջոցով, երբ քայլ են արել ու հավատքով խոսել:

Իմ սիրելի ընկեր Մայք Սմիթն, ով մեր շրջանում դպրոցի տնօրեն է վերջերս ինձ զանգահարեց ու իրենց դպրոցում կատարված մի պատմություն պատմեց: Ուսուցիչներից մեկը հուսահատ գրասեղանի վրա և դասարանում ինչ որ թղթեր էր որոնում:

Նա ասել էր, որ կաղոթի և Աստված այդ թղթերը նրա առջև կդնի: Ուսուցիչը տարօրինակ նայել էր, բայց գլխով համաձայնության նշան էր տվել: Նա սկսել էր աղոթել, որ տաս րոպեի ընթացքում այդ թղթերը հայտնվեն սեղանի վրա: Երբ նա թեքվել էր, որ գնա, ուսուցիչը բացել էր ամենավերևի դարակը, որը քիչ առաջ տակնուվրա էր արել առանց որևէ արդյունքի և ահա թղթերն այնտեղ դրված են եղել:

Երեխաները Քրիստոսի իշխանությունը կիրառելու մեջ նույն պատնեշները չունեն, ինչ մենք: Վերջերս որդիս՝ Էլայջան, խաղալիքը բերեց ինձ մոտ ու ասաց.

-Պա՛ պ, այս խաղն այլևս չի աշխատում: Հիսուսի անունով ասա թող աշխատի:

Մի պահ վարանեցի, բայց ասացի.

-Դե, արի տեսնենք կաշխատի:

Դա էլեկտրական խաղ էր, որի քարտն այլևս չէր միանում: Քարտը ներսում չէր մնում: Ես վերցրեցի այն ու ասացի.

-Հիսուսի անունով, քարտն ընդունիր և թող խաղը միանա:

Էլայջան քարտը դրեց ու խաղը միացավ: Իհարկե իր մտքում նա վստահ էր, որ այդպես էլ պետք է լիներ: Խաղը նույնպես արարչագործության մաս է կազմում, ինչպես մնացած ամեն ինչ: Մի պահ նայեց ինձ ու ասաց.

-Շնորհակալություն Հիսուս:

Հետո վերցրեց խաղն ու սկսեց խաղալ: Անկեղծ ասած ես չէի սպասում, որ ինչ որ բան կկատարվի, բայց քանի որ երեխաս ինձ մոտ եկավ խնդրանքով ասացի. «շատ լավ, փորձենք»: Կարծում եմ Աստված էլ նման վերաբերմունք ունի, երբ Իր զավակներն ինչ որ խնդրանքով Նրան են դիմում:

Ամբողջովին փոխանցվող ծառայություն

Եփեսացիներին չորրորդ գլխում Պողոս առաքյալն այսպես է գրում. «Ձեզանից ոմանց առաքյալներին, մարգարեներին և հովիվներին հատուկ շնորհ է տված Հիսուսին նման լինելու և Նրա գործն այս երկրի վրա շարունակելու: Մնացածիդ գործը պարզապես մյուսների հանդեպ սիրալիր լինելու վրա կենտրոնանալն է»:

Եկեք ուշադիր նայենք, իրականում սա այն չէ, ինչ Պողոսն ասել է: Նա գրում է, որ առաջնորդության հիմնական դերը *բոլոր հավատացյալներին* զինելն ու հաստատելն է, որ քայլեն Քրիստոսի կատարյալ ծառայության մեջ:

Նա շնորհ տուեց ոմանց լինելու առաքեալներ, ոմանց՝ մարգարէներ, ոմանց՝ աւետարանիչներ, ոմանց՝ հովիւներ և ուսուցիչներ՝ հաստատելու համար սրբերին իրենց պաշտօնի կատարման մէջ, ի շինութիւն Քրիստոսի մարմնի, մինչև որ մենք բոլորս հասնենք հաւատի կատարեալ միութեանն ու Աստծու Որդու ճանաչմանը, *կատարեալ* մարդու աստիճանին՝ ունենալով *ճիշտ* Քրիստոսի հասակի չափը:

Եփ 4:11-13 ընդգծումն ավելացված է

Պողոսը նաև Գաղատացիներին 4:19-ում գրում է. «Որդեակնե՛րս, դուք, որոնց համար վերստին երկունքի մէջ եմ, մինչև որ Քրիստոս կերպարանուի ձեր մէջ»: Այսինքն Քրիստոսի կյանքն ու ծառայությունը միայն վերնախավից մի քանիսի համար չէ: Աստիճանակարգումն ու դասակարգումը Եկեղեցի մտան որպես սինկրետիզմի արդյունք, երբ Կոնստանտին կայսեր օրոք Եկեղեցուն խառնեցին Հռոմի հեթանոսական կրոնները: Երբ Հռոմը դադարեց հալածել աճող քրիստոնեական Եկեղեցուն, հռոմեացիները որոշեցին քրիստոնեությունը հարմարեցնել իրենց հասարակությանը: Նրանք հռոմեացի ազնվականներին որպես եկեղեցու «առաջնորդներ» նշանակեցին և բարձրաշխարհիկ դասին բնորոշ պատմուճաններ տվեցին, որն այսօր էլ կրում են Բարձրագույն Եկեղեցու քահանաները:

Այս ամենը Քրիստոսի հիմնած մարդկանց պատկերացումներին հակառակ Արքայության ճիշտ հակապատկերն է թվում, որտեղ խոնարհները բարձրանում են և բարձրերը խոնարհվում: Սուրբ Գիրքն ասում է, որ մի Հայր ունենք, որ երկնքում է (Մաթ. 23:9)և մի չափանիշ հասնելու,որ Քրիստոսինն է: Հոգու միջոցով մեզանից յուրաքանչյուրն ունի այդ ներուժը հասնելու Քրիստոսի կատարյալ և լիարժեք չափանիշներին՝ մաքրությամբ, հեզությամբ, զորությամբ և իմաստությամբ: Հարությյալ Քրիստոսն այժմ անսահման փառավորված է, իսկ Նրա Հոգին մեր մեջ է ապրում, որպեսզի մեր մեջ կատարյալ դարձնի Իր կյանքն այս երկրի վրա, Իր տառապանքը,Իր հրաշքներն ու Իր սերը:

Մի կեղծեք, որ ինքնատիպ եք

Մեր աշխարհն ինքնատիպության է տենչում: Քրիստոսը *քո* մեջ փառքի հույսն է: Եթե Քրիստոսին չես տանում աշխարհ, դու էլ կարող ես տնից դուրս չգալ: Սակայն մի անհանգստացիր, դու Նրան տանում ես: «Որոնց Աստված կամեցավ ցույց տալ, թե ինչ է այս խորհուրդի փառավոր ճոխությունը հեթանոսներումը , որ է Քրիստոսը ձեզանում՝ այն փառքի հույսը» Կող. 1:27:

Սա էր Աստծո ողջ ծրագիրը, մինչդեռ մենք քրիստոնյաներս շփոթում ենք մեր դերը: Մտածում ենք, որ պետք է Քրիստոսի *նման* լինենք, սակայն տարօրինակն այն է, որ հաճախ նման լինելը մեկնաբանում ենք մյուսների հանդեպ սիրալիր լինելով: Մենք քիստոնեակերպ լինելն ավելի շատ պատկերացնում ենք Մայր Թերեզայի կամ ասենք տատիկի կերպարով: Այն հոգնեցուցիչ է, վհատեցնող և հիմնականում մեզ մոտ չի ստացվում:

Իսկ ինչու չենք քրիստոնեակերպ լինելը ավելի շատ նմանեցնում Ուիլիամ Վոլոսին, *Քաջասիրտը* ֆիլմում: Եթե խոսքը վերաբերվում է միայն հաճելի և սիրալիր լինելուն, ապա ինչպես է անգամ մտքովդ անցնում անել այն, ինչ Հիսուսն արեց: Եվ եթե կարծում եք, որ Հիսուսի գործերն անելը բարդ է, ապա փորձեք կատարյալ լինել: Մաթևոս 5:48-ասում է մեզ կատարյալ լինել ինչպես մեր Հայրն է երկնքում կատարյալ: Սակայն միայն Աստված է կատարյալ: Մենք ոչ թե ավելի շատ կանչված ենք Քրիստոսին *նման* լինելու, այլ Քրիստոսի *մեջ* լինելու: Սա ոչ թե մեզ ճնշելու, այլ քաջալերելու համար է:

Միևնույնն է առանց Աստծո ոչինչ անել չենք կարող, ուստի կարող ենք այլևս չփորձել: Դադարեցրե՛ք: Դադարեցրեք փորձելն ու թույլ տվեք Աստված գործի: Աստծո ծրագիրն այն չէր, որ միայն մի քանիսը հանդիպեն նրան, իսկ մնացած բոլորն Իր մասին երկրորդ ձեռքից իմանան, երրորդ ձեռքից, դասարանում միշտ գերազանց ստացող աշակերտից և այլն: Աստծո ծրագիրն է, որ մարդիկ անձնապես հանդիպեն Քրիստոսին իմ և քո մեջ:

Օրվա հրատապ նորությունը՝ «Քրիստոնյաներն, ովքեր փորձում են Աստծուն նմանվեն» այս աշխարհի հույսը չեն: Այլ փառքի հույսը Քրիստոսն է մեր մեջ:

Իսկ ինչ կլիներ, եթե իմանայիր, որ քո միակ գործն Աստծուն սիրելն ու Նրանից սեր ստանալն է: Մի՞թե Հոր սերն անկատար նմանության անթերի հատկությունն չէ, այն հարաբերություն է, կատարյալ մտերմությունը լիովին ճաշակելու հրավեր: Աստված բացարձակ ոչինչ առավել չի ուզում քան Իրենով քեզ լցնել, որպեսզի Սուրբ Հոգու միջոցով *փայլես* Նրա ներկայության մեջ: Հիսուսն ասաց. «Բայց ես ճշմարիտն եմ ասում ձեզ. լաւ է ձեզ համար, որ ես գնամ. որովհետև, եթէ ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մօտ չի գայ. իսկ եթէ գնամ, նրան կ՚ուղարկեմ ձեզ մօտ» (Հովհ. 16:7):

Իմ ընկեր միակ և անկրկնելի Բիլլի Ջոնսոնը, Կալիֆորնիա նահագի Ռեդդինգ քաղաքի Բեթել եկեղեցու հովիվը, ասում է, որ Սուրբ Հոգին անհավատ հավատացյալների մեջ թակարդված է և ուզում է դուրս գալ: Բիլլը սա ոչ թե կոպիտ կերպով է ասում, այլ որպես հուսադրող խոսք: Այն նաև մանկական խոսքի է նման: Իսկ ինչ եթե իմանայինք, որ ամեն բան, ինչի կարիքն ունենք և ավելին քան կարող ենք երևակայել կամ հուսալ իրականում մեր ներսում է: Այն նաև հանդարտեցնող խոսք է: Միակ բանը, որ պետք է փափագենք Աստծո մեր մեջ լինելու իրականության մեջ հանգիստ գտնելն է: Հիսուսի Էմմանուել անունն իրականում նշանակում է «Աստված մեզ հետ»: Մեր ունեցած ամենազորավոր հատկությունն Աստծո հետ միաբանությունն է, որը նաև մեր ինքնությունն է: Մենք պետք է մեծամեծ բաներ ակնկալենք: Ակնկալել, որ մենք մեծամեծ բաների համար ենք ստեղված նույնպես մանկական հավատք է պահանջում: Թույլ չտաք, որ այդ անկնկալիքը ձեզանից տանեն:

Թագավորման իշխանություն

«Աստծո Արքայություն» բառը Նոր կտակարանում հունարեն basileia բառի թարգմանությունն է, որ նշանակում է «թագավորման իշխանություն»:

Ծառայող և աստվածաբան Ջորջ Լեդդը նշել է, որ «Աստծո Արքայությունն Աստծո մենիշխան կառավարումն է դրսևորված մարդու մեջ և Քրիստոսի գործով, ստեղծելով մարդիկ, ում վրա Նա թագավորում է և գործելով թագավորությունների թագավորությունում, որտեղ տիրում է Նրա զորությունը»:

163

Թագավորման իշխանությունը սիրո հարաբերության վերականգնումն է, որն ինչին դիպչում է, փոխում է: Քրիստոսը եկավ, որպես նոր Ադամ:

Այսպէս էլ գրուած է. «Առաջին մարդը՝ Ադամը, եղաւ կենդանի շունչ. վերջին Ադամը՝ կենդանարար հոգի»:Բայց ոչ նախ հոգևորը, այլ՝ շնչաւորը և ապա՝ հոգևորը: Առաջին մարդը՝ երկրից, հողեղէն, իսկ երկրորդ մարդը՝ Տէրը՝ երկնքից: Ինչպէս հողեղէնն է, նոյնպէս և հողեղէններն են, և ինչպէս երկնաւորը, նոյնպէս և՝ երկնաւորները: Եւ ինչպէս որ կրեցինք հողեղէնի պատկերը, նոյնպէս և պիտի կրենք երկնաւորի պատկերը:

1 Կոր 15:45-49

Ներկայիս թագավորման աստվածաբանությունն այս գաղափարը լրիվ խառնել է: Էլ չեմ խոսում կառավարության մասին, որ քրիստոնյաներն ուզում են իրենց ձեռքը վերցնել: Հիսուսն այդպես չարավ: Իր կատարյալ կյանքով և խաչի վրա մահով Նա վերակագնեց մարդկության իսկզբանե այս երկրի վրա ունեցած իշխանությունը, որ Աստված մեզ էր տվել Պարտեզում: Նա մեզ երկնքի կրողները դարձրեց: Մեղքը մերժելով և Քրիստոսին Տեր հռչակելով մեր մեջ ընդունում ենք Նրա Հոգու պարգևն ու Արքայության իշխանությունը: Նա մեզ կանչել է որպես Արքայության Իր ժառանգակիցներ և ուստի մեզ ընտրության լիարժեք իշխանություն է տվել, ճիշտ ինչպես Ինքն է ազատ ընտրելու:

Աստծո Արքայությունը մեր մեջ է: Երբ մեր կյանքերը Հիսուսին ենք հանձնում Նրա Արքայությունն սկսում է տիրել մեր մեջ: Այն թե գերբնական է և թե բնական: Մեզ Սուրբ Հոգի է տված այս մարդեղեն մարմինների մեջ, Նրա թագավորությունը պետք է տարածվի մեր մտքի, կամքի, սրտի, հույզերի, վերաբերմունքների, հարաբերությունների, նախասիրությունների, անց կացրած ժամանակի, սիրած զբաղմունքների ու սովորությունների յուրաքանչյուր բաղադրիչի վրա, մինչև կատարելապես չարտացոլենք Աստծո փառքը: Սրբացման գործընթացը անմասն չի թողնում մեր կյանքի որևէ բնագավառ:

164

Հիսուսը ոչ միայն մեր մեղքերի, այլև մեր Աստծո փառքից ընկնելու համար մեռավ: Իրականում «Աստծո փառքից ընկան» արտահայտության հունարեն թարգմանությունը բառացի նշանակում է հրաժարվեցին: Մենք պետք է Աստծո *փառքի* կրողները լինեինք,բայց մեր անհավատության պատճառով Պարտեզում դրանից զրկվեցինք:

Մինչև այսօր էլ Սատանան փորձում է անհավատության միջոցով մեզ ետ պահել Աստծո փառքից: Նա շշնջում է. «Քեզ ու՞մ տեղն ես դրել: Դու չես կարող դա անել: Եթե փորձես կձախողես ու Ավետարանը կվնասես»: Սատանան մեզ վախ է ներշնչում և սկսում ենք կարծել, թե մեր սեփական մտքերն են ու խայծը կուլ տալ: Հիսուսը մեռավ մեզ ետ վերադարձնելու այն փառքը, որը ժամանակին մերժել ենք: Նա մեզ թագավորական քահանայություն բերեց: Հին Կտակարանում քահանայությունն ստեղծվեց նրանց համար, ովքեր արտոնված էին մտնելու Սրբության Սրբոցը, Հայր Աստծուն հանդիպելու և համայնքի անունից ներկայանալու: Սուրբ Հոգին այսօր հնարավոր է դարձրել Հոր հետ նման մտերիմ հաղորդակցությունը և այն ինչ ստանում ենք Նրանից կարող ենք մյուսներին փոխանցել: Մեր մեջ կրում ենք Նրա ներկայությունը, որից էլ բխում է այս աշխարհում կատարած մեր ծառայությունը:

Իշխանությամբ քայլել նշանակում է կրել այս փոփոխարար ներկայությունը: Երբ մնում ենք Նրա մեջ և Նա մեր մեջ պետք է ակնկալենք, որ մենք ու մեզ շրջապատող աշխարհը կփոխվի այդ կատարյալ սիրո հարաբերությունից: Ահա թե ինչ է նշանակում հռչակել Աստծո Արքայությունը: Երբ Հիսուսին հարցրեցին.«Դո՞ւ ես, որ գալու էիր, թէ՞ուրիշին սպասենք»: Նա պատասխանեց նրանց և ասաց. «Գնացէք պատմեցէ՛ք Յովհաննէսին, ինչ որ դուք տեսաք և լսեցիք. որ կոյրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները մաքրւում են, խուլերը՝ լսում, մեռելները յարութիւն են առնում, աղքատները Բարի լուրն են լսում»: (Ղուկ. 7:20,22): Որպեսզի անենք այն, ինչ Հիսուսն արեց պետք է Նրա անվան իշխանությամբ քայլենք, «Աստված մեզ հետ»:Թորրենսը Քրիստոսի անվան մասին հետևյալն է գրել.

165

Արտասանել Հիսուս Քրիստոս անունն արդեն նշանակում է, որ մեզ համար հոգ տանող կա և մենք կորած չենք: Հիսուս Քրիստոսը մարդու փրկությունն է բոլոր իրավիճակներում և այն ամենի մեջ ինչը խավար է դարձնում նրա կյանքը, ներառյալ իրենից սկիզբ առնող չարությունը... Երկնքի Արքայությունն արդեն գոյություն ունի, Աստծո կողմից արդեն գործողություն է կատարվել, որ մեզ համար լավ լինի....Այս կատարվածի մեջ արդեն ամեն բան բարի է, քանի որ Աստված Ինքը մարդացավ մեզ համար: Ինչ էլ որ մնաց կարող է այս փաստի բացահայտումը լինել: Մենք գոյություն չունենք ինչ որ մշուշոտ անորոշության մեջ, մենք գոյություն ունենք Աստծո միջոցով, ով մեր հանդեպ անգամ դեռ չծնված ողորմած էր:

Իսկ ինչպես է այն դրսևորվում մեր կյանքում: Ինչպես ենք ցույց տալիս, որ իրականում հավատում ենք, որ Աստված գործում է մեր միջոցով: Այն դրսևորվում է աղոթելով, ծառայելով, խոսելով և գործելով: Աշխարհում չկա մի իրավիճակ, որտեղ Աստծո ձեռքը չհասնի: Բացակա բաղադրիչն Աստված չէ, Նա իր մասն արել է: Բազակա բաղադրիչը մենք ենք: Ինչպես արդեն ասել եմ, երբ որևէ իրավիճակ ենք մտնում որպես Նրա ներկայության և իշխանության կրողներ, Աստված այնտեղ է, քանի որ մենք ենք այնտեղ: Նա հայտնվեց, որովհետև մենք հայտնվեցինք, և Նա մեր մեջ է, քանի որ այս աշխարհի հույսը Քրիստոսն է մեր մեջ: Սակայն դա չի նշանակում, որ մենք երբեք չենք կասկածում, պարզապես հավտքի դրսևորում է, երբ թողնում ենք, որ մեր գործողությունները կասկածներից առաջ անցնեն: Քանի որ Աստված մեզ ասել է մնալ Իր մեջ և Նա կմնա մեր մեջ, ուրեմն մենք իշխանություն ունենք դևեր հանելու, մեռելներին հարություն տալու,

հիվանդներին բժշկելու կան ինչու ոչ Թայմս Սքուեր հրապարակում երթևեկությունը կանգնեցնելու:

Իշխանության տակ եղող մարդը

Երբ Հիսուսն անցնում էր տարբեր քաղաքներով և Ավետարանը հռչակում Նա զարմացավ, երբ հանդիպեց իշխանության իմաստը հասկացող մի տղամարդու: Մի հարյուրապետ Հիսուսին մոտենալով խնդրեց, որ բժշկի իր ծառային: Հիսուսը համաձայնեց նրա հետ գնալ, սակայն այդ մարդը կանգ առնելով ասաց.

166

Տէ՛ր, ես արժանի չեմ, որ դու իմ յարկի տակ մտնես. այլ խօսքո՛վ ասա, և իմ ծառան կը բժշկուի.քանի որ ես էլ իշխանութեան տակ եղող մարդ եմ, ինձ ենթակայ զինուորներ ունեմ. սրան ասում եմ՝ գնա՛, և գնում է, և մի ուրիշին, թէ՝ ե՛կ, և գալիս է. և իմ ծառային, թէ՝ արա՛ այս, և անում է:

Մաթ. 8:8-9

Հետաքրքրական է, որ հարյուրապետն իրեն Հիսուսի հետ չնույնականացրեց, որպես իշխանություն *ունեցող* , այլ ներկայացավ որպես իշխանության *տակ* եղող: Զինվորները նրան ենթարկվում էին, քանի որ նա գործում էր Հռոմեական կայրության կայսեր լիազորյալ իշխանության ներքո: Հարյուրապետը ցույց տվեց, որ ինքը ճիշտ է հասկացել Հիսուսի իշխանության աղբյուրը, որ այդ իշխանությունը ոչ թե Հիսուսից, այլ Աստծուց է գալիս: Հիսուսի իշխանությունը կատարելապես լիազորված էր Աստծո զորությամբ: Հիսուսը զարմացավ և գովեց նրա հավատքն, ասելով, որ Իսրայելում դրանից ավելի մեծ հավատք չտեսավ: Մեր իշխանությամբ քայլելու ունակությունը կախված է Հոր իշխանությունը ճանաչելու և դրա ներքո գործելու ունակությունից: Հիսուսը սովորեցրեց Իր հետևորդներին.

Եթէ մէկը ուզում է նրա կամքը կատարել, կ՚իմանայ այս ուսուցման մասին, թէ Աստծո՞ւց է արդեօք, թէ՞ ես ինքս ինձնից եմ խօսում: Ով ինքն իրենից է խօսում, իր համար է փառք փնտռում, իսկ ով փնտռում է նրա՛ փառքը, ով իրեն ուղարկել է, նա ճշմարիտ է, և նրա մէջ սուտ բան չկայ:

Հովհ. 7:17-18

Օրվա զովին հատուկ պահ կար Պարտեզում, որ Ադամն ու Եվան Հոր հետ ժամանակ էին անց կացնում և հավատացած եմ, որ «ցանկությունների» համաձայնեցում էր կատարվում: Ինչպես օրինակ ցանկությունների համաձայնեցում եղավ, երբ Հիսուսը ամբոխից հեռանալով Հոր հետ ժամանակ անցկացրեց: Հոր հետ ժամանակ անցկացնելով մենք կարող ենք հետևել մեր սրտում ծագած մի բան անելու ալեկոծությանը, որովհետև մենք Նրա հետ ենք և գործում ենք Նրա սրտով և կամքին համեմատ:

167

Աստծո իշխանությունն օրհնություն է բերում և ինչ որ մեկի կյանքում Աստծուց տրված իշխանությունը պատվելով մենք օրհնվում ենք այդ մարդու միջոցով: Ահա թե ինչ եղավ, երբ հարյուրապետը պատվեց Հիսուսի Աստծուց տրված իշխանությունը: Նրանք, ովքեր ճանաչում և ընդունում էին Հիսուսի ունեցած իշխանությունը կարողանում էին Նրա միջոցով մեծ հրաշքներ ստանալ: Այն տեռատես կինն, ով տասներկու տարի արյունահոսությամբ էր տառապում, Հիսուսից բժշկություն չխնդրեց, պարզապես

ճանաչեց Նրա ունեցած իշխանությունն ու շորի քղանցքին հպվելով մտավ այդ իշխանության տակ: Այդ կինն Աստծուն դիմեց Հիսուսի ունեցած իշխանության միջոցով և իր հրաշքն Աստծուց ստացավ ընդունելով Հիսուսի վրա Նրա իշխանությունը (տես Ղուկ. 42-48):

Հիսուսը նաև սովորեցրեց «Ով մարգարէին ընդունում է իբրև մարգարէի, մարգարէի վարձ կը ստանայ. ով արդարին ընդունում է իբրև արդարի, արդարի վարձ կը ստանայ» (Մաթ. 10:41):

Մարգարեն գործում է Աստծո անունից լիազորված իշխանությամբ և պարգևատրվում Աստծո պատգամի իշխանությանը ենթարկվելու համար: Ինչպես օրինակ այն մարդն, ով ճիշտ է հասկանում, որ մարգարեի իշխանության սկզբնաղբյուրն Աստված է, ենթարկվում է այդ նույն իշխանությանն ու հավասարապես պարգևատրվում:

Իշխանության հարցը զորավոր կերպով ընդունված է ամբողջ Աստվածաշնչում և Հիսուս Քրիստոսի կյանքում: Մենք նույնպես պետք է գնահատենք մեր կյանքերում դրա կարևորությունը: Սուրբ Երրորդության ներքին գործունեությունից են բխում ընդունված իշխանությունն ու փոխադարձ հնազանդությունը, որոնք հոգևոր աճի և Հայր որդի հարաբերությունների անբաժանելի մասն են կազմում:

Պակաս կարևոր չէ այն, որ եթե օրհնությունը գալիս է Աստծո իշխանության միջոցով, ապա մեր կյանքերում ապստամբ վերաբերմունքն ու անհամաձայնությունը դիվային ազդեցությունների համար դուռ են բացում և ապստամբության իշխանին տեղի տալիս մեր կյանքում, հարաբերություններում ու ծառայության մեջ :

Սիրո մեջ արմատավորված ու հաստատված

Երբ հարցը վերաբերվում է առաջնորդությանն ու հոգևոր իշխանությանը ամենակարևոր որակավորումներից մեկը մեր հանդեպ ունեցած Աստծո սիրո մասին խոր, խոր գիտելիքների իմացությունն է: Մեր իշխանությունը գալիս է Որդու հանդեպ ուեցած Հոր սիրուց, որ Քրիստոսի մահով ու հարությալ կյանքով մեզ փոխանցվեց: Հոր սիրո մասին ունեցած մեր հայտնությունը (որ տարբեր է դրա մասին գիտելիքից) մեզ թույլ է տալիս բնակվել Աստծո լրիվ ամբողջության մեջ: Ահա Նրա մեջ մնալու սկզմունքը, որ Քրիստոսն ասաց, եթե մնանք Իր մեջ, Նա էլ մեր մեջ կմնա (տե՛ս Հովհ.15:4): Պողոսը Եփեսացիներին 13:14-19 ում հրաշալի կերպով նկարագրում է Աստծո Իր ժողովրդի հանեպ ունեցած սերն ու գործերը.

Ահա թէ ինչու ծնկի եմ գալիս մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօր առաջ, որից իր անունն է ստանում ամէն ազգատոհմ երկնքում և երկրի վրայ,որպէսզի դուք, ըստ իր փառքի մեծութեան, իր Հոգու միջոցով զօրութեամբ ամրանաք ներքնապէս.այնպէս որ, ձեր հաւատի միջոցով, Քրիստոս բնակուի ձեր սրտերում, և դուք սիրոյ մէջ արմատաւորուած ու հաստատուած լինէք. և կարողանաք հասկանալ բոլոր սրբերի հետ, թէ ի՜նչ է լայնութիւնը, երկարութիւնը, բարձրութիւնը և խորութիւնը,այսինքն՝ ճանաչէք Քրիստոսի սէրը, որ գերազանց է, քան ամէն գիտութիւն, որպէսզի լցուէք Աստծու լրիւ ամբողջութեամբ:

Հնարավոր է հիվանդներին բժշկելու հավատք ունենալ, բայց տակավին դատապարտության մեջ ապրել: Առանց Հոր սիրո մասին հայտնության մեր բազմաթիվ

բարի գործերն ու պարգևները կնմանենք ձայն հանող պղնձի, որ շրջապատի մարդկանց գլուխներն է ցավեցնում:

169

Այն իշխանությունը, որ ունենք Քրիստոսի մեջ մնալով, մեզ թույլ է տալիս Աստծո սիրո առատաձեռնությամբ ծառայել: Երբ չենք առաջնորդվում մեր կարիքներն Աստծո սիրով բավարարելու սկզմունքով, հակառակ գաղթակղությունն է գալիս, որ այդ կարիքներն ուժի ու իշխանության կիրառմամբ բավարարենք: Նաև փորձում ենք արժեքավոր զգալ մարդկանց սխալ ձևով իշխելով ու կառավարելով: Անապահովության զգացումն ու հպարտությունն այն երկու գործոններն են, որ հակառակ են կենում աստվածային իշխանությամբ գործելուն: Մեկը թերարժեքության զգացումը որպես մեր անձին բնորոշ հատկություն է ներկայացնում, մյուսը՝ Աստծո բարությունը որպես մեր սեփական բարություն: Երբ կարիքները բավարարելու համար Աստծուն չենք դիմում, անվստահ ենք դառնում և կախված լինում այն մարդկանցից, ում կամենում ենք ծառայել՝ ակնկալելով ստանալ նրանց հավանությունն ու մեղմել այդ թերարժեքության զգացման ցավը:

Իսկ երբ թույլ ենք տալիս, որ Աստված հոգա մեր կարիքները, վայելում ենք ազատության մեջ մյուսներին ծառայելու Նրա պարգևը: Երբ մեր անապահովության զգացումն Աստծուն ենք բերում, Նա մեզ ազատագրում է, և երբ ապաշխարում ենք մեր հպարտությունից, Նա մեզ շնորհով զորացնում է: Աստված ամբարտավաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհ է տալիս (տե՛ս Հակ.4:6):

Մովսեսի խոնարհության պատճառով Աստված նրա հետ երես առ երես խոսեց և նրան առաջինն Իր ժողովրդի վրա իշխանություն տվեց (տե՛ս Թվ.12:3-8): «Քանզի Տիրոջ աչքերը նայում են ամբողջ երկրին, որպէսզի նա զօրացնի բոլոր նրանց, որոնց սրտերը ուղիղ են: Արդ, քանի որ դու այդ բանն անտեսեցիր, սրանից յետոյ քո երկիրը պատերազմներ է ունենալու» (2 Մն. 16:9): Երբ ձգտում ենք Աստծո առաջ շիտակ սրտով կանգնել, այն ժամանակ Նրա սերն ու իշխանությունը լիությամբ մեր կյանք են հորդում:

170

10//Վիրավոր բժշկողներ

Հույն՝ ցավի մեջ տառապող աշխարհին

Զնայած աշխարհը լի է տառապանքով, բայց լի է

նաև այն հաղթահարողներով:

Հելլեն Քելլեր

Ես կնախընտրեի ապրել մի աշխարհում, որտեղ կյանքս շրջապատված կլիներ առեղծվածներով, քան այլ աշխարհում, որն իր փոքրությամբ հասանելի կլիներ իմ մտքի ընկալողունակությանը:

Հարրի Էմերսոն Ֆոսդիք

Կատաղի Սեր ֆիլմում ես պատմում եմ տասնութ տարի առաջ իմ տեսած երազի մասին, որտեղ գրեթե ութ հարյուր մարդկանցով լի եկեղեցու սրբարանում նստած եմ: Շուրջս նայելով տեսնում եմ, որ բոլորն ինչ որ խառը բաներով են զբաղված: Ոմանք եկեղեցու նստարանների վրա սիրով էին զբաղվում: Գանգստերները կռիվներ էին անում: Մարմնավաճառներն իրենց գործով էին զբաղված և ոմանք թմրանյութեր էին օգտագործում և մեկը մյուսի վրա բղավում: Երազումս դահլիճով մեկ վազում էի և փորձում մարդկանց կանգնեցնել:

171

Շարունակ աղաղակում էի.

-Դադարեցրեք: Եթե չեք պատրաստվում հարգել Աստծո տունն, ուրեմն հենց հիմա հեռացե՛ք: Այս ամենը չի կարող այստեղ կատարվել:

Երբ փորձում էի բոլորին կանգնեցնել Տերն իմ կողքին կանգնած էր: Նա հարցրեց ինձ. -Ինչո՞ւ ես փորձում դուրս անել, ես եմ նրանց ներս բերել: Ինչու ես դուրս անում այն, ինչ խնդրում էիր:

Ցնցված նայեցի Նրան.

-Աստված իմ, ես սա չեմ խնդրել:

-Դու Ինձանից կորսվող հոգիներ ես խնդրել: Նրանք այստեղ են հիմա,- ասաց Նա,- Ես ուզում եմ, որ *դու* հեռանաս:

Ես կրկին ցնցված էի.

-Տեր, *ինձ* ես հեռացնում: Ես այստեղի հովիվն եմ, ես Քո զավակն եմ: Ինչպես կարող ես ինձ ասել, որ հեռանամ:

-Հենց հիմա դուրս արի,-ասաց Նա:

Երբ դուրս եկա եկեղեցու դռնից ամեն բան անհետացավ և ոտքերիս տակ ավազի ճռճռոց էի զգում: Իմ առջև մի քանի գնացքի ռելսեր կային և այդ ռելսերին մի տարեց սպիտակահեր պարոն էր պառկած, ով բավականին լավ էր հագնված: Մեր աջ կողմում մի հին գնացքի կայարան էր և երբ նայեցի ներքև տեսա, որ հեռվից հսկայական գնացք է մոտենում:

Ես մտածեցի *Պետք է այս մարդուն ռելսերից հեռացնեմ, այլապես գնացքի տակ կընկնի ու կմեռնի:* Ես փորձեցի նրան այնտեղից դուրս հանել և անընդհատ ասել.

-Վեր կաց, վեր կաց: Պետք է շարժվես, պետք է այստեղից դուրս գաս:

Այդ մարդուն անհնար եղավ շարժել, կենդանի էր, բայց կարծես անկյանք լիներ:

-Ոչ, սա իմ տեղն է,- ասաց նա:

Ես շատ անհանգստացած էի նրա համար, բայց Տերն ինձ կանգնեցրեց և ասաց.

-Մի անհանգստանա ռելսերին պառկած մարդու համար: Դու ավելի լավ է այդ գնացքը նստելու մասին մտածիր: Գնացքն ահա մոտենում է և ուզում եմ, որ նստես:

Այդ պահին գնացքը ժամանեց և թռա ու կառչեցի դրանից: Գնացքն անցավ այդ մարդու վրայով և սպանեց նրան:

Հետո նա ինձ այլևս չհետաքրքրեց: Վերջ (Ես զգացում ունեմ, որ հին արարքների խորհրդանիշն է, որը վերացարկում է նորը, սակայն լիովին վստահ չեմ, գուցե իրական նշանակությունը շարունակվում է չբացահայտված մնալ):

Նայեցի գնացքի կողային մասին և այնտեղ գրված էր. «ԱՍՏԾՈ ՇԱՐԺ»: Ամբողջ ուժով առաջ եկա և այդ կողմից երկու ձեռքերով կառչեցի: Գնացքն աներևակայելի արագությամբ *սլանում* էր օդում և ես էլ էի դրա հետ միասին սլանում փորձելով ինձ մի կերպ պահել: Վերջապես ինձ դռան մոտ հրեցի: Գնացք մտնելով կրկին հայտնվեցի եկեղեցու սրբարանում բոլոր այն մարդկանց առջև, ում թողել էի: Նրանք դեռ նույն ահավոր բաներով էին զբաղված եկեղեցու ներսում:

Շփոթված ու ահաբեկված ասացի.

-Մի՞թե սա է գնացքը: Մի՞թե սա է Աստծո շարժը:

Տերն ինձ հետ կրկին խոսեց ու ասաց.

-Այժմ ուսուցանելիս պարզ խոսիր: Սիրիր այս մարդկանց: Թույլ տուր փոխեմ նրանց: Պարզապես ուզում եմ, որ *Ինձ* տանես այդ խառնաշփոթի մեջ: Մի կենտրոնանա նրանց սխալների վրա:

Երազումս սկսեցի Ավետարանն այդ մարդկանց ներկայացնել իմ իմացած ամենապարզ ձևով: Ամբողջ եկեղեցով մեկ նրանք լռեցին ու սկսեցին լսել: Հետո ասացի.

-Եթե ուզում եք ստանալ այն, ինչ քիչ առաջ նկարագրեցի, առաջ եկեք:

Ի պատասխան իմ կոչի մարդիկ մակնթացության ալիքների պես առաջ վազեցին: Նրանք իրար հրելով առաջ էին գալիս և աղաղակում.

-Ես պետք դա ունենամ:

Թմրավաճառներն իրենց գրպաններից փողեր էին հանում և ասում.

-Պատրաստ եմ ամեն ինչ տալու, միայն թե ունենամ այն, ինչի մասին խոսեցիր:

Ամբողջ սենյակով մեկ մարդիկ լալիս էին, որովհետև աղերսագին ուզում էին ստանալ իմ ներկայացրածը: Երազումս հանձնվելով հույզերի տարափին ընկնում եմ գետնին ու արտասվում:

Հանկարծ եկեղեցու առաստաղին ամպաձև մի բան եմ տեսնում: Կայծակ է զարկում այդ ամպին ու Տերը խոսում է ինձ հետ.

-Կանչիր թող ամպն իջնի:

Դա Նրա ներկայության ամպն էր: Ես կանչեցի, որ այդ ամպն իջնի մարդկանց վրա: Ամպի միջից կայծակ զարկեց մարդկանց: Ապշած դիտում էի, թե ինչպես են մարդիկ ամպի ծածկոցի տակ ոտքի կանգնում և երբ ամպը նրանցից բարձրանում էր, դուրս գալիս եկեղեցու դռնից: Ես մտածեցի. *դե ինչպես եկավ այնպես էլ գնաց:*

Բայց հանկարծ բոլոր դուրս եկածները վերադարձան, իրենց հետ այլ մարդկանց բերելով, ում համար սկսեցին աղոթել: Մարդիկ բժշկվում էին, մարդիկ վերափոխվում էին: Ուր նայում էի, այդպիսի բաներ էին կատարվում: Երազի մեջ ծնկի իջա ու արտասվելով սկսեցի աղոթել.

-Աստված իմ չգիտեմ, թե սա ինչ է, բայց ուզում եմ մեզ հետ էլ լինի: Ինչ էլ որ լինի Եկեղեցին պետք է հենց այսպիսի տեսք ունենա: Թող այսպես լինի:

Հետո տակավին արտասվելով արթնացա:

Նրա բարությունը մեզ մեծ է դարձնում

Հիսուսն ասաց. «Առողջներին բժիշկ պէտք չէ, այլ՝ հիւանդներին. և ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ՝ մեղաւորներին» (Մարկ. 2:17): Մենք ապրում ենք մեղքի ու տառապանքի աշխարհում, ինչը մեզ անհանգստացնում է: Կոտրում մեր սրտերը: Սակայն եթե Աստված աշխարհը մեղքից ազատեց, մենք չպետք է դրա մեջ մնանք: Փոխարենը Նա ուզում է մեզ վերականգնել: Աստվածաշունչը շարունակ խոսում է այն մասին, որ Աստծո նպատակն իրականանում է կոտրվածության մեջ «հատուկ որակավորում չունեցող» մարդկանց միջոցով, ում դժվար է պատկերանել, որ Աստված կարող էր գործածել: Հակոբը ստախոս էր, Պետրոսը բռնկվող բնավորություն ուներ, Դավիթն ապօրինի սիրային կապ ունեցավ, Նոյը հարբեց, Հովնանը Աստծուց փախավ, Ռահաբն անբարոյական էր, Պողոսը մարդասպան, Գեդեոնը երկչոտ, Մարիամը բամբասկոտ, Մարթան մարտնչող, Թովմասը երկմիտ, Սառան անհամբեր, Եղիան մռայլ, Մովսեսը կակազող, Զաքեոսը կարճահասակ, Աբրահամը տարեց և Ղազարոսը մահացած:

Մինչդեռ բոլոր այս մարդիկ թվարկված են որպես Աստծո ընկերներ, ովքեր գործակից էին լինում Նրա նպատակներին: Նրանք անգամ բնութագրվում են որպես «հավատքի հերոսներ» (տես Եբր.11):

Խաչը մեզ թույլ է տալիս արհամարհել մեղքն ու ցավը: Սատանան ուզում է մեր ունեցած մեղքերով մեզ բնութագրել, որպեսզի կրկին դեպի այդ մեղքը տանի: Սակայն շնորհը գալով ասում է. «Դու այնքան չգնաղ ես, որ պետք չէ կրկին այդ մեղքի մեջ հայտնվես: Դա չէ քո իրական էությունը: Աղջի՛կս, ճերմակ զգեստով մտել ես ցեխի ու կեղտի մեջ, դուրս եկ այդտեղից: Դու արքայադուստր ես, արի իմ Արքայության մեջ կողք-կողքի գործենք: Որդի՛ս կանչել եմ քեզ քո անունով և ընտրել Իմ նպատակների համար: Արի Ինձ հետ և թույլ տուր Իմ Արքայության գաղտնիքները բացել քո առաջ»:

Իսկ ինչն է մեզ արգելում Աստծո հետ նման մտերմություն ունենալ: Շատերս Աստծուն մեզնից հեռու ենք պահում, որովհետև ինքներս էլ չենք հասկանում, որ Նրանից վախենում ենք: Մենք Հին Ուխտի մտածելակերպով ենք առաջնորդվում: Տեսեք, թե մարդիկ ինչպես էին արձագանքում Ելիցում, երբ հեռվից տեսնում էին Աստծուն.

Ողջ ժողովուրդը լսում էր որոտը, շեփորի ձայնը, տեսնում փայլատակումներն ու ծխացող լեռը: Ողջ ժողովուրդը զարհուրեց, ընկրկեց ու կանգնեց հեռու:Մովսէսն ասաց նրանց. «Սրտապնդուեցէ՛ք, որովհետև Աստուած ձեզ փորձելու համար եկաւ ձեզ մօտ, որպէսզի նրա երկիւղը լինի ձեր մէջ, և դուք մեղք չգործէք»:Ժողովուրդը լեռից հեռու էր կանգնած, իսկ Մովսէսը մտաւ մառախուղի մէջ, ուր գտնուում էր Աստուած:

Ելք 20:18-21

Մարդիկ Աստծուն չէին հասկանում,բայց երբ Հիսուսը որպես Աստծո ճշմարիտ ներկայացուցիչ եկավ նրանք ճանաչեցին Աստծուն և կյանք ունեցան (տե՛ս Հովհ 10:10, Եբր 1:3): Աստծո Խոսքն ասում է. «Սիրոյ մէջ երկիւղ չկայ. և կատարեալ սէրը հեռու է վանում երկիւղը, որովհետև երկիւղը տանջանքի ենթակայ է. և ով երկնչում է, կատարեալ չէ սիրոյ մէջ» (1 Հովհ. 4:18):
Մենք մերժվածության և ձախողման մեծ երկյուղ ունենք, ուստի թույլ ենք տալիս մեր կյանքում իշխանություն ունեցող անկատար անձանց բորոշել Աստծո մասին ունեցած պատկերացումը: Մարդկային իշխանությունը հաճախ ընգծվում է պատժով և վախի օգնությամբ ուժ կիրառելով: Աստված ողջ տիեզերքում միակն է, ում անհնար է բնորոշել անապահովության զգացմամբ:

Իշխանությունը Նրա անհատականության ընդգծված մասը չէ, Նա կարիք չունի այն ցուցադրելու և հազվադեպ է կիրառում մարդկանց հետ հարաբերություններում : Սուրբ Գիրքն այս ամենը նկարագրում է քարանձավում Եղիա մարգարեի և Աստծո հանդիպման մեջ (տես 3Թագ.19): Աստված ոչ կրակի մեջ էր, ոչ էլ քամու և սաստիկ հողմի: Նա եկավ մեղմ օդի ձայնով և Իր ընկեր Եղիան անմիջապես ճանաչեց:

Դավիթը՝ Աստվածաշնչում Աստծո մտերիմ ընկերներից և Իսրայելի մեծագույն արքաներից մեկն այսպես է գրում. «Քո քաղցրությունը մեծացնում է ինձ» (Սաղ.18:35): Աստծո քաղցրության ու կատաղի սիրո մասին իմանալով ազատագրվում ենք ինքներս մեզ պաշտպանելու և սեփական պայքարը մղելու բեռից: Աստված փափագում է, որ կյանքի ցանկացած իրավիճակում վստահենք Նրա հավատարմությանը: Մեր «անապատի» երկար ճանապարհներում կամ «գերության» դեգերումներում , որոնք հաճախ այնքան են երկարում մինչև չհասկանանք, որ Աստված սիրով ապահովում է մեր կյանքերը: Իսրայելի ժողովրդի դեպի Խոստացյալ երկիր քառասնամյա ճամփորդությունն ու Բաբելոնում յոթանասուն տարվա գերությունը դրա վառ օրինակ են:

Անգամ մեր ամենավատ ըմբոստության մեջ Աստված ասում է. «Ամէն օր իմ ձեռքը երկարեցի դէպի անհնազանդ ու թշնամի ժողովուրդը, որ ընթանում էր ոչ թէ բարի ճանապարհով, այլ իր մեղքերի յետևից:Այս ժողովուրդը բարկացնում էր ինձ. իմ առաջ միշտ զոհեր էին մատուցում իրենց պարտէզներում և իրենց աղիւսների վրայ խունկ ծխում դևերին, որոնք նրանց համար յիշատակ դառնալ չէին կարող (Ես 65:2-3):

Երբ Նրա սերը չենք ճանաչում խրված ենք մնում ստրկամտության մեջ և համառորեն դառնում ենք ոչ միայն ինքներս մեզ համար ամենամեծ վտանգն, այլ Աստծո լավագույն մտադրությունները մեզանից վանող խոչնդոտը:

Գեղեցկություն մոխիրների միջից

Աստված մեր սրտերի հետ մտերմություն է փափագում: Նա գիտի մեր վերքերն ու նախընտրում է առաջինը հենց այդտեղից մեզ սիրել: Հիսուսն աշակերտների ոտքերը լվանալով գիտեր նրանց անցած ճանապարհը: Ամբողջ օրը նրանց հետ էր եղել և տեսել, թե այդ ոտքերն ինչպիսի վայրերով են քայլել: Գուցե դրանցից հոտ էր գալիս ու տհաճ էր:

176

Մարգարեները մոխրի փոխարեն գեղեցկություն են կանխատեսել և սգավորների վհատ հոգու փոխարեն փառքի հանդերձներ (տես Ես. 61): Արքայության պատգամը նման փոխանակումների մասին է՝ աղքատներին ավետարանելու, քայլող մեռելներին կենդանացնելու: Այն չոր, չոր ոսկերների բանակին մկաններ, ջլեր ու միս տալն է, ինչպես Եզեկիել մարգարեի տեսիլքում, որպեսզի նրանք կրկին զգան: Նրանց սրտերը կրկին սիրով բաբախեն և նրանց միջի կյանքի շունչը հույս բերի, բայց միևնույն ժամանակ մարտի կոչի:

Երբ ճաշակեցի այս ամենը, տեսա իմ աչքերով և հասկացա Արքայության ուղերձը, որ նման փոխանակումները պարզապես տորթի կրեմը չեն, բայց կույր հավատք, որ կաղերը քայլում են թե բառացիորեն և թե փոխաբերական իմաստով Արքայության պատգամն ու էությունն են, ես հասկացա, որ դեռ այնքան բան կա, որ կարող եմ ունենալ: Դա է այն վայրն, ուր պետք է ապրեմ: Մեզանից յուրաքանչյուրը կարող է այն նույնն վկայությունն ունենալ, ինչ կույրն, ում Հիսուսը բժշկեց. «Ես կույր էի, բայց հիմա տեսնում եմ» (Հովհ. 9:25):

Եթե դա չստանաք, Արքայությունն էլ չեք ստանա: Մենք բոլորս էլ ինչ որ տեղ կաղում ենք: Հիսուսը իջնում է մեր հարթության վրա և ձեռքը մեկնելով ասում. «Քայլի՛ ր»: Անգամ մեր տակավին թույլ և ծուռումուռ ոտքով Նա ասում է. «Կանգնիր և քայլիր»: Գուցե նույնիսկ դաժան թվա, բայց դա է շնորհը: Շնորն Իր կամքը կատարելու Աստծո զորությունն է: Արքայության մեջ «արդենն» ու «դեռ ոչ»-ը բախվում են իրար, մենք վիրավոր բժշկողներ ենք, Նրա հույսի պատգամը ցավի մեջ տառապող աշխարհին: Աստված մեր մեջ փառքի հույսն է: Մենք գնում և խոսքով ենք կիսվում մյուսների հետ, մինչդեռ ինքներս խոսքի կարիք ունենք: Աստված մեր միջոցով գործում է մարդկանց բժշկելու, մխիթարելու, վերականգնելու այն ժամանակ, երբ ինքներս հիվանդ, տկար և հոգնած ենք:

Մեզանից ոմանց համար բեկումնային հայտնությունն այն է, որ Աստված այնքան է *մարդկանց* սիրում, որ անգամ պատրաստ է *մեզ* գործածել նրանց հասնելու համար: Ամեն ինչ շատ պարզ է: Մենք մտածում ենք, որ պետք է սպասել այնքան մինչև պատշաճ սուրբ ու օծված կլինենք, որ Աստված մեզ գործածի,կամ հասկանանք, որ եթե մեզ պատվիրված է գնալ, ապա պետք է գնալ հիմա:

177

Երբ ես և դու հնազանդության քայլ ենք անում և գնում, գործընթացն ինքն է հղկում, ճկում և զորացնում մեզ: Շատ անգամ Աստված կարող է մեզ կանչել պարզապես

հարմարավետության գոտուց դուրս գալու : Երբ ապրում ենք ռիսկի ու Աստծուց կախված լինելու մեջ այդպիսով ինքներս մեզ նետում ենք Նրա ողորմության գիրկը, որտեղ թե մեզ շինություն է տալիս և թե հեռացնում անպիտան մասերը: Լսեք, սովորեք, աճեք, ռիսկի դիմեք: Հետաքրքիր է: Աստծո գործը տեսնելն ու ամենօրյա կյանքում Սուրբ Հոգու հետ համագործակցելն աներևակայելի հաճույք է պատճառում: Մենք ծառայում ենք միակ ճշմարիտ Աստծուն և իմացեք, որ համարձակությամբ Արքայության գործերին հաղորդակից լինելը առաջին շարքում նստելու պես մի բան է:

Ոչ թե մենք պետք է հրաշալի լինենք, այլ Նա արդեն հրաշալի է: Մեր վկայության զորությունն այն է, որ Աստված գործածում է մեզ նման կոտրված, խոցված, վիրավորված և շփոթված մարդկանց: Այն Ավետարանի ուղերձի մի մասն է: Աշակերտներն իրենց ժամանակների կառավարիչներից առաջ էին գնում և կառավարիչների արձագանքն այսպիսին էր. «Նա պետք է, որ Հիսուսի հետ եղած լինի»: Աշակերտների մեջ Աստծո զորությունն ակնհայտ էր, այդ մարդիկ հասարակ անկիրթ ձկնորսներ էին: Նրանք սովորական մարդիկ էին, ովքեր քայլում և զրուցում էին Աստծո հետ, ճիշտ ինչպես մենք:

Ես՝ Ռոբբի Դոքինսս վկայում եմ, որ եթե Աստված կարող է ինձ գործածել, ուրեմն Նա կարող է գործածել ցանկացած անհատի: Աստված հրավիրում է, որ քայլ անենք: Ահա թե ինչ է նշանակում կենդանի նամակ լինել: Աստված չի կանչում հմուտներին, այլ հմտացնում է կանչվածներին: Այն փաստը, որ Աստված ինձ և քեզ կգործածի հույս է *ներշնչում* աշխարհին:

«Հիսուս, բժշկիր ինձ»

Որդուս՝ Քանային, երկու տարեկանում աուտիզմ ախտորոշեցին: Մինչև ինը ամսեկան նա լիովին առողջ էր երևում, բայց գնալով վարքագիծը վատթարացավ և սկսեց տարիքից փոքր երևալ: Նա մոռացավ իր սովորած հատ ու կենտ բառերն ու լրիվ ինքնամփոփ դառնալով հետընթաց ապրեց:

Երբ լսեցի Քանայի ախտորոշումն ինձ թվաց խորտակվում եմ: Բժիշկն ըստ էության ասաց, որ պատրաստ լինենք ողջ կյանքում նրան խնամելու: Քանան նրա հանդիպած աուտիզմի ամենասուր դեպքերից էր: Նա մեզ զգուշացրեց, որ հավանաբար ոչ երբեք կխոսի, ոչ էլ նորմալ կենսաձև կվարի: Էնգին իր տխրությունը ցույց չտվեց: Պաշտպանող մայրը բազեի կեցվածքով ոտքի կանգնեց: Բժշկին նայում էր այնպես կարծես ասելիս լիներ *ես քեզ կստիպեմ կուլ տալ այս բառերը:* Բայց որքան հիշում եմ բարձրաձայն միայն ասաց. «Դա դեռ կտեսնենք»:

Ես ցնցված էի: Հիշում եմ, որ տուն գնալով ամեն օր առավոտյան և երեկոյան Քանայի համար աղոթում էի: Ձեռքս դնում էի նրա կրծքավանդակին և ասում. «Հիսուս, բժշկիր Քանային»: Տարիներով այդպես եմ արել և դեռ շարունակում եմ:

Մի գիշեր, երբ ներս մտա աղոթելու նա իր առաջին նախադասությունն ասաց, որ երբևէ լսել էի նրա շուրթերից. «Հիսուս, բժշկիր ինձ»: Ոտքից գլուխ փշաքաղվեցի: Հիշում եմ, որ մտածեցի *Ինչ կարող է Աստծո ուշադրությունն ավելի շատ գրավել քան աուտիստ տղայի աղաղակը, որ իրեն վերականգնի:*

Դրանից հետո անդադար աղոթում էի: Երբ Քանան սկսեց նախակրթարան գնալ այնտեղ երեք տարբեր դասարաններ կային՝ ծանր, միջին և բազմաֆունկցիոնալ: Նա սկսեց ծանր կատեգորիայի երեխաների դասարանից: Չորս ամիս անց ուսուցիչները մեզ հետ հանդիպելով ասացին. «Մենք հիացած ենք, նա մեզ իրոք զարմացնում է: Մենք ուզում ենք նրան ավելի բարձր խումբ տանել»:

Անչափ ուրախացանք: Տարվա վերջում նրան տեղափոխեցին միջին խմբի առաջին կատեգորիա: Հաջորդ տարվա վեջում նա գնաց միջին խմբի ամենաբարձր կատեգորիա: Հետո այդ նույն տարում (հնգամյա նախակրթարան էր) նա սկսեց հաճախել բազմաֆունկցիոնալ դասարանի ամենացածր կատեգորիա:

Նորից մի քանի ամիս անց նա այդ դասարանի ամենաբարձր կատեգորիայում էր: Երբ սկսեց տարրական դպրոց գնալ Էնգին կարողացավ նրան կանոնավոր դասարան տանել հավելյալ օգնությամբ:

Ես հավատացած եմ, որ Աստված բժշկում է նրան և նաև ուզում եմ պատվի արժանացնել այն տասնյակ ջանասեր ուսուցիչներին, ընկերներին ու թերապևտներին, ովքեր այս տարներին սիրել են, օգնել ու աղոթել նրա համար: Մենք շարունակ աղոթում էինք. «Տեր, բացիր մեզ համար բոլոր անհրաժեշտ դռները»:

Էնգին ասում է, որ միշտ ժխտող վերաբերմունք եմ ունեցել Քանայի հիվանդության վերաբերյալ: Անգամ չեմ հիշում, որ այդ իրավիճակի պատճառով արցունք թափած լինեմ: Ես ուղղկի ասում էի. «Լավ, սա մեր նոր մարտահրավերն է: Պետք է պարզել, թե ինչպես գլուխ հանել: Մեր հերթական լեռն է մագլցելու: Մարդիկ մշտապես այս խնդրի հետ բախվում են»: Երբ աղոթում էի Քանայի բժշկության համար, երբեք չէի ասում. «Տեր գթա մեզ, վերցրու այս աուտիզմը», փոխարենն իմ վերաբերմունքն այսպիսին էր. *Աստված այս երեխայի հետ ևս ծրագիր ունի և մենք թույլ չենք տա, որ հիվանդությունը նրան զրկի դրանից: Այժմ ես անիծում եմ աուտիզմն ու դրա ազդեցությունն իմ երեխայի վրա:*

Քանան հատուկ շնորհ ունի իր կյանքում: Մենք անհանգստանում էինք, որ իր վարքով անախորժություններ կառաջացնի ուսուցիչների համար և դասարանում կխանգարի մյուս աշակերտներին, բայց նա դարձավ բոլորի ամենասիրելին:

Հիշում եմ ուսուցիչները նրա համար հատուկ նվերներ էին գնում: Մենք համարյա վախենում էինք, որ նա չտարվի ամենասիրելին լինելու գաղափարով:

Մարդիկ մեզ մարգարեական խոսք էին տալիս, որ մինչև ավագ դպրոցի սկիզբ նա լիովին «նորմալ» կլինի: Բնականաբար այդ խոսքերն ամուր էինք բռնում, բայց շարունակում էինք նրա բժշկման կուրսը: Ինչևէ ահա մեր կյանքը, որ Աստված ստեղծել է: Թշնամին չի ուզում, որ այն իր հունով ընթանա: Իսկ մենք չենք պատրաստվում այդ հանգամանքն ընդունենք ու նստած սպասենք, փոխարենը վիրավոր բժշկող ենք բարձրացնում:

Մեծ հրացաններ

Վերջին մի քանի տարում Քանան շատերի համար է աղոթել և տեսել նրանց բժշկությունը:

Իմ կարծիքով դա է կենդանի տաճար լինելու նշանակությունը:

Այո, առերևույթ պայքարում ենք, անկատար ենք, խոցված, բայց Աստված կամենում է մեր մեջ ապրել և իրականացնել այս երկրի վրա Իր փրկության ծրագիրը:

Մի անգամ էնգին ու Քանան (այդ ժամանակ յոթ տարեկան էր) ինձ հետ կոնֆերանս էին եկել Այովա: Ութ հարյուր հոգու առջև կանգնած աղոթում էի սկոլիոզ հիվանդությամբ տառապող մի աղջկա համար: Նա ցավերի մեջ էր և ողնաշարն ահավոր կորացած էր: Մի քանի անգամ աղոթելուց հետո ցավի ուժգնությունն իջել էր 6-ի, բայց այդեղից առաջ չէր գնում: Հանկարծ զգացողություն ունեցա, որ պետք է Քանային կանչեմ:

Արդեն կոնֆերանսի ժամանակ պատմել էի Քանայի աուտիզմի պատմությունը և թե ինչպես է Աստված նրա միջոցով գործում: Ես ասացի.

-Քանա՛ , վազիր հայրիկի մոտ, ինձ այստեղ մեծ հրացան է պետք,- նա վազելով եկավ ինձ մոտ և ասացի,-Քանա, աղոթիր այս աղջկա համար:

Քանան ձեռքը դրեց նրա մեջքին ու ասաց.

-Մեջք ուղղվիր: Ցավ հենց հիմա հեռացիր:

Աղջիկը կռացավ և նրա մեջքն սկսեց շարժվել: Կարելի էր տեսնել, թե ինչպես է կորությունը հարթվում: Հետո տեսանք, որ նրա մեջքը կատարելապես ուղղվեց: Մինչ այդ նրա ուսերն անհավասար և ծռված էին:

Աղջիկն ուղիղ կանգնելով ասաց.

-Ամբողջ ցավն անցել է:

Մարդկանց բժշկելու համար վիրավոր բժշկողներին գործածելն Աստծո խավարի իշխանության դեմ վրեժ լուծելու ձևերից մեկն է:

Մի տղա, ով նման հիվանդություն ուներ և ախոտորոշել էին, որ երբեք չի խոսի, այժմ աղոթում է ուրիշների համար: Նա խոսեց քանդելով հիվանդության ու տառապանքի զորությունը և այդ աղջիկն ազատվեց ցավի ծանրությունից: Իմ որդին Աստծո սիրո և աշխարհի հույսի պատկերն է:

Եթե երբևէ մտածել ես *ես շատ կոտրված եմ, ես շատ հիվանդ եմ, ինքս բժշկության կարիք ունեմ, խնդիրներ ունեմ կյանքում* ուրեմն բաց ես թողել ամենակարևորը: Վիրավոր բժշկողներին գործածելն Աստծո հակահարվածն է:

Հակառակեք հուսահատությանը

Հուդսոն Թեյլորը՝ Չինաստանում առաջին միսիոներներից մեկը, աներևակայելի խոչնդոտների բախվեց հիվանդության, քարկոծման, անգամ մահամերձ լինելու: Նա նկարագրում է, որ ամիսներով ահավոր դեպրեսիայի պատճառով պառկած է եղել անկողնում: Հետո գրում է, որ մի տարի նրա համար ամեն բան փոխվեց, երբ հասկացավ, որ պետք է հակառակի հուսահատությանն այնպես, ինչպես մեղքին է հակառակում:

Հուսահատությունը չի պատկանում բնատուր հույզերի դասին, որով ուղղակի անցնում ենք: Հուսահատությունն այն հազվադեպ հանդիպող երևույթներից է, որ Սուրբ Գիրքը հետևողականորեն պատվիրում է հակառակել. «Ահա պատուիրում եմ քեզ, զօրացի՛ ր և արիացի՛ ր, մի՛ վախեցիր և մի՛ երկնչիր, որովհետև քեզ հետ է քո Տէր Աստուածը ամէն տեղ, ուր էլ որ գնաս» (Հեսու 1:9): Ցակացած պայքարի մեջ ամենակարևորն իմ կարծիքով քաջությամբ դիմակայելն է: Շարունակեք աղոթել: Մի հանձնվեք: Շարունակեք գոհանալ: Չվհատվելու որոշում կայացրեք: Հոչակեք. «Ես պատրաստվում եմ աղոթել, բայց չեմ պատրաստվում հուսահատվել: Ես չեմ պատրաստվում հիասթափվել և մտածել, որ Աստված ինձ չի սիրում»:

Որպես Արքայության ժողովուրդ մեր որոշումների հանդեպ պետք է վճռական լինենք: Վաղ թե ուշ բոլորս էլ բախվում ենք անհաղթահարելի թվացող պատնեշների: Անհրաժեշտ է վճռական տրամադրվել. « Եթե ես պատրաստվում եմ աղոթել կամ մարգարեանալ մարդկանց համար, ապա չեմ պատրաստվում հուսահատվել կամ հիասթափվել»:

Ինչպես արդեն նշել եմ մեր գործերի արդյունքը ոչ թե մեզ այլ Տիրոջն է պատկանում: Ես ու դու նման իրավունք չունենք մտածելու. *Ինչու Աստված չլսեց ինձ, երբ աղոթեցի:* Ցանկացած իրավիճակ, որի հետ առնչվում ենք ունի բնական և հոգևոր կողմեր: Մեր խնդիրն այլ մարդկանց հետ չէ և ոչ էլ Աստծո բժշկության աղոթքը մերժելու: Նա Ինքն Իրեն մեզ տալով ամեն ինչ տվեց: Մեր կռիվն այս խավար աշխարհի պետություններին և երկնքի տակ եղող չար ոգիների դեմ է (տես Եփես 6:12): Մենք բոլորս պատերազմի դաշտում կռվող վիրավոր զինվորներ ենք, ուստի մի վհատվիր քո սեփական դժվարություններից կամ քո շուրջը տիրող իրավիճակներից:

Դժվարության մեջ մի կարծիր, թե ինչ որ բան բաց ես թողել կամ Աստված քեզ մոռացել է: Նա չի մոռացել և երբեք չի մոռանա:

Մորս քաղցկեղի պայքարը

Մորս գլխուղեղի քաղցկեղ էին ախտորոշել: Երբեք չեմ մոռանա այն օրը, երբ հայրս զանգահարեց ինձ այդ լուրն ասելու: Նա ասաց. «Մայրդ...» հետո սկսեց հեկեկալ ամեն անգամ երբ փորձում էր շարունակել: Ես նրա վիճակից ենթադրեցի, որ մայրս մահացել է: Սկսեցի սարսափած կմկմալ. «Պապ, չէ, չէ, չէ»

Հետո վերջապես կարողացավ բառերն արտաբերել. «Կարծում եմ ինձ սխալ հասկացար: Նա քաղցկեղ ունի»:

Մենք մայրիկի վիրահատության համար Ատլանտա գնացինք : Իսկապես վիճակը վատ էր: Բժիշկներն ասացին. «Վստահ չենք, որ վիրահատությամբ ամեն բան կավարտվի, հնարավոր է հետագա միջամտությունների կարիք լինի»: Այսինքն եթե անգամ նրանք քաղցկեղը հեռացնեին, բայց մի չնչին բջիջ շարունակի գոյություն ունենալ, ապա նրանից այլ օջախներ կարող էին ծագել:

Մենք աղոթեցին և խաղաղություն զգացինք: Մտածեցինք, որ ամեն բան լավ կլինի: Որոշ ժամանակ մորս վիճակը լավ էր և մենք կարծեցինք, որ վիրահատությունը հաջող է եղել: Սակայն ժամանակի ընթացքում քաղցկեղը նորից գլուխ բարձրացրեց: Մենք հուսահատ էինք: Սկսեցի աղոթել և Աստված շատ հստակ ասաց, որ այս անգամ նա կմեռնի: Կյանքում երբեք նման խոսք չէի ստացել, ուստի խիստ մտահոգվեցի: Ներսումս պայքար էր գնում, չգիտեի հորս հայտնեմ այդ մասին թե ոչ: Բայց ինքս էլ չգիտեի, ինչպես ընդունեմ այդ ամենը: Մի քանի օր անց համարձակություն հավաքելով կարողացա հորս հետ կիսվել, թե ինչ էր Տերն ինձ ցույց տվել: Հայրս ասաց, որ անկախ ամեն ինչից նա կշարունակի աղոթել:

Ծնողներիս Չիկագո տարա, որ կարողանանք մորս համար հոգ տանել: Մեր աչքերի առջև գնալով սաստիկ ցավն սկսեց մորս մարմինը պատել:

Երբեմն սարսափելի ցավից գոռում էր: Մի անգամ հորս ձայնն իր սենյակից լսեցի: Ժամեր շարունակ ամբողջ թոքերով աղաղակում էր, որ կնոջը կյանք շնորհվի: Սակայն այդ ողջ ընթացքում ես սրտումս գիտեի, որ մայրս մեզնից հեռանալու է:

Աչքերիս առջև հառնում էր կնոջ կյանքի համար կատաղի մարտնչող տղամարդու մի պատկեր: Սիրո աներևակայելի դրսևորում: Անկախ ամեն ինչից հայրս նրա համար հոգ էր տանում մեծ սիրով ու քնքշությամբ: Մայրս հենց դրա կարիքն ուներ: Ամենանձնական հարցերում նա միայն հորս էր թույլ տալիս իր համար հոգ տանել: Մնացածս էլ հորս համար էինք հոգ տանում, որ կարողանա նրան օգնել:

Վերջապես ստիպված էինք մորս հիվանդանոց տեղափոխել: Հայրս արցունքների միջից ասում էր. «Մենք սրա դեմ պիտի պայքարենք»:

Ես նրա հետ միասին որոշեցի. «Դե,եթե որոշել ես կռվել, մենք քեզ հետ ենք: Մենք միասին կպայքարենք»: Քույրերս և մեր ընտանիքները մորս հիվանդասենյակը երկրպագությամբ և նրա համար երկինք կարկառող աղոթքներով ողողեցինք:

Մի գիշեր, երբ կրկին երկրպագում էինք, կողքի հիվանդասենյակից մի կին եկավ և խնդրեց, որ իր քրոջն այցելենք, ով տառապում էր երիկամների քաղցկեղով: Նա ասաց.

-Մենք քրիստոնյա չենք, բայց եթե խնդրեմ կգաք այս երգերից նրա համար երգելու:

Հայրս և հորեղբայրս երկուսն էլ հովիվ են և ասացին.

-իհարկե, եկեք գնանք աղոթենք նրա համար:

Նրա անունը Վիոլեթ Քինդլ էր: Նա պառկած էր անկողնում, երիկամների քաղցկեղի վերջին փուլում: Նրան կաթետրեր էր միացված և անկողնու կողքից կախված պարկը, որ պետք է մեզով լցված լիներ, արյունով էր լցված: Մենք սկսեցինք նրա համար աղոթել, կոնկրետ բժշկության համար չէինք աղոթում, այլ հատկապես զգացողության լավացման և խաղաղության: Ես զգացի, որ Աստված ինձ շատ հստակ ասաց. «Նրան ասա, քաղցկեղից բժշկում եմ»:

Ես Վիոլեթին ասացի, որ Աստված նրան բժշկում է քաղցկեղից: Այս խոսքերն ասելիս սկզբում թվում էր, թե բերանս թեփով է լցված և բառերը խրվել, մնացել էին կոկորդումս: Հետո

յուրաքանչյուր բառ հստակ արտաբերեցի: Իսկ իմ մայրը, միսիոներ, Աստվածաշնչի ուսուցիչ, որ ամբողջ կյանքն ուրիշներին էր նվիրել, կյանքումս երբևէ տեսած ամենաաստվածապաշտ անձնավորությունը մեռնում էր կողքի սենյակում:

184

Սակայն նայելով այս կնոջն ասացի.

-Աստված ոչ միայն հիմա քեզ լիովին կբժշկի քաղցկեղից, այլև մի ընտանիքի անդամ կա, ով մեծ խնդիրներ է հարուցում քեզ համար: Մինչև օրվա վերջ Աստված ամբողջովին կլուծի նաև այդ խնդիրը:

Հետո ասացի.

-Ես պետք է գնամ:

Ես պարզապես այնքան ճնշված էի, որ Աստված Վիոլեթին նման ուղերձ է տալիս և հարցնում էի *Տեր ինչպես կարող ես այդպես վարվել: Մայրս Քո հավատարիմ ծառան է եղել, ի տարբերություն Վիոլեթի (մի «հեթանոս» կնոջ): Ու Դու լիովին բժշկում ես Վիոլեթին և թողնում, որ մայրս մահանա՞:* Հետ գնացի մորս սենյակը, որտեղ կածես ամեն բան նույնն էր:

Մի քանի ժամ անց, Վիոլեթի քույրը կողքի սենյակից վազելով եկավ մորս սենյակ և ցույց տվեց Վիոլեթի կատետրի տոպրակը: Ամբողջ արյունն անհետացել էր, այնտեղ միայն մեզ կար:

Ես հարցրեցի.

-Նրանք փոխել են այդ տոպրակը:

-Ոչ,- ասաց նա, -Այս ամբողջ ընթացքում ես այնտեղ նստած եմ և նույն տոպրակն է: Ուռուցքաբանը հիմա գալիս է:

Հաջորդ առավոտ, երբ գնացինք մորս այցելության, տեսա, որ Վիոլեթի քույրը սրահում անհանգիստ վեր ու վար է անում: Ինձ տեսնելով ասաց.

-Որքան ուրախ եմ, որ եկաք: Երկար ժամանակ ձեզ էի սպասում: Ուռուցքաբանը հիմա քրոջս մոտ է:

Մենք այնտեղ գնացինք և տեսանք, որ բժիշկն այնտեղ կանգնած նայում է Վիոլեթի աղյուսակին և ասում.

-Հավատս չի գալիս: Իսկապես չեմ կարողանում հավատալ, քաղցկեղն անհետացել է:

Երբ նա գնաց մենք զրուցեցինք Վիոլեթի հետ և նա ինձ հիշեցրեց, թե նախորդ օրն ինչ եմ աղոթել նրա համար: Նա ասաց

-Երեկ դուք հիշատակեցիք իմ ընտանիքի հետ կապված խնդիրների մասին: Իմ փեսան աղջկանիցս բաժանվել է, բայց շարունակում էր ինձ հետ ապրել: Երկար ժամանակ չէի կարողանում տնից հանել, բայց քիչ առաջ նա գնաց: Երեկ ինձ զանգահարեց ու ասաց. «Լավ, լավ ես հեռանում եմ» նրան հարցրեցի, թե ինչ ի նկատի ունի և նա ասաց. «դե այն տղաներին, որ այստեղ էիր ուղարկել, ասա, որ գնում եմ»:

Նա նայեց ինձ ու հարցրեց.

-Դուք ինչ որ մարդի՞կ եք ուղարկել իմ տուն:

Ես գլուխս բացասաբար շարժեցի,

-Իհարկե ոչ, ես անգամ չգիտեմ, թե դուք որտեղ եք բնակվում:

Բայց Աստված Իր ձևով էր հոգ տարել ամեն ինչի համար:

Թե Վիոլեթը և թե իր քույրն արդյունքում Քրիստոսին դարձան: Կարճ ժամանակ անց մայրս ննջեց և նրանք ներկա էին մորս թաղման արարողությանը: Մորս դագաղի կողքին կանգնած այս երկու կանանց նայելով հասկացա, որ մորս հիվանդանոցում լինելու ընթացքում Աստված նրանց Իր շնորհը ցուցաբերեց՝ հնարավորություն տալով Քրիստոսին ընդունել:

Պայքարել է պետք

Երբ անդրադառնում ենք մեղքի մեջ ապրելուն և այս աշխարհում տառապելուն, հավատացած եմ, որ «յոլա գնացեք» մտածելակերպն աստվածաշնչյան չէ: Այդպես երկար չեք դիմանա: Պետք չէ ատամները սեղմել և գոտին ձգելով ասել. «Սա է իմ կյանքում Աստծո կամքը»: Երբ տառապանքի մեջ ենք պետք է հետևենք տասներկու տարի արյունահոսող կնոջ օրինակին: Նա ամբոխը ճեղքելով հասավ Հիսուսին և հավատացած եմ, որ պայքարել էր մինչև նրան հասնելը, մարդկանց հակառակ էր քայլել, հաղթահարել աքսորյալ լինելու ամոթը: Կրելով «անմաքուր» պիտակը, միայն Հիսուսի քղանցքին դիպչելու համար նա պետք է որ անասելի մերժվածության զգացում իր մեջ հաղթահարած լիներ : Նա չվախեցավ հասարակական ստորացումներից, խայտառակությունից և անգամ պատժից: Այս կնոջ օրինակն արտացոլում է հաստատակամության պատկերը, տառապանքի ու հուսահատության մեջ նա վճռում է որոնել Հիսուսին, Նրա ներկայությունն ու Արքայությունը:

Բոլորիս կյանքում էլ իրավիճակներ են լինում, որ ուզում ենք պարզապես սեղմել «հեռանալ» կոճակն ու ցավերի մեջ մեկուսանալ: Հետո հիասթափության շուրջ սեփական աստվածաբանությունն ենք հյուսում՝ ինքներս մեզ մխիթարելու համար:

Նման դեպքերում անհրաժեշտ է Հիսուսից կառչել: Նա միշտ մեզ հետ է, մեր ապաստանն ու ժայռն է: Ցանկացած տառապալից իրավիճակում համոզվել եմ, որ երբ դարձել եմ դեպի Աստված, Նա այնտեղ է եղել: Ինչևէ ավելի դյուրին է Աստծուն գնալու փոխարեն թույլ տալ, որ բարկությունը, դառնությունն ու չներելը դառնան մեր ապաստանը: Դրանք մեր շուրջն արտաքին աշխարհից պաշտպանող հաստ պատեր են կառուցում, որոնք վերածվում են ներքին բանտերի, որտեղ անցյալի սխալները մերժելով նորից ենք անում և փակուղի մտնում: Ես մտածում եմ Սամուել մարգարեի մասին, ով ողբում էր Սավուղ թագավորի և կորցրածի հիասթափության վրա: Աստված այսպես խոսեց Սամուելի հետ. «Մինչև ե՞րբ պէտք է սգաս Սաւուղին, ես նրան զրկել եմ Իսրայէլի վրայ թագաւորելուց: Քո եղջիւրը իւղով լցրո՛ւ, ե՛կ քեզ առաքեմ Բեթղեհէմ, Յեսսէի մօտ, քանզի նրա որդիներից մէկին եմ թագաւոր ընտրել» (1 Թագ. 16:1):
Հիսուսը մեր փրկության եղջյուրն է: Նրա պատճառով մենք պետք է դադարենք ողբալ անցյալի վրա, և ապրել գործած սխալների ու ձախողումների ամոթով: Մենք կարող ենք

Արքայության համար ապրելու մեր ճանապարհն սկսել: Տարիների ընթացքում կյանքի հարվածները քչանում են, բայց ավելի ուժգին ու ցավոտ են դառնում:

Երբ այդ ծանր հարվածները գալիս են մենք մտածում ենք *չեմ կարծում, որ ի վիճակի կլինեմ այլևս շարունակել:* Ընդունեք այն մարգարեական խոսքը, որ Սամուելին եկավ: Դադարեք ողբալ անցյալի վրա, վերցրեք ձեր յուղով լի եղջյուրն ու առաջ գնացեք:

Դու և ես Աստծո զորությունն ու ներկայությունն ունենք, որ մեզ օգնում է առաջ գնալ: Թող անցյալի թերությունները մեզ համար միայն հղկող կրակ լինեն: Եթե շարունակես բաց և ներկա լինել Աստծո առաջ, Նա քեզ կօգնի: Երբ տկար ես, հիշիր, որ Նա զորավոր է: Նա ոչ միայն զորավոր է, այլև զորացնող է:

Նման իրավիճակներում տեսել եմ, թե ինչպես է Աստված խաղաղության և իշխանության հիմք կառուցում, որ հետագայում դժվարություններին դիմակայելիս մեզ հաստատուն պահի: Դժվարությունների ընթացքը հաճախ երկարում է, քանի որ Աստված մեզ սիրելով կամենում է հղկել: Մեր որոշումը պետք է առաջ գնալը լինի, ճեղքելով այն ամբոխը, որ մեզ ծաղրում, արհամարհում, մեղադրում, մերժում և անհուսությամբ է լցնում:

Երբ ճեղքում և անցնում ենք դրա միջով հայտնվում ենք Նրա ներկայության գրկում: Նա Իր Եկեղեցում է: Նա մեր կոտրվածությունն ու անցյալի սխալները կգործածի մեզ վերականգնելու համար: Մենք պարզապես պետք է համարձակվենք ու ռիսկի դիմելով կրկին սիրենք, ներենք, զգայուն և բաց լինենք ընդունելու այն գանձերը, որ Նա պատրաստվում է մեր կյանք բերել:

11//Երկմտելը չի որակազրկում

Ես Քրիստոնեությանը հավատում եմ այնպես, ինչպես հավատում եմ, որ արևը ծագում է, ոչ միայն, որ տեսնում եմ, այլ դրա միջոցով ամեն ինչ տեսանելի է դառնում:

Ք.Ս. Լյուիս

Հիսուսի մահից հետո տասնմեկ աշակերտները մեկտեղ հավաքված էին և Հիսուսը նրանց մոտ եկավ «Երբ նրան տեսան, երկրպագեցին նրան, իսկ ոմանք երկմտեցին» (Մաթ. 28:18): Հիսուսը նրանց ասաց.

Գնացէ՛ք ամբողջ աշխարհով մէկ և քարոզեցէ՛ք Աւետարանը բոլոր մարդկանց:
Ով հաւատայ և մկրտուի, պիտի փրկուի, և ով չհաւատայ, պիտի դատապարտուի:
Սրանք են նշանները, որոնք պիտի ուղեկցեն նրանց, որոնք հաւատում են. իմ անունով դևեր պիտի հանեն, լեզուներ պիտի խօսեն իրենց ձեռքերին օձեր պիտի բռնեն, և եթէ մահացու թոյն խմեն, դա նրանց չպիտի վնասի. հիւանդների վրայ ձեռք պիտի դնեն և բժշկեն:

Մր 16:15-18

Հետո Հիսուսը նրանց օրհնեց ու երկինք համբարձվեց: Այն տասնմեկ աշակերտները, որ մնացին երկրի վրա մեզ համար տասնմեկ քաջալերանքի առիթ են: Նրանք ապրեցին Հիսուսի հետ: Տեսան Նրան ջրերի վրայով քայլելիս: Նրանք ներկա էին, երբ ուտելիքը բազմացրեց, հիվանդներին բժշկեց, մեռելներին հարություն տվեց: Հարություն առնելուց հետո նրանց հետ մի քանի օր անցկացրեց: Նրանց հետ հաց կերավ: Նրանք դիպան Նրա ձեռքերի ու կողերի խաչելության հետքերին: Երկրպագեցին և ներկա եղան Աստծո ձեռքով երկինք համբարձվելուն:

Եվ նրանցից ոմանք երկմտեցի՞ն

Հիսուսն անգամ տարբերություն չդրեց երկմիտների և հաստատուն հավատք ունեցողների միջև: Նա չասաց. «Իսկ դուք երկմիտներ պետք է նստեք ու ձեր մտքերը կարգավորեք: Պարզապես շարունակեք Սուրբ Գիրք կարդալ և սինագոգ գնալ մինչև չազատվեք ձեր այդ կասկածներից: Հետո երբ ամեն ինչ կարգավորեք գնացեք և ազգերին աշակերտեցեք, հիվանդներին բժշկեք և դևեր հանեք»: Նա նայեց դեմ առ դեմ կանգնած Իր աշակերտներին, այդ թվում նաև երկմիտներին և ասաց.

Ինձ է տրուած ամէն իշխանութիւն երկնքում և երկրի վրայ. ինչպէս Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում:
Գնացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր և Որդու և Սուրբ Հոգու անունով:
Ուսուցանեցէ՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատուիրեցի: Եւ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում մինչև աշխարհի վախճանը:

Մաթ. 28:18-20

Հետո աշակերտները դուրս եկան և Աստծո Արքայության մասին քարոզեցին: Իսկ ամենուր Աստված նրանց գործերը հրաշքներով հաստատեց:

Պայքարել հանուն խոստման

Անհավատությունը տարբեր է երկմտանքից: Երկմտանքը մեզ չի բաժանում Աստծո սիրուց: Մեզ ետ չի պահում անելու այն, ինչ Հիսուսն արեց:

Մեզ չի արգելում Նրա աշակերտները լինել: Մեզ չի որակազրկում Նրա կանչվածությունից: Նա ասում է «գնացեք» և «Եւ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում»: Երբ գնաք, անեք, հնազադվեք ձեր հավատքը կփոխվի: Հավատքը հետևում է գործերին:

Մենք կարող ենք ապրել ընդունելով, այն ինչ մեր փորձառությունն է մեր մասին ասում կամ կարող ենք ապրել ընդունելով այն, ինչ Աստված է մեր մասին ասում:

Իմ շատ սիրելի ընկեր Քրիս Օվերսթրիթը Քրիստոսին բանտում է ընդունել, տեսնելով, որ Աստված երբեք ոչ մեկին իր միջոցով չի բժշկել, որոշում է վերցնել մի երեքը հինգ չափի քարտ և դրա վրա գրել Մարկոս 16:17-20-ը հիվանդներին բժշկելու հավատքի մասին հատվածը: Ողջ օրվա ընթացքում այդ քարտն իր հետ ամենուր տանելով անընդհատ կարդում է: Դրանից հետո սկսում է մարդկանց համար աղոթել և տեսնել, թե ինչպես են բժշկվում: Այժմ Բեթել եկեղեցու հովիվներից է և ծառայում է Ռեդդինգում, Կալիֆորնիա, Բեթելի Գերբնական Ծառայության Դպրոցում և մինչև

հիմա նրա միջոցով հարյուրավոր բժշկություններ են եղել: Ահա Աստծո Արքայությունն ամուր բռնելու ևս մի պատկեր:

Հիսուսն ասաց. «Բայց Հովհաննես Մկրտչի օրերից մինչև հիմա երկնքի արքայությունն ուժով է առնվում և ուժովները ահափշտակում են նորան» (Մաթ. 11:12): Աստվածաշնչում ամենուր տեսնում ենք, որ խոստումներն ամուր բռնող և դրանց համար պայքարող կանայք և տղամարդիկ *շարժում են* Աստծո սիրտը: Այս խոսքերի հետ կապ ստեղծելով, կապ ենք ստեղծում Աստծո հետ: Նրա խոստումները ոչ թե պատմության ավարտն են, այլ մեր միջոցով և մեր մեջ արկածների իրագործման միայն սկիզբը:

Աստծո ցանկացած խոստում հանձնարարություն է: Մենք սա տեսնում ենք Մովսեսի, Միրիամի, Աբրահամի, Սամուելի, Եսթերի, Հռութի, Դավիթի, Գեդեոնի, Դանիելի, Ամբակումի, Եզեկիելի, Աննայի, Ռաքելի ու Հիսուսի մոր՝ Մարիամի և ուրիշների կյանքում: Նրանք ամենևին էլ կատարյալ չէին, բայց Աստծո խոստումներն ամուր բռնելու պատճառով Նրա ընկերներն էին համարվում: Այսպիսին է հավատքով մեզ բաժին հասած ժառանգությունը:

Աստծո որոշ խոստումներ Նրա սրտի ամենածածուկ խորհուրդներն են, որ կիսում է մեզ հետ: Նա մեզ խոստում չի տալիս, որ արհամարհենք: Նրա խոստումներն արհամարհելով Նրա սիրտն ենք արհամարհում:

Աշակերտներից ոչ մեկ հմտացած չէր ազգերին սովորեցնելու գործում: Մարդիկ, ովքեր լսում էին աշակերտներին հավանաբար նրանց կրթվածության մակարդակը չափազանց բարձր չէին գնահատի: Նրանք բարձրագույն կրթություն չունեին, ազդեցիկ դեմքեր չէին և բացի ձկնորսությունից որևէ այլ ոլորտում խիստ մասնագիտացում չէին ստացել: Սակայն Հիսուսն ասաց, որ միշտ նրանց հետ կլինի, մինչև անգամ աշխարհի վերջը: Ահա այն խոստումը, որից կարող էին ամուր կառչել:

Անցյալին մի նայեք ապագան որոշելու համար: Նայեք, թե Աստված ձեզ ինչի մեջ է կանչել: Ինքնաքննադատությունը կարող է երբեմն ծուղակ լինել: Սատանան կփորձի ձեզ կենտրոնացնել ձեր անձի վրա, կսկսեք արդարացնել ձեր գործողություններն ու այս կամ այն հարցում անհմուտ լինելը: Բայց երբ քայլ անեք Աստծո գործերին հաղորդակից լինելու, Նա ձեզ հետ կլինի և կգինի ինչպես հարկն է:

Պետք է ապագային երեխաների պես նայենք, այսինքն չսահմանափակենք մեր ակնկալիքներն անցյալ փորձառություններով կամ մեր ճանաչած աշխարհի չափանիշներով: Աշխարհում ամեն օր ինչ որ բան փոխվում ու վերափոխվում է: Աստծո մեջ վերստին ծնունդ ստանալով կարիք ունենք մեր մտքերը նորոգելու և ակնկալելու, որ այն ինչ նախկինում երբեք չենք ճաշակել այժմ հնարավոր է դարձել (տե՛ս Հռ. 12:2): Հիսուսի կյանքը լի է մեզ համար խոստումներով: «Ուրեմն մենք էլ, որ մեր շուրջը վկաների այսչափ բազմութիւն ունենք, դէ՛ն գցենք ամէն հպարտութիւն և ծանր մեղք, համբերատարութեամբ ընթանանք դէպի մրցասպարէզ, որ բացուած է մեր առաջ.
Նայենք Յիսուսին՝ հաւատի զօրագլխին, այն կատարելագործողին, որն իր առաջ դրուած

ուրախութեան համար յանձն առաւ խաչը, արհամարհեց ամօթը և նստեց Աստծու աթոռի աջ կողմում (Եբր 12:1-2):

Ամեն բան հնարավոր է դառնում, երբ մեր հայացքն Աստծուն ենք հառում և թույլ տալիս, որ իր պատմությունը գրի մեջ և մեր միջոցով:

Հնարավոր է այս փառքից փառք տանող ճանապարհին երբեմն կասկածներ առաջանան, բայց պետք է շարունակենք անել այն, ինչ Աստված է հանձնարարել մինչև լիովին չնմանվենք մեր սկզբնաղբյուր՝ Հիսուս Քրիստոսին:

Պողոսը Գաղատացիներին ուղղված թղթում նկարագրում է, որ շարունակ երկունքի ցավերի մեջ է «մինչև որ Քրիստոս կերպարանուի ձեր մէջ» (Գաղ. 4:19): Քրիստոսի մեջ հասունանալը կարող ենք սահմանել որպես մի գործընթաց, որ կանգնած տեղից շարժվում ենք դեպի այն վայրն, ուր դեռ չենք հասել: Միթե Պողոսի նման դուք էլ եք ճնշվում: Դեպի անհայտը տանող այս ճանապարհին երկմտելը սովորական բան է: Քրիստոսի մեջ մեր վերապրած ամեն ինչ անասելի տարբերվում է անցյալում ունեցած բոլոր փորձառություններից: Եկեք աշակերտներին նայենք, երբ Հիսուսը նրանց ինչ որ բան էր ասում անել անընդհատ զարմանում և շփոթվում էին, այդպիսին էր Քրիստոսին հետևելու նրանց կենսաձևը: Մեր կյանքն էլ է այդպիսին:

Ինչ որ անհայտ պատճառով Փիլիցեցիներին 1:6 –ը կարդալով կամենում ենք Աստծո խոստումների մեջ ապահով զգալ, հավաստիանալով, որ Նա ավարտին կհասցնի այն, ինչ սկսել է մեր մեջ: Այս ամենը կարելի է համեմատել մի լողի Օլիմպիական մարզչի հետ, ով ասում է, որ քեզ այնքան կպարապի մինչև ճշգրտությամբ չնմանվես Միքայել Ֆելփսին: Հիանալի գաղափար է թվում, բայց հաջորդ առավոտ գալիս ես մարզումների մեկնարկին և կաշվիդ վրա զգում այդ գաղափարի ողջ ծանրությունը: Եթե ուզում ես ինչ որ ռեկորդ սահմանել նախ պետք է անես այն, ինչ երբեք չէիր մտածի, որ կուզենաս անել:

Երբ թույլ ենք տալիս, որ Քրիստոսը մեր մեջ ապրի, համաձայնվում ենք անընդհատ ռեկորդներ սահմանելու կենսաձև վարելուն: Բայց մյուս կողմից ամեն ինչ պարզ է, Մաթ. 11:30 ն ասում է, որ Նրա բեռը քաղցր է և լուծը թեթև: Քրիստոս մեզ նոր բնություն է տալիս: Բայց ամեն ինչ դժվարանում է, երբ մեր հին էությունն է գլուխ բարձրացնում: Երբ փորձում ենք մեզ հետ քարշ տալ անցյալ փորձառությունները, անցյալի պատմությունն ու ձախողումները: Սկսում ենք Աստծուն նայելու փոխարեն որպես որոշիչ գործոն ամեն իրավիճակում ինքներս մեզ նայել: Այդ պատճառով էլ մի բան անելիս ջանում ու կաշվից դուրս ենք գալիս: Իսկ միակ բանը, որ Աստվածաշնչում խրախուսում է ջանալ Նրա հանգիստ մտնելն է (տես Եբր.4:11): Մենք պայքարում ենք, որ Նրա մեջ հանգիստ գտնենք: Երբ սովորում ենք վստահել, որ ամեն շաբաթ, ամեն օր, ամեն րոպե Նա Իր կյանքը մեր միջոցով կապրի, սկսում են մեր շուրջն անհնարին թվացող բաներ կատարվել:

Փառքից փառք գնալ նշանակում է անընդհատ ընդարձակել անցյալում մեր կատարած գործերի կամ սպասելիքների սահմանները:

Ահա թե ինչու քրիստոնեական կյանքը հավատքի կյանք է: Վայնյարդ եկեղեցում մենք ասում ենք, որ հավատք բառը Ռ-Ի-Ս-Կ է հեգվում: Եթե օրինակ կամենում եք նիհարել, ապա պետք է մի փոքր սովի միջով անցնեք: Եթե ուզում եք անել այն, ինչ Հիսուսն արեց պետք է մի փոքր Ռ-Ի-Ս-Կ ի միջով անցնեք: Ամեն ինչ շատ ակնհայտ է թվում, մինչդեռ մշտապես շրջանցելու ուղիներ ենք գտնում, և հետո զարմանում, թե ինչու ոչինչ չի փոխվում:Մենք ամեն գնով փորձում ենք խուսափել ռիսկի դիմելուց, մինչդեռ հենց դա է Արքայության գինը: Ոչ մեկ երբևէ առանց դրա Աստծո Արքայություն չի մտել: Որքան հեռու և որքան բարձր ես գնում Աստծո Արքայության մեջ այնքան ավելի ու ավելի մեծ ռիսկերի ես դիմում: Աստծուն որոնելը մշտապես կապված է ռիսկի հետ: Երբ Մովսեսը որոտացող լեռան վրա խիզախեց Աստծուն հանդիպել, նա ռիսկի դիմեց, քանի որ կարող էր մի ակնթարթում մեռնել: Պետրոսը ջրերի վրայով քայլող Հիսուսին կանչելով հսկայական ռիսկի գնաց: Պետրոսը Հիսուսին չխնդրեց «Այնպես արա, որ քայլեմ ջրերի վրայով»: Նա պարզապես դուրս եկավ նավակից և քայլեց դեպի Հիսուսը և Նրա Քրիստոսի հանդեպ ունեցած փափագը հրաշքի պատճառ դարձավ:

Մտածեք այն մասին, երբ Հիսուսն Իր 72 հետևորդներին ուղարկեց: Մեր ունեցած պատկերացումների համաձայն նրանք այնքան էլ պատրաստ չէին գնալու: Թերևս շվարած ու շփոթված էին: Մի քանի համար այն կողմ տեսնում ենք, որ նրանցից շատերը Հիսուսին թողեցին, երբ խոսեց արյան և մարմնի մասին: Ինչևէ նրանց պարզությամբ ուղարկեց և ուրախությամբ վերադարձան ասելով.«Տէ՛ր, դևերն էլ են մեզ հնազանդւում քո անունով» (Ղուկ 10:17): Դա Հիսուսի խոստումը չէր նրանց, պարզապես հնազանդվելով գնացել ու տեսել էին, թե ինչպես է Աստծո Արքայությունն իրենց շուրջը տարածվում:

Հիվանդներ բժշկելը, դևեր հանելը, ուտելիք բազմացնելն ու մեռելներին հարություն տալը բոլորն էլ Արքայության պատգամի դրսևորումներն են: Արքան այստեղ է: Արքան Իր ներկայությամբ արքայական փորձառություններ է բերում: Աստծո զորության դրսևորումը Քո մեջ Նրա պատգամի և ներկայության հետևանք է: Երբ գնաս, Նա ցույց կտա:

Հինգ հազարի կերակրումը

Ինձ դուր է գալիս հացերի ու ձկների պատմությունը: Ես ուղղակի կարողանում եմ պատկերացնել, թե ինչպիսին կլիներ այդ տեսարանը: Մարդիկ նստած էին անապատի տապի ու մորեխանման ցիկադաների միալար բզզոցի տակ: Պատկերացրեք հինգ հազարից ավելի շոգած, քրտնած մարդիկ, ովքեր Հիսուսին լսելու համար մղոններ էին կտրել: Նրանց մեծամասնությունը արևածագից առաջ էր արթնացել: Հոծ բազմությամբ նստած ձգտում էին ուշադրությունը սևեռած ինչ որ բան լսել, Նրանից ինչ որ բան քաղել: Ժամանակ առ ժամանակ մեղմ քամին փոշու թեթև ալիք էր բարձրացնում մոտակա բլրից և բոլորին պատում փոքրիկ ավազահատիկներով, որոնք էլ դիպչում էին նրանց աչքերին, մազերին ու հագուստներին: Ուտելիք չկար: Կեսօրն անց երեխաներն սկսեցին վերահսկողությունից դուրս գալ: Տարեցների մոտ գլխապտույտ սկսվեց, նրանք շարունակ արևի ճառագայթներից պաշտպանվում և հորիզոնն էին տնտղում՝ սպասելով մայրամուտի ստվերներին:

Դու մյուս աշակերտների հետ խառնված ծրագիր ես կազմում: Հետո մոտենում եք Հիսուսին և Աստծուն ներկայացնում խնդիրը լուծելու ձեր նախաձեռնած ծրագիրը: (Արդյոք լավ չէր լինի առաջինը Նրա ծրագիրը հարցնել): Բոլորդ նրան ասում եք, որ պետք է մարդկանց ուղարկի ուտելիք առնելու:

Իսկ Նա պատասխանում է.

-Մ չ, դուք նրանց կերակրեք:

Այս ինչ գիտունիկություն է:

-Մենք բավականաչափ ուտելիք չունենք,- դուք հակառակում եք:

-Ինձ տվեք այն, ինչ ունեք,- ասաց Նա:

Անդրեասը գնաց և վերադառնալով Հիսուսին մեկնեց հինգ նկանակ հաց և երկու փոքրիկ ապխտած ձուկ և ասաց.

-Տեսնում ես, ասում էինք չէ, որ ուտելիքը չի հերիքի:

Հիսուսը գոհ տեսք ունի, բայց դուք չեք հասկանում, թե ինչու: Նա աղոթում է հացի ու ձկան համար հետո կտրում և ձեզ բաժանում: Նա այդ ամենը բաժանում է տասներկուսի մեջ, ուստի քո ստացածը հազիվ մի բուռ բան լիներ: Նա բազմությանը հիսուն-հիսուն նստեցնում է և հետո դառնում է դեպի քեզ և գլխով ցույց տալիս փոքրիկ կտոր հացն ու ձուկը:

Դու գիտես, որ ձեռքիդ ուտելիքը կարող է միայն մի թեթև մեղմել սովից գալարվող ստամոքսիդ ցավը: Երկար քաղցած գիշեր էր սպասվում:

Հետո Նա ասում է.

-Սկսեք կերակրել այդ առաջին հիսուն հոգանոց խմբին:

Ի՞նչ: Տաս հազար քաղցած աչքեր քեզ վրա են հառած: Թեթև հայացք ես նետում մոտակա նստածներին: Հակառակ ափից մի խումբ ձկնորսներ են: Նրանցից մի քանիսի հետ դպրոց եք գնացել: Նրանք ողջ գիշեր արթուն են եղել և աշխատել իսկ հետո եկել են այդ զրույցը լսելու և կողքից տեսել եք, թե ինչպես են Հիսուսի մի քանի ասածների վրա քրքջում ու կատկում: Մի տեսակ բիրտ բազմություն է: Ստամոքսդ սովից գալարվում է, երբ ձեռքիդ ապխտած աղի ձկան հոտը դիպչում է քթիդ:

Հիսուսն սպասում է.

-Սկսեք,- ժպտալով միայն Իրեն հատուկ ժպիտով:

Միակ և *միակ* պատճառը, որ երբևէ կարող էր քեզ *դրդել* այդ քայլին գնալ այն, էր, որ այդ մասին *Հիսուսն* էր խնդրել: Սակայն միևնույնն է դժվար է ուշադրություն չդարձնել քո շուրջը տիրող իրականությանը: Նայում ես ձեռքիդ չնչին ուտելիքին և հետո քաղցած մարդկանց աչքերին:

Դանդաղ քայլերով, շատ դանդաղ մոտենում ես նրանց: Մի տեսակ կողքներով արագ ու աննկատ անցնելու ցանկություն ունես : Մտածում ես,թե որքան փոքր պետք է կտրել հացն առաջին նստած մարդուն տալիս: Երևի մի պատառ կտրես տաս: Կամ գուցե կեսն ու որքան հնարավոր շուտ այդտեղից հեռանաս: Մյուսները թերևս վիզները թեքած կսպասեն տեսնելու այդ ներկայացման ավարտը: Հիսուսը նրանց չէր ասել, թե երբ գնան ինչ կպատահի: Նա պարզապես ասել էր կերակրեք նրանով ինչ ձեր ձեռքում կա:

Բավական է:

Արդյոք երբեմն մենք էլ այդպիսի զգացումներ չենք ունենում, երբ լսում ենք «հիվանդներին բժշկելու», «թշնամիներին սիրելու» կամ «միշտ ավետարանելու» պատվիրանները: Մենք մտածում ենք *Աստված իմ ոչ ես: Ոչ այսօր: Ոչինչ չունեմ տալու:* Մենք մտածում ենք, *Իսկ ինչու չես նախ մի մեծ հոթդոգ բազմացնում ճիշտ իմ աչքերի առաջ, որ ես էլ ուրախությամբ բաժանեմ այն մարդկանց:*

196

Արդյոք մեր ապրած կյանքն արդեն բավականաչափ դժվար չէ: Ամեն բան կարգ ու կանոնի մեջ պահել, հոգ տանել ընտանիքի համար, փորձել բարեհաճ լինել, աշխատանքի վայրում լավ աշխատել և այլն: Մենք մտածում ենք *Անգամ վստահ չեմ, որ այդ ամենն ինձ հաջողվում է լավ անել, հիմա էլ ասում ես մի բան անեմ, որ գիտեմ իմ ուժերից վեր է:*

Սակայն Մաթեոս 6:33 ում Աստված մեզ խոստանում է, որ եթե նախ Նրա Արքայությունը որոնենք մնացածն Ինքը կհոգա:

Ինչ կա ձեր լանչի տուփի մեջ

Մեր տարածաշրջանում մի գործարար կար, ով փորձում էր հասկանալ, թե ինչ է նշանակում Աստծո ձայնը լսել ու առօրյա կյանքում Սուրբ Հոգուն հետևել: Մի անգամ հանդիպումների էր և ընդմիջմանը շատ սովածացավ, սակայն ձեռքին քիչ կանխիկ դրամ ուներ: Նա որոշեց արագ «Mc’Donalds» գնալ և իր համար «Happy Meal» գնել , որ քաղցը հագեցնի: Երբ հերթում կանգնած սպասում էր զգաց, որ Աստված իրեն ասում է դրա փոխարեն հինգ համբուրգեր գնել : *Ինչ իմաստ ունի: Ամբողջ փոխս կծախսեմ և ինչ պետք է անեմ այդ հինգ համբուրգերը: Միթե Աստված չի սիրում «Happy Meal»-ը:*

Սակայն քանի որ այս գործարարն ուզում էր իր առօրյա կյանքում զգայուն լինել Սուրբ Հոգու հանդեպ, ապա որոշեց փորձել և այդպես էլ անել: Երբ համբուրգերներով լի տոպրակը ձեռքին դուրս եկավ «Mc’Donalds»-ից մի տեսակ հիմար դրության մեջ էր զգում, երբ հանկարծ փողոցում, մայթի եզրին նստած մի խումբ անտուն թափառաշրջիկ պատանիներ տեսավ: Հանկարծ զգաց, որ Աստված ասում է «Այդ համբուրգերները նրանց համար են»:

Դեպի պատանիների կողմը քայլեց ու հետաքրքրվեց, թե արդյոք քաղցած են: Երբ սկսեց բուրգերները բաժանել, ևս չորս անտուն երեխա մոտեցան: Նա շարունակեց բաժանել և հանկարծ հասկացավ, որ ինքը համբուրգեր է բաժանել: Գնել էր հինգը, բայց բաժանեց ինքը: Գլուխը զարմանքից տարուբերեց, հետո նայեց և տեսավ, որ տոպրակում դեռ մի հատ էլ իր համար էր մնացել:

197

Երբ տալիս ենք Աստված բազմապատկում է մեր ունեցածը: Մենք միշտ ասում ենք. «Նախ բազմապատկիր, հետո կտանք»: Բայց այդպես չեղավ, երբ Հիսուսը հինգ հազարին կերակրեց իսկ մենք պետք է Նրա օրինակին հետևենք:

Լանչի մասին խոսելով, չգիտեմ դուք ինչպես, բայց ինձ համար լանչի ընդմիջումը դպրոցում իմ ունեցած ամենատարօրինակ փորձառություններից էր: Կային երեխաներ, ում մայրերը հրաշալի լանչեր էին նրանց համար պատրաստում: Նրանք ընտիր չիփսեր էին ունենում, գեղեցիկ զարդարված թխվածքաբլիթներ և տուփերով հյութեր: Այդ հարցում մայրս չափազանց գործնական էր: Իմ լանչի տուփի մեջ դնում էր ուտելիքի մնացորդները: Փորձում էի սպասել, մինչև բոլոր երեխաներն ուտեն, վերջացնեն, իսկ հետո դանդաղ հանում էի իմ լանչը՝ կիսով չափ պայուսակիս մեջ թաքցրած: Սովորաբար այնտեղ լոբի և բրինձ էր, բայց պատահում էր, որ նաև սենդվիչ էր լինում: Դպրոցական երեխաների աչքից քիչ բան է վրիպում: Իմ մանկության ընկերներ Փեմն ու Լինդի Գեսթը հաճախ ինձ հետ կիսում էին իրենց ուտելիքը: Նրանք մեծ սրտի տեր մարդիկ էին, ովքեր շատ առումներով օգնում էին ինձ վաղ դպրոցական հասակում մեղմել իմ մեկուսացած լինելու զգացումը:

Երբ մտածում ենք, թե ինչպես Աստված կարող է մեզ գործածել, այն միտքն է գալիս, որ Նրան առաջարկելու շատ բան չունենք: Գուցե զգանք, որ մեր աղոթքների հետևում զորավոր հավատք չկա, կամ գուցե այն նույն զգացումն ունենաք, ինչ լոբու մնացորդներով լանչի տուփով երեխան: Սակայն չպետք է թույլ տալ, որ դա մեզ կանգնեցնի: Անգամ կասկածն իր հետ համախառնված հավատքի չափաբաժին ունի: Եթե մենք չենք անում անել, այն ինչ կարո ենք, ապա ինչպես Աստված մեր միջոցով անի, այն ինչ չենք կարող:

Զարմանալի է, որ Հիսուսն Իր բոլոր հրաշքներում ոչնչից ինչ որ բան չարեց: Կեղտոտ ջուրը գինի դարձրեց: Ինչ որ մեկի փոքրիկ լանչը բազմացրեց: Մյուսից ավանակ խնդրեց: Պետրոսին պատվիրեց ձուկ որսալ և նրա բերանից ոսկե մետաղադրամ հանել: Նա անգամ կույրի աչքերը բժշկելու համար փոշուց ցեխ շինեց: Ինչքան էլ մեզ փոքր թվա մեր ունեցածը, եթե առաջարկենք Հիսուսն այն կօգտագործի: Ըստ էության Նա սիրում է գործածել մեր առաջարկածը:

Եթե մեր հավատքը հերիքում է նրան հնազանդվելու, ապա Նա օգնում է հաղթահարել մնացած անհավատությունը (տես Մարկ.9:24):

Սակայն տակավին խնդիր ունենք մտածելով, որ Քրիստոսի հետևորդ լինելով կան բաներ, որ կարող ենք անել և կան բաներ, որ չենք կարող: Մենք կարող ենք սիրով կամավորություն անել անվճար սննդի ճաշարաններում, կարիքավորներին հագուստ բաժանելելի, հովանավորել Աֆրիկացի երեխաներին: Հաճախ ասում ենք «Օ հ, ինչպիսի քրիստոնյային վայել արարք»: Մինչդեռ քրիստոնյա նշանակում է «Քրիստոսի փոքր տարբերակ»: Ուստի իրականում դևեր հանելը, ջրերի վրա քայլելը, հազարավոր մարդկանց համար ուտելիք բազմացնելը, հիվանդներին բժշկելն ու մեռլներին հարություն տալը պետք է մեր մոտ նման արձագանք առաջացնի «Օ հ, ինչպիսի քրիստոնյային վայել արարք»: Սրանք էին այն գործերը, որ Հիսուսն արեց:

Երբեմն ինքներս մեզ կանգնեցնելով ասում ենք «Ուղղակի չգիտեմ, թե որն է Աստծո կամքը, չէ որ Հիսուսն արեց միայն այն, ինչ Հորը տեսավ անելիս»: Այո Հիսուսն արեց այն, ինչ Հորը տեսավ անելիս, իսկ մենք պետք է հետևենք Նրա կյանքի օրինակին: Անելով այն, ինչ Հիսուսն արեց, մենք ևս Հոր կամքն ենք կատարում: Մենք չենք կանգնում ու մտածում *Միթե Աստված ուզում է, որ այս*

մի ամսան ապուրն աղքատ երեխային տամ: Բոլորիս քաջ հայտնի է դրա պատասխանը: Նույնն վստահությունն ու ուրախությունը կարող ենք ունենալ, երբ մարդկանց բժշկում ենք, կամ Աստծուց հեռացած մարդկանց քաջալերում, որ փրկությունն այստեղ է:

Կոմայից արթնացած

Կոստա Ռիկայում Վայնյարդ ազգային կոնֆերանսի էի մասնակցում և մի տղամարդ եկեղեցուց խնդրեց հիվանդանոց գնալ իր եղբոր համար աղոթելու: Ամեոբան նրա ականջից ներս մտնելով քայքայում էր ուղեղը: Վերակենդանացման բաժանմունքում նրա համար աղոթեցին, բայց կարծես ոչինչ չփոխվեց: Մի տեսակ պարտության զգացումով մեզ հյուրընկալողների հետ պատրաստվեցինք դուրս գալ: Դրսում մի կնոջ նկատեցի և զգացի, որ հավանաբար մեջքի ներքին հատվածի և կոնքի խնդիր ունի: Նրան մոտեցա և հարցրեցի հարցրեցի, թե արդյոք այդ շրջաններում ցավեր ունի և նա ասաց այո:

Ես ասացի.

-Եթե թույլ տաք կաղոթեմ ձեզ համար և Աստված հենց հիմա կբժշկի:

Աղոթելուց հետո հարցրեցի ցավի ուժգնության չափը:

-Զրո,-ասաց նա:

Հենց այդ պահին Աստված նրան կատարելապես բժշկեց, ընդամենը մեկ աղոթքով: Հետո ասաց.

-Սպասե՛ք,- հետո անհետացավ սրահի հետևի սենյակներից մեկում: Շնչակտուր վերադարձավ և հարցրեց.

-Խնդրում եմ կգաք աղոթեք սկեսրայրիս համար: Նա արդեն երկար ժամանակ է ինչ կոմայի մեջ է:

Զնայած այդ պահին հուսահատված էի, բայց որոշեցի փորձել: Ես ասացի.

-Իհարկե, միայն թե խոստացեք, որ կգանք բուժաշխատակազմի մոտ և բոլորին հիվանդասենյակ կհրավիրեք:

Նա գնաց և մի բժշկի ու մի քանի բուժքույրերի համոզեց հիվանդասենյակ գալ: Սովորաբար իմ ծառայությանն ամենաանհավատ վերաբերմունք ցուցաբերում են ամեն օր հիվանդության և մահվան հետ առնչվող մարդիկ: Այս բուժաշխատակազմի առջև ես այսպես աղոթեցի,

-Հայր գոհանում եմ Քո հրաշագործ, ամենակարող զորության համար: Շնորհակալ եմ, որ այժմ պատրաստվում ես բժշկել և կոմայից հանել այս մարդուն, որպեսզի բոլորն իմանան, որ Դու այստեղ ես և փափագում ես նրանց հետ մտերմանալ:

Հետո խոսքս ուղղեցի կոմայի մեջ եղող տղամարդուն.

-Պաբլո՛ , հենց հիմա արթնացիր, Հիսուսի անունով»:

Հանկարծ Պաբլոյի աչքերը բացվեցին: Ճիշտն ասած վախեցա, բայց կյանքումս ունեցած ամենազիլ փորձառություններից էր:

Հարսը ճչալով դուրս վազեց նրա կնոջը բերելու: Բուժքույրերից երեքը նույնպես վախեցած դուրս գնացին: Բժիշկն սկսեց Պաբլոյին զննել: Նա լիովին արթուն էր և կարողանում էր արձագանքել:

Հինգ րոպե անց բոլոր սենյակներից մարդիկ կանչում էին, որ գնանք և իրենց համար աղոթենք: Հավատքն սկսեց հիվանդանոցում անտառային հրդեհի պես տարածվել:

Մեզ անհայտ են Աստծո մտադրություններն ու երբեք չգիտենք, թե որ պահին ինչ բեկում կմտցնի: Որպես Նրա զավակներ պարզապես պետք է վստահությամբ քայլենք իմանալով, որ եթե մենք ներկա ենք, ուրեմն Աստված է ներկա: Մեր գործը քայլ անելն ու սպասելն է, որ Աստված դրսևորի Իր ամենաբարի կամքը:

Ճանաչիր ստերն ու հակառակիր դրանց

Երբ քայլ ենք անում և առաջ շարժվում պետք է զգոն լինենք, թշնամու ստերը ճանաչելու և դրանց հակառակելու հարցում: Սատանան մեզ դրդում է կասկածի տակ դնել այն ամենն ինչ արդեն ունենք, հարցականի տակ դնել ինքներս մեզ, կարկամել ու նահանջել: Դեռ Եդեմական պարտեզից նա մոլորեցնում էր Աստծո մարդկանց մարտահրավեր նետելով իբր կարող են Աստծո «նման» դառնալ, մինչդեռ մարդն արդեն Աստծո պատկերով և նմանությամբ էր ստեղծված և նրան այս երկրի վրա արդեն իշխանություն էր տրված:

Սատանան հիմնականում մեզ գայթակղեցնում է նրանով, ինչ արդեն ունենք: Երբ Աստված նոր էր Հիսուսին հասարակայնորեն հաստատել ասելով . «Դո՛ւ ես իմ սիրելի Որդին, որ ունես իմ ամբողջ բարեհաճությունը» (Ղուկ. 3:22): Գրեթե անմիջապես Սատանան Հիսուսի մոտ եկավ իր առաջին փորձությամբ: «*Եթէ* Աստծու Որդի ես, այդ քարին ասա՛ , որ հաց լինի» (Ղուկ 4:3 ընդգծումն ավելացված է): Սատանան ճիշտ ինչպես Հիսուսի հետ վարվեց, այնպես էլ փորձում է մեզ ետ պահել Աստծո խոստումներից ու մեզ վերաբերվող ճշմարտություններից: Նրա նպատակն է մեզ համոզել, որ մեր ուժերից վեր է Աստծո կամքը կատարել: Իսկ ինչպես Հիսուսը գիտեր, որ Ինքն Աստծո Որդին է: Իմ կարծիքով Նա այդ մասին հավատքով գիտեր, ինչպես մենք: Որպես մարդ Նա երբեք երկնքում չէր եղել: Նա Աստծո հետ կապված էր այնպես ինչպես մենք՝ Նրա հետ առանձին ժամանակ անց կացնելով և Նրա ներկայության մեջ շինություն ստանալով:

Հիշեք, որ Սատանան կարող է շարունակ մեզ մեղադրել անավարտ գործերի համար և ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել մեր տկարությունների և ձախողումների վրա: Իսկ մենք ամեն օր պետք է հին մարդը մի կողմ դնենք և նորը հագնենք, այն նոր արարչագործությունը, որի մասին խոսում է Աստվածաշունչը (տե՛ս 2 Կոր. 5:17):

Սատանայի երկրորդ սուտը, որով մեզ սնում է Աստծո Խոսքն ու Նրա բնությունը հարցականի տակ դնելն է: Ծննդոց 3:1 ում Սատանան հարցնում է. «Իրա՞վ Աստված ասեց…»: Սատանան մարտահրավեր է նետում, իբր Աստված Իր զավակներին ինչ որ բան ագելում է: Նա այդ հարցով ուզում էր կասկած առաջացնել. «Արդյոք Աստված բարի է: Արդյոք իսկապես ամենալավն է կամենում Իր զավակներին»:

Եթե Սատանային հաջողվում է և մենք կասկածի տակ ենք դնում Աստծո բնավորությունն ապա դրանից հետո ամեն բան սկսում է փլուզվել:

Ճշմարտությունը կենսագործում է հավատքը, իսկ սուտը կործանում է այն: Ճշմարտությունը հռչակելով ոչնչացնում ենք Սատանայի ստերը: Դրա համար էլ Աստծո Խոսքը սրի նման է: Անգամ երբ առաջ ենք շարժվում անելու այն, ինչի մեջ կանչված ենք, պետք է ճանապարհն այդ ստերից մաքրենք, որ հավատքն աճի:

Մի անհանգստացեք ձեր հավատքի բավարար կամ անբավարար լինելու համար: Եթե արդեն հնազանդվել եք և առաջ եք գնում ինչ որ բան անելու, ուրեմն ձեր հավատքը կհերիքի այն իրագործելու: Որոշ խոչընդոտների պատճառով թերևս արդյունքն անմիջապես չերևա, բայց հավատքով ոիսկի դիմեք և քայլ արեք: Մարդիկ Արքայության մեջ մեծ չեն համարվում, որովհետև ամուր կամքի ուժ կամ արտասովոր բարություն ունեն: Մարդիկ Արքայության մեջ մեծ են համարվում, որովհետև սովորել են սեփական անձի փոխարեն Քրիստոսին հավատալ:

Իսկ դուք երբևէ հուսալքվե՞լ եք: Եթե այո, ապա մենակ չեք այդ հարցում: Դավիթն Աստծո զորավարներից մեծագույնն էր, սակայն սաղմոսների մեջ տեսնում ենք, որ պայքարում էր հուսալքության և դեպրեսիայի դեմ: Բայց մենք էլ ինչպես Դավիթը մշտապես պատճառ ունենք հուսալու Աստծո զորությանը, հավատարմությանը, շնորհին ու անսասան սիրուն: Նրա բնավորության մեջ վերագտնելու մեր կորցրած ուրախությունն ու ցնծալու:

Իսկ գուցե հուսալքված ենք, որովհետև մեր հույսը մեզ վրա ենք դրել: Սուրբ Գրքում ամենուր Աստված Իր անվեհեր որդիներին ու դստերերին ասում է. «Մի վախեցե՛ք, մի վհատվե՛ք, *քաջ եղե՛ք*»: Ամեն բան փոխվում է, երբ հասկանում ենք, որ հուսալքությունը մի վիճակ չէ, որում պետք է հարատևել, ինչպես օրինակ տխրությունն ու տառապանքը: Շատ անգամ մեր կյանքում Աստծո մեծ գործերից առաջ Սատանան փորձում է խոր հուսահատություն բերել: Հովնաթանի մահը, որն անասելի աղետ էր Դավիթի համար, նախորդեց նրա Իսրայելի թագավոր հռչակվելուն:

Մեր առջև ծառացած բոլոր իրավիճակում «պիտի հնձենք, եթէ չթուլանանք: (Գաղ. 6:9)

Բարձրացրեք սպասելիքների սանդղակը

Հաճախ եմ հանդիպում մարդկանց, ովքեր լսելով իմ պատմություններն Աստծո զարմանահրաշ գործերի մասին, քաջալերվում ու ոգեշնչվում են, սակայն չեն ակնկալում, որ Աստված ճիշտ այդպես կարող է նաև իրենց գործածել: Մենք տեսականորեն հավատում ենք, որ Աստված կարող է մեծամեծ բաներ անել մյուսների միջոցով, բայց ոչ մեր:

Աստվածաշունչը կարդում ու մտածում ենք *Հիսուսն Աստված է, դրա համար էլ կարողացավ այդ ամենն անել:* Սակայն Հիսուսը թողնելով Իր գերբնական զորությունը երկիր եկավ որպես մարդ, մեզ նման Սուրբ Հոգի ստացավ և բոլորիս ցույց տվեց Հոր կամքին հնազանդ կյանք ապրելու օրինակը: Նա նաև Իր աշակերտներին ուղարկեց անելու այն, ինչ Իրեն տեսան անելիս և հետո բոլորիս հանձնարարեց ասելով «դրանցից ավելի մեծ գործեր արեք» (Հովհ. 14:12):

Ողջ աշխարհով մեկ անրևակայելի վկայություններ ենք լսում Աստծո զորության և հրաշագործ ճեղքումների մասին, պարզապես պետք է ինչ որ մեկն առաջինը քայլն անի:

Երբ Դավիթն սպանեց Գողիաթին նա առաջին միջահասակ մարդն էր, որ տապալեց հսկային: Անմիջապես դրանից հետո Աստվածաշնչում նշվում է, որ Դավթի մարդկանց կողմից ևս վեց հսկա ընկան և անգամ մեկը նրա կրտսեր եղբորորդու կողմից:

Ո՞վ է կամենում առաջինը գնալ:

Երկվորյակների բժշկությունը

Տարիներ առաջ մեր եկեղեցի մի տղամարդ եկավ, ով լսել էր, որ մենք աղոթում ենք քաղցկեղով հիվանդների համար և նրանք բժշկվում են: Նրան շականակագեղձի քաղցկեղ էին ախտորոշել և ծառայության վերջում աղոթեցինք թե նրա և թե նրա ֆիլիպինցի կնոջ համար: Նրանցից ոչ մեկը եկեղեցի չէր հաճախում: Տղամարդու համար աղոթելուց հետո դարձա նրա կնոջն ու հարցրեցի.

-Շա՞տ եք տառապում միգրենից:

-Այո,- պատասխանեց նա, -հենց հիմա էլ գլուխս ցավում է: Ամբողջ կյանքում տառապել եմ: Վերջերս բժիշկը փոխել է դեղատոմսս, սակայն ոչ մի դրական առաջընթաց: Նրանք այլևս չեն կարողանում ինձ հավելյալ դեղեր նշանակել, որովհետև շուտով օրգաններս կդադարեն գործել:

Ես նրան ասացի,

-Եթե թույլ տաս քեզ համար աղոթել, Աստված հենց հիմա կբժշկի:

Ամուսնու հետ միասին աղոթեցինք նրա համար, միգրենն անմիջապես անհետացավ և այլևս երբեք չվերադարձավ: Այդ շաբաթ ավելի ուշ նա կատարվածի մասին պատմում է իր երկվորյակ քրոջը: Նրա երկվորյակ քույրն ապրում է Հավայան կղզիներում և պարզվում է, երբ մենք Չիկագոյում աղոթում էինք նրա քրոջ միգրենի համար այդ պահին նա ևս տառապում էր ահավոր միգրենից, որն ակնթարթորեն անհետանում է: Նրանք երկուսն էլ բժշկվում են միևնույն ժամանակ:

Մեր աղոթքից հետո նրա ամուսինը գնաց հետազոտվելու և նրա մարմնում անգամ քաղցկեղի նշույլ չհայտնաբերեցին: Նրանք երկուսն էլ Աստծո կրակով բռնկվեցին և սկսեցին մեր եկեղեցի հաճախել և նորահավատների համար նախատեսված Ալֆա կուրսին մասնակցել:

Ալֆա կուրսից չորս շաբաթ անց նրանք մոտեցան ինձ: Կինն ասաց.

-Ռոբբի, մայրս և մորաքույրս հիվանդանոցում են և երկուսն էլ քաղցկեղից մահանում են: Մենք աղոթել ենք և զգում ենք, որ պետք է քեզ Ֆիլիպիններ ուղարկենք: Քեզ համար տոմս կգնենք, որ գնաս և աղոթես նրանց համար: Կգնա՞ս:

Նայեցի այդ զույգին ու պատասխանեցի.

-Ոչ:

Կինը մի քիչ զարմացած ու կարծես վիրավորված նայեց ինձ, բայց ես սկսեցի բացատրել.

-Եթե դուք հավատում եք, որ ես կարող եմ գնալ և աղոթել, ապա այդ նույն հաջողությամբ դուք էլ կարող եք:

-Իսկապե՞ս,-ասաց կինը: Նա զարմացած էր թվում:

-Այո,- քաջալերեցի նրան:-Փոքրին մի ձգտեք, այլ մեծամեծ բաներ որոնեք: Որքան հնարավոր է հրապարակայնորեն գործեք: Ամբողջ գյուղով մեկ տարածեք, որ շուտով ձեր մայրն ու մորաքույրը քաղցկեղից կբժշկվեն:

Այս կինը Ֆիլիպիններ մեկնեց և օդանավակայանից անմիջապես հիվանդանոց գնաց, որտեղ աղոթեց իր մոր և մորաքրոջ համար: Երկուսն էլ վարկենապես բժշկվեցին: Հաջորդ օրը գնաց այդ կանանց տուն բերելու, որովհետև երկուսին էլ հիվանդանոցից դուրս էին գրել առանց քաղցկեղի:

Համագյուղացիները նրանց տուն էին գալիս պարզելու, թե ինչ է պատահել, որովհետև վերջին անգամ հրաժեշտ տալով կարծում էին, որ այդ երկու կանանց այլևս ողջ չեն տեսնի: Կինը նրանց բաժանում է մեր քարոզների բուկլետներից և բարձրաձայն կարդալով սկսում մեկնաբանել կարևոր կետերը: Մինչև այդ պահը հազիվ յոթ-ութ ծառայությունների մասնակցած լիներ մեր եկեղեցում, բայց նրանց իր տեսանկյունն էր ներկայացնում և համպատրաստից պատմություններով կիսվում: Մարդիկ սկսում են ամեն օր գալ նրանց պաշգամբի մոտ հավաքվել նրան լսելու և ի վերջո իրենց կյանքերը Քրիստոսին հանձնում անկախ այն բանից, որ գտնվում էին Ֆիլիպինների մուսուլմանական համայնքում:

Փողոց տարեք

Ջոն Ուիմբերը հաճախ ասում էր «Միսը փողոցում է»: Եթե ուզում ենք զորությունը վերստին եկեղեցում տեսնել, պետք է այն փողոց տանենք: Հիսուսը եկավ փնտրի և փրկի կորցրածը: Նա չեկավ բժշկված, շողացող, երջանիկ մարդկանց փոքրիկ կատարյալ համայնքներ հաստատելու: Նա ասաց. «Գնացե՛ք»: Իրական հրաշքները կատարվում են, երբ գնում, գործում ու հնազանդվում ենք: Մենք փոխվում ենք նմանվելով նրան և հղկվում ու հասունանում ենք անցնելով հաստատակամության և հավատքի փորձության միջով: Հովհաննես 1:11-13,16 համարներում այսպես է ասվում.

Իւրայիններին մօտ եկաւ, բայց իւրայինները նրան չընդունեցին:
Իսկ ովքեր նրան ընդունեցին, նրանց իշխանութիւն տուեց լինելու Աստծու որդիներ, նրանց, որոնք իր անուանը կը հաւատան:
Նրանք ո՛չ արիւնից, ո՛չ մարմնի կամքից և ոչ էլ մարդու կամքից, այլ Աստծուց ծնուեցին:

...Մենք բոլորս նրա լրիւութիւնից ստացանք շնորհ՝ շնորհի փոխարէն.

Մեր մարմիններն ու հիվանդություններն ուղղակի ժամանակավոր բնույթ են կրում: Երբ հետևում ենք Հիսուսին մեր մեջ տեղի ունեցող փոփոխությունը հավիտենական է լինում և մեր գործը դառնում է որքան հնարավոր է շատ մարդկանց Աստծուն մոտեցնելը:

Արքայությունը դեռ լիովին կգա, սակայն Արքայության մի մակարդակ կա, որ մենք չենք ճաշակում, քանի որ չենք *գնում*:

Իսկ դուք տեղյակ եք, թե որտեղ է ձեր քաղաքի հույսը: Այն հենց հիմա նստած է ձեր աթոռին: Քո քաղաքի արթնության Աստծո ծրագիրը քո մեջ ու քո միջոցով գործելն է:

Կարիք չկա սպասելու, որ ուրիշ մեկը կգա: Դու արդեն եկել ես: Եվ քանի որ եկել ես քո հետ Քրիստոսն է եկել: Աղոթում եմ, որ հավատաս այդ ամենին: Աղոթում եմ, որ ամուր բռնես Աստծո քեզ տված խոստումները: Քրիստոսը եկավ փնտրելու և փրկելու կորցրածն ու թշնամու գործերն ավերելու: Քանի որ Աստված կարևորում է Իր ներկայությունն ու զորությունը փողոց տանելն, ուրեմն մենք էլ պետք է կարևորենք:

206

12// Հարություն տալ մեռելներին

Հաստատակամությունն ավելին է քան զուտ տոկունությունը: Այն տոկունություն է գումարած վստահությունն ու համոզվածություն, որ այն ինչ որոնում ենք հաստատ կգտնենք...Երբ մեզ թվում է, թե մեր հույսերն այդ պահին հիասթափության ճիրաններում են, ուրեմն նրանք մաքրագործման պրոցեսում են:

Օսվալդ Զեմբերս

Որդում՝ Զուդայի հետ մի ծառայություն ունեինք: Այս ծառայությունն աճելով մեր միջև յուրահատուկ կապ էր ստեղծել, քանի որ մի քանի բավականին խճճված պատմությունների էինք հանդիպել : Այնպիսի հանգամանքներ էին ստեղծվել, որոնք կարելի է նկարագրել որպես արտասովոր, տարօրինակ և միանգամայն անհանգստացնող: Ես նման հայր –որդի զբաղմունք քչերին խորհուրդ կտայի: Մեր ծառայությունը մեռելներին հարություն տալն էր: Մենք որոշել էինք կամ մեծ բաներ սպասել կամ ուղղակի տուն գնալ:

Մինչև հիմա աղոթել ենք մի քանի տասնյակ մեռելների համար, որն այնքան էլ մեծ թիվ չէ: Բայց մինչև այս պահը մեր աղոթքների արդյունքում դեռ ոչ ոք չի կենդանացել: Ի միջի այլոց մեռելներից ոչ մի բողոք չեմ ստացել:

207

Աստծո Արքայությունը մշտապես ներկայացվում է որպես մի գանձ, որ մարդիկ այն ձեռք բերելու համար պատրաստ են ամեն ինչ տալու: Գոյություն չունի չափազանց շատ տալու գաղափար: Ես չեմ կարծում, որ մեզանից ինչ որ մեկը երկինք կգնա ու Աստված նրան կասի, «Հրաշալի գործեր ես արել Իմ հավատարիմ ծառա, բայց ուզում եմ ասել իսկապես չափազանց շատ ժամանակ ես վատնել հիվանդների համար աղոթելու վրա, չափազանչ շատ մարդկանց ես Հիսուսի մասին պատմել, իմանալով, որ նրանք հավանաբար այդպես էլ ոչինչ չեն ընդունի, չափազանց հեռուն ես գնալ: Չափազանց շատ բան ես խնդրել: Կարծես փորձում էիր երկնքի կեսը բաժանել: Մի քիչ էլ մեզ համար պահեիր: Եվ ես շատ եմ ուզում քեզ հարցնել ինչու էիր գնում ու աղոթում այդ մեռած մարդկանց համար»:

Այնքան բան կա, որ անգամ չենք էլ հասցրել փորձել: Բնականաբար ոչ ոք չի կարող ամեն բան կատարյալ անել, բայց եթե միայն փորձում ենք անել այն ինչ «գիտենք» որ կարող ենք, դրանով սահմանափակում ենք մեզ: Մենք կանչված ենք Հիսուսի նման որպես որդի գործելու և կանչված ենք հաստատակամ հետամուտ լինելու: Մենք առաջին աշակերտների նման Քրիստոսի իրական էության մասին հայտնություն ստանալու ճանապարհին ենք: Երբեմն աշակերտները հավատում էին, իսկ երբեմն էլ կասկածում:

Աշակերտները զորացան, երբ շարունակեցին Քրիստոսին հետևել և Նրան գործակից լինել: Նրանք երկնքի Արքայությունն էին մտնում, երբ գնում ու անում էին այն, ինչ գիտեին, որ չեն կարող անել:

Անհրաժեշտ է ընդարձակել մեր կարողությունների դաշտը: Շատ հաճախ թույլ ենք տալիս, որ ձախողման վախը մեզ կանգնեցնի: Տաղանդների առակում ձախողման վախն էր, որ ծառային դրդեց իր ներուժը գետնի տակ թաղել (տես Մաթ. 25:14-30, Ղուկ. 19:12-28): Մեծ հաղթանակների համար մեծ ռիսկեր են պետք: Եթե մեր գործի մեջ պարբերաբար «ձախողումներ» չենք ունենում, ուրեմն դժվարանում եմ հավատալ, որ իրոք հետամուտ ենք լինում: Այս գլխի մեջ ուզում եմ հատուկ շեշտադրել, թույլ տվեք ձեզ ձախողել և ձախողեք մեծ հաշվով:

Արտասովոր արտադպրոցական զբաղմունք

Զա՛նգ, զա՛նգ: Կեսօրն անց էր և հեռախոսն անդադար զանգում էր: Նայեցի հեռախոսահամարին: Զանգողն ավագ որդիս էր՝ Ջուդան, ավագ դպրոցական: Վերցրեցի լսափողն ու լսեցի նրա հուզված ձայնը:

-Պա՛պ, պա՛պ: Դու պետք է հենց հիմա այստեղ գաս: Պետք է ասես, որ կգաս: Հենց հիմա արի:

Սա Ջուդան էր իր ոգևորության գագաթնակետում և վստահ գիտեի, որ հեշտ չի լինելու նրան մերժել:

-Ի՞նչ է պատահել,- հարցրեցի ես:

-Պա՛պ, ընկերներիցս մեկը հենց նոր դպրոցից տուն է գնացել և տեսել, որ տատիկը մահացել է: Նա ինձ զանգահարեց անչափ վշտացած էր: Պապ հենց հիմա պետք է գնանք ու աղոթենք, որ նրա տատիկը մեռելներից հարություն առնի: Նրանք ոչ ոքի չունեն, որ զանգեն: Ես նրան պատմել եմ, որ հայրիկս հոգևոր ծառայող է և որ մենք կգնանք ու կաղոթենք, իսկ նա համաձայնել է, և ուզում է, որ գնանք: Պա՛պ, եթե *հենց հիմա* այնտեղ գնանք կարող ենք մինչև թաղման մասնակիցների գալը նրան հարություն տալ:

Ինձ համար դրանից ավելի վատ ժամանակ չէր կարող լինել: Ես նրան ասացի.

-Ջուդա իսկապես չեմ կարող, այսօր արդեն մեր աշխատակիցների հետ մի քանի հանդիպում ունեմ ծրագրած:

-Պաաապ,- Ջուդան պնդեց,-այդ կինը մահացել է: Մենք պետք է նրա համար աղոթենք: Որքա՞ն հաճախ է նման հնարավորություն տրվում: Դու պետք է անպայման գաս:

Նա շարժվում էր Դոքինսներին բնորոշ տրամաբանությամբ: Չգիտեմ ինչպես, բայց նրան հաջողվում է ինձ համոզել և կես ժամ անց միասին այդ կնոջ տուն էինք գնում: Ջուդան ոգևորված էր:

-Իիինչ ընտիր է,- ասաց նա,-մեր ողջ դպրոցը Հիսուսին կընդունի, որովհետև մենք պատրաստվում ենք մեռելներին հարություն տալ:

Այդ ժամանակ մեզ հետ մի ամաչկոտ, շատ անուշիկ ռուս պրակտիկանտ էր ապրում՝ Ժաննան: Նա մեկ նայեց ինձ, մեկ Ջուդային և հետո կարկամած հարցրեց.

-Ես կցանկանայի գալ մեռելին հարություն տալու: Թույլ կտա՞ք ես էլ գամ ձեզ հետ:

-Իհարկե,- ասացի ես, -դե, գնացինք:

Երբ նրանց դռան մոտ հասանք, տեսա որ Ժաննան ու Ջուդան չափազանց ոգևորված են:

Նրանց ասացի.

-Լավ, հիմա երկուսդ էլ հանդարտվեք և լուռ մնացեք: Այս մարդկանց ընտանիքի անդամը մահացել է և հիմա նրանց համար չափազանց ծանր շրջան է: Կարիք չկա, որ նրանք ձեզ ոգևորված տեսնեն:

Ժաննան աչքերը խոնարհեց.

-Կներեք ինձ...

-Ոչ, խոսքը քո մասին չէ, -հանդիմանող հայացքով նայեցի որդուս:

Սևակազմ Աստվածաշունչը ձեռքիս հարգալից մտանք նրանց տուն: Ջուդայի ընկերը մեզ տարավ այն սենյակը, որտեղ տատիկի դին էր: Կնոջը ընտանիքը հավաքվեց մեր շուրջն ու ես նրանց համար բարձրաձայն Սաղմոս 23-ը կարդացի: Նախկինում երբեք նման իրավիճակում չէի եղել, ուստի մտածեցի, որ հնարավոր է այդ կնոջ հարության համար մեր աղոթքն ընտանիքին անհանգստություն պատճառի և խնդրեցի, որ մեզ տատիկի հետ մի քանի րոպե մենակ թողնեն:

Նրանք համաձայնեցին ասելով.

-Երեկի կամենում եք վերջին արարողակարգն անել:

-Ըըըմ...դե համարյա,- պատասխանեցի ես:

Հենց դուրս եկան Ջուդային ու Ժաննային ասացի.

-Երեխեք, ձայններդ շատ չբարձրացնեք, մենք չենք ուզում այս մարդկանց անհանգստացնել: Հետո ձեռքս դրեցի այդ կնոջ գլխի տակ ու հրամայեցի,

-Հարության զորություն Հիսուսի անունով, հարություն տուր նրան:

Ոչինչ տեղի չունեցավ: Ջուդան խենթի պես աղոթում էր նրա ոտքերի մոտ կանգնած և ես ասացի,

-Կենարար շունչ լցրու այս թոքերը:

Ես փչեցի նրա կրծքավանդակի վրա: Դրանից ընդամենը նրա մազերը խառնվեցին իրան:

Գրեթե մի տաս րոպե անց Ջուդան նայեց ինձ և ասաց,

-Պապ, հա գիտեմ տեղին չէ, բայց Աստվածաշնչում մի քանիսը պառկեցին մահացածի վրա, այնպես չէ՞:

Նայեցի իմ առջև պառկած տարեց կնոջն ու ասացի.

-Դե ինչ կարծում եմ տասնվեցամյա տղան ավելի լավ գլուխ կհանի դրանից քան քառասունն անց տղամարդը:

Ջուդան նայեց մեր ռուս պրակտիկանտին ու ասաց.

-Ռուս աղջկա մոտ կարող է ավելի լավ ստացվել, մենք նրանց կասենք, որ իրենց երկրում այդպես է ընդունված:

Ժաննան հանկարծակիի գալով ասաց.

-ես վախենում եմ հիմա...:

Հենց այդ պահին դուռը բացվեց և մի երիտասարդ տղամարդ ներս մտավ միջին տարիքի կնոջ ուղեկցությամբ: Տղամարդն ասաց.

-Հենց հիմա դադարեցրեք այս ամենը:

Ես տեսա, որ տատիկի գլուխը կողքի է թեքված: Աննկատ ուղղեցի նրա գլուխն ու մազերը իրենց նախկին դիրքին բերեցի:

Հենց այդ պահին ներս մտած կինն ասաց.

-Տեր Աստված նայիր մայրիկին, ինձ թվում է դեմքի գույնը վերադարձել է և ամեն պահի կարող է խոսել:

Ես ասացի,

-Իսկապե՞ս:

Սակայն երիտասարդը նրան ընդհատելով ասաց.

-Նա քահանա չէ:

Հետո մեզ դառնալով ասաց.

-Դուք կաթոլիկ չեք, չէ՞: Ստիպված եմ ձեզ խնդրել, որ այստեղից հեռանաք:

Այդ խոսքերն ասելուն պես մեզ թվաց, թե հավատքն օդում սառավ: Հայտնեցինք մեր խորին ցավակցություններն ու հեռացանք:

Դուրս գալիս Ջուդան գրկախառնվեց իր ընկերոջ հետ: Երբ արդեն փողոցում էինք նա արտահայտեց իր հիասթափությունը

-Ախր...,- ձեռքերով ինձ մի մատնաչափ ցույց տալով,-ա՜յ այսքան էր մնացել:

Տունդարձի ճանապարհին բոլորս լուռ էինք: Ես անընդհատ Ջուդային էի նայում, ով հոնքերը խոժոռած հենվել էր պատուհանին ու խորասուզվել մտքերի մեջ: Սիրտս ճմլվում էր: Չլինի թե որդիս վհատվել է:

-Տղաս, դե ոչինչ,-ասացի նրան,- սրտիդ չափազանց մոտ մի ընդունիր: Մենք մեր ձեռքից եկածն արեցինք:

-Ի՞նչ ի նկատի ունես,-տարակուսած հարցրեց նա:

-Դե, հուսահատվե՞լ ես,- հարցրեցի ես:

-Չէ հա, պապ,-ասաց նա պայծառ դեմքով,-ես դրա մասին չեմ մտածում, այլ այն մասին թե ինչպես ենք հաջորդ անգամ ինչ որ մեկի հարության համար աղոթելու և թե հետո ինչ է

լինելու: Ես ուղղակի փորձում եմ մտածել, թե որտեղ կարող ենք աղոթել մեռելների հարության համար: Դա է մեր խնդիրը, պա՛պ: Մենք պետք է հնարավորրինս շատ մեռելների համար աղոթենք:

Աչքերիցս հպարտության արցունքներ գլորվեցին:

Հրիր մինչև գցելը

Հրիր մինչև գցելը արտահայտությունն օգտագործվում է հիմնականում ծանրամարտ և կուլտուրիզմ սպորտաձևերի մեջ: Այն մեկնաբանվում է որպես այնքան հրած պահել ձողը մինչև ուժերդ լիովին սպառվեն և ցած գցես: Մարզադահլիճներում կարող եք լսել, թե ինչպես են մարզիչները հրահանգում, «Հրիր մինչև գցելը: Գցելն է քո վերջնանպատակը»: Հիմնական մկաններն աճում են այն ժամանակ, երբ ուժերդ սպառվում են ու ձողը ցած ես գցում:

Մենք սովորաբար խուսափում ենք ձախողելուց, բայց երբ ձախողում ու դուրս ենք գալիս դրա սահմաններից սովորում ենք ռիսկի դիմել ու հեռուն գնալ:

Միջին դպրոցում սովորելու տարիներին մի ուսուցչուհի ունեինք, ով երբեք որևէ մեկի թեստը 100 միավոր չէր գնահատում: Այդ պատճառով մի անգամ նրան ասացի, որ ուսուցիչներից ամենավատն է: Իսկ նա ետ դառնալով ինձ պատասխանեց. «Ռոբբի, երբ թեստդ 100 տոկոսով հանձնում ես, թերևս նշանակում է, որ սովորելու ոչինչ չունես: Բայց բացթողում անելով, ինձ օգնում ես սովորեցնել քեզ այն, ինչի մեջ թերանում ես»: Այդ ժամանակ ես ընդունեցի, որ եթե դա է նրա նպատակն, ուրեմն ամենալավ ուսուցչուհին է:

Երբ հնազանդության մեջ ցնծում ենք, ապա ընթացքը մեզ չի վհատեցնում: Հաջողություն ենք համարում, երբ կատարյալ բժշկություն է լինում, հստակ մարգարեական խոսք կամ լիակատար ազատագրում: Աշակերտները հրաշքներ ու նշաններ տեսնելով սկսեցին ուրախանալ, մինչդեռ Հիսուսը նրանց շտկեց ասելով. «ուրախացէ՛ք, որ ձեր անունները գրուած են երկնքում»(Ղուկ 10:20): Հիսուսը շեշտում է, որ մեր ինքնությունը հրաշքներից ավելի կարևոր է: Աստծո հաջողության գաղափարը մեր հնազանդությունն է: Իսկ արդյունքը ոչ թե մեր, այլ Նրա համար է:

Աստծուն մեր հնազանդությունն է պետք: Երբ մենք «հրում ենք մինչև գցելն» այդպիսով կարողանում ենք արդյունքը որպես հաջողության չափանիշ ընդունել:

«Արդյունքի» վրա հիմնված ծառայության մեջ վտանգ կա, որ շեշտադրումը մեծապես մեր անձի վրա կդրվի: Երբ աշակերտները գնացին անելու այն, ինչ Հիսուսն արեց, արդյունքը հաճախ ընդվզումները եղան, քարկոծումը, ծեծն ու բանտարկությունը: Դա այնքան էլ չի համապատասխանում ծառայության հանդեպ մարդկանց ունեցած հարմարավետության տանող մոտեցմանը: Սկզբից մինչև վերջ Աստվածաշնչում տեսնում ենք, որ Աստված տղամարդկանց և կանանց կանչում է անհնարինն անելու: Հենց անհնարինի մեջ է Աստված Իրեն հայտնի դարձնում և մեզ հրավիրում վերագտնելու մեր իրական էությունը:

Նա Իր ժողովրդին կանչում է մեծ երազանքներ ունենալու և Նրան հավատալու: Իսկ ի՞նչ ես դու Աստծուց խնդրում: Որքան մեծ են քո աղոթքները:

Պողոսն Ավետարանի պատգամը հույների համար հրաշալի կերպով համատեքստայնացնում էր: Նա հաշվի է առնում այդ ժողովրդի գիտության հանդեպ սերը, հոգևոր հարցերից հասկանալն ու բանավեճերի ու քննարկումների կենսակերպը (տե՛ս Գործք 17): Սկզբում նրա ուղերձը բավականին մասսայականություն վայելեց և եթե ժամանակին կանգ առներ օրվա բանախոս կհռչակվեր: Բայց իր խոսքը շարունակելով նա հասավ խաչին ու Քրիստոսի հարությյալ զորությանը: Ոմանք արհամարհանքով հեռացան, ոմանք մտածեցին, որ կրկին կցանկանային նրան լսել և ոմանք էլ հավատացին ու փրկվեցին: Ամենուր Պողոսը թե հաջողություն էր ունենում և թե հանդիպում էր մարդկանց, ովքեր պատրաստ էին նրան սպանել: Սա է հրել մինչև գցելը:

Մարդկանցից երկյուղն ու ձախողման վախը մեզ փակուղի են տանում: Աստծո խոստումը Երեմիային կատարվեց դարեր առաջ բայց մինչև այսօր էլ արդիական է մնում.«Ում մոտ որ ուղարկեմ քեզ, բոլորի մոտ էլ պիտի գնաս, ու այն ամէնը, ինչ որ պատուիրեմ քեզ, պիտի խօսես: Զվախենաս նրանցից, - ասում է Տէրը, - քանզի ես քեզ հետ եմ՝ քեզ փրկելու համար»
(Երեմիա 1:7-8): Ակնհայտ է, որ Հին Կտակարանի ժամանակներում Աստծո առաքելությունն իրականացնելիս Երեմիային խոչընդոտում էին այն նույն բաներն, ինչ այսօր մեզ են խանգարում: Մարդկանցից վախը կարող է մեզ ետ պահել որևէ մեկին Հիսուսի մասին պատմելուց: Սակայն երբ ձախողումն ընդունում ենք որպես նպատակի մի մաս, ապա սկսում ենք հանգիստ Հիսուսի ոտնահետքերով քայլել:

Հիսուսը եկավ ապրեց և մահացավ Իր ժողովրդի համար:

Նրան դավաճանեցին ու դահիճների ձեռքը մատնեցին, որ սպանվի հենց այն ժողովրդի առաջնորդների կողմից, ում համար ամեն ինչ տվեց:

Դա ձախողում է: Այն ձախողումն է, որին ամեն օր առճակատում ենք անհանգստանալով. *Իսկ եթե մտածեն, որ ես տարօրինակ եմ: Իսկ եթե մտածեն իզուր ժամանակ եմ վատնում: Իսկ եթե բարկանան: Իսկ եթե ինձ ատեն ու մտածեն, որ հիմարի մեկն եմ:*

Եթե դա ամենավատն է, որ կարող է պատահել, ուրեմն այնքան էլ վատ չէ: Աստված ցանկացած իրավիճակում հոգում է մեր կարիքները: Մենք պետք է հասկանանք, որ Հայր Աստված կամենում է մեզ համար հոգ տանել: Երբ Նրա կամքն ենք կատարում, Աստված մեզ ապահովում է: Սիրով հաստատակամություն դրսևորեք և գործելուց մի վախեցեք: Ո՞վ գիտի գուցե ինչ որ մեկի կյանքը հավիտենապես փոխեք: Ձեր մի խոսքով, բարի գործով, բժշկությամբ, աղոթքով կամ պարզապես Աստծուն հնազանդվելու համարձակ հավատքով մարդկանց կյանքում ամեն ինչ կփոխվի:

Անհնար է առանց ռիսկի գործել ու տեսնել, որ ինչ որ բան է կատարվում: Եթե պատրաստվում եք մինչև վերջ գնալ, գնացեք մեծ գործերի համար: Մի ընկրկեք: Օգտակար կլինի միշտ հիշել, որ մեզանից ոչ ոք չի կարող բժշկել: Միայն Աստված կարող

է: Իմ սեփական վերածնակերպմամբ Մարկոս 16ի Մեծ Հանձնարարականում Աստված ասում է, «Դու գնա, իսկ Ես ցույց կտամ»:

Մահ այգում

Իմ ընկեր Ռեյ Մաթոսն ինձ Պուերտո Ռիկկո էր հրավիրել իրենց եկեղեցում ուսուցանելու: Մեծապես հիանում եմ այս անձնավորությամբ, ականավոր գիտնական և գրող, ում եկեղեցին հսկայական գործ է ծավալում ողջ Լատինամերիկայի սոցիալական արդարադատության ոլորտում: Եկեղեցում կոնֆերանսի ժամանակ հայտարարեցի, որ եթե հանգստյան օրերին մարդիկ մահանան անպայման ինձ տեղեկացնեն, որովհետև ուզում եմ մեռելներին հարություն տալ:

Ռեյն այս լսելով հոնքերը զարմացած բարձրացրեց և հետո մտադրություններիս մասին հարցրեց: Հենց հաջորդ օրն ինձ առիթ ընձեռնվեց գործելու:

Մի երիտասարդ վազելով եկավ մեզ մոտ ու ասաց.

-Հովի՛վ, հովի՛վ, երկու թաղամաս ներքև էի, երբ այգում մի երիտասարդ ընկավ ու մահացավ:

Նայեցի Ռեյին ու ասացի,

-Ե՛կ ինձ հետ:

Կարելի է ասել մի կերպ նրան այգի տարա: Մի քիչ վախենալու էր: Շտապօգնության մեքենան արդեն ժամանել էր: Երիտասարդի սրտը միացրել էին հատուկ մոնիտորին և այնտեղ միայն ուղիղ գիծ էր: Բժիշկները զննում էին նրան ու ինչ որ փաստաթղթեր լրացնում:

Ես հարցրեցի նրանց.

-Ներեցեք մենք հոգևոր ծառայողներ ենք, թույլ կտաք այս երիտասարդի համար աղոթել:

Նրանք նայեցին իրար, հետո մեզ և ասացին.

-Նա մեռած է:

-Այո, գիտենք: Ուզում ենք աղոթել, որ մեռելներից հարություն առնի:

Տարակուսած այս ու այն կողմ նայեցին և հետո համաձայնեցին, բայց միայն թե մինչև ոստիկանության ժամանելը: Ես համարյա ցատկեցի մահացած երիտասարդի վրա: Մի ոստիկան ընկեր ունեմ, ով քանիցս մահացածների համար աղոթել է և նրանք հարություն են առել, մի անգամ ասել էր, որ կուրծք կրծքի աղոթելու մեջ ինչ որ բան կա, ասես կյանք ես հաղորդում մեռածին: Նաև աստվածաշնչյան օրինակ կա ողջ մարմնով հպվելու մասին, ուստի որոշեցի որքան հնարավոր էր արագ անել այն, ինչ գիտեի այդ պահին: Նրա վրա այնպես կռացա, որ կուրծք կրծքի լինենք և իշխանությամբ հրամայեցի.

-Վեր կաց, վեր կաց, Հիսուսի անունով:

Հրամայում էի, որ կյանք գա այգում և շուտով մեր շուրջը բազմություն հավաքվեց: Հետո ձեռքս նրա կրծքավանդակին դրեցի ու փչելով նրա վրա ասացի.

-Քեզ եմ փոխանցում Կյանքի Շունչը:

Հանկարծ տեսա, որ նրա այտերը շարժվում են ասես ուզում էր խոսել: Աչքերս չռած նայեցի Ռեյին, բայց նա գլուխը բացասաբար թափահարեց:

-Ինձ թվում է նրա ստամոքսին շատ ուժեղ ես սեղմել,- ասաց Ռեյը:

Հենց ձեռքերս նրա փորից վերցրեցի այտերը վերադարձան իրենց անկյանք արտահայտությանը:

Այդ ժամանակ ոստիկանությունը ժամանեց: Նրանք արագ բոլորին դեպքի վայրից հեռացրեցին: Հետո նկատեցի, որ կանգնածներից շատերն արտասվում են: Ես Ռեյին հարցրեցի, թե արդյոք այդ մարդիկ ծանոթ էին երիտասարդին:

-Ոչ,- ասաց նա, -նրանք ասում էին «ա՜յ քեզ համարձակություն, ա՜յ քեզ հավատք: Տեսեք այս մարդիկ ինչպես են իրենց Աստծուն հավատում»:

Նկատեցի, որ մարդիկ դեռ հայացքով մեզ էին հետևում և նրանց կողմը շրջվելով բոլորին եկեղեցի հրավիրեցի.

-Եթե մարդիկ եք ճանաչում, որ բժշկության կարիք ունեն հանգստյան օրերին եկեղեցի եկեք:

Այդ կիրակի այգու դեպքի ականատեսներից տասներկու հոգի մեզ մոտեցան, և նրանցից երկուսն իրենց կյանքը քրիստոսին հանձնեցին: Նրանց սրտերը շարժել էր իմ համարձակ ձախողումը: Նրանցից երկուսի կյանքը հավիտենապես փոխվեց, որովհետև հրեցի մինչև ցած գցեը: Երբ մեզ թվում է ոչինչ չի ստացվում, չենք պատկերացնում, որ Աստված այդ պահին գործում է:

Կամենալ ձախողել, և ձախողել մեծ հաշվով

Եթե ժամանակը ետ տայի ու իմանայի, որ այդ մեռելներն ում համար աղոթում եմ հարություն չեն առնելու, միևնույնն եռանդով կրկին նրանց համար կաղոթեի:

Մենք մինչև երկինք գնալը չենք իմանա, թե անտեսանելի աշխարհում ինչ է կատարվում: Ամեն անգամ աղոթելիս ինչ որ բան է կատարվում անկախ նրանից մենք դա անմիջապես զգում ենք, թե ոչ: Հռոմեացիներին 14:23 համարում մեղքը բնորոշում է, որպես հավատքից չբխող ցանկացած երևույթ, «ամենայն ինչ, որ հաւատից չէ, մեղք է»:
Ես էլ եմ հավատացած, որ ցանկացած հավատքի քայլ իր զորավոր արտահայտչաձևն է գտնում հոգևոր իրականության մեջ, որն էլ իր հերթին քանդում է այս աշխարհում խավարի իշխանության զորությունը: Եկեղեցու պատմությունը վկայում է, որ մեկի մարտիրոսության պատճառով հարյուրավորներ դարձի են եկել: Տերտուլլիան, ում կորում էին Արևմտյան քրիստոնեության հայր, այսպես է գրել, «Մարտիրոսի արյունը եկեղեցու սերմ է»:

Մարտիրոսների մահը հավատքի գործ էր, որով ջախջախում էին խավարի թագավորության բերդերը, զորություններն ու իշխանությունները:

Մարտիրոսությունը թերևս հավատքի վերջնական դրսևորումն է, բայց արդյոք այն նաև վերջնական ձախողում չէ: Արդյոք վերջնական ռիսկ չէ: Նրանք տալով իրենց կյանքը, գիտեին,

որ երբեք հավատքի արդյունքը չեն տեսնելու, մինչդեռ այդ համառ տոկունությունը մի շարժման սկիզբ դրեց, որ հետագայում աշխարհը փոխեց: Մարտիրոսները չընդդիմացան Աստծուն, այլ Նրան բարի անվանեցին ու հոժարակամ մեռան: Անգամ մեռնելիս անկախ իրավիճակից նրանց վկայությունն Աստծուն վստահելն էր, Ով Աստված լինելով մարդացավ և երբեք իրենց չլքեց: Հավատքը պարզապես վստահության քայլ է ընդդեմ անվստահության կատաղի գրոհի: Հարցը այն չէ, թե արդյոք կամենում ենք Քրիստոսի համար մեռնել: Հարցը այն է, թե արդյոք կամենում ենք Նրա համար համարձակ կյանք ապրել: Երբ պատրաստ ենք լինում համարձակ ավետարանչության կենսաձև վարելու ոլորտում ձախողել և ընդ որում մեծ հաշվով, ապա ազատագրվում ենք վախից ու գնում անհնարինն անելու: Միթե կամենում ենք հանուն Հիսուսի երբեմն անգամ անհեթեթ երևալ:

Իսկ գուցե նպատակը հենց մեր ձախողումն է: Շատ հաճախ ձախողելուց հետո թողնում ու հեռանում ենք: Այն հարթությունը, որտեղ այժմ կանգնաս ենք արդեն հաջողությամբ նվաճել ես, իսկ որտեղ ձախողում ենք, ուրեմն հաջորդն այնտեղ պիտի հաղթենք ու կանգնենք: Իսկ ի՞նչ կլինի, եթե մարդ մարդու հետևից աղոթենք բժշկության համար, Աստծուց խոսք խնդրենք, Ավետարանով կիսվենք և բացարձակ ոչինչ չլինի: Թե սեփական փորձից ելնելով և թե այլ մարդկանցից լսելով կարող եմ ասել, որ միանգամայն հնարավոր է: Եթե այդպես է, ուրեմն թույլ տվեք ձեզ քաջալերել, որ իրականում հենց ձախողումն էլ նպատակն է: Մենք պետք շարունակենք մեր սպասելիքների սանդղակը բարձր պահել: Եթե հիվանդների համար աղոթել եք և արդյունքից վհատված եք, ապա աղոթեք մեռելների համար: Այնքան մարզվեք մինչև կարողանաք քարը նետել: Ծածուկ և անհայտ տեղերում ունեցած մեր հաղթանակները նախորդում են մասսայական, բոլորի աչքերի առջև նվաճած հաղթանակներին:

Մենք սահմանափակումներ ունենք, սակայն եկեք հավաստիանանք, որ ձգձգվելը դեռ ամեն բանի ավարտը չէ: Մենք ենք որոշում, թե իրականում ինչին ենք հաստատակամությամբ հետևում:

Երբ հստակ գիտենք, թե ուր ենք գնում, չափազանց հեշտ է դառնում առօրյա կյանքի որոշումները հերթականությամբ դասավորել: Ինչպիսին էլ լինի մեր նպատակը, երբ սկսում ենք երկար ժամանակ հաստատակամությամբ հետևել առօրյա կյանքում մեր կատարած յուրաքանչյուր որոշման, ապա շուտով հասնում ենք: Հողագործության մեջ մի օրենք կա, ինչ առատ ցանում ես, առատ էլ հնձում ես: Տուր ձեռքիցդ եկածն ու անհրաժեշտության դեպքում խնդրիր, որ Աստված ընդունակություններդ կատարելագործի:

Հաճախ մենք հարմարվում ենք սովորական քրիստոնեությանն ու հետո զարմանում, թե ինչու մեր կյանքերում զորության պակաս կա: Աստված կամենում է մեզ ավելի մեծ զորություն տալ, բայց մենք թերանում ենք այն ընդունելիս: Մենք բարձր իդեալներ ենք կերտում, բայց քիչ արդյունքներ տեսնում, որովհետև խուսափում ենք ռիսկի դիմել, և այդ խուսափողականությամբ էլ կենսաձև ենք ստեղծում: Մենք նախընտրում ենք Քրիստոնեությունն ավելի շատ որպես կրոնական փիլիսոփայություն դիտել քան խավարի իշխանությունը ոտքից գլուխ ջախջխող մի հեղափոխություն: Մենք մի մշակույթի մեջ ենք ապրում, որ իրական հստակության փոխարեն մեզ վարժեցնում է ապրել զգացմունքներով, հույզերով ու մեր ցանկություններով: Աստծո ներկայությունը հակամշակութային է, որովհետև հակառակ է կենում շատերի մոտ վհատության, դեպրեսիայի և վախի չափանիշներին: Երբ մոտենում ենք Աստծուն, Նա նորոգում է մեր տեսիլքը, ազատության զգացումն ու ակնկալիքները: Մենք գրեթե անտրամաբանական ուրախություն և

խանդավառություն ենք ունենում, որն էլ օգնում է մեզ վերականգնվել ցանկացած իրավիճակում: Շարունակեք երկնքից մեծամեծ բաներ ակնկալել ու առօրյա կյանքում հաստատակամ լինել: Եվ կզարմանաք, թե ինչպես են այս երկուսը հանընկնում:

Գրեթե...

Մի օր գիշերվա ժամը տասի կողմերը ոստիկանական բաժանմունքից զանգ ստացա. -- Ռոբբի, կցանկանայիր հիվանդանոց գալ: Մի մարդ է մահացել և նրա որդին հոգևորական է խնդրել: Կասկածելի իրավիճակ է նրանց շուրջն ստեղծվել, ուստի կցանկանայինք, որ դու որպես ոստիկանության կապելլան ներկա լինես դեպքի վայրում:

Որպես Ավրորայի ոստիկանական բաժանմունքի հոգևորական դասընթացներ էի անցել, թե ինչպես է պետք վարվել հավանական հանցանք պարունակող իրավիճակներում:

Դեպքի նախորդ օրն այդ տղամարդը հանկարծ ուշագնաց էր եղել, ընկել կոմայի մեջ և նրան կյանքի ապահովման սարքեր էին միացրել: Նա մահացել էր իմ դեպքի վայր ժամանելուց երկու ժամ առաջ: Նրա որդին այնտեղ լինելով, հոգևորական էր խնդրել:

Հենց ոստիկանությունն ինձ զանգահարեց անմիջապես տնից դուրս եկա և գնացի հիվանդանոց այդ ընտանիքին հանդիպելու: Ննջեցյալի կինը սպասասրահում էր և երբ ներս մտա սևեռուն ինձ նայեց : Նա արտասվում էր և վախեցած էր թվում: Ես ոստիկանական բաճկոնս էի կրում, ուստի նա ինձ ձեռքով սրահը ցույց տվեց, որտեղ մահացածի մարմինն էր: Նրանց որդին դեռ սենյակում էր և ողբում էր: Տասնինը-քսան տարեկան կլիներ: Բուժքույրերից մեկը նրանից դեռ ինչ որ սարքեր էր հեռացնում:

Ես երիտասարդին հարցրեցի,

-Այդ Դու՞ք եք հոգևորական կանչել:

Նա գլուխը դրական շարժեց:

Նրան ասացի.

-Ես իսկապես ցավում եմ ձեր կորստի համար:

Հետո ասացի.

-Թերևս խենթություն թվա, բայց մենք կարող ենք աղոթել, որ նա մեռելներից հարություն առնի: Աստված մեր օրերում էլ է մեռելներին հարություն տալիս:

Տղան նայեց ինձ ու ասաց.

-Գիտեմ, որ Հիսուսը հարություն առավ մեռելներից, նաև այլ մարդիկ Աստվածաշնչում, բայց միթե հիմա էլ են նման բաներ լինում:

Ես նրան ասացի.

-Ընկերներիցս ոմանք աղոթել են և տեսել, թե ինչպես են մարդիկ վերակենդանանում, նաև այդ մասին տեսանյութեր և վկայություններ եմ տեսել: Բայց միայն ձեր թույլտվությամբ: Ես չեմ կարող երաշխավորել, որ նա կկենդանանա, բայց հավատում եմ և գիտեմ, որ

Աստված այսօր էլ այդ գործն անում է, և կցանկանայի ձեր հոր համար միասին աղոթենք, իհարկե եթե կուզեք:

Տղան համաձայնվեց:

Բուժքույրը ետ եկավ սենյակ և հարցրեց,

-Նրա համա՞ր եք աղոթում:

-Դե իրականում աղոթում ենք, որ հարություն առնի,- ասացի ես:

Բուժքույրը հոնքերը բարձրացնելով ասաց.

-Ես սա պիտի տեսնեմ:

Այժմ բաներ կան, որ գիտեմ, թե ինչպես է պետք մեռելների համար աղոթել, բայց այն ժամանակ անտեղյակ էի, սակայն սենյակում Աստծո ներկայությունն էի զգում: Տղան էլ սկսեց Աստծո զորությունն զգալ ու դժվարությամբ ոտքի վրա կանգնել:

-Ի՞նչ է կատարվում,- նա ինձ հարցրեց:

Բուժքույրն ավելացրեց,

-Իմ գլուխն էլ է մի քիչ պտտվում:

Ես նրանց ասացի.

-Գուցե երկուսդ էլ նստեք: Դա Աստծո ներկայությունն է, Նրա զորությունը:

Հանկարծ հանգուցյալի գլուխը մի կողմի վրա թեքվեց, ասես ճանճ քշելիս լիներ:

Նրա որդին հարցրեց.

-Տեսա՞ք:

-Այո,- զգուշությամբ ասացի ես: Ես չէի ուզում, որ նա չափից դուրս ոգևորվի:

Հանկարծ հանգուցյալի մի մատն սկսեց ջղաձգվել, հետո մեկ այլ մատ ձգվեց, հետո կրկին այդ մեկը: Երբեմն մեռնելուց հետո էլ նյարդերը կարող են ջղաձգվել, բայց ոչ այդպես իրար հետևից:

Այդ ամենից հետո բուժքույրը տեղից ցատկեց ու ասաց.

-Ես պետք է դուրս գամ այստեղից,- վազելով դուրս եկավ սենյակից:

Հետո տղամարդու արմունկը մի թեթև շարժվեց: Երբ սկզբում սենյակ մտա նա լիովին մեռած էր: Աչքերն ամուր փակված էին, մոմյա հայացքը դեմքին սառած: Այժմ թվում էր նրա աչքերը կիսաբաց էին և մի քանի անգամ թարթեց: Ժամանակ առ ժամանակ թեթև ցնցվում էր: Ես սկսեցի ավելի ու ավելի խորասուզվել աղոթքի մեջ:

Որդին ասաց.

-Ի՞նչ եք կարծում կենդանանում է:

Ես պատասխանեցի,

-Կարծես թե:

Բուժքրոջ դուրս վազելուց մի հինգ րոպե էր անցել, երբ գլխավոր բուժքույրը ներս եկավ և հրահանգեց, որ անմիջապես դադարեցնենք աղոթել:

-Կարո՞ղ ենք ևս մի քանի րոպե այստեղ անցկացնել:

-Ոչ,- պատասխանեց բուժքույրը:-Դադարեցրեք հենց հիմա: Նրա կինն այս ամենին դեմ է:

Ոչ մեկին չէինք ասել, թե ինչ ենք անում և ակնհայտ էր, որ բուժքույրն էր նրա կնոջն ու մյուսներին պատմել այդ մասին:

Որդուն ասացի,

-Դու կարող ես որոշել և շարունակել աղոթքը:

Սակայն գլխավոր բուժքուրը բավականին խիստ էր տրամադրված:

-Ոչ, նա չի կարող որոշել: Նրա կինը գրանցված ամենամոտ ազգականն է: Ուստի այստեղ որոշումներ նա է կայացնում:

Ես այդ պահին ոստիկանության ներկայացուցիչ էի, ուստի ստիպված էի կատարել կնոջ խնդրանքն ու հեռանալ: Շնորհակալություն հայտնեցի տղայից և դուրս եկա:

Ոստիկանությունն այդպես էլ որևէ գործ չհարուցեց դեպքի առթիվ, միայն իմացա, որ հենց հաջորդ առավոտյան նրան դիակիզել էին: Հավատացած եմ, որ սա ևս մեկ փորձառություն էր, որտեղ տեսա Աստծո հարուցանող զորության ներկայությունը: Ճիշտ է կրկին հարության ականատես չեղա, բայց շարունակելու եմ այնքան աղոթել, մինչև առաջին մեռելին հարություն առնելիս տեսնեմ:

Թալանել թշնամուն

Հաճախ տարվում ենք Աստծո կամքը մեր կյանքերում փնտրելու գաղափարով, մինչդեռ Աստվածաշունչը հստակ ասում է, որ Աստծո կամքն Իր Որդի Հիսուս Քրիստոսին մեր միջոցով ապրելիս տեսնելն է: Նա մեզ տվեց Սուրբ Հոգի, զորություն և իշխանություն, որ ի կատար ածենք Քրիստոսի հաշտության, Աստծո Արքայությունը հռչակելու ու ներկայացնելու, ինչպես նաև Սատանայի գործերը ջախջախելու ծառայությունը: Ընդունելությունը բաց է և մեզանից յուրաքանչյուրը Սուրբ Հոգու միջոցով լիազորություն ունի: Երբ դևերը տեսան Հիսուսին աղաղակեցին. «Թո՛ղ տուր մեզ, Յիսո՛ւս Նազովրեցի, ի՞նչ ես ուզում մեզնից. մեզ կորստեան մատնելո՞ւ եկար», որովհետև վստահաբար գիտեին, որ Նրա ներկայությամբ ոչնչանում է խավարի իշխանությունը (Ղուկ 4:34):

Քրիստոս եկավ մահվան իշխանությունը կործանելու և մեզ մահվան երկյուղից ազատելու: Եբրայեցիներին 2:14-15 այսպես է նկարագրում.

Արդ, որովհետև զաւակները հաղորդակից եղան արեան և մարմնին, ինքն էլ մարդկային բնութեամբ մասնակից եղաւ նրանց, որպէսզի իր մահով կործանի նրան, որ մահուան իշխանութիւն ունէր, այսինքն

Սատանային,
և ազատի նրանց, որ, մահուան երկիւղով, միշտ գերութեան վիճակում էին:

Քրիստոսի կյանքն ու մահը խաչի վրա «հզորին կապելն է» և Նա Իր աշակերտներին հանձնարարում է թալանել հզորի տունն ու ավարը բաժանել (տես Մարկ. 3:27, Ղուկ. 11:22): Իր ողջ վարդապետության ընթացքում Հիսուսը Երկնքի Արքայությունը նմանեցնում է գանձի, հունձքի, թալանված ավարի ու անգին գոհարների, որ պետք է որոնել ու գտնել: Այս ամենին հետամուտ լինելը ոչ թե միայն հոգևոր վերնախավի համար է, այլ բոլորի: Այդ նույն հատվածում, երբ Հիսուսը խոսում էր հզորի տունը թալանելու մասին, Նա ասում է. «Ով ինձ հետ չէ, հակառակ է ինձ, և ով ինձ հետ չի հաւաքում, ցրում է» (Ղուկ. 11:23): Մենք պետք է ուրախությամբ և ազատությամբ հավաքենք և երբեք չվախենանք, որ Աստծո Արքայությունը փնտրելը հնարավոր է կյանքի որևէ իրավիճակում մեզ համար «Աստծո կամքից դուրս լինել»:

Գործի՞ դնել համառությունը

Աստվածաշնչում չեք հանդիպի այնպիսի մի դեպք, երբ Հիսուսին խնդրեն բժշկի կամ մեռելին հարություն տա և Նա գլուխը թեքի ու հեռանա: Իրականում Նա հանդիմանում էր, երբ նրանից ավելին չէին խնդրում: Ղուկաս 11:5-13ում Հիսուսն Իր աշակերտներին պատմում է համառ բարեկամի պատմությունը, ով ուշ գիշերով գալիս և իր ընկերոջը հյուրասեիրելու համար հաց է խնդրում: Հիսուսն Իր աշակերտների հորդորում է այդպիսի հաստատակամություն ունենալ.

«Եւ ես ասում եմ ձեզ. խնդրեցէ՛ք, և Աստծուց կը տրուի ձեզ, փնտռեցէ՛ք, -և կը գտնէք, բախեցէ՛ք, և կը բացուի ձեզ համար,
որովհետև, ով որ խնդրում է, առնում է, ով որ փնտռում է, գտնում է, և ով որ բախում է, բացւում է նրա առաջ»:

Հիսուսն ըստ էության աշակերտներին ասում էր, որ մենք՝ մարդ արարածներս Աստծո բարության մասին սահմանափակ և աղճատված պատկերացում ունենք, բարություն, որ վեր է մեր երևակայության սահմաններից: Մենք չպետք է վախենանք Արքայությունն ավելի մեծ եռանդով որոնելուց: Դա այն ժառանգությունն է, որի համար ստեղծված ենք: Կան մարդիկ, որ աղոթում են իրենք ընտանիքների, երեխաների ապահովության համար: Իսկ ես այսպես եմ աղոթում. «Տե՛ր, թող իմ որդիներն այս մոլորակի *ամենավտանգավոր* տղամարդիկ դառնան»:

Երբ Եղիան Կարմելոս լեռան վրա հակառակեց Բահաղի մարգարեներին, նա չնահանջեց: Այլ գնաց դեպի ռիսկի հարթություն: Այդ ժամանակ Իսրայելի ժողովուրդը Բահաղին էր երկրպագում, Աստծո մարգարեներն ու քահանաներն սպանվել էին և երեք տարի երկիրը երաշտի մեջ էր: Աստծո Խոսքը եկավ Եղիային ասելով. «Գնա՛ ու երևացի՛ր Աքաաբին, իսկ ես անձրև կը տեղացնեմ երկրի վրայ» (3.Թագ 18:1):

Այդ խոսքը ողորմածության խոսք էր, բայց ասելու համար ռիսկ էր պահանջվում: Աքաաբը Եղիայի երդվյալ թշնամին էր, ով երեք տարի ողջ երկիրը տակնուվրա էր արել նրան գտնելու ու սպանելու համար: Աստվածաշնչում բազմաթիվ տեղերում տեսնում ենք,

որ Աստված Իր խոստումներն արձակելու համար օգտագործում է մարդկանց հավատքի գործողություններն ու պատասխանները: Պապակած երկիրը ջուր էր թախանձում, բայց Եղիան գիտեր, որ ջրից առավել վերականգնման կարիք ունեին: Նա Աքաաբին ներկայացավ և մարդիկ ուղարկեց, որ Կարմելոս լեռան վրա հավաքեն Բահաղի առաջնորդներին, հետևորդներին ու մարգարեներին: Նա մարտահրավեր նետեց Բահաղի մարգարեներին, որ զոհ պատրաստեն և իրենց աստծուն խնդրեն, որ երկնքից կրակ ուղարկի այն այրելու: Ամբողջ օրն անդադար Բահաղի չորս հարյուր մարգարեներն աղոթում էին, աղաղակում, պարում և իրենց սովորույթի համաձայն սրերով իրենց մարմինները վնասում: Ոչ մի պատասխան, ոչ մի արձագանք, ոչ մի ձայն: Օրն իր ավարտին էր մոտենում:

Հետո Եղիան հավաքեց ժողովրդին և նորոգեց Տիրոջ կործանված զոհասեղանը: Զոհասեղանը տասներկու քարերով վերակառուցեց, որոնք խորհրդանշում էին Աստծո ժողովրդի ինքնությունը:

223

Այն նաև թե Աստծուն և թե Իսրայելին հիշեցնում էր Աստծո և Հակոբի ուխտի մասին. «Իսրայէ՛լ թող լինի քո անունը» (31 համարը):
Եղիան ոչ միայն զոհասեղան կառուցեց, այլ նաև նրա շուրջը փոս փորեց: Եկեք նկատենք, որ Աստված նրան չէր պատվիրել փոս փորել ու ջուր լցնել: Դա Եղիայի ռիսկի հարթություն մտնելն էր: Երաշտի ժամանակների համար նա մի ազդեցիկ զոհաբերություն արեց, երեք տարի անձրև չլինելու պայմաններում երեք անգամ փոսի մեջ չորս մեծ սափոր ջուր լցրեց: Տասներու քարերի վրա լցված այդ տասներկու սափոր ջուրը հավանաբար ավելին էր քան շատերը տեսել էին երաշտի երեք տարներին: Արդյոք լեռան վրա ջրի այն վերջին պաշարներն էին, որ պահել էին ողջ օրն անապատի կիզիչ արևի տակ կանգնած մարդկանց տալու համար:

Ջուրը հոսեց զոհասեղանի շուրջն ու փոսը ջրով լցվեց: Այդ զոհաբերությունն աղաղակում էր Աստծուն ասելով. «Մենք ջրից առավել Քո կարիքն ունենք»

Այրել նավակները

Հնագույն ժամանակներում հաճախ հրամանատարներն իրենց զինվորներին հրահանգում էին թշնամու տարածք հասնելուն պես նավակներն այրել: Նրանք անմնացորդ նվիրվում էին գործին, միայն մեկ տարբերակ թողնելով՝ նվաճված նավերով որպես հերոս վերադառնալը: Եղիայի համար երաշտի տարիներին այդ քանակությամբ ջուր լցնելը նավակներն այրելու պես մի բան էր, որով նա մերժում էր բոլոր միջոցներն ու ապավինում Աստծո բացարձակ զորությանը: Եղիան վստահելով, որ Աստված կգործի համարձակությամբ կանգնեց Նրա և Իսրայելի ժողովրդի առաջ: Նա չընկրկեց: Նա ասաց. «Լսի՛ր ինձ, Տէ՛ր, պատասխանի՛ր ինձ հրով, որ այս ժողովուրդը գիտենայ, թէ դու ես Տէր Աստուածը, և դու յետ դարձրիր այս ժողովրդի սիրտը» (37 համարը): Այդ աղոթքից հետո «երկնքից կրակ ընկաւ Տիրոջից, լափեց ողջակէզն ու փայտերը, կլանեց փոսի հողն ու ջուրը»
(38 համարը): Տեսնում եք, որ Եղիայի ակնկալիքներն ու ռիսկի դիմելն ամենևին Աստծուն չվիրավորեցին:

Եղիան շարժվում և խոսում էր հավատքով: Ջնայած երկնքում անգամ մի ամպ չկար նա Աքաաբին ասաց, «Ելի՛ ր, կե՛ ր ու խմի՛ ր, որովհետև անձրևի ձայն է լսւում» (41 համարը): Օդի մեջ անգամ խոնավություն չկար, բայց Եղիան չնահանջեց: Նա բարձրացավ Կարմելոս լեռան գագաթը, մինչև գետին խոնարհվեց, երեսն առավ ծնկների մէջ ու իր ծառային յոթ անգամ ուղարկեց հորիզոնը տնտղելու, թե արդյոք անձրևի նշույլ չկա: Եվ երբ հազիվ մարդու բռունցքի չափ մի փոքրիկ ամպ բարձրացավ, Եղիան իր ծառային ուղարկեց Աքաաբին զգուշացնելու. «Լծի՛ ր քո կառքերը և հեռացի՛ ր, որ անձրևի չբռնուես» (44 համարը):

Աստված ասել էր, որ անձրև կուղարկի, ուստի Եղիան առանց հորիզոնում անգամ

ամպ նշմարելու թագավորին վերջնական տեսարանը դիտելու կանչեց: Նա չընկրկեց, հրեց, մինչև գցելը: Մենք ևս պետք է փութաջան առաջ շարժվենք, որովհետև խավարի իշխանությունն այդ երաշտի նման արդեն անցել է իր վաղեմության ժամկետը: Հիսուսն եկավ ու հռչակեց, որ «Տիրոջը ընդունելի տարին» է և «և մօտեցել է Աստծու արքայութիւնը», Նա մեզ ազգերի մոտ ուղարկեց Աստծո բարեհաճությունն ու շնորհը բոլոր ժողովուրդների մեջ հռչակելու: Արքայության գործի առաջխաղացումը տեսնելը մի առավելություն է, որի մասին մեր նախնիները միայն երազում էին:

Երկնքի Արքայությունը մոտեցել է, հիմա այն ներկա է հավատացյալների մեջ, իսկ հետո Արքայի վերադարձով այն հավիտենապես կհաստատվի: Մեզ հանձնարարավել է ճանապարհ պատրաստել, ուստի կարծում եմ, որ ամեն ինչ արդար խաղի մեջ է մտնում, անգամ մեռելներին հարություն տալը: Մենք չպետք է սպասենք, որ մեզ ուղարկեն, քանի որ արդեն ուղարկված ենք: Երբեմն հնարավոր է Աստված մեզ կասեցնի որևէ ճանապարհով գնալ: Սրա մասին կարդում ենք Գործք 16:6, երբ Սուրբ Հոգին Հիսուսի հետևորդներին արգելեց Ասիայի նահանգում խոսել: Աստված ոչ թե նրանց գնալու համար պատժեց, այլ պարզապես փոխեց նրանց առաքելության ուղին:

ժամանակին մտադրություն ունեի ընտանիքիս հետ արտասահման մեկնելու լիաժամ ծառայության, սակայն Աստված ինձ ամեն անգամ կանգնեցնում էր: Բայց այժմ կարողանում եմ միսիոներության մեկնել տարբեր երկրներ և ծառայել այնպիսի ազգերի, որոնց մասին անգամ չէի կարող երազել: Բանն այն է, որ բոլորս էլ գործում են «Գնացեք» հանձնարարության ներքո: Երբ գնալու ցանկություն և պատրաստակամություն ենք ունենում Աստված մեզ ուղղորդում է և հարկ եղած դեպքում փոխում մեր ընտրած ուղին: ժամանակի ընթացքում Նա մեր առջև անհնարին թվացող դռներ է բացում:

13//Հաստատակամություն

Թույլ մի տվեք, որ հուսահատությունը հաղթի

Երբ Եկեղեցին հնազանդվում է Աստծո խոսքին ու հաղորդակից լինում Քրիստոսի գործին Աստծո Արքայության առաջապահ ուղեկալ է ստեղվում: Եվ այդ ուղեկալը մշտապես թշնամական տարածքներում է գործում:

Ջոն Ուիմբեր

Աստված անհաջողակին կարող է գործածել: Աստվածաշունչը լի է նման պատմություններով: Բայց Նա չի կարող գործածել հեշտ հանձնվողին:

Հովիվ Բոբ Դոկինս

Աստված մեզ ասում է գնացեք, բայց պատկերն ավելի գրավիչ դարձնելու համար համակարգչային վերամշակման չի ենթարկում: Չնայած Իր պատկերանշանի համար կարող էր մի քիչ մարկետինգային բաժանմունքի օգնությունից օգտվել: Նա ասում է «ուղարկում եմ ձեզ իբրև գառներ գայլերի մէջ (Ղուկ. 10:3): Այդ պատկերով հավանաբար գրքույկ չես տպագրի, չէ՞: Մենք ուղարկվում ենք որպես գառներ գայլերի մեջ, ում առաջնորդում է «մի մորթված գառ» (Հայտն. 5:6):

Նախորդ գլխում տեսանք, որ Եղիան գառան պես կանգնած էր չորս հարյուր գայլերի առաջ: Գրված է. «Եղիան մարդ էր մեզ նման՝ կրքերի ենթակայ. նա աղօթեց, ու երկրի վրայ երեք տարի ու վեց ամիս անձրև չտեղաց» (Հակ. 5:17): Նա լինելով այդպիսի հոգևոր բարձր հարթության վրա տակավին պայքարում էր վախի ու հուսահատության դեմ: Բահաղի մարգարեների հետ լեռան գագաթին կատարվածից անմիջապես հետո Հեզաբել թագուհին նրան մահվան սպառնալիք ուղարկվեց: Նա իր կյանքի համար վախեցած անապատ փախավ և այնտեղ աղոթում էր, որ մեռնի: Նա այնքան հուսահատ էր, որ մենակությունից ու ցավից աղաղակեց. «Բաւական է, Տէ՛ր, ա՛ռ իմ հոգին ինձնից, քանզի ես իմ հայրերից աւելի լաւ չեմ» (3 Թագ. 19:4): Հետո կծկվեց ու ծառի տակ քնեց:

Աղքատ թաղամասում հովվություն անելով հաճախ եմ ինձ գտնում մեծ հաղթանակների և մեծ հուսահատությունների մեջ: Բարդ է, բայց պատվավոր: Երբ նոր էինք Ավրորա տեղափոխվել այդ ժամանակվա ոստիկանության պետը Դեյվիդ Սթովերն ինձ ասաց. «Այստեղ Ավրորայում ծառայելը ձեզ մեծագույն տառապանք կբերի և հուսով եմ որոշ հաղթանակներ»:

Այդ խոսքերն ամենևին հուսադրող չէին, բայց ճիշտ դուրս եկան: Ֆինանսական սթրեսը, ծառայության ճնշումն ու ծանրությունը, մարդիկ, ում հետ աշխատում կամ սատարում ես հանկարծ ետ են դառնում ու քեզ ատում: Օգնում ես, որ նրանց կյանքը փոխվի, իսկ նրանք քեզնից դժգոհում են: Երբեմն պարզապես մնալն ինքնին մի պայքար է եղել:

Ջոնի Բայլերի մահը այն մեծագույն ցնցումներից էր, որ ինձ տակնուվրա արեց և ժամանակ պահանջվեց հաղթահարելու համար: Ջոնիի մեր եկեղեցի գալը պարզապես հրաշք էր: Նա այդ օրը աստիճանին կանգնած, պարանը վիզը գցած մի վերջին ցատկի էր սպասում, որ կյանքին վերջ դնի, երբ նրա հեռախոսը զանգեց: Մի նախկին մերկապարուհի էր, ով նոր էր սկսել մեր տնային խումբ հաճախել: Նրան մի լեզբի էր այնտեղ բերել, ով մի գիշեր

վարձելով նրա ծառայությունները կես ճանապարհին փոշմանել ու նրան եկեղեցի էր տարել:

228

Այս մերկապարուհին Ջոնիի հետ տոնավաճառում էր ծանոթացել: Երբ հեռախոսը զանգեց, նա վախեցավ, որ իր մայրը կլինի և եթե չպատասխանի կգա ու առաջինն իրեն կախված կգտնի: Պարանը վզից հանեց և իջավ հեռախոսին պատասխանելու: Աղջիկը հեռախոսի մյուս կողմից նրան հրավիրեց այդ երեկո իր հետ տնային խումբ գնալու: Քանի որ ծրագրած ոչինչ չուներ համաձայնեց:

Ջոնին մեր տարածաշրջանի թմրավաճառներից էր: Նա հայտնի սատանիստ էր և գլխին 666 գրված դաջվածք ուներ: Այդ գիշեր առաջին անգամ տնային խմբում նա ճաշակեց Սուրբ Հոգու ներկայությունն ու իր կյանքն Աստծուն հանձնեց: Դրան հաջորդող օրերին նա զանգեց իր բոլոր ծանոթներին և պատմեց, որ այժմ ինքն այնքան ուրախ ու լավ տրամադրության է, որ նախկինում երբեք նման զգացողություն չի ունեցել, և որ նրանք էլ պետք է գան և Սուրբ Հոգով լցվեն: Նա դարձավ մեր Ալֆա խմբի անդամ և շատ շուտով նրա մեջ կատարված փոփոխությունը տեսնելով մեր եկեղեցին լցվեց նրա ընտանիքի անդամներով, ընկերներով և թմրամոլ շրջապատով: Նա հրավեր ստացավ մեր տարածաշրջանի տարբեր եկեղեցիներում խոսելու և ակտիվ ավետարանիչ ու առաջնորդ դարձավ: Նրա կյանքը բուռն շրջադարձ էր ապրում: Նա ասես իր մեջ կրակ ունենար, որ դրական ազդեցություն էր թողնում նրա շրջապատի և գործերի վրա:

Ջոնին մի քանի տարի մեր եկեղեցի հաճախեց և հետո հապճեպ որոշեց հարավ տեղափոխվել: Մեր շրջանում ունեցած նրա անցյալի և կատարված փոփոխությունների պատճառով մի քանի թշնամի նրան հանգիստ չէին տալիս: Այսպիսով ընկերներից մեկը հարավում գործ առաջարկեց, որն էլ նրան նոր սկիզբ և լավ հնարավորություն թվաց: Ամիսներ անց նրան մեռած գտան՝ պարանով կախված:

Նրա մահվան շուրջ տարբեր առեղծվածներ էին պտտվում, բայց այդպես էլ ոչինչ չպարզվեց: Բոլորիս համար դրանից մեծ ցնցում չէր կարող լինել: Նրա ընտանիքի անդամներից ոչ ոք չէր կարողանում կատարվածի հետ հաշտվել:

229

Անասելի հարված էր նրան ճանաչողների ու սիրողների համար: Թաղմանը մեծ բազմություն էր հավաքվել, եկել էին մարդիկ, ում վրա, Ջոնի կյանքն ու վերափոխումն ազդեցություն էր թողել:

Այդ դեպքից հետո սիրտս կոտրվեց ու խոր հիասթափություն ապրեցի: Ակամայից սկսեցի մտաբերել բոլոր այն մարդկանց խոսքերն, ովքեր թերահավատորեն էին նայել այդ համայնքում եկեղեցի հիմնելու մեր որոշմանը: «Ի՞նչ էիք մտածում այդ քայլն անելիս», «Դուք իրոք կարծում էիք ինչ որ բան կփոխվի», «Ինչո՞ւ եկեղեցի հիմնել Արևելյան Ավրորայի պես մի տարածքում, որն այդպիսի պատմություն ունի»:

Վհատվեցի ու սկսեցի մտածել *ներկայիս զգացմունքներից դատելով ես ուղղակի անհաջողակի մեկն եմ:* Հետո հիշում եմ կարդում էի Դավթի մասին Սիկեղակի հարձակումից հետո: Ամեն ինչ տարել էին այդ թվում Դավթի կանանց ու երեխաներին և

նաև այդ երկրի բոլոր տղամարդկանց: Բայց անգլերեն թարգմանության մեջ ասվում է, որ Դավիթն իրեն Տիրոջով քաջալերեց (1Թագ.30:6):

Սպառված զգալով ինքս ինձ հարցրեցի *Իսկ ես կարող եմ Տիրոջով քաջալերվել:* Եվ ի վերջո զգացմունքներս հաղթահարելով ասացի, «Լավ Տեր այն ամենն ինչ ունեմ Քեզ է պատկանում: Իմ անձը քեզ է պատկանում: Թող Աստծուն փառք լինի»: Եվ այսպես սիրտս դատարկեցի Նրա առջև: Վաղուց եմ բացահայտել, որ այդպիսի իրավիճակներում ամենաճիշտն Աստծո հետ անկեղծ լինելն ու սիրտդ Նրա առջև բացելն է: Նաև հովիվ ընկերներս Թոմ Ռեվերսոնն ու Դեյվիդ Ռուիսն ինձ քաջալերեցին և կարողացան անգամ նման իրավիճակներում տեսնել և բարձրաձայնել Աստծո գործը:

Զպահել, չընկրկել, չափսոսալ

Հիշում եմ, որ կարդում էի Բիլլ Բորդենի պատմությունն, ով Բորդեն ընկերության հարուստ ժառանգորդն էր, որ միլլիոններ էր կուտակել կաթի և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվելով: Նա իր ժառանգության հիմնական մասը նվիրաբերել էր միսսիային: Եվ չնայած նրա հսկայական կարողությանն ու մի շարք շահութաբեր առաջարկներին, Բիլլը որոշեց միսիոներական ծառայության պատրաստվել: Նրա նպատակը հյուսիսային Չինաստանի մուսուլմանների մեջ ծառայելն էր, որին սակայն այդպես էլ չհասավ: Ոչ այդ վայրում ծառայության պտուղ տեսավ, ոչ էլ դարձի եկածներ, որովհետև Եգիպտոսում միսսիային նախապատրաստվելու ժամանակ ողնաշարի մենինգիտով վարակվեց և վաղաժամ կյանքից հեռացավ 25 տարեկան հասակում:

Երբ մարդիկ գտան Բորդենի Աստվածաշունչն, այնտեղ երեք արտահայտություն էր գրված: Նախ գրել էր «Զպահել», հետո «Զընկրկել», իսկ ամենավերջում մահից առաջ ավելացրել էր «Զափսոսալ»: Ես կցանկանայի, որ իմ շիրմաքարին էլ գրվեր «Զպահել, չընկրկել, չափսոսալ»: Աշխարհի աչքերում գուցե Բորդենի կյանքն իզուր վատնում թվա, չէ որ ամեն ինչ ուներ կյանքը վայելելու համար: Բայց ըստ էության նա գրել է, «Տվեցի իմ ողջ ունեցածը, երբեք չհրաժարվեցի իմ տեսիլքից և ոչինչ չունեմ ափսոսալու»: Նրա մահից հետո այն բոլոր Արքայության ծրագրերը, որտեղ ներդրում էր արել սկսեցին բուռն կերպով գործել: Նա հսկայական ժառանգություն էր թողել ներառյալ Չինաստանի ներքին առաքելությանը նվիրաբերած մեկ միլիոն դոլարը:

Երբ զգացի, որ Աստված է ինձ այս պատմությունը հիշեցնում քաջալերվեցի և սկսեցի հավատալ, որ անկախ ամեն ինչից իմ կյանքն առաց ափսոսանքների ապրեմ: Մասամբ նաև նշանակում էր, որ *չեմ սայթաքելու: Շարունակելու եմ հաստատուն քայլերով առաջ շարժվել:* Ջոնիի մահից հետո խավար շրջափուլով անցա: Ինձ կարծես թվում էր, թե Սատանան իր հաղթանակն է տոնում: Ջոնիի թաղմանը խոսքով կիսվեցի և այնտեղ հավաքվածների մեջ շատերին տեսա, ում Ջոնին էր եկեղեցի բերել, ում կյանքերը նրա վկայությամբ էին փոխվել: Այժմ նրանք Հիսուսի հետ էին քայլում Ջոնիի պատճառով:

Պարզապես դժվար էր անդրադառնալ Ջոնիի մահվանը, սակայն թաղման վերջում մեր ոստիկանական կապելլանի հրամանատարը ձեռքս համարյա ճանկելով ասաց. «Ռոբբի՛,

այս եկեղեցին մեր քաղաքը փոխելու գործում մեծ ազդեցություն ունի: Մենք տեսանք Ջոնիի օրինակը, թե ինչպես այդ սատանայապաշտ խուլիգան թմրավաճառը ամբողջովին փոխեց իր կյանքը: Ուզում ենք, որ Վայնյարդն այստեղ գործի: Դու չես կարող կանգ առնել»:

Հուզմունքից արցունքներն սկսեցին կոկորդս խեղդել: Այնքան քաջալերական էր նման խոսքեր լսել մի մարդուց, ով ակտիվորեն ներգրավված էր քաղաքի մի շարք հիմնախնդիրներ լուծելու մեջ:

Տառապանքն ու փառքը

Հիշում եմ մի անգամ հեռախոսազանգ ստացա մի միայնակ մորից, ում որդին իմ յոթնամյա տղայի դասարանում էր սովորում: Նա ինձ զանգահարել էր, իմանալով, որ հոգևոր ծառայող եմ, և պատմել, որ իր տղայի անհնազանդության պատճառով թե դպրոցում և թե տանը անախորժություններ են ունենում: Նա գիտեր, որ իր որդին ինձ վստահում է, ուստի մի անգամ իմ տղային դպրոցից վերցնելիս նրա հետ սկսեցի զրուցել: Ես նրան հարցրեցի, թե ինչ է պատահել և ինչու է իրեն այդպես պահում:

Ինչպես ցանկացած յոթնամյա տղա, նա էլ շարունակ ուսերը բարձրացնելով ասում էր.

-Չգիտեմ:

Ես ենթադրեցի, որ հավանաբար տղայի ծնողները բաժանված են կամ էլ երբեք ամուսնացած չեն եղել, ուստի նրան իր մոր մասին հարցրեցի: Նա մեծ սիրով ու գնահատանքով խոսեց նրա մասին և հետո հարցրեցի, թե արդյոք բացակա հոր հետ որևէ խնդիր կա: Երբ հոր մասին հարցրեցի նա նայեց ինձ ու ասաց.

-Հորս գանգստերները սպանեցին մեքենաներով կրակահերթի ժամանակ:

Ես ցնցված էի: Նա ինձ պատմեց, որ հոր հետ տան առջևում բռնվոցի էին խաղում, երբ հենց իր աչքերի առջև կրակեցին նրան: Տղան վազել էր հոր մոտ, բայց նա այլևս ողջ չէր: Ամբողջովին հոր արյան մեջ շաղախված նա հարևանի տուն էր վազել օգնություն խնդրելու: Բայց ոչ ոք չէր եկել, որովհետև բոլորը վախենում էին: Այս յոթ տարեկան տղան ինձ ասաց.

-Հայրս մահացավ, որովհետև ես ուզում էի նրա հետ բռնվոցի խաղալ:

Այդ պահին հասկացա, որ ոստիկապետի խոսքերն Ավրորայում ծառայելու մասին իրավացի էին:

Բանդայի շատ անդամներ ինձ ասել էին. «Ես անդամակցում եմ բանդային և ամեն ինչ անում միայն հարգանք և պատիվ ունենալու համար»: Շատ անգամ ինձ հազիվ եմ զսպել, որ չցատկեմ սեղանից այն կողմ ու այդ երիտասարդ գանգստերների վրա գոռամ. «Միթե յոթ տարեկան տղան պետք է վճարի քո հարգանքի գինը: Կամ այն ծնողներն ովքեր հուսահատ ողբում են իրենց երեխաների համար, ում քո հարգանքի պատճառով գլխից կրակել են»:

Եվ երբ ամեն անգամ մեր եկեղեցում մի բանդայի անդամ ձեռք է բարձրացնում Քրիստոսին ընդունելու, աչքերիցս ուրախության արցունքներ են հորդում: Իրականում Աստծո Արքայության և խավարի իշխանության բախումը կարող է բավականին ծանր լինել:

Արքայության ներխուժումը

Մի որոշ ժամանակ մեր եկեղեցի սկսեց հաճախել տարածաշրջանում հայտնի բանդաներից մեկի պարագլխի սիրուհին ու նրանց որդին: Ես որդու վրա մարգարեացա, որ եթե բանդայից դուրս չկա, կմեռնի մինչև հաջորդ թաղման գնալը: Նա նայեց ինձ ու ասաց. «Դա ընդամենը վիճակագրություն է»: Դժբախտաբար մի քանի ամիս անց ողբերգական հրաձգության ժամանակ նրան սպանեցին: Հետո նրա մայրը ծանր հոգեվիճակով եկեղեցի էր գալիս: Շատ դժվարությունների միջով էր անցնում: Մի կիրակի, երբ եկեղեցի եկավ ես քարոզում էի սեռական հարաբերությունների մասին երկու հատվածից բաղկացած իմ ամենամյա քարոզի առաջին մասը: Ամեն տարի փորձում եմ հնարավորինս լուսաբանել սեռական հարաբերությունների մասին Աստվածաշնչյան հիմունքները: Առաջին շաբաթը խոսում եմ արտաամուսնական կապերից առաջացող խնդիրների, իսկ երկրորդ շաբաթը սեռական հարաբերությունների իսկզբանե նախատեսված գեղեցկության մասին:

Այս կինը ծառայությունից հետո գնում է տուն և իր սիրեկանին ասում.

-Մենք այլևս սեքսով չենք զբաղվի, մինչև չամուսնանաք: Դրանով վշտացնում ենք Աստծուն և այսպես ճիշտ չէ թե ֆիզիկական և թե հուզական առումով: Ավելի լավ է հետևենք Աստծո խոսքին:

Տղամարդը նրան լսում է և ժպտալով ասում է.

- Այդ քարոզչին ասա խոսքերը ետ վերցնի, այլապես կգնամ ու ողջ եկեղեցու առաջ փամփուշտներս գլխին կդատարկեմ:

Այս մասին իմացա այդ կնոջ քրոջից, ով զանգահարել էր ինձ ու անչափ վշտացած արտասվում էր, որ կյանքս շուտով կավարտվի: Հետո կինն ինքը զանգահարեց, որ զգուշացնի ինձ սիրեկանի սպառնալիքների մասին :

Նա ինձ աղերսում էր.

-Խնդրում եմ, ուղղակի ձեզ խնդրում եմ մյուս կիրակի թաքնվեք: Ռոբբի՛ , նա մարդասպան է: Ես սիրում եմ նրան, իմ որդու հայրն է, բայց խենթ է, նա կսպանի: Չե՞ք կարող խնդրել, որ ուրիշն այդ օրը քարոզի:

Ես նրան ասացի.

-Չեմ պատրաստվում մեկ այլ մարդու կյանք վտանգել: Մի անհանգստացեք, պարզապես ոչ ոքի չպատմեք նրա ասածների մասին:

Նման սպառնալիքներ արդեն բազմիցս տեղացել էին իմ հասցեին: Սպառնալիքին արձագանքելով ակամայից շրջապատի մարդկանց վախի ազդակ ես ուղարկում և ասես դրան ուժ ես հաղորդում: Տվյալ իրավիճակում զգացի, որ պետք է Տիրոջը վստահել:

Հաջորդ կիրակի մեր փառաբանության հովիվը եկավ և գրասենյակիս դուռը թակեց: Նա փողոցներում մեծացած լինելով իրավիճակներն արագ էր կարդում:

-Հեյ, Ռոբբի՛ , -ասաց նա,- չգիտեմ ճանաչում ես, թե ոչ բայց ներքևում մի հայտնի Լատին Քինգ է նստած: Ռոբբի, նա իրոք խառն է երևում: Չգիտեմ, թե ինչ է կատարվում, բայց տեսնում եմ, որ լարված է: Չգիտեմ ինչ անեմ:

Նա նայեց ինձ ու ջղածիգ ծիծաղեց.

-Խնդրում եմ, միայն չասես գնա և զինաթափիր նրան:

Ես նրան ասացի,

-Չէ, այդ մասին մի անհանգստանա, բայց ապրես, որ տեղեկացրիր: Ուղղակի քեզ սովորականի պես պահիր:

-Ըըըմ...դե լավ:

Նա իրեն բնորոշ ժպտաց, բայց ակնհայտ երևում էր, որ անհանգստացած է:

-Պարզապես տեղեկացնում եմ, որ նա այստեղ է և բավականին տարօրինակ է իրեն պահում: Երկրորդ շարքում է նստած:

Տասնհինգ տարեկան հասակում ավետարանելու ժամանակ մի անծանոթ հետևից մոտենալով գլխիս ատրճանակ պահեց: Որոշ ժամանակ անց նա ծնկի եկավ և ապաշխարեց, որովհետև տեսավ վտանգի հանդեպ ունեցած իմ ակամա «խիզախությունը» և Տերն ինձ ասաց. «Ես ուզում եմ, որ ամբողջ կյանքդ ապրես այնպես կարծես ոչ մեկ օր շուտ և ոչ էլ մեկ օր ուշ ես հեռանալու»:

Այդ պահից ի վեր փորձել եմ ապրել վստահելով, որ իմ կյանքի բոլոր օրերն Աստծո ձեռքերի մեջ են: Ես չեմ պատրաստվում ճնշված, անհանգստացած կամ վախվորած ապրել: Եթե մեր համայնքում այդպես ապրես, ապա թե հոգևոր և թե ֆիզիկական թշնամու համար որսի առարկա կդառնաս:

Այս կիրակի իջա առաջին հարկ, բոլորին սովորականի պես ողջունեցի: Մտա եկեղեցասրահ, նստեցի ու սկսեցի բարձրախոսս պատրաստել և այդ ընթացքում մի հպանցիկ հայացք նետել այդ տղամարդու կողմը: Կիսով չափ թեքված շարունակ աչքս նրա վրա էի պահում: Նա ամբողջ ծառայությանն սկզբից մինչև վերջ մասնակցեց: Սկսեցինք փառաբանությամբ: Սովորաբար հայտարարությունների մասը մի աղջիկ է անց կացնում, բայց ես նրան ասացի, որ այդ օրն իր փոխարեն ես կանեմ: Մի քիչ անհանգիստ էի և զգացի, որ սովորականից չափազանց շուտ ավարտեցի հայտարարությունների բաժինը: Տղամադը գլուխը փոքր ինչ թեքած նստել և ակնապիշ հայացքով հետևում էր ինձ: Նա ինձ նայում էր բացարձակ առանց որևէ հուզականության կամ աչքերի հատուկ արտահայտության:

Խոսելու ընթացքում զգում էի սրտիս անհանգիստ զարկերը: Ես ավարտեցի նախորդ շաբաթվա քարոզի երկրորդ հատվածը ներամուսնական սեռական հարաբերությունների թեմայով, խոսեցի սեռական գրավչության հրաշքի և Աստծո իսկզբանե մարդու համար

ստեղծած պարգևի մասին: Վեջում աղոթքի հրավիրեցի և մի քանիսն առաջ եկան: Հետո մարդիկ սկսեցին կամաց դուրս գալ և տղամարդը գլուխն այս ու այն կողմ թեքեց ու հետո աչքերը գետնին գցեց: Ինձ շատ հետաքրքիր էր, թե այդ պահին նրա ներսում ինչ էր կատարվում: Հետո ոտքի կանգնեց ու դանդաղ քայլերով դեռացավ:

Այդ տղամարդու մեր եկեղեցի այցից մի քանի ամիս անց ոստիկանությունը լայնամասշտաբ հետախուզում հայտարարեց Լատին Քինգի հիմնական քսաներեք պարագլուխների նկատմամբ սպանությունների մեղադրանքով: Նա, վեց սպանությունների համար մեղադրվելով գլխավորում էր ցանկը: Սկզբում թյուրիմացաբար մեզ թվաց դա իր եղբայրն է, ով վերջերս մեր եկեղեցուց մի աղջկա հետ էր ամուսնացել: Երբ պարզեցի նրա ինքնությունը, զանգահարեցի ընտանիքի անդամներին ու խնդրեցի նրան տեղեկացնել, որ բանտում այցելության կգնամ:

Նրանք ինձ անտարբեր ասացին,

-Ձեք կարող, նրա հետ որևէ կապ չկա:

Ես պնդեցի,

-Նրան փոխանցեք, որ կայցելեմ, գիտեմ, որ կարող եք այդքանն ասել:

Նրանք ինձ ասացին, որ անհնար է նրան այցելել, բայց համաձայնեցին ասելով,

-Բարի, մենք նրան տեղյակ կպահենք:

Մեր եկեղեցուց մի բարեխոս վերցնելով գնացինք բանտ: Որպես ոստիկանության կապելլան ես կարող էի տեսակցություն խնդրել:

Այցելությունների սենյակը բետոնապատ մոխրագույն պատեր ուներ: Նրան ներս բերեցին ձեռնաշղթաներով, նարնջագույն հանդերձով և իրեն մի կերպ աթոռին գցեց: Ուղեկցորդին խնդրեցի մեզ մենակ թողնել: Նա համաձայնեց, բայց լուսամուտից ուշադիր հետևում էր:

Տղամարդու աչքերը խամրած էին: Ինձ թվաց ներքին ծնոտի մկաններն ատամները կրճտացնելուց պրկված էին: Նա լիովին մարմնավորում էր տառապած, դառնացած ու կյանքի վրա զայրացած մարդու մի կերպար: Ապակու մյուս կողմից ինձ նայելով հարցրեց.

-Ի՞նչ ես անում այստեղ:

-Ուզում եմ քեզ հետ խոսել, -սկսեցի ես անգամ չիմանալով, թե ինչ պետք է ասեմ:

-Դե, էդ ես եմ ուզում քեզ հետ խոսել, -նա գոռաց ինձ վրա, - այդ օրն ի՞նչ արեցիր ինձ հետ:

Դա այն չէր, ինչ ակնկալում էի լսել:

-Ի՞նչ օր, - հարցրեցի ես:

-Հենց այն օրը, երբ ձեր եկեղեցի եկա: Ինչ որ անե՞ծք ես ինձ վրա դրել:

-Ինչի՞ մասին ես խոսում,-հարցրեցի ես: Եվ սկսեցի մտովի ետ գնալ այդ օրը, երբ նա մեր եկեղեցի եկավ: Բայց չկարողացա այդ մարդու հետ կապված որևէ արտառոց բան կամ որևէ խոսակցություն հիշել :

Խոժոռ հայացքով նայեց ինձ ու ասաց.

-Հենց նստեցի, այլևս չկարողացա շարժվել, ասես տեղումս քարացած լինեի: Քիթս անընդհատ քոր էր գալիս, բայց չէի կարողանում ձեռս բարձրացնեմ, որ քորեմ:

Նա աչքերը նեղացնելով շարունակեց.

-Ես այդ օրը պատրաստվում էի քեզ *սպանել*, այն ամենի համար, ինչ իմ սիրած կնոջն էիր ասել:

Ես շշուկով ասացի.

-Հա, նա ինձ ասել էր, որ գալու ես սպանելու, բայց զգում էի, որ Աստված քեզ թույլ չի տա նման հիմարություն անել:

Նա բարկացած գլուխը շարժեց.

-Զգիտեմ: Զգիտեմ, թե ինչու պետք է Աստված նման բան աներ ինձ համար:

-Այո՛ ,-ասացի ես, -թույլ տուր բացատրեմ, նա այդպես է արել, որովհետև քեզ սիրում է: Նա ծրագիր ունի քո կյանքի համար, և հոգ է տանում քո մասին:

Սկսեցի նրա հետ Ավետարանի հիմնական դրույթներով կիսվել հատկապես շեշտադրելով կյանքը վերափոխելու գաղափարն ու այն, որ Աստված մեզ ասում է

«Քեզ այն կյանքը կտամ, որի համար ստեղծվել ես»:

Ես այս ամենը շատ պարզ փողոցային լեզվին բնորոշ էի բացատրում, որովհետև չէի ուզում նրա համար անհասկանալի բառեր գործածել:

-Տես թե Աստված ինչ գործարք է առաջարկում. Հիսուսի կյանքը, որը քեզ համար է, և որի համար դու ծնվել ես քոնի փոխարեն, բոլոր ընտրածդ ճանապարհներով, վիրավորանքով, կոտրվածությամբ, և այն ամբողջ ցավով, որ այս բանտի պատերի ներսում է:

Այդ պահին ինձ ընդհատեց,

-Նրանց թվում է իմ մասին ամեն ինչ գիտեն, բայց անգամ արածներիս կեսը չգիտեն:

-Անկախ ամեն ինչից կյանքդ լրիվ խառնաշփոթի է վերածվել և քեզ այստեղ է հասցրել: Բայց Աստված քեզ համար շատ ավելի լավ կյանք և շատ ավելի լավ ծրագիր ունի պատրաստած: Ահա այն գործարքը, որ քեզ առաջարկում է, ապրիր այն կյանքը, որի համար ստեղծված ես: Նա պատրաստ է այդ փոփոխությունը հենց հիմա քո մեջ անել:

Նա բղավեց.

-Այդ գործարքն ինձ համար չէ: Այն Մայր Թերեզայի, Բիլլի Գրեհեմի ու քեզ նմանների համար է:

Ես աղոթեցի.

-Տեր, օգնիր ինձ իմանալ, թե ինչ պետք է խոսեմ:

Հետո վերցրեցի Աստվածաշունչը.

-Թույլ տուր քեզ մի բան ասեմ: Ես գիտեմ, թե հիմա ինչ ես մտածում,-ասացի ես,-դու շատ բան ես արել ու նրանք քեզ մեղադրում են....

Նա ինձ ընդհատեց,

- Նրանք անգամ իմ արածների կեսը չգիտեն:

Ես նայեցի նրան, հետո գաղտնի հայացք նետեցի պահակի կողմն ու ասացի,

-Զգույշ եղիր ասածներիդ մեջ, -ասացի ես: Իլլինոյս նահանգի օրենքի համաձայն, քանի որ Չիկագոն ամուր կաթոլիկ արմատներ ունի, բանտարկյալի հովվին ասած խոսքերի գաղտնիությունն ապահովվում է: Սակայն նաև գիտեի, որ նրանք անհամբերությամբ ուզում էին այս բանտարկյալի վերաբերյալ հնարավորինս շատ տեղեկություն հավաքել:

Ձեռքերը խաչելով ասեց.

-Բանն այն է, որ չափազանց հեռուն եմ գնացել:

Ես վերցրեցի Աստվածաշնչի Նոր Կտակարանի հատվածն ու նրա առջև պարզեցի, իսկ մնացած մասը սեղանին կախված մնաց:

-Լսի՛ր, Աստվածաշնչի այս մասի կեսը, որ կոչում ենք Աստծո Սուրբ Խոսք, այ սրա կեսը մարդասպանի ձեռքով է գրվել: Նա սպանել էր Աստծո մարդկանց, վաղ քրիստոնյաներին, նրանց, ում Հիսուսը սիրում էր: Եվ Աստված Գրքի այս հատվածը գրելու համար նրան ընտրեց: Աստված նրան գործարք առաջարկեց, որը հիմա նաև քեզ է առաջարկում: Այդ գործարքը դեռ սեղանին է դրված:

Նայեց ուղիղ աչքերիս մեջ և հետո գլուխը խոնարհեց կրծքին: Այս բիրտ բանտարկյալը հանկարծ սկսեց արտասվել իմ առաջ: Արցունքների միջից ասաց.

-Ես կընդունեմ այդ գործարքը:

Նրա եղբայրն ինձ մի անգամ ասել էր, որ երբեք նրան լաց լինելիս չի տեսել: Անգամ երբ հինգ տարեկանում խորթ հայրը ծեծում էր, ոչ մի անգամ լաց չէր լինում:

Երբ նա «Ես կընդունեմ այդ գործարքը» խոսքերն արտասանեց, զգացի, թե ինչպես սենյակն Աստծո ներկայությամբ լցվեց: Էլեկտրական հոսանքի պես էր: Զրուցելու ընթացքում ես արդեն զգում էի Նրա ներկայությունը, բայց այդ պահին ասես բանտի պատերի ներսում էլեկտրական հոսանք էին արձակել: Մթնոլորտում մի բան ճայթելով համակեց նաև իմ էությունը:

-Թույլ տուր բացատրեմ: Հիմա մենք կաղոթենք և Տիրոջը կհանձնենք քո անցյալը, ներկան ու ապագան:

Նա հետևեց իմ առաջնորդությանն ու երբ աղոթքը միասին ավարտեցինք գլուխը բարձրացրեց: Մի *լայն* ժպիտ էր դեմքին փայլում: Հանկարծ նրա աչքերը մեղմ արտահայտություն ստացան և մի քանի անգամ ուսերը թափահարեց:

-Ասես մի հսկայական քար էի ուսերիս տանում: Երբ աղոթեցինք, այն ընկավ: Բարկությունը, ցասումը, ամոթը, մեղքի զգացում, ամեն ինչ անցավ:

-Դա է Աստծո տված ազատությունը,-ասացի նրան,-դա է Աստծո տված իրականությունը:

Պահակը դուռն ընդարձակ բացեց.

-Ձեր ժամանակը լրացավ,-ասաց նա:

Տղամարդը ցատկելով ոտքի կանգնեց.

-Այո, պարոն:

Պահակը ցնցված ինձ նայեց ասես հարցնելիս լիներ «Ինչ արեցիր նրա հետ: Միթե սա իրական է»:

Դրանից հետո մի քանի անգամ էլ նրան այցելեցի: Քանի որ դժվարանում էր լավ կարդալ, նրա համար մանկական Աստվածաշունչ տարա, որ ավելի մատչելի լինի:

Միասին ներելու մասին պատմություններ էինք կարդում, ինչպես օրինակ Հովսեփի պատմությունը, երբ ներելով իր եղբայրներին արձակեց: Խոսում էինք ազնվության ու ճշմարտության մասին: Ես նրան ասացի.

-Քո փաստաբանները հնարավոր է ինչ որ բաներ ասեն, որ այնքան էլ ճշգրիտ չեն: Ես քաջալերում եմ փաստաբաններին չլսել, եթե քեզ հորդորեն Աստծո կամքին հակառակ բաներ խոսել: Դու պետք է խնդրես, որ խոսելիս Աստված քեզ օգնի ու առաջնորդի: Ես հիմա կաղոթեմ, որ կարողանաս Աստծո ձայնը զանազանել, ճանաչել Սուրբ հոգուն ու հետևել Նրան:

Ամեն այցելության ժամանակ միասին աղոթում էինք: Մի անգամ խոսեցինք Աստծո արդարության մասին: Ես հիշատակեցի, որ Պողոսը հայտնի էր քրիստոնյաներին սպանելով: Այդ ժամանակ Պողոսի արաքները օրինական էին, բայց հետաքրքրական է, որ հետագայում կյանքի մեծ մասը բանտերում անցկացրեց:

Մի անգամ, երբ զրուցում էինք մեր կյանքում Աստծո կատարած գործերի մասին, նա նայեց ինձ ու ասաց.

-Գիտես ինչ, Ռոբբի, ես պետք է քեզ իմ պատմությունը պատմեմ: Ես ուզում եմ բարձրաձայնել իմ պատմությունը:

Նա շատ լուրջ էր երևում և խիստ նայելով աչքերիս խորքն ասաց.

-Ռոբբի, մարդիկ չգիտեն, թե որքան հեռու կարող է Հիսուսը նրանց հետևից գնալ: Նրանք գաղափար չունեն, որ Նա այդքան հեռուն կգնա:

Երբ նա խոսում էր, զգում էի որ Աստված է փառավորվում:

-Մարդիկ չգիտեն, որ Աստծուց կարող են հեռացած լինել, խոր փոսի, ամենախոր ու ամենախավար տեղում: Բայց չգիտեն, որ Աստված նրանց հետևից անգամ դրանից էլ հեռու տեղեր կգնա, -կրկին ասաց նա:

Ես սկսեցի արտասվել ու ասացի.

-Այո ինչպես Դավիթն էր ասում. «Եթե վերանամ երկինքը դու այնտեղ ես, և եթե դժոխքը փաթաթվիմ, ահա դու այնտեղ ես» (տես Սաղ.139:8), -ես նայեցի նրան,-Ես չեմ ուզում, որ պատմածներիդ համար հետո հատուցես: Ես անհանգստանում եմ քեզ համար: Եթե հասարակայնորեն պատմությունդ պատմես չի բացառվում, որ տեղի Քինգերը բանտում քեզ անախորժություններ պատճառեն: Կամ էլ կարող է քեզ մահապատիժ բերել: Ես չէի ցանկանա, որ նման բան լինի, կարծում եմ Աստված քո կյանքի համար շատ ավելին ունի նախատեսած:

Նա նայեց ինձ վրա ու ձեռքն առնելով պատկերազարդ մանկական Աստվածաշունչը կաս կարմիր դառնալով գոռաց.

-Դու ես ինձ ասել, որ այդ բոլոր մարդիկ սրա համար մեռան: Դու ես ինձ ասել, որ սրա համար ամեն ինչ տվեցին: Դու ես ինձ ասել, որ եթե չես կամենում կյանքդ Ավետարանի համար ապրել, ուրեմն չգիտես իրական կյանքի իմաստը: Ես ինչու պետք է նրանցից տարբերվեմ:

Նա իմ առաջ թափարահարում էր իր Աստվածաշունչը.

-Վեջին մի քանի ամիսներն այս գարշահոտ, փտած բանտում, Հիսուսի պատճառով իմ կյանքի լավագույն ամիսներն են եղել: Եթե հենց հիմա մեռնեմ ափսոսելու ոչինչ չունեմ:

Խորապես տպավորված էի: Սրանք սոսկ բառեր չէին նրա համար: Ես նրան ասացի.

-Դու ամենակարևորն ես հասկացել, չէ՞: Երանի Եկեղեցին այս ամենը քեզ նման ընկալեր:

Մենք միասին աղոթեցինք և Աստծո առաջնորդությունը խնդրեցինք նրա կյանքում և մասնավորապես տվյալ իրավիճակում: Վերջին անգամն էր, որ հանդիպեցի այդ մարդուն: Դրանից հետո նրան այլ նահանգ տեղափոխեցին մեր տարածաշրջանում ունեցած իր կապերի պատճառով: Ոստիկանությունն ինչ որ բան էր պարզել և փորձում էր նրան հեռու պահել ընտանիքի անդամների և Լատին Քինգի այլ պարագլուխների հետ բոլոր տեսակի շփումներից: Ավելի ուշ իմացա, որ շարունակել է փոխվել և ակտիվ կապ է ունեցել տեղական հոգևորականի հետ և որ բանտարկյալների շրջանում նրան որպես հոգևոր առաջնորդ էին վերաբերվում:

Հուսահատություն և հաղթանակ

Խաչի վրա հոգին ավանդելուց առաջ Հիսուսը բարձր ձայնով գոչեց ու ասաց. «Էլի՜, էլի՜, լա՞մա սաբաքթանի»: Սաղմոս 22:1-ի ուղիղ մեջբերումն էր, որ թարգմանաբար նշանակում է. «Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մաթ. 27:46): Այստեղից հասկանում ենք, որ մեր մեղավոր էությունն իր վրա կրեց: Նախկինում երբեք Հորը որպես Աստված չէր դիմել: Այստեղ Նա լիովին մեզ նմանվեց: Նրա ցավի ու տառապանքի

աղաղակը իշխանության վերականգնման հաղթական աղաղակ էր: Իր ամենախոցելի պահին Հիսուսը Սաղմոս 22ին դարձավ, որտեղ հազար տարի առաջ արդեն նկարագրվել էր Իր խաչելության ողջ տեսարանը Գեթսեմանի պարտեզից մինչև շորերն իրար մեջ բաժանելը:

Եկեք Նոր Կտակարանից մի քանի համար նայենք, որոնք հենց Սաղմոս 22-ի կրկնությունն են:

Եւ նրան խաչը հանեցին: Եւ նրա հագուստները բաժանեցին՝ դրանց վրայ վիճակ գցելով, թէ ով ի՛նչ պիտի վերցնի:

Մարկ. 15:24

Հանդերձներս բաժանում են իրար մեջ, Եվ հագուստիս վրա վիճակ են գցում:

Սաղմ. 22:18

Եւ մօտով անցնողները հայհոյում էին նրան, շարժում էին գլուխներն ու ասում. «Վա՛հ, դու որ քանդում էիր տաճարը և երեք օրից այն շինում, փրկի՛ր քեզ. եթէ Աստծու Որդի ես, իջի՛ր այդ խաչից»:

Մաթ. 27:39,40

Բոլոր ինձ տեսնողները ծաղրում են ինձ,բերանները լայն բաց են անում և գլուխները շարժում:

Սաղմ.22:7

Սաղմոսի 1-2 համարները նույնպես նկարագրում են այն պահը, երբ Գեթսեմանի այգում Հիսուսը մաքառում էր աղոթքի մեջ, խնդրելով որ եթե Հոր կամքն է այդ բաժակն Իրենից հեռացնի. «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ ինձ թողեցիր: Ինչո՞ւ ես քեզ հեռու պահում ինձ փրկելուց, և իմ աղաղակի խոսքերը լսելուց: Ո՛վ իմ Աստված, կանչում եմ քեզ ցերեկը, և դու պատասխան չես տալիս»: Սաղմոսի 16-17 համարները ճշգրիտ նկարագրում են Հիսուսի կրոնավոր և մեղավոր թշնամիներով շրջապատված լինելն ու նրանց արարքները. «Շները շրջապատել են ինձ, չարերի ժողովը պաշարել է ինձ: Առյուծի նման պատառոտում են ձեռքերս ու ոտքերս: Բոլոր ոսկորներս կարող եմ համրել: Նրանք նայում են, իրենց աչքերը չեն հեռացնում ինձանից»:

Այդ պահին Քրիստոսի հարցադրումը վիթխարի ցավից էր բխում «Ի՞նչու»: Նա այս հարցը տալիս է բոլոր նրանց համար, ովքեր ականջներ ունեն լսելու:

Իրականում հաջորդ հատվածում սաղմոսերգուն գրում է Աստծո պատասխանը Քրիստոսին, որը նաև ողջ մարդկության «Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ» հարցին է պատասխանում:

Ո՛վ Եհովայից վախեցողներ, գովաբանե՛ք նրան:

Ո՛վ Հակոբի բոլոր սերունդներ, փառաբանե՛ք նրան:

Վախեցե՛ք նրանից, ո՛վ Իսրայելի բոլոր սերունդներ:

Որովհետև նա չարհամարհեց

Ու չզզվեց նեղության մեջ եղողի նեղությունից

Եվ իր երեսը չծածկեց նրանից.

Այլ երբ օգնության կանչեց նրան, նա լսեց:

23-24 համարներ

Այսինքն խաչի վրա նվաճած այդ տառապանքի հաղթանակը վկայում է Արքայության ճեղքման մասին: Սա է մարդկության տառապանքի, լքված լինելու վախի փրկության կարիքի պատասխանը: Քրիստոսը բարեխոսն է՝ կատարյալ մարդ և կատարյալ Աստված: Նա մեր տառապանքները որպես մարդ Իր վրա կրեց և անարդարացի կերպով դավաճանվեց, լքվեց ու դատապարտվեց: Եվ որպես ադամորդի աղաղակեց. «Ինչո՞ւ ինձ լքեցիր»: Սա Հորն ուղղված որդու աղաղակ էր: Մինչդեռ որպես Աստված Քրիստոսը հենց Ինքն է այդ հարցի պատասխանը: Աստված մեզ չի լքել, Նա խաչի վրա մեզ հետ միաբանվել է: Մեզ հետ Իրեն նույնականացնելով այդ ահռելի ամոթի, հալածանքի ու դավաճանության մեջ, Քրիստոսը սիրո կենդանի զոհ դարձավ. «Բայց նա խոցուեց մեր մեղքերի համար և մեր անօրէնութիւնների համար դատապարտուեց. մեր խաղաղութեան համար նա՛ պատիժ կրեց, և նրա՛ վէրքերով մենք բժշկուեցինք» (Ես. 53:5):

Այն փոխանակումը, որ խաչի վրա եղավ Արքայության իրականության մեջ, ես կրկին ու կրկին կատարվելիս եմ տեսնում: Ինը տարեկանում ես դա տեսա իմ ննջասենյակում հերոինից կախվածություն ունեցող տղայի դեմքին, ով հանկարծ իմացավ, որ Աստված սիրում է իրեն: Տարիներ անց ես դա տեսա իմ առջև նստած այն գանգստերի դեմքին, ով պնդում էր, որ Հիսուսի պատճառով բանտում անց կացրած իր ամիսները լավագույնն են եղել իր կյանքում:

Արքայության իրականությունն ավելի զորեղ ու ավելի ճշմարիտ է, քան այն վատթարագույնը, որ աշխարհը կարող է մեզ անել:

Տառապանքի ամենածանր պահին Քրիստոսն ինձ ու քեզ մատնացույց արեց և հաղթանակեց, որով էլ տվեց բոլոր ժամանակների մարդկության աղաղակի պատասխանը: Մենք լքված չենք, մենք ենք Նրա «Ինչու»-ն: Ես: Դու: Իմ ընկեր Ջոնին: Դատապարտյալ գանգստեր-մարդասպանն, ով հոր բռունցքի տակ էր մեծացել: Քրիստոսը տառապեց, որ մենք տառապանքի, մեղքի ու խավարի մեջ իմանանք, որ Աստված Իր երեսը մեզնից չի ծածկում: Եվ ինչպես սաղմոսերգուն է ասում իմանաք, որ.

Հեզերը կուտեն ու կկշտանան,

Եհովային փնտրողները կգովաբանեն նրան:

Թող ձեր սրտերը ապրեն հավիտյան:

Երկրի բոլոր ծայրերը կհիշեն ու հետ կդառնան դեպի Եհովան,

Եվ ազգերի բոլոր ընտանիքները կխոնարհվեն քո առաջ:

Սաղմ.22:26-27

Այն ամենն ինչ Պարեզում անկման պատճառով Սատանային էր անցել ճշմարիտ Արքան վերականգնեց: Իշխանությունը մեզ համար վերականգնվեց: Այժմ մեր ժամանակն է գործելու Արքայության մեջ քայլելու և բոլոր բնագավառներում Սատանայի գողացածը ետ բերելու: Խաչի փոխանակումից շատ ու շատ տարիներ առաջ սաղմոսերգուն Սաղմոս 22 ում մեզ համար նկարագրել է նաև եզրափակումը.

Որովհետև Եհովայինն է թագավորությունը,

Եվ նա է տիրում ազգերի վրա:

Երկրի բոլոր հղփացածները կուտեն ու կխոնարհվեն,

Նրա առաջ ծնկի կգան բոլոր հողը իջնողները,

Եվ ոչ ոք չի կարողանա իր հոգին կենդանի պահել:

Սերունդը կծառայի նրան:

Եհովայի մասին կհռչակվի հաջորդ սերնդին:-

Կգան ու նրա արդարությունը կպատմեն

Այն ժողովրդին, որը ծնվելու է.

կպատմեն այն մասին, *որ Նա է արել սա*:

Սաղմ.22:28-31 շեշտադրումն ավելացված է

243

Քրիստոսը լիովին ու կատարելապես Իր վրա կրեց այս աշխարհի մեղքը: Երբ հռչակեց, «Կատարվեցավ» մի վերջին աղաղակով արտահայտեց սաղմոսերգուի վերջին խոսքերի տառապանքն ու փառքը, որ ասում էր. «Նա է արել սա»: (Հովհ. 19:30):

Եվ քանի որ կատարվեց և Նա դա արեց մենք կարող ենք Արքայությունը սփռել թույլ տալով, որ Տերը գործի մեր միջոցով հիվանդներին բժշկելու, դևերին հանելու և կյանքերը հավիտենապես փոխելու: Մենք կարող ենք գնալ և անել այն, ինչ Հիսուսն արեց: *Դե գնացե՛ք:*

244

Ես՝ անում եմ, այն ինչ Հիսուսն արեց

Ինչ ենք իրականում հասկանում, երբ ասում ենք բնական քրիստոնեական կյանք: Ի՞նչ է նշանակում անել այն, ինչ Հիսուսն արեց: Դե օրինակ բնական կյանքի մաս է կազմում մեր եկեղեցու տանիքից դեռ կաթկթելը: Իհարկե իմ կյանքը վերջին մի քանի տարիներին շատ է փոխվել, երբ սկսել եմ կենտրոնանալ անելու այն, ինչ Հիսուսն արեց: Իմ ճամփորդությունների ու կոնֆերանսներին բանախոսելու թիվն զգալի աճել է և այս ընթացքում ականատես եմ եղել իշխանության զորացման, աներևակայելի բժշկությունների ու Աստծո հավատարիմ հոգատարության: Ինձ համար ոգևորիչ է, որ Աստված գործում է Իր Եկեղեցու, ժողովրդի և անգամ իմ որդիների միջոցով, ովքեր մի քիչ մեծանում, և տակավին թոթովախոս սկսում են Արքայությանը ծառայել: Բայց բնականոն կյանքում, երբ տուն եմ գալիս դեռ պետք է փոխեմ երեխաներիս կեղտոտ տակդիրներն ու լվանամ կուտակված ամանները: Մարդիկ իմ եկեղեցում դեռ ինձ վրա բարկանում ու բնավորությունս էլ դեռ փոփոխության է ենթարկվում:

Չէի ցանկանա հիասթափեցնել, բայց խնդրում եմզգուշացեք, որ ձեր կյանքն ամբողջովին Քրիստոսին հանձնելով և տեսնելով, թե ինչպես են հիվանդները բժշկվում, և մարդիկ փրկություն գտնում, հանկարծ բաց չթողնեք ու խուսափեք բոլոր այն «բնական» ուղիներից, որոնք ձեզ նոր հարթություն կտանեն ու թույլ կտան, որ Աստված դրանց միջոցով կգործի ձեր կյանքերում: Ճշմարտությունն այն է, որ Քրիստոսի գործերի ու «բնական» -ի միջև գոյություն չունի որևէ ընդգծված սահման:

Այդ ամենն Արքայության մի մասն է, մեր կյանքերում նրա գործի մի հատվածը: Արքայության համար համարձակ ապրելն անտեսանելի թթխմորի է նման, որ իր գործն է անում մեր կյանքերի, ֆինանսների, ամուսնության, երեխաների ու համայնքների խմորի մեջ:

Երբ ասում ենք գործել Հիսուսի նման ի նկատի չունենք կյանքի բոլոր բնագավառներում կատարյալ լինել: Ինձ մոտ համենայն դեպս այդպես չէ: (Կներեք, որ հասթափեցնում եմ): Սիրում եմ Աստծուն, սիրում եմ կնոջս, սիրում եմ երեխաներիս ու ընկերներիս: Ինձ դուր է գալիս այն, ինչ անում եմ: Բայց չի բացառվում, որ այս գիրքն ընթերցելով կամ քարոզներս լսելով ինձ իսկապես չեք հավանել: Գուցե իմ աստվածաբանությունը որոշ տեղերում սխալ է թվացել, կամ մտածել եք, որ այնքան էլ սուրբ չեմ, թերևս իմ մեջ ամբարտավանություն կամ հպարտություն եք տեսել, կամ գուցե չափազանց շատ եմ կատակել և որոշ հարցերի շուրջ թեթևամիտ երևացել:

Եթե նման կարծիք ունեք, ուրեմն ճիշտ եք: Սակայն թույլ չտաք, որ դա ձեզ ապակողմնորոշի: Քաջալերվեք, եթե Աստված կարողացել է ինձ գործածել, ուրեմն ձեզ հաստատ կգործածի: Նա սիրում է հասանելի մարդկանց, ովքեր հնազանդվում և կամենում են, որ իրենց գործածի:

Մենք ընդամենը կավե տարրա ենք, որի մեջ գանձ է թաքնված: Մեզանից յուրաքանչյուրին ինչ որ գանձ է տրվել, ինչ որ պարգև, երբեմն առաջ գնալու հավատարիմ հաստատակամություն: Բնական տեսանկյունից ծառայում ենք մի Արքայի, ով գրաստի վրա եկավ: Իսկ հավիտենական տեսանկյունից մի Արքայի,որ սպիտակ նժույգով եկավ մեզ ազատություն շնորհելու:

Պետք է շարունակել առաջ շարժվել, հաստատակամությամբ գործել ու չնահանջել: Շարունակեք Նրա ներկայությունը որոնել: Նրա ներկայությունը որոնեք, երբ մենակ եք: Թույլ տվեք, որ այն պարուրի ձեր կյանքի բոլոր ոլորտները՝ բնավորությունը, կատարած ընտրությունները, ընկերոջ կամ ընկերուհու հանդեպ ունեցած վերաբերմունքը, կողակցի հետ խոսելաոճը, մեքենան վերանորոգող տղային դիմելու ձևը: Շարունակեք օրհնել ձեզ հետ չհամաձայնող և ձեզ վրա հարձակվող մարդկանց: Կարող եմ վստահեցնել, որ եթե կարծում եք Արքայությանն ավելի շատ ծառայելով նման մարտահրավերներն ինքնըստինքյան կվերանան, ապա չարաչար սխալվում եք: Բայց արժե փորձել ու հաղթահարել: Որովհետև մեծ ուրախություն և աներևակայելի արտոնություն ունենք հզոր Աստծո հետ ընկերանալու և Նրա սրտի գաղտնիքները կիսելու:

Աստծուն պատիվ է բերում Արքայության գործին մեր հաստատակամ նվիրվածությունը:

Տարիներ շարունակ Ավրորայում տեսել ենք, թե ինչպես են մարդիկ արմատապես փրկվում, բժշկվում և ազատագրվում, բայց նաև արմատապես նահանջում: Ամենազիլ վկայությունները լսել ենք այն «ուժեղ» տղերքից, ովքեր բժշկվել են, փրկվել և շատերին դեպի Քրիստոս առաջնորդել, բայց հետո նահանջելով վերադարձել իրենց նախկին թմրամոլ կյանքին: Մարդկանց, ում փրկում էինք մեզ թալանում էին: Կար մի շրջան, երբ ամեն շաբաթ մեր ծառայության ժամանակ մարդիկ բժշկվում էին քաղցկեղից մինչդեռ դժվարանում էինք անգամ եկեղեցու վարձերը վճարել: Մեր մեքենան երբեմն փչանում էր, իսկ երեխաներին դպրոցում հալածում էին: Ես ու Էնգին ամուսնական խնդիրներ ունեինք: Ընտանիքիս կարիքները հոգալու համար տներ էի գորգապատում: Մարդիկ մեզ հորդորում էին դադարեցնել ծառայությունը, բայց միևնույնն է շարունակում էի ամուր կառչած մնալ այն հսկայական երազանքից, որ Աստված էր ինձ տվել: Ես *այրվում էի* Եկեղեցում և ազգերի մեջ արթնություն տեսնելու փափագից: Եվ ուր որ գնացել եմ տեսել եմ, թե ինչպես է Աստծո Արքայությունը ճեղքում խավարի իշխանությունը: Աստված հավատարիմ ու բարի է:

Սակայն եթե կարճ ճանապարհ եք փնտրում և ուզում եք շրջանցել բնավորություն կերտելու մասնաբաժինը...ապա Արքայության ծառայության մեջ խորամուխ լինելը ելք չէ ձեզ համար : Կարճ ճանապարհ կամ խուսափելու եղանակ չկա: Եթե Աստված կանչում է կյանքի տվյալ բնագավառում հանձնվել ու հնազանդվել, ապա այդպես էլ արեք: Ինչ որ կտա որպես հրաշք ընդունեք, որովհետև ամեն բան սիրուց է բխում: Մեր հանդեպ ունեցած Նրա հրաշալի, վիթխարի հայրական սիրուց: Այն սերը, որ մեզ դեպի Աստված է կանչում, կանչում է նաև գանգստերներին, փողոցում ապրող երեխաներին, թագավորներին, մեղավորներին, գործարարներին ու կրոնավորներին: Նրա սերն է, որ բժշկում է, դևերին աղաղակելով դուրս վռնդում, տեսնում, ճանաչում ու անունով մեզ կանչում: Արքայի սերն ու Նրա Արքայության գեղեցկությունն է, որ բոլորիս կանչում է այնպիսին, ինչպիսին կանք, և հրավիրում, որ բարձրաձայն աղաղակով ներս մտնենք:

Շատերը կարծում են, որ Քրիստոնեությունը ձանձրալի է, անիմաստ ու շինծու: Սակայն ամեն բան ճշմարիտ է:

Ինչպես սկզբում նշեցի իմ կյանքն ասես ֆիլիմի սուպերհերոսի կյանք լինի, միայն մի տարբերությամբ, որ իմ շուրջը զարգացող դեպքերն իրական են: Բայց ավելի կարևորն այն է, որ տեսել եմ թե ինչպես են ամբողջ աշխարհում անթիվ անհամար երիտասարդներ, տարեցներ, հարուստներ, աղքատներ, մարմնավաճառներ, ուսուցիչներ, բժիշկներ, գանգստերներ, ֆուտբոլային աստղեր, գործարարներ, մարդասպանններ, տնային տնտեսուհի մայրիկներ Քրիստոսին հետևելու արմատական հրավերն ընդունում ու անում այն, ինչ Նա արեց: Նրանք տեսնում են, թե ինչպես է Աստծո Արքայությունը տարածվում երկրի վրա, երբ աչքերը բացվում են, ոտքերն աճում, քաղցկեղը բժշկվում, մարդիկ նոր սիրտ ստանում, ընտանիքները հաշտվում, հանցավոր խմբավորումների դաժանությունը նվազում, քաղաքները միաբանվում, Մաֆիայի պարագլուխներն ապաշխարում ու թշնամանքը վերանում: Նրանք տեսնում են, թե ինչպես են հազարավոր մարդկանց աչքերն առաջին անգամ բացվում Աստծո հավիտենական սերն ու խոստումները տեսնելու համար:

Սա է գանձը, այն թաքնված թանկարժեք մարգարիտը: Բավական է մեկ անգամ միայն ճաշակել Արքայության գեղեցկությունն ու Աստծո սիրո զորության ու ճոխության իրականությունն ու պատրաստ լինել ցանկացած ռիսկի: Ցանկացած զոհաբերության գերազանցում է, երբ համարձակ ավետարանում ես, թույլ տալիս, որ Աստված քո միջոցով գործի և անում այն, ինչ Հիսուսն արեց: *Դե գնացե՛ք:*

Հեղինակի մասին

Ռոբբի Դոքինսը վերջին տարիներին Միացյալ Նահանգների և միջազգային եկեղեցիների կողմից Վայնյարդի ամենամեծ պահանջարկ ունեցող բանախոսներից է: Նա նկարահանվել է հիթային երկու ֆիլմերում «Կատաղի Սեր» (2010) և «Լույսերի Հայրը» (2012): Ռոբբին ծնվել է Ճապոնիա միսիոներության մեկնած ծնողների ընտանիքում և իր ծառայությունն սկսել է շատ վաղ տարիքից: «Ես փոքրուց իմացել եմ, որ Աստված ինձ ծառայության է կանչել», ասել է նա: «Ծնողներս ասում են, որ երկու տարեկանում բոլորին ասում էի, որ միսիոներ եմ դառնալու»: Տասներկու տարեկանում իր հոր եկեղեցում մանկական ծառայության պատասխանատու էր, իսկ արդեն տասնվեց տարեկանում երիտասարդական ծառայության առաջնորդ:

1992 թվականին Ռոբբին ամուսնանում է իր կնոջ՝ Էնգիի հետ և 1996թ.-ից սկսած հովվություն անում Իլլինոյս նահանգի Ավրորա համայնքի Վայնյարդ եկեղեցում: Նրանք զգում էին, որ Աստված իրենց կանչում է քաղաքային աղքատ շրջանում եկեղեցի հիմնելու և շարունակաբար գործածելով «զորությամբ ավետարանչությունը» մարդկանց եկեղեցի էին հրավիրում: Նրանք մոտավոր հաշվարկ են արել, որ ներկայիս եղեղեցի հաճախողների ավելի քան 50 տոկոսը Ավրորայի Վայնյարդում է դարձել Քրիստոսին, և որ գրեթե երեք քարրոդի կյանքում արտասովոր զորության դրսևորումներ են եղել:

«Բացի այս եկեղեցին հիմնելուց և հովվություն անելուց,-ասում է Ռոբբին,-Աստված ինձ նաև կանչել է տեղական եկեղեցին ամրացնելու և հունձքը հավաքելու զորության գործիքնելով զինելու»: Ռոբբիի զորության չորս գործիքներն են՝ մարգարեական ծառայություն, բժշկություն, Աստծո ներկայության առկայություն և դիվային ուժերից ազատագրում: Ռոբբին նախկինում ունեցած իր փորձառություններից կարող է հարյուրավոր պատմություններ պատմել, թե ինչպես է Աստված իրեն կամ ուրիշներին, ում նա հոգաբարձություն է արել գործածել, որ Արքայությունը հրաշքների ու նշանների ուղեկցությամբ տարածվի:

Ռոբբին եղել է աշխարհի ավելի քան եռեսուն երկրներում՝ նպաստելով միջազգային և տեղական Եկեղեցու կառուցման գործին: Նա ծառայել է բազմաթիվ մուսուլմանական երկրներում (համաձայն*Voice of the Martyrs* ամսագրի եղել է երկու ամենավտանգավոր երկրներում): Նրա ծառայության նպատակը Միջազգային Կյանքի Կորպուսն է: Ռոբբին և Էնգին ապրում են Ավրորայում, Իլլինոյս Նահագում, ունեն վեց որդի երկուսից- տասնինը տարեկան: